ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Մակրոտնտեսական իրավիճակը 4

Փոխհարաբերությունները ՀՀ պետբյուջեի հետ 11

Արտաքին հատվածը 14

Դրամավարկային քաղաքականություն 18

Ֆինանսական շուկա 25

ՀՀ բանկերի և վարկային կազմակերպությունների գործունեությունը 31

Վճարահաշվարկային հարաբերություններ 36

Մակրոտնտեսական ցուցանիշները 2004 թ. հունվար – հունիսին 42

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՀԱՇՎԵԿՇԻՌ 53

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ բանկերում իրականացված հարցման արդյունքները (2004 թ. հուլիս)..... 54

Կարինե Կարապետյան, Միհր Բարսեղյան

Հայաստանի Հանրապետության վճարային հաշվեկշիռն ու միջազգային ներդրումային դիրքը 2003 թվականին 64

Եկամտաբերության կորի վերլուծության մեթոդները 85

Վահագն Գրիգորյան

Հեքշեր-Օլինի տեսության կիրառությունը Հայաստանում 92

Մարգարիտա Մամիկոնյան

Հայաստանի տնտեսական ազատության ինդեքսը..... 118

Մակրոտնտեսական իրավիճակը

2004 թվականի առաջին կիսամյակում գրանցված տնտեսական աճի ցուցանիշը թեև նախորդ տարիների համեմատ ցածր է եղել, սակայն դրա մակարդակը շարունակում է մնալ բարձր:

Հաշվետու ժամանակաշրջանում ձևավորված մակրոտնտեսական միջավայրը կրել է բնակչության եկամուտների աճի ազդեցությունը, ինչը հանգեցրել է մասնավոր սպառման և ներդրումների՝ դրամավարկային քաղաքականության ծրագրով նախատեսվածից բարձր ցուցանիշների: Բնակչության եկամուտների զգալի աճը անդրադարձել է նաև առաջարկի վրա՝ ավելացնելով ծառայությունների ոլորտի մասնաբաժինը տնտեսական աճի ձևավորմանը: Կիսամյակի առանձնահատկություններից է նաև արտահանման (առանց «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբի) և մասնավոր տրանսֆերտների աճը, որոնք հանգեցրել են դրամի փոխարժեքի արժեքավորման:

Այս ամենը, բնականաբար, պետք է նպաստեին գնաճի բարձր մակարդակի ձևավորմանը, որը, սակայն, որոշ չափով չեզոքացվել է ներմուծման ծավալների աճով: Նման պայմաններում իրականացված դրամավարկային քաղաքականությունն ուղղված էր բարձր գնաճի զսպմանը, և արդյունքում կիսամյակի ընթացքում արձանագրվել է ծրագրված մակարդակից ավելի ցածր ցուցանիշ:

Դա վկայում է, որ տարեկան մինչև 3% գնաճի ցուցանիշի ապահովումն ավելի քան իրատեսական է:

Նշված զարգացումների արդյունքում 2004 թ. առաջին կիսամյակի տնտեսական աճը կազմել է 9.2%, ՍԳԻ-ն՝ 104.5% և ՀՆԱ դեֆլյատորը՝ 106.2% (դրամավարկային քաղաքականության ծրագրով նախատեսվել էր, համապատասխանաբար՝ 8.0%, 105.2% և 106.6 %):

ՀԱՄԱԽԱՌՆ ՊԱՀԱՆՋԱՐԿ[1]

Չնայած 2004 թ. առաջին կիսամյակում Կառավարության իրականացրած զսպողական հարկաբյուջետային քաղաքականությանը, համախառն պահանջարկը գերազանցել է ծրագրային մակարդակը՝ ինչպես ներքին պահանջարկի մասնավոր ծախսումների, այնպես էլ արտաքին պահանջարկի՝ ծրագրայինից բարձր մակարդակների ձևավորման հաշվին: Արդյունքում՝ հաշվետու ժամանակահատվածում ներքին պահանջարկի աճը, 1.7 տոկոսային կետով գերազանցելով ծրագրված մակարդակը՝ կազմել է 6.2%՝ անցյալ տարվա 14.1%-ի փոխարեն:

Համախառն պահանջարկի տարրերի իրական փոփոխությունները (%)

Ցուցանիշներ	2003/2002 թ. 1-ին կիս. նկատմամբ (փաստացի)	2004/2003 թ. 1-ին կիս. նկատմամբ (փաստացի)	2004/2003 թ. 1-ին կիս. նկատմամբ (ծրագրային)
Իրական ՀՆԱ	14.9	9.1	8.0
Ներքին պահանջարկ	14.1	6.2	4.5
Սպառում	10.8	7.2	4.9
Պետական	31.3	4.0	3.1
Մասնավոր	8.7	7.5	5.2
Կապիտալ ներդրումներ	35.4	1.3	2.5
Պետական	43.5	-32.0	-7.8
Մասնավոր	32.1	15.6	6.7
Ներմուծում	40.8	-1.2	-0.3
Արտահանում	33.5	0.7	13.3

[1] *2004 թ. առաջին կիսամյակի և երկրորդ եռամսյակի տվյալները 2004 թ. մայիսի փաստացի ցուցանիշների հիման վրա ԿԲ գնահատումներն են:*

2004 թ. առաջին կիսամյակում պետական հատվածի ծախսերը զգալիորեն (իրական արտահայտությամբ՝ մոտ 8%-ով) նվազել են, ինչը հարկերի՝ ծրագրայինից փոքր-ինչ ավելի հավաքագրման պարագայում զսպողական ազդեցություն է ունեցել ընդհանուր համախառն պահանջարկի վրա: Առավել ակնհայտ դա արտահայտվել է պետական ներդրումների ցուցանիշներում. իրական նվազումը, ծրագրված 7.8%-ի փոխարեն, կազմել է 32% (նախորդ տարի գրանցվել էր 43.5% իրական աճ): Նախորդ տարվա համեմատ արծանագրված կտրուկ շրջադարձը պայմանավորվել է Լինսի հիմնադրամի միջոցների բացակայությամբ, իսկ շեղումը ծրագրված մակարդակից՝ Կառավարության կողմից ծախսերի թերակատարմամբ:

Պետական ծախսերի զսպողական ազդեցությունը որոշ չափով չեզոքացվել է մասնավոր հատվածի ծախսումների աճով, որը արձանագրվել է ողջ կիսամյակի ընթացքում: Այսպես, մասնավոր սպառումն աճել է 7.5%-ով՝ ծրագրային 5.2%-ի և նախորդ տարվա 8.7%-ի փոխարեն, իսկ մասնավոր ներդրումների 15.6% աճը ավելի քան 2 անգամ գերազանցել է ծրագրով նախատեսված ցուցանիշը: Մասնավոր ներդրումների նման աճին նպաստել են «Նաիրիտի» վերագործարկումը, բնակչության իրական տնօրինվող եկամուտների աճը և տոկոսադրույքների շարունակական նվազումը:

Ջուտ արտահանումը ծրագրով նախատեսված 23% իրական աճի փոխարեն ավելացել է ընդամենը 9.6%-ով: Դրա հիմնական պատճառը արտահանման՝ նախատեսվածից ցածր աճն է, որը պայմանավորվել է «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբի արտահանման ծավալների զգալի շեղմամբ: Առանց նշված հոդվածի հաշվարկված զուտ արտահանման ցուցանիշը համապատասխանում է ծրագրով նախատեսված մակարդակին:

Համախառն պահանջարկի տարրերի զարգացումները արտացոլվել են նաև համախառն առաջարկի բաղադրատարրերի վարքագծում:

ՀԱՄԱԽԱՌՆ ԱՌԱՋԱՐԿ[2]

2004 թ. առաջին կիսամյակում տնտեսության ճյուղային կառուցվածքում նկատվել են որոշակի տեղաշարժեր: Մասնավորապես, վերամշակող արդյունաբերության և շինարարության ճյուղերում արձանագրվել է աճի տեմպերի անկում՝ հիմնականում պայմանավորված արտաքին գործոնների ազդեցությամբ, ինչպես նաև նախորդ տարի նշված ճյուղերում գրանցված բարձր ցուցանիշներով: Հաշվետու ժամանակահատվածում գրանցված 9.2% տնտեսական աճի համապատասխանաբար 1.3 և 1.0 տոկոսային կետերն են ապահովվել արդյունաբերության և շինարարության ճյուղերի հաշվին (2003 թ.՝ 4.9 և 4.5 տոկոսային կետ): Փոխարենը՝ ծառայությունները տնտեսական աճին նպաստել են 5.6 տոկոսային կետով՝ նախորդ տարվա 3.6 տոկոսային կետի փոխարեն:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ: 2004 թ. հունվար-հունիսին արդյունաբերական համախառն արտադրանքը կազմել է 242.8 մլրդ դրամ՝ նախորդ տարվա 192.1 մլրդ դրամի փոխարեն, իսկ իրական աճը՝ 4.5%՝ նախորդ տարվա 18.6%-ի փոխարեն: Ընդ որում, առանց էներգետիկայի, արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի աճը կազմել է 4.8% (2003թ.՝ 22.2%):

Նախորդ տարվա առաջին կիսամյակի համեմատ արտադրության աճի տեմպերի նվազման միտումներ են նկատվել արդյունաբերության բոլոր երեք հիմնական ճյուղերում, սակայն առավել ակնհայտ արտահայտվել են վերամշակող արդյունաբերության ոլորտում, որտեղ իրական աճը կազմել է ընդամենը 4.8%՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի 23.9%-ի փոխարեն:

Վերամշակող արդյունաբերության նման միտումները հիմնականում պայմանավորվել են մետաղագործական արտադրության և ոսկերչական արտադրատեսակների արտադրության ենթաճյուղերի թողարկման ծավալների անկմամբ, ինչը 2.7 տոկոսային կետով զսպել է արդյունաբերության իրական աճը: Ընդ որում՝ մետաղագործական ճյուղում գրանցված թողարկման անկումը պղնձի և ցինկի փայլաթիթեղի արտադրության նվազման հետևանք է, իսկ ոսկերչական ճյուղում՝ մի շարք ձեռնարկությունների գործունեության դադարեցման:

Տնտեսական ակտիվության աշխուժացում է գրանցվել արդյունաբերության այնպիսի ենթաճյուղերում, ինչպիսիք են՝ քիմիական արդյունաբերությունը (270% իրական աճ), մանածագործական և հագուստի արտադրությունը (80.9% իրական աճ): Քիմիական արդյունաբերության նման աննախադեպ աճը կաուստիկ սոդայի արտադրության ծավալների 7 անգամ ավելացման արդյունք է:

---

[2] Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ «ՀՀ սոցիալ-տնտեսական իրավիճակը 2004 թ. հունվար-մայիսին» տեղեկագիրը:

Արդյունաբերության հիմնական ճյուղերի ցուցանիշները հունվար-հունիսին, %

Արդյունաբերության ճյուղ	Տեսակարար կշիռ*		Իրական աճ (+) / նվազում (-) **	
	2003	2004	2003	2004
Էլեկտրաէներգիա, գազ և ջրամատակարարում	25.5	20.5	5.6	2.5
Հանքագործական արդյունաբերություն	10.5	15.8	8.6	4.9
Վերամշակող արդյունաբերություն, որից՝	64.0	63.7	23.9	4.8
Սննդի արդյունաբերություն	32.5	32.6	11.1	10.4
Մետաղագործական արտադրություն	10.6	10.9	33.7	-10.2
Ոսկերչական արտադրատեսակների արտադրություն	6.2	4.0	33.1	-10.8
Քիմիական արդյունաբերություն	1.1	3.2	-18.5	3.7 անգամ
Մեքենաների և սարքավորումների արտադրություն	1.2	1.0	27.5	10.6
Մանածագործական և հագուստի արտադրություն	0.9	0.9	4.3	80.9
Այլ ճյուղեր	11.5	11.0	4.4	-3.8
Ամբողջ արդյունաբերություն	100.0	100.0	18.6	4.5


** Ընթացիկ տարում տեսակարար կշիռը ողջ արդյունաբերության մեջ (արտադրանքի ծավալները հաշվարկված են ընթացիկ գներով):*
*** Տվյալ ճյուղի համախառն արտադրանքի իրական աճ / նվազում (հաշվարկված են համադրելի գներով):*

Առաջին կիսամյակի ընթացքում իրացվել է թողարկված արդյունաբերական արտադրանքի 99.3%-ը, ընդ որում՝ վերամշակող արդյունաբերության արտադրանքի իրացումը 3.5%-ով գերազանցել է արտադրության ծավալները՝ ի հաշիվ մետաղագործական արտադրանքի՝ արտադրվածի համեմատ 22.1%-ով ավելի իրացման:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ: Հաշվետու ժամանակաշրջանում գյուղատնտեսության համախառն արտադրանքի իրական աճը կազմել է 8.5%՝ նախորդ տարվա 3.1%-ի փոխարեն: Ընդ որում, արտադրության աճ է գրանցվել ինչպես անասնապահության, այնպես էլ բուսաբուծության ենթաոլորտներում: Բուսաբուծության ճյուղում աճը հիմնականում արձանագրվել է հացահատիկային ու հատիկաընդեղենային մշակաբույսերի և կարտոֆիլի բերքի՝ համապատասխանաբար 40% և 8.3% աճի հաշվին:

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ: 2004 թվականի առաջին կիսամյակում իրականացված շինարարության իրական ծավալները, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, ավելացել են 12.1%-ով (2003 թ.՝ 45.4%-ով): Եթե հաշվի չառնենք 2003 թ. առաջին կիսամյակում Լիճսի հիմնադրամի միջոցների հաշվին իրականացված շինարարությունը, ապա 2004 թ. առաջին կիսամյակում շինարարության իրական աճը կկազմի 150.5%, որը հիմնականում արդյունք է ձեռնարկությունների և բնակչության կողմից իրականացված շինարարության՝ համապատասխանաբար 59.6% և 54.3% աճի: 95.2%-ով ավելացել է նաև արտաքին վարկերի հաշվին իրականացված շինարարության ծավալը՝ ի հաշիվ Համաշխարհային բանկից ստացված 5.2 մլրդ դրամ վարկի, որի 35%-ն ուղղվել է աղետի գոտի:

Նշված գործոնների ազդեցության արդյունքում էականորեն փոփոխվել է շինարարության ֆինանսավորման աղբյուրների ընդհանուր կառուցվածքը:



Այսպես, նախորդ տարվա համեմատ 43%-ով աճել է ձեռնարկությունների միջոցների հաշվին իրականացված շինարարության տեսակարար կշիռը՝ կազմելով 22.1%: 38%-ով ավելացել է նաև բնակչության կողմից ֆինանսավորվող շինարարության տեսակարար կշիռը: Միևնույն ժամանակ, շինարարության ֆինանսավորման աղբյուրների կառուցվածքում 98%-ով նվազել է մարդասիրական օգնության միջոցների տեսակարար կշիռը՝ կազմելով ընդամենը 0.5%: Սա պայմանավորված է ֆինանսավորման աղբյուրների կազմում Լինսի հիմնադրամի միջոցների բացակայությամբ, որի շնորհիվ ապահովվել էր շինարարության ոլորտում նախորդ տարի գրանցված բարձր աճը:

Հանրապետությունում շինարարության 68%-ն իրականացվել է ոչ արտադրական նշանակության օբյեկտներում, ընդ որում՝ դրա 80%-ը ֆինանսավորվել է բնակչության միջոցների հաշվին:

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ: Տնտեսական մակրոմիջավայրի զարգացումները զգալի ազդեցություն են ունեցել նաև ծառայությունների ոլորտում՝ նկատելիորեն փոփոխելով նախորդ տարիներին ձևավորված միտումները: Արդյունքում՝ այս ոլորտում հունվար-հունիսին գրանցված իրական աճը կազմել է 15.7%՝ նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի 9.4%-ի փոխարեն:

Մակրոմիջավայրի ազդեցությունը առավելապես դրսևորվել է տրանսպորտի ոլորտում. 2004 թ. առաջին կիսամյակում գրանցվել է բեռնափոխադրումների 8.7%-ով նվազում (նախորդ տարի՝ 12.7%-ով աճ): Ավտոտրանսպորտով իրականացված բեռնափոխադրումների 27.8%-ով նվազման պարագայում 20.2%-ով ավելացել են երկաթուղային բեռնափոխադրումները, որի հաշվին 10 տոկոսային կետով ավելացել է դրա տեսակարար կշիռը ընդհանուր բեռնափոխադրումների կառուցվածքում և կազմել 42.9%: Ուղևորատար տրանսպորտի ոլորտում գրանցվել է 6.8%-ով աճ՝ հիմնականում ի հաշիվ տաքսիներով և օդային տրանսպորտով ուղևորափոխադրումների՝ համապատասխանաբար 130% և 18.8%-ով աճի:

Ի տարբերություն նախորդ տարիների, կապի ոլորտում արձանագրվել է զգալի աշխուժացում. հունվար-հունիսին ստացված հասույթի իրական աճը կազմել է 16.9%՝ նախորդ տարվա 7.5%-ի փոխարեն: Դա հիմնականում հեռախոսային խոսակցությունների ծառայությունների 19.8%-ով աճի արդյունք է: Միևնույն ժամանակ, 43.8%-ով ավելացել են ինտերնետային կապի ծառայությունները:

ԳՆԵՐ ԵՎ ՍԱԿԱԳՆԵՐ

2004 թ. դրամավարկային քաղաքականության ծրագրով նախատեսվել է ապահովել մինչև 3% տարեկան գնաճ և միջին տարեկան գնաճի 7.7% առավելագույն մակարդակ:


Ծրագրով նախատեսվածից բարձր տնտեսական աճի պայմաններում իրականացված դրամավարկային քաղաքականության արդյունքում 2003 թ. դեկտեմբերի նկատմամբ կիսամյակի գնաճը կազմել է 4.5%՝ ծրագրված 5.2%-ի փոխարեն, իսկ 2004 թ. հունվար-հունիսի գնաճը, նախորդ տարվա հունվար-հունիսի նկատմամբ, 7.7%՝ ծրագրված 8.3%-ի փոխարեն:

Ընդ որում, նկատվել է գնաճի եռամսյակային սեզոնայնության որոշակի հարթման միտում: Այսպես, 2004 թ. առաջին և երկրորդ եռամսյակներում գնաճը կազմել է 2.2%, այնինչ նախորդ երկու տարիների երկրորդ եռամսյակներում գնաճն ավելի քան 2.5 տոկոսային կետով գերազանցում էր առաջին եռամսյակների ցուցանիշը:

2004 թ. (2003թ. դեկտ. = 100)	ՍԳԻ	Պարենային ապրանքներ (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)	Ոչ պարենային ապրանքներ	Վճարովի ծառայություններ
Հունվար	102.5	103.6	100.2	100.0
Փետրվար	101.9	102.8	100.2	100.0
Մարտ	102.2	103.1	100.2	100.5
Ապրիլ	103.5	104.7	100.2	101.4
Մայիս	104.7	106.5	100.3	101.0
Հունիս	104.5	106.2	100.5	101.4
I կիսամյակ	104.5	106.2	100.5	101.4

2004 թ. առաջին կիսամյակում գրանցված 4.5% գնաճին, ինչպես և նախորդ տարիներին, հիմնականում նպաստել է պարենային ապրանքախմբի գների աճը (6.2%): Դա, նախևառաջ, պայմանավորված էր


«Միրգ», «Միս և մսամթերք» և «Բանջարեղեն և կարտոֆիլ» ապրանքախմբերի գների 42.7%, 12.6% և 12.7% աճով, որոնք պարենային ապրանքախմբի գնաճին համապատասխանաբար նպաստել են 2.2, 2.0 և 1.3 տոկոսային կետով: Նախորդ տարվա առաջին կիսամյակի նկատմամբ տվյալ ապրանքախմբի գնաճը կազմել է 10.4%՝ 2003 թ. 3.8%-ի փոխարեն: Դրան 10.5 տոկոսային կետով նպաստել է հացամթերքի և մսամթերքի գների բարձրացումը:



2003 թ. դեկտեմբերի նկատմամբ ոչ պարենային ապրանքախմբի գներն աճել են 0.5%-ով՝ նախորդ տարվա 0.6% նվազման փոխարեն: Այս խմբում ընդգրկված ապրանքներից գների առավել բարձր՝ 15.2% աճ է գրանցվել «Անձնական օգտագործման մեքենաներ և բենզին» ապրանքախմբում:

Ծառայությունների սակագների ինդեքսը, չշեղվելով նախորդ տարիների միտումներից, կազմել է 101.4%:


Համաձայն ՀՀ ԿԲ գնահատումների՝ 2004 թ. առաջին կիսամյակում բնականոն գնաճը[3] կազմել է 2.4%՝ նախորդ տարվա համապատասխան 3.4%-ի փոխարեն:



2004 թ. առաջին կիսամյակում ՀՀ տնտեսության ճյուղային գները էապես փոխվել են, որի արդյունքում ՀՆԱ դեֆլյատորը կազմել է 106.2՝ նախորդ տարվա 103-ի և 2004 թ. դրամավարկային քաղաքականության ծրագրով նախատեսված 106.6-ի փոխարեն: Ընդ որում, դեֆլյատորի նման մակարդակի ձևավորմանն առավելապես նպաստել է արդյունաբերական արտադրանքի գների բարձր աճը:

[3] *Բնականոն գնաճի հաշվարկման մեթոդաբանությունը տե՛ս «ՀՀ ԿԲ բանբեր», 2004 թ. 1-ին եռամսյակ, էջ 65:*

Գների փոփոխություններն առաջին կիսամյակում՝ ըստ տնտեսության առանձին ճյուղերի (նախորդ տարվա 1-ին կիսամյակի նկատմամբ)




Վերջին չորս տարվա ընթացքում առաջին անգամ արդյունաբերական արտադրանքի գների աննախադեպ՝ 22.4% աճ է արձանագրվել, այն դեպքում, երբ նախորդ տարիներին այն չի գերազանցել 4%-ը: Գների նման շեղումը հիմնականում գունավոր մետալուրգիայի և սննդի արդյունաբերության ճյուղերում գների՝ համապատասխանաբար 80.7% և 24.3% աճի հետևանք է: Մետալուրգիայի ոլորտում գրանցված նման բարձր գնաճը թերևս պայմանավորված է գունավոր մետաղների համաշխարհային գների աճով:

Նախորդ տարիների համեմատ ցածր՝ 2.5% գնաճ է գրանցվել գյուղատնտեսության ոլորտում՝ պայմանավորված այն հանգամանքով, որ, ի տարբերություն նախորդ տարիների, վեգետացիոն շրջանը սկսվեց ժամանակին. արդյունքում այս տարվա գյուղատնտեսության աճը գերազանցել է նախորդ տարիների մակարդակը:

Միևնույն ժամանակ, արձանագրվել է բեռնափոխադրումների սակագների 3.9%-ով անկում՝ պայմանավորված օդային տրանսպորտով բեռնափոխադրումների սակագների 7.5%-ով նվազմամբ, ինչպես նաև համեմատաբար ցածր սակագներ ունեցող երկաթուղային տրանսպորտով բեռնափոխադրումների աշխուժացմամբ:

Հաշվետու ժամանակահատվածում գնաճի առավելագույն՝ 6.8% ցուցանիշ է գրանցվել Վաղարշապատում, իսկ նվազագույնը (3.8%)՝ Հրազդանում: Ընդ որում, պարենային ապրանքների և ոգելից խմիչքների գների մակարդակի առավելագույն աճ է արձանագրվել Մարտունիում (9.1%) և Վաղարշապատում (8.9%): Երևանում 2003 թ. դեկտեմբերի նկատմամբ ՍԳԻ-ն կազմել է 104%:

Հիմնական ապրանքախմբերի գների փոփոխությունը (2003թ. դեկտ. =100)



1. ՀՀ, 2. Երևան, 3. Գյումրի, 4. Վանաձոր, 5. Վաղարշապատ, 6. Թալին, 7. Դիլիջան, 8. Հրազդան, 9. Եղեգնաձոր, 10. Մարտունի, 11. Կապան

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՈՒԿԱ

2004 թ. հունիսի վերջի դրությամբ գործազրկության մակարդակը կազմել է 9.3%՝ 1 տոկոսային կետով պակաս նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից: Այնուամենայնիվ, համաձայն ՀՀ ազգային վիճակագրական ծառայության անցկացրած ընտրանքային հետազոտության[4] արդյունքների՝ 2001 թ. գործազրկության մակարդակը կազմել էր 38.4%, 2002 թ.՝ 35.3%, 2003 թ.՝ 31.2%, այնինչ գործազրկության պաշտոնական մակարդակը այդ տարիներին չի գերազանցել 10.5%-ը:

Գործազրկության տարածաշրջանային բաշխումը զգալի փոփոխություններ չի կրել՝ չզբաղվածների մեծ մասը Երևանում է, Շիրակի և Լոռու մարզերում, իսկ նրանց թվաքանակը ավելացել է միայն Լոռու մարզում (0.9%-ով):

2004 թ. հունիսի դրությամբ 20%-ով կրճատվել է նաև նպաստառու գործազուրկների թվաքանակը՝ կազմելով 5.9 հազ. մարդ, իսկ նպաստի միջին չափը կազմել է 3351 դրամ՝ նախորդ տարվա համեմատ ավելանալով ընդամենը 165 դրամով:


Զբաղվածության մակարդակի և աշխատուժի արտադրողականության ավելացմանը զուգընթաց, զգալիորեն բարձրացել է ՀՀ միջին ամսական անվանական աշխատավարձը և հաշվետու ժամանակահատվածում կազմել 40 հազ. դրամ՝ նախորդ տարվա մոտ 30 հազ. դրամի փոխարեն: Մասնավորապես, հունիսի դրությամբ միջին ամսական աշխատավարձի 40%-ից ավելի աճ է գրանցվել անտառտնտեսության, առողջապահության և սոցիալական ապահովության, կրթության, մշակույթի ու արվեստի բնագավառներում, ինչպես նաև կառավարման մարմիններում: Այնուամենայնիվ, աշխատավարձի ճյուղային բաշխումը շարունակում է բավականին անհավասարաչափ մնալ, ընդ որում՝ այդ ճեղքվածքն արտահայտող՝ ամենաբարձր (վարկավորման և ապահովագրության ոլորտ) և ամենացածր աշխատավարձերի (անտառտնտեսության ոլորտ) հարաբերակցությունը հունիսի դրությամբ կազմել է 9.6՝ անցյալ տարվա 9-ի փոխարեն:

Նկատելի է բյուջետային և ոչ բյուջետային ոլորտների աշխատավարձերի բաշխման որոշակի հարթեցում: Այսպես, ոչ բյուջետային ոլորտում միջին ամսական անվանական աշխատավարձը, մոտ 2 անգամ գերազանցելով բյուջետային ոլորտի համապատասխան ցուցանիշը (2003 թ. այդ տարբերությունը 2.3 անգամ էր), կազմել է 51.9 հազ. դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 27.9%-ով:

[4] Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2004 թ. հունվար-հունիսին» տեղեկագիր:

2004 թվականի առաջին կիսամյակում արձանագրվել է պետբյուջեի հարկային եկամուտների գերակատարում և ծախսային որոշ հոդվածներում խնայողությունների ձևավորում: Բյուջեի եկամուտներն ու դրամաշնորհները գերազանցել են կիսամյակի համար նախատեսված ցուցանիշը 4.0 տոկոսով՝ ի հաշիվ հարկային մուտքերի, ոչ հարկային եկամուտների և կապիտալի գործառնություններից ստացված եկամուտների: Ընդ որում, հարկային եկամուտները գերազանցել են կիսամյակի ծրագրային մակարդակը 3.1 մլրդ դրամով, ոչ հարկային եկամուտները՝ 2.0 մլրդ դրամով, իսկ կապիտալ գործառնություններից եկամուտները՝ 0.6 մլրդ դրամով: Հարկերը կազմել են ՀՆԱ 19.6%-ը՝ նախորդ տարվա առաջին կիսամյակի 19.3%-ի փոխարեն, իսկ հավաքագրված հարկերի անվանական աճը նախորդ տարվա նկատմամբ կազմել է 17.6 %: Հատկանշական է, որ կիսամյակի ընթացքում հարկերի նման բարձր մակարդակի ապահովումը դրական նախադրյալ է ստեղծում ոչ միայն տարեկան ծրագրի կատարման, այլև գերակատարման համար:

Կիսամյակի ընթացքում դրամաշնորհները նվազել են 93.6%-ով (պայմանավորված Լինսի հիմնադրամի դրամաշնորհների բացակայությամբ)՝ ապահովելով կիսամյակի համար ծրագրված ցուցանիշի 53.9%-ը:




Ինչպես նշվել է, կիսամյակի ընթացքում եկամուտների գերակատարումն ուղեկցվել է ծախսային որոշ հոդվածների թերակատարումներով, և արդյունքում արձանագրվել են պակասուրդի ծրագրային ցուցանիշից շեղումներ: Դա անդրադարձել է նաև Գանձապետարանի միասնական հաշվի վրա, և կիսամյակի արդյունքում միասնական հաշվի մնացորդն ավելացել է 3.6 մլրդ դրամով, այն պարագայում, երբ ՀՀ կառավարության կողմից հաստատված 2004 թվականի ՀՀ պետական բյուջեի եռամսյակային համամասնություններով նախատեսվել էր 11.7 մլրդ դրամի ծախս:

Պետբյուջեի ցուցանիշների նման կատարողականի պայմաններում առաջին կիսամյակում ձևավորվել է 2.6 տոկոս զսպող հարկաբյուջետային ազդակ՝ ծրագրված 0.9 տոկոսի փոխարեն: Ընդ որում, եկամուտների գծով գրանցվել է 0.7 տոկոս, իսկ ծախսերի գծով՝ 1.9 զսպող ազդակ:

2004 թ. երկրորդ եռամսյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, պետբյուջեի եկամուտներն ու դրամաշնորհներն ավելացել են 4.2 տոկոսով, ընդ որում՝ հարկերի աճը կազմել է 17.2 տոկոս:


Հարկային եկամուտների կառուցվածքում մեծացել է ուղղակի հարկերի տեսակարար կշիռը: Նախորդ տարվա առաջին կիսամյակի համեմատ ուղղակի հարկերն աճել են 53 տոկոսով և կազմել հարկերի 20 տոկոսը՝ 2003 թվականի առաջին կիսամյակի 15.2 տոկոսի փոխարեն, իսկ անուղղակի հարկերն ավելացել են 8 տոկոսով՝ կազմելով հարկերի 64 տոկոսը՝ նախորդ տարվա 70 տոկոսի փոխարեն: Ուղղակի

հարկերից զգալի ավելացել է շահութահարկը՝ 86 տոկոսով, որը հիմնականում օրենսդրական փոփոխության հետևանք է: Նշենք, որ շահութահարկի մուտքերի աճ չէր արձանագրվել 1999 թվականից ի վեր:



Այլ հարկային եկամուտները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել են 26.4 տոկոսով, սակայն 1.1 տոկոսային կետով նվազել է դրանց կշիռը հարկերի մեջ՝ կազմելով 15.8 տոկոս:

Նշված դրական միտումներին զուգընթաց, աստիճանաբար հարթվում է նաև հարկերի հավաքագրման՝ նախորդ տարիներին բնորոշ անհամաչափությունը: Այսպես, երկրորդ եռամսյակում միջին ամսական հարկային եկամուտների 19.8 տոկոսն է բաժին ընկել ամսվա վերջին օրվան, իսկ նախորդ տարի նույն ցուցանիշը 34.7 տոկոս էր, 2001 թ. երկրորդ եռամսյակում՝ 37.3 տոկոս: Կիսամյակի կտրվածքով նույն ցուցանիշը կազմել է 16.1 տոկոս՝ նախորդ տարվա առաջին կիսամյակի 31.9 տոկոսի փոխարեն:




Չնայած կիսամյակի համար ծրագրված ծախսերի 9.5 տոկոսով թերի կատարմանը, առաջին կիսամյակում ծախսերի աճը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, կազմել է 6.0 տոկոս: Ընդ որում, ընթացիկ ծախսերի աճը, նախորդ տարվա առաջին կիսամյակի համեմատ, կազմել է 17.9 տոկոս, զուտ վարկավորմանը՝ 22.7 տոկոս, իսկ կապիտալ ծախսերը նվազել են 33 տոկոսով: Վերջինս պայմանավորվել է Լինսի հիմնադրամի հաշվին նախորդ տարի իրականացված կապիտալ ծախսերով, ինչը այս տարվա ծրագրում նախատեսված չէ: Ընթացիկ ծախսերի մեջ պետական սպառումն ավելացել է 15.7 տոկոսով՝ հիմնականում պայմանավորված «Ապրանքներ և ծառայություններ» հոդվածի ցուցանիշների աճով: Վերջինիս գծով կիսամյակի ընթացքում խնայվել է 7.8 մլրդ դրամ, կամ ծրագրի նկատմամբ արձանագրվել է թերակատարում 11.4 տոկոսով: Գրանցվել է տրանսֆերտների զգալի աճ (30.4 տոկոս), ինչը վկայում է Կառավարության՝ միջին ժամկետ ծախսերի ծրագրով նախատեսված սոցիալական ծախսերի ավելացման քաղաքականության իրականացման մասին:

Կապիտալ ծախսերը կազմել են կիսամյակային ծրագրով նախատեսվածի 76.9 տոկոսը: Դա բացատրվում է արտաքին ֆինանսավորման կապիտալ ծախսերի թերակատարմամբ (3.7 մլրդ դրամ) և դրա

հետևանքով էլ՝ ներքին ֆինանսավորման թերակատարմամբ (2.2 մլրդ դրամ՝ համաֆինանսավորում): Իսկ զուտ վարկավորումը կազմել է ծրագրայինի 93.3 տոկոսը: Այսպիսով, տարվա առաջին կեսի ծախսերի թերակատարումը համախառն պահանջարկի վրա ունեցել է զսպողական ազդեցություն:

Կիսամյակի ընթացքում դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունների կոորդինացման ոլորտում հիմնական անորոշությունը կապված էր ՀՀ պետբյուջեի եռամսյակային համամասնություններով սահմանված՝ բյուջեի միասնական հաշվի ժամանակավորապես ազատ միջոցներից 11.7 մլրդ դրամ նախատեսված ծախսի և պետբյուջեի ամսական ծրագրերում նշված հոդվածի գծով շեղման հետ: ՀՀ գանձապետարանի միասնական հաշվի միջին մեծությունը առաջին կիսամյակում կազմել է մոտ 37 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 14.6 մլրդ դրամի փոխարեն: Այն շուրջ 1.9 անգամ գերազանցել է կիսամյակի միջին ամսական հարկային եկամուտները:



Պետբյուջեի պակասուրդն առաջին կիսամյակում կազմել է 9.7 մլրդ դրամ՝ ծրագրված 28.7 մլրդ դրամի փոխարեն: Նշված ցուցանիշների շեղումը հիմնականում բացատրվում է ընթացիկ և կապիտալ ծախսերի՝ մոտ 13.9 մլրդ դրամով թերակատարմամբ և եկամուտների՝ 4.9 մլրդ դրամով գերակատարմամբ: Կիսամյակի պակասուրդի ֆինանսավորման աղբյուրներն ունեցել են հետևյալ կառուցվածքը. ներքին աղբյուրները կազմել են պակասուրդի 22.4 տոկոսը, իսկ արտաքին աղբյուրները՝ 77.6 տոկոսը: Ներքին աղբյուրները կազմել են ծրագրվածի 15.7 տոկոսը, ինչը կիսամյակի համար միասնական հաշվից նախատեսված միջոցները չծախսելու հետևանք է: Արտաքին աղբյուրները կազմել են ծրագրվածի 48.2 տոկոսը՝ պայմանավորված ՕԻԳ-երի՝ արտաքին ֆինանսավորման միջոցների թերստացումներով և Եվրոմիության պարտքի մարմամբ, որը ի սկզբանե նախատեսված չէր 2004 թվականի ՀՀ պետական բյուջեի մասին ՀՀ օրենքում: Պետական արժեթղթերից զուտ ֆինանսավորումը կազմել է 3.0 մլրդ դրամ, որը գերազանցել է կիսամյակային ծրագիրը 68.5 տոկոսով և կազմել է ներքին ֆինանսավորման աղբյուրների 141 տոկոսը: Նշենք, որ կիսամյակի պակասուրդի ֆինանսավորման 78 տոկոսը բաժին է ընկել երկրորդ եռամսյակին, որը 87.5 տոկոսով ֆինանսավորվել է ներքին աղբյուրների, 12.5 տոկոսով՝ արտաքին աղբյուրների հաշվին:

Հատկանշական է, որ պետական արժեթղթերի տոկոսադրույքները տարվա առաջին կեսին կազմել են միջինը 8.0 տոկոս՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազելով 7 տոկոսային կետով: Վերջինս կարելի է համարել պետական պարտքի կառավարման գործընթացի և դրամավարկային քաղաքականությունների արդյունավետ կոորդինացման շարունակական դրսևորում:

Արտաքին հատված [1]

Վերջին տարիներին արտաքին հատվածի հիմնական զարգացումները, մասնավորապես վճարային հաշվեկշռի ցուցանիշները, վկայում են համաշխարհային տնտեսությանը Հայաստանի ինտեգրման խորացման մասին: Մեծացել է երկրի բացվածության աստիճանը՝ կապված արտաքին առևտրի ծավալների ընդլայնման հետ:

Դրամավարկային քաղաքականության ծրագրով 2004 թ. առաջին կիսամյակում կանխատեսվել էր ապրանքների արտահանման և ներմուծման ծավալների՝ համապատասխանաբար 17% և 5% աճ: Դրան զուգահեռ, ծրագրվել էր նաև ծառայությունների արտահանման և ներմուծման ծավալների աճ, համապատասխանաբար՝ 13%-ով և 5%-ով: Կանխատեսվել էր արտերկրից ստացվող մասնավոր տրանսֆերտների ու եկամուտների 6% և 24% աճ, մինչդեռ պաշտոնական տրանսֆերտների՝ շուրջ 14%-ով նվազում: Ընթացիկ հաշվի՝ վերը նշված հոդվածների լավացման արդյունքում, ակնկալվում էր ընթացիկ հաշվի պակասուրդի կրճատում ավելի քան 41 մլն ԱՄՆ դոլարով, ընթացիկ հաշիվ/ՀՆԱ ցուցանիշի լավացում և 7.8% մակարդակ՝ նախորդ տարվա 13.5%-ի փոխարեն:

Ըստ Կենտրոնական բանկի գնահատումների[2]՝ ապրանքների արտահանումը (կրեդիտ) 2004 թ. առաջին կիսամյակում կազմել է 347 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ ավելանալով 25 մլն ԱՄՆ դոլարով (8%): Ապրանքների արտահանման աճը պայմանավորվել է «Հանքահումքային մթերքներ», «Մանածագործական իրեր», «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբերի արտահանման ծավալների՝ համապատասխանաբար 25 մլն ԱՄՆ դոլար, 10 մլն ԱՄՆ դոլար և 9 մլն ԱՄՆ դոլար աճով: Ավելացել են նաև «Պլաստմասսա ու դրանցից պատրաստված իրեր» և «Պատրաստի սննդի արտադրանք» ապրանքախմբերի արտահանման ծավալները՝ համապատասխանաբար 8 մլն դոլարով և 6 մլն ԱՄՆ դոլարով: Արտահանման աճը գրանցվել է «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբի արտահանման ծավալների զգալի կրճատման պայմաններում (26 մլն ԱՄՆ դոլարով), որն ամենամեծ տեսակարար կշիռն ունի արտահանման մեջ:

Նույն ժամանակահատվածում ապրանքների ներմուծումը (դեբետ) կազմել է 555 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա համեմատ ավելանալով 20 մլն ԱՄՆ դոլարով (4%): Ապրանքների ներմուծման աճին էապես նպաստել է «Բուսական ծագման արտադրանք», «Պատրաստի սննդի արտադրանք», «Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ» ապրանքախմբերի ներմուծման ծավալների աճը, համապատասխանաբար՝ 16 մլն ԱՄՆ դոլարով և 10-ական մլն ԱՄՆ դոլարով: Ավելացել է նաև «Մանածագործական իրեր» ապրանքախմբի ներմուծումը՝ 6 մլն ԱՄՆ դոլարով: Ընդ որում, «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբի ներմուծումը 2004 թ. առաջին կիսամյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, նվազել է 32 մլն ԱՄՆ դոլարով:


2004 թ. արտաքին առևտրի հիմնական առանձնահատկությունը «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբի ծավալների կրճատումն է: Դրա արտահանման ու ներմուծման ծավալները վերջին տարիներին ունեին կայուն աճի միտում, սակայն 2003 թ. չորրորդ եռամսյակից սկսեցին նվազել, որը շարունակվել է նաև 2004 թ. առաջին կիսամյակում: Այս ապրանքախմբի արտահանման ու ներմուծման ծավալների կրճատումը հիմնականում պայմանավորված է ճյուղում առկա կառուցվածքային խնդիրներով, ինչպես նաև Ռուսաստանից ներկրվող ադամանդի հումքի գների թանկացմամբ: «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախումբը արտահանման ու ներմուծման մեջ ունի ամենամեծ տեսակարար կշիռը, և դրա վարքագիծը էապես ազդում է ընդհանուր արտահանման ու ներմուծման ցուցանիշների վրա: Հետևաբար հարկ է նաև արտաքին առևտուրը դիտարկել առանց այդ ապրանքախմբի, որի դեպքում արտահանման աճը կկազմի 38%, իսկ ներմուծմանը՝ 13%:

---

[1] Հաշվետվությունում ներկայացված ցուցանիշների աճի տեմպերը հաշվարկված են դոլարային ցուցանիշների հիման վրա:

[2] Վճարային հաշվեկշռի 2004թ. երկրորդ եռամսյակի տվյալները ՀՀ ԿԲ կանխատեսումներն են:

Արտաքին առևտրի նման դինամիկայի պայմաններում առևտրային հաշվեկշռի պակասուրդը կրճատվել է 5 մլն ԱՄՆ դոլարով (2%-ով) և կազմել 208 մլն ԱՄՆ դոլար:



Ընթացիկ հաշվի մյուս հոդվածներից մասնավորապես ավելացել է ծառայությունների արտահանումը (9 մլն ԱՄՆ դոլարով)՝ գերազանցելով կանխատեսված մակարդակը, իսկ ներմուծումն ավելացել է 11 մլն ԱՄՆ դոլարով և կազմել 130 մլն ԱՄՆ դոլար, որը կանխատեսված ցուցանիշից փոքր-ինչ ցածր է: Օրագրվածի համեմատ բարձր աճի միտում են ունեցել մասնավոր հատվածի կողմից ստացվող տրանսֆերտները, որոնք ավելացել են 15 մլն ԱՄՆ դոլարով, իսկ պետական տրանսֆերտներն ավելացել են 3 մլն ԱՄՆ դոլարով: «Եկամուտներ» հոդվածի ցուցանիշը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ կրճատվել է 11 մլն ԱՄՆ դոլարով: Ընդ որում, նվազման հիմնական պատճառը ոչ ռեզիդենտներին վճարվող աշխատավարձերի, ինչպես նաև ուղղակի ներդրումների դիմաց վճարվող եկամուտների էական աճն է:

Ընթացիկ հաշվի հոդվածների նման վարքագծի արդյունքում ընթացիկ հաշվի պակասուրդը կրճատվել է 10 մլն ԱՄՆ դոլարով՝ կազմելով 110 մլն ԱՄՆ դոլար, ինչը զուգակցվելով իրական ՀՆԱ բարձր աճի տեմպի հետ, զգալիորեն կրճատել է ընթացիկ հաշիվ/ՀՆԱ ցուցանիշը՝ կազմելով 10.3%:

2004 թ. առաջին կիսամյակում գրանցված կապիտալ ու ֆինանսական հոսքերի կառուցվածքում, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ, նկատվել է որոշակի փոփոխություն: Մասնավորապես, եթե նախորդ տարի ընթացիկ հաշվի ֆինանսավորումն իրականացվել է մեծամասամբ կապիտալ տրանսֆերտների, ապա 2004 թ.՝ ուղղակի ներդրումների միջոցով: 2004 թ. առաջին կիսամյակում կապիտալ տրանսֆերտները նվազել են 32 մլն ԱՄՆ դոլարով, նույնքանով ավելացել են օտարերկրյա ուղղակի ներդրումները (առանց Ռուսաստանի վարկի):

Արտաքին աշխարհից ներգրավվող պետական վարկերի կազմում և կառուցվածքում նույնպես էական փոփոխություններ չեն արձանագրվել:

Առևտրային բանկերի ԶԱԱ-ը կիսամյակի ընթացքում աճել են 3.6 մլն ԱՄՆ դոլարով: Ընդ որում՝ արտաքին ակտիվներն ավելացել են 13 մլն ԱՄՆ դոլարով, իսկ պարտավորությունները՝ 8 մլն ԱՄՆ դոլարով: Առևտրային բանկերի ԶԱԱ աճը հիմնականում պայմանավորվել է ՀՀ ռեզիդենտների արտարժութային ավանդների աճով (կիսամյակի ընթացքում ավելացել են շուրջ 28 մլն ԱՄՆ դոլարով), ինչպես նաև բանկերի կողմից ԿԲ-ից ու տնտեսությունից արտարժույթի գնմամբ: Բացի այդ, չեն ավելացել նաև տնտեսության՝ արտարժույթով վարկավորման ծավալները:

ՀՀ առևտրային բանկերի ու վարկային կազմակերպությունների վարկային պարտավորությունները[3] արտաքին աշխարհի նկատմամբ 2004 թվականի երկրորդ եռամսյակի վերջին կազմել են 19.2 մլն դոլար՝ նախորդ եռամսյակի վերջի 14.7 մլն դոլարի փոխարեն: Երկրորդ եռամսյակի ընթացքում առևտրային բանկերը արտաքին աշխարհից ներգրավել են 8.9 մլն ԱՄՆ դոլար վարկային միջոցներ, նախկինում ձեռք բերված վարկերի դիմաց կատարել են 4.2 մլն դոլարի հիմնական գումարի և 0.1 մլն դոլարի՝ տոկոսավճարի մարումներ:


[3] Ներառված չեն միջազգային ֆինանսական կազմակերպությունների և այլ վարկատուների կողմից տարբեր ծրագրերի շրջանակներում ՀՀ կառավարության միջոցով ստացված վարկերը:

Նախորդ եռամսյակի համեմատ, երկրորդ եռամսյակում հիմնականում պահպանվել է վարկատու երկրների կազմը, փոփոխվել են միայն այդ երկրների տեսակարար կշիռները ամբողջի մեջ, և ավելացել է մեկ նոր վարկատու երկիր՝ Կիպրոսը: Մասնավորապես, ՀՀ առևտրային բանկերի հիմնական վարկատու երկրներն են՝ Շվեյցարիան, որի տեսակարար կշիռն ամբողջի մեջ կազմել է 25.2% (նախորդ տարի՝ 34.0%), Կիպրոսը՝ 25.2 %, Հունաստանը՝ 13.4 % (նախորդ տարի՝ 25.2 %), Մեծ Բրիտանիան՝ 10.6% (նախորդ տարի՝ 14.3 %), Ռուսաստանը՝ 4.0 % (նախորդ տարի՝ 5.4 %) և Ֆրանսիան՝ 3.7 % (նախորդ տարի՝ 8.3 %):

Ներգրաված վարկերը բանկերը հիմնականում տեղաբաշխել են ըստ տնտեսության հետևյալ հատվածների՝ 5 մլն ԱՄՆ դոլարը՝ էներգետիկայի, 8.8 մլն ԱՄՆ դոլարը՝ ֆինանսական, 1.9 մլն ԱՄՆ դոլարը՝ առևտրի, 1.4 մլն ԱՄՆ դոլարը՝ արդյունաբերության, 0.8 մլն ԱՄՆ դոլարը՝ գյուղատնտեսության հատվածներում:

Ներգրաված վարկերի միջին կշռված տոկոսադրույքը նախորդ եռամսյակի համեմատ աճել է և կազմել 4.6% (1-ին եռամսյակ՝ 4.3%), որոնց մոտ 28.2%-ը լողացող (LIBOR) տոկոսադրույքով է: Վարկերի միջին ժամկետայնությունը մոտ 3.9 տարի է: Կարճաժամկետ վարկերի տեսակարար կշիռն ավելացել է և կազմել ընդհանուր վարկերի 32.5 %-ը՝ նախորդ եռամսյակի 2.9%-ի փոխարեն:


ՀՀ առևտրային բանկերի արտաքին պարտքի դինամիկան 1999-2004 թթ. [4]




Կենտրոնական բանկի ԶԱԱ-ը առաջին կիսամյակի վերջի դրությամբ կազմել են 247 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ կրճատվելով 25 մլն ԱՄՆ դոլարով: Իսկ երկրորդ եռամսյակում, նախորդ եռամսյակի համեմատ, ԶԱԱ-ը կրճատվել են 10 մլն ԱՄՆ դոլարով: Կենտրոնական բանկի ԶԱԱ կրճատման հիմնական պատճառները ԿԲ կողմից առաջին կիսամյակում իրականացված արտարժութային ներդրումներն են և արտաքին պարտքի սպասարկման համար իրականացված վճարումները (համապատասխանաբար՝ 6.7 մլն ԱՄՆ դոլար և 18 մլն ԱՄՆ դոլար):

2004 թ. առաջին կիսամյակի ընթացքում զգալի է եղել արտարժույթի ներհոսքը, որն իր ազդեցությունն է ունեցել արտարժութային շուկայի վրա: Հատկապես զգալի է մասնավոր հատվածի կողմից ստացված տրանսֆերտների ու եկամուտների կապիտալ ներհոսքը: Բացի այդ, Հայաստանում զբոսաշրջության ծավալների մեծացման արդյունքում արտարժույթի առաջարկը տնտեսությունում զգալիորեն ավելացել է, միևնույն ժամանակ, բարձր է եղել նաև դրամի նկատմամբ պահանջարկը՝ պայմանավորված սեզոնայնությամբ ու բարձր տնտեսական ակտիվությամբ: Նշված արտարժութային հոսքերի արդյունքում ՀՀ դրամի անվանական փոխարժեքը, հիմնականում պահպանելով տարեսկզբից նկատված միտումը, շարունակել է արժեքավորվել և կիսամյակի վերջի դրությամբ կազմել է 534.49 դրամ՝ նախորդ տարվա վերջի 566 դրամի փոխարեն: Կիսամյակի ընթացքում ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար միջին հաշվարկային անվանական փոխարժեքը կազմել է 558.18 դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ արժեքավորվելով 4.8%-ով: Երկրորդ եռամսյակի անվանական միջին հաշվարկային փոխարժեքը կազմել է 551.14 դրամ՝ առաջին եռամսյակի համեմատ արժեքավորվելով 2.5%-ով:

[4] 2003 թվականի 1-ին եռամսյակից ներառվում են նաև վարկային կազմակերպությունների տվյալները:



ՀՀ դրամի անվանական փոխարժեքի էական արժեքավորումը, բնականաբար, իր ազդեցությունն է ունեցել դրամի իրական արդյունավետ փոխարժեքի վրա՝ արժեքավորման ուղղությամբ: Իրական արդյունավետ փոխարժեքն արժեքավորվել է 0.4%-ով: Հայաստանի միջին կիսամյակային գնաճը գերազանցել է գործընկեր երկրների միջին կիսամյակային գնաճը: Հայաստանի գնաճի ազդեցությունը իրական փոխարժեքի վրա կազմել է 7.5 տոկոսային կետ, փոխարժեքինը՝ 5.1 տոկոսային կետ (երկուսն էլ արժեքավորման ուղղությամբ): Գործընկեր երկրների գնաճի ազդեցությունը կազմել է 7.1 տոկոսային կետ, փոխարժեքինը՝ 5.1 տոկոսային կետ (երկուսն էլ արժեզրկման ուղղությամբ)[5]:



[5] *Իրական արդյունավետ փոխարժեքի հաշվարկն իրականացված է միջին երկրաչափական մեթոդով, այդ իսկ պատճառով հաշվարկման մեջ ընդգրկված ցուցանիշների տոկոսային փոփոխությունների գումարը հավասար չէ իրական փոխարժեքի փոփոխությանը:*

Դրամավարկային քաղաքականություն

Դրամավարկային քաղաքականության երկրորդ եռամսյակի ծրագիրը և հիմնական խնդիրները

2004 թվականի առաջին եռամսյակի ընթացքում ձևավորված մակրոտնտեսական միջավայրը բնութագրվում էր տնտեսական աճի և գնաճի ցուցանիշների՝ ծրագրվածից ցածր մակարդակների արձանագրմամբ, որն ուղեկցվել է նաև փողի պահանջարկի՝ նախատեսվածից առավել արագ անկման դրսևորումներով: Միևնույն ժամանակ, տարեսկզբից դիտվել են փողի պահանջարկի կառուցվածքային փոփոխություններ, ինչն անդրադարձել է շրջանառությունում գտնվող կանխիկի վրա՝ հանգեցնելով նախատեսվածի համեմատ առավել բարձր նվազման տեմպերի: Բացի ցածր տնտեսական աճից, դրան նպաստել է նաև բյուջետային ծախսերի կառուցվածքի փոփոխությունը, այն է՝ ընդհանուրի մեջ կանխիկ ծախսերի տեսակարար կշռի կրճատումը: Եվ, վերջապես, փողի առաջարկն առաջին եռամսյակում զսպվել է Կառավարության կողմից իրականացված հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությամբ, ինչն արտահայտվել է հարկերի հավաքագրման ծրագրի գերակատարման և ծախսերի ծրագրի թերակատարման պայմաններում տնտեսությունից իրացվելիության ներքաշմամբ:

Ելնելով ԿԲ այն գնահատումներից, որ երկրորդ եռամսյակում կվերականգնվեն տնտեսական աճի ծրագրված տեմպերը և կապահովվի ծրագրային ցուցանիշը, կշարունակվեն փողի պահանջարկի վրա հարկաբյուջետային քաղաքականության զսպողական ազդեցության՝ տարեսկզբից արձանագրված միտումները՝ այդ ժամանակահատվածի դրամավարկային քաղաքականության ծրագրավորմամբ նախատեսվում էր փողի առաջարկը կառավարել տատանման միջակայքի ստորին սահմանից ներքև: Միևնույն ժամանակ, փողի բազայի կարգավորման նման սցենարը պայմանավորված էր նաև նրանով, որ շրջանառությունում գտնվող կանխիկի կրճատումը մասամբ նվազեցրել էր ԿԲ-ից դուրս կանխիկը, մասամբ էլ՝ նպաստել իրացվելիության ավելցուկի բարձր մակարդակի ձևավորմանը, որի պարագայում դիտվել էր տոկոսադրույքների նվազում: Գների վրա նշված գործոնների ազդեցության ռիսկը չեզոքացնելու նպատակով ԿԲ-ն չի ձգտել պահպանել փողի ագրեգատների ծրագրված սկզբնական մակարդակները՝ արդյունքում նպատակ ունենալով որոշ չափով զսպել նաև նախորդ տարվա ընթացքում հացի գների բարձրացման հետևանքով ձևավորված միջին գնաճի ցուցանիշը:

Գնաճի կառավարման գործընթացում էական շեղումներ չէին սպասվում, և ԿԲ-ն իրատեսական էր համարում երկրորդ եռամսյակի համար ծրագրված 2.4% ցուցանիշի ապահովումը:

Դրամավարկային քաղաքականության զարգացումները

ՓՈՂԻ ՊԱՀԱՆՋԱՐԿ

Երկրորդ եռամսյակում ԿԲ կողմից իրականացված դրամավարկային քաղաքականության արդյունքում ձևավորված դրամավարկային միջավայրը հիմնականում բնութագրվել է առաջին եռամսյակի միտումների շարունակականությամբ: Դա արտահայտվել է փողի ագրեգատների՝ ծրագրված աճի տեմպերից և մակարդակներից ցածր ցուցանիշների ձևավորմամբ, որի հիմնական պատճառը, ինչպես արդեն նշվել է, կանխիկի նկատմամբ պահանջարկի անկման դրսևորումների պահպանումն էր նաև երկրորդ եռամսյակում:

Երկրորդ եռամսյակի ընթացքում փողի զանգվածն աճել է 2.7 %-ով կամ 6.1 մլրդ դրամով և հունիսի վերջին կազմել 232.0 մլրդ դրամ: Դրամային զանգվածն աճել է ավելի դանդաղ տեմպերով, քանի որ փողի զանգվածի ընդլայնման մոտ կեսն ապահովվել է արտարժութային ավանդների աճի հաշվին՝ 2.5 մլրդ դրամ: Դրամային զանգվածը հունիսի վերջին կազմել է 123.2 մլրդ դրամ՝ ավելանալով 3.6 մլրդ դրամով կամ 3%-ով:

Ծրագրային և փաստացի դրամավարկային ցուցանիշների համեմատական աղյուսակ
(ըստ 2004 թ. ֆինանսական ծրագրի)

աճի տեմպ, %


Ցուցանիշներ	II եռամսյակը՝ I եռամսյակի նկատմամբ		II եռ.՝ նախորդ տարվա նույն ժամ. նկատմամբ	
	Ծրագիր	*Փաստացի*	*Ծրագիր*	*Փաստ.*
Փողի զանգված (M2X, ժամ. վերջ)	3.9	2.7	22.2	19.5
Փողի զանգված (M2X, ժամ. միջին)	2.3	2.2	19.8	18.9
Փողի շրջապտույտի արագ. (միջին)	9.3	13.4	-7.7	-3.1
Դրամային զանգված (M2, ժամ. վերջ)	4.6	3.0	17.1	9.7
Դրամային զանգված (M2, ժամ. միջին)	1.6	1.1	15.7	9.0
Դրամի շրջապտույտի արագ. (միջին)	9.2	13.3	-4.5	5.4
Փողի բազա (ժամ. վերջ)	2.0	2.7	14.2	11.4
Փողի բազա (ժամ. միջին)	-1.7	-1.2	9.8	4.5
Փողի բազմարկիչ (ժամ. միջին)	4.0	3.4	9.3	14.0
Դրամային բազմարկիչ (ժամ. միջին)	3.3	2.2	5.3	3.5

Նույն գործոններով պայմանավորված՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ փողի աճի տեմպերը ևս ցածր են եղել ծրագրային ցուցանիշներից: Սակայն, ի տարբերություն դրամային զանգվածի, փողի զանգվածի կառուցվածքում կանխիկի պահանջարկի անկումը մեծ մասամբ չեզոքացվել է արտարժութային ավանդների՝ նախատեսվածից ավելի արագ աճի տեմպերով (29.4%-ի փոխարեն 35.4%):

Փողի զանգվածի կառուցվածքում, ճիշտ է, արձանագրվել են շրջանառությունում կանխիկի՝ ծրագրվածից արագ աճի տեմպեր՝ 2.9%-ի փոխարեն 3.4% (2.7 մլրդ դրամ)՝ պայմանավորված գործարար ակտիվության աճով, այնուամենայնիվ դրա մակարդակն ավելի քան 6.0 մլրդ դրամով ցածր է կանխատեսված ցուցանիշից: Տնտեսական աճի գործոնն անդրադարձել է նաև դրամային ավանդների (830 մլն դրամով կամ 2.1%), հատկապես ցպահանջ ավանդների աճի վրա (2.0 մլրդ դրամով), այն դեպքում, երբ ժամկետային ավանդները նվազել են 1.2 մլրդ դրամով:

Արտարժութային ավանդներն աճել են 2.5 մլրդ դրամով կամ 2.4%-ով՝ ակնկալվող 3%-ի փոխարեն, սակայն, ի տարբերություն դրամային ավանդների, արտարժութային միջոցներն առևտրային բանկերում ավելացել են գերազանցապես ժամկետային ավանդների ներգրավման հաշվին (1.7 մլրդ դրամ), ինչն ուղեկցվել է ցպահանջ ավանդների 800 մլն դրամի աճով:


ՀՀ դրամով և արտարժույթով ավանդները՝ ըստ ժամկետայնության



Փողի զանգվածի կառուցվածքային տարրերի նման միտումներից կարելի է եզրակացնել, որ տնտեսավարող սուբյեկտները նախապատվություն են տալիս դրամով գործառնություններին, չնայած տնտեսությունում դեռևս շարունակվում է արտարժութային խնայողությունների ձևավորումը:

Եռամսյակի ընթացքում համեմատաբար կայուն է եղել առևտրային բանկերում ոչ ռեզիդենտների ավանդների վարքագիծը: Դրանք նվազել են մոտ 600 մլն դրամով, այն էլ, որպես կանոն, հիմնականում արտարժութային ավանդների զուտ մարման հաշվին:


Փողի զանգվածի եռամսյակային փոփոխությունների վրա, ըստ ամիսների, մեծապես ազդել են հունիսի շարժերը. մասնավորապես՝ փողի զանգվածն ավելացել է 4.6 մլրդ դրամով, շրջանառությունում կանխիկը՝ 3.5 մլրդ դրամով:



Երկրորդ եռամսյակում փողի զանգվածի կառուցվածքային համամասնությունները փոխվել են. կանխիկի տեսակարար կշիռը 35.2%-ից դարձել է 35.4%, դրամային ավանդներինը՝ 17.7%-ից 17.6% և արտարժութային ավանդներինը՝ 47%-ից 46.9%:

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ 4 տոկոսային կետով նվազել է կանխիկի տեսակարար կշիռը փողի զանգվածում՝ ի հաշիվ արտարժութային ավանդների տեսակարար կշռի աճի (4.6 տոկոսային կետով), որն էլ հիմնավորում է փողի պահանջարկի՝ տարեսկզբից արձանագրված փոփոխությունները:

Վերջինս անդրադարձել է նաև փողի և դրամի շրջապտույտի արագությունների վարքագծի վրա՝ հանգեցնելով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նախատեսվածից ավելի դանդաղ տեմպերով նվազման. փողի շրջապտույտի արագությունը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, նվազել է 3.1%-ով՝ ծրագրված 7.7%-ի փոխարեն, իսկ դրամի շրջապտույտի արագությունը անգամ աճել է 5.4%-ով (ծրագրված էր 4.5% նվազում):




ՓՈՂԻ ԱՌԱՋԱՐԿ

Երկրորդ եռամսյակում փողի առաջարկի ընդլայնումն ապահովվել է բացառապես բանկային համակարգի ԶՆԱ՝ 15.3 մլրդ դրամով աճի հաշվին, որն ուղեկցվել է ԶԱԱ 9.2 մլրդ դրամով նվազմամբ:

Բանկային համակարգի ԶԱԱ նվազումը բաշխվել է ԿԲ և առևտրային բանկերի արտարժութային պահուստների շարժերում՝ 5.8 մլրդ և 3.4 մլրդ դրամ համամասնությամբ (մանրամասն տե՛ս «Փողի բազա» ենթաբաժնում): Հատկանշական է, որ վերջին շրջանում առևտրային բանկերի ԶԱԱ շարունակական աճի փոխարեն այս եռամսյակում դրսևորվել են նվազման միտումներ, ինչը թերևս վկայում է, որ եռամսյակի ընթացքում ֆինանսական միջոցների ներհոսքը բանկերը չեն պահել արտասահմանյան բանկերի իրենց թղթակցային հաշիվներում, այլ ուղղել են տնտեսության ֆինանսավորմանը: Ընդ որում, ներքին վարկավորման ծավալները բավականին մեծ են եղել, եթե հաշվի առնենք, որ այդ նպատակին են ծառայել ոչ միայն առաջին, այլ նաև երկրորդ եռամսյակում ներգրավված 2.4 մլրդ դրամ ծավալով արտարժութային ավանդները:

Բանկային համակարգի ԶԱԱ և ԶՆԱ վարքագիծը




Բանկային համակարգի ԶՆԱ կառուցվածքային բոլոր տարրերի գծով եռամսյակի ընթացքում դիտվել են աճի միտումներ: Ինչպես նշվել է, զգալի ավելացել է բանկերի կողմից տնտեսության վարկավորման ցուցանիշը (11.1 մլրդ դրամով), որի մոտ 55%-ը՝ ի հաշիվ արտարժույթով վարկավորման աճի: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում արձանագրվել էր 4.9 մլրդ դրամով կամ 5.5%-ով աճ, իսկ այս տարվա երկրորդ եռամսյակում՝ մոտ 2 անգամ ավելի՝ 10.2%: Տարեսկզբից տնտեսության վարկավորման աճի բարձր տեմպերը հիմնականում բանկերի կողմից տրամադրված վարկերի ընդհանուր ծավալում սպառողական վարկերի մեծ տեսակարար կշռի արդյունք են: Դա է վկայում նաև այն, որ անցած ամիսներին վարկավորման գերակշիռ մասը (67.1%) ուղղվել է տնային տնտեսություններին:

Բանկերի կողմից ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերն ավելացել են 918 մլն դրամով, որի գերակշիռ մասը՝ 809 մլն դրամը, բաժին է ընկել արտարժույթով տրամադրված վարկերին:

Համակարգի հանդեպ Կառավարության զուտ պարտավորություններն աճել են 3.6 մլրդ դրամով, իսկ զուտ այլ ակտիվները՝ 618 մլն դրամով: Ընդ որում, առաջինը պայմանավորվել է և՛ ԿԲ, և՛ բանկերի հանդեպ Կառավարության զուտ պարտավորությունների աճով (համապատասխանաբար՝ 2.9 մլրդ և 700 մլն դրամ), որոնք տեղի են ունեցել ԿԲ-ի և բանկերի արժեթղթերի պորտֆելի համալրման հետևանքով: Երկրորդ ցուցանիշի աճը տեղի է ունեցել բացառապես ԿԲ զուտ այլ ակտիվների շարժերի ազդեցությամբ՝ պայմանավորված ԿԲ կողմից կիրառված ներքաշող սվոփ գործառնությունների մարմամբ:

ՓՈՂԻ ԵՎ ԴՐԱՄԱՅԻՆ ԲԱԶՄԱՐԿԻՉՆԵՐ

Եռամսյակի ընթացքում փողի և դրամային բազմարկիչների ծրագրված աճի միտումներն ապահովվել են, սակայն կառուցվածքային փոփոխությունների հետևանքով դրանց տեմպերը ցածր են եղել ծրագրային ցուցանիշներից: Փողի բազմարկիչն աճել է 3.4%-ով՝ նախատեսված 4%-ի, իսկ դրամային բազմարկիչը՝ 2.2%-ով՝ 3.3%-ի փոխարեն: Դրամային բազմարկչի աճի տեմպը պակաս է եղել նաև նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշից՝ 5.3%-ի փոխարեն 3.5%, իսկ փողի բազմարկիչը դրսևորել է հակառակ միտումը՝ 9.3%-ի փոխարեն 14.0% աճ՝ պայմանավորված արտարժութային ավանդների աճի բարձր տեմպերով (35.4%):




ՓՈՂԻ ԲԱԶԱ


Ամփոփելով տարվա առաջին եռամսյակի մակրոտնտեսական արդյունքները՝ ապրիլի սկզբին, բանկերի հետ կազմակերպված հանդիպման ժամանակ, ՀՀ ԿԲ-ն հանդես եկավ հայտարարությամբ, որում ամփոփ ներկայացվեցին ինչպես անցած եռամսյակում փաստացի ձևավորված իրավիճակը, այնպես էլ հաջորդ եռամսյակի ընթացքում իրականացվելիք դրամավարկային քաղաքականության հիմնական ուղղությունները: Նշվեց, որ երկրորդ եռամսյակում արտաքին ինքնավար հոսքերի ազդեցությունը փողի բազայի վրա կլինի նվազման ուղղությամբ՝ հիմնականում 8.2 մլրդ դրամի արտաքին պարտքի սպասարկման և 6.8 մլրդ դրամի դրամաշնորհների ու այլ մուտքերի ստացման արդյունքում:

Ներքին ինքնավար հոսքերը, ընդհակառակը, հանգեցնելու էին փողի բազայի աճի՝ 5.0 մլրդ դրամով (3.7 մլրդ դրամ նախկինում ներգրավված ավանդների մարում և բանկերին 1.3 մլրդ դրամի սահմաններում «Վերականգնման վարկերի բանկի» (KfW) վարկերի տրամադրում), որը ոչ միայն կչեզոքացներ արտաքին հոսքերի ազդեցությունը, այլև փոքր-ինչ կգերազանցեր փողի բազայի աճի (մարտի վերջի 106.8 մլրդ դրամ մակարդակի) գնահատումները: Դա էլ ԿԲ-ն նախատեսում էր ճշգրտել դրամավարկային ներքաշող գործիքների կիրառման միջոցով:


Եռամսյակի փաստացի արդյունքներով՝ փողի բազայի կառավարման ծրագրված սցենարը հիմնականում իրագործվել է՝ ապահովվել է փողի բազայի եռամսյակային 2.7% աճ և հունիսի վերջին՝ 106.3 մլրդ դրամ մակարդակ: Այն 500 մլն դրամով ցածր է տատանման միջակայքի ստորին սահմանից, ինչը և արտահայտված էր ԿԲ կողմից երկրորդ եռամսյակի համար կատարված՝ փողի պահանջարկի գնահատումներում՝ պայմանավորված առաջին եռամսյակում դրա կառուցվածքում դրսևորված փոփոխություններով:




ԿԲ-ից դուրս գտնվող կանխիկի վարքագիծն ու ազդեցության գործոնները նույնն են, ինչ որ՝ բանկային համակարգից դուրս կանխիկինը, ինչի պարագայում այն ևս ավելացել է 2.7 մլրդ դրամով կամ 3.2%-ով, սակայն դեռևս ցածր է ակնկալվող մակարդակից 4.6 մլրդ դրամով՝ առաջին եռամսյակում կտրուկ անկման հետևանքով: Ընդ որում, ըստ ամսական վարքագծի, ԿԲ-ից դուրս կանխիկի աճն ամբողջությամբ ապահովվել է հունիսին (3.4 մլրդ դրամ):




ԿԲ-ում բանկերի թղթակցային հաշիվների մնացորդը, ընդհակառակը, մոտ 2.0 մլրդ դրամով ավելացել է ապրիլին, իսկ այնուհետև աստիճանաբար նվազելով՝ հունիսի վերջին կազմել 18.7 մլրդ դրամ: Ընդ որում, ապրիլի աճը տեղի է ունեցել վերջին օրվա կտրուկ աճի հաշվին, այն դեպքում, երբ ամիսն ընդհանուր առմամբ բնութագրվել է իրացվելիության ավելցուկի համեմատաբար ցածր մակարդակով՝ 2.5 մլրդ դրամ: Հետագայում ավելցուկային իրացվելիության աճը հիմնականում պայմանավորվել է ապրիլի վերջին թղթակցային հաշիվներում ձևավորված մեծ մնացորդով, որի նվազման պարագայում անգամ հունիսի միջին ամսական ավելցուկը հասել է 5.0 մլրդ դրամի: Արդյունքում՝ միջին եռամսյակային ավելցուկը կազմել է 3.8 մլրդ դրամ՝ նախորդ եռամսյակի 4.5 մլրդ և նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 3.2 մլրդ դրամի փոխարեն:



ԿԲ փողի առաջարկի տարրերի վարքագիծը ևս ընթացել է ըստ նախանշված սցենարի: Այսպես, ՀՀ ԿԲ ԶԱԱ-ը նվազել են 5.8 մլրդ դրամով՝ պայմանավորված 7.5 մլրդ դրամին համարժեք ծավալով արտաքին պարտքի սպասարկմամբ և 1.7 մլրդ դրամի այլ փոխարկումներով: Ընդ որում, եռամսյակի ընթացքում, իրացվելիության ավելցուկի կրճատման նպատակով, ԿԲ կողմից կիրառվել է ավելի քան 2.8 մլրդ դրամի ներքաշող սվոփ գործիքը, որը (ներառյալ նաև նախորդ եռամսյակից փոխանցված 650 մլն դրամը) մինչև եռամսյակի վերջ ամբողջությամբ մարվել է: Հունիսի վերջին ԿԲ ԶԱԱ մակարդակը կազմել է 139.7 մլրդ դրամ՝ փոքր-ինչ գերազանցելով ծրագրային ցուցանիշը:



ՀՀ ԿԲ ԶՆԱ-ն աճել է 8.6 մլրդ դրամով և եռամսյակի վերջին կազմել –33.4 մլրդ դրամ: Ներքին ակտիվների կառուցվածքում նշված աճը բաշխվել է հետևյալ համամասնությամբ. ԿԲ հանդեպ Կառավարության զուտ պարտավորություններն ավելացել են 2.9 մլրդ, բանկերի պարտավորությունները՝ 4.7 մլրդ և զուտ այլ ակտիվները՝ 1.0 մլրդ դրամով: Վերջինս տեղի է ունեցել հիմնականում ԿԲ կողմից իրականացված իրացվելիության ներքաշման սվոփ գործառնության զուտ մարման ազդեցությամբ:




Կառավարության պարտավորություններն աճել են արժեթղթերի երկրորդային շուկայից 3.7 մլրդ դրամի պետպարտատոմսերի ձեռքբերման և Գանձապետարանի միասնական հաշվում 860 մլն դրամի կուտակման արդյունքում: Երկրորդային շուկայից արժեթղթերի գնումը առավելապես նպատակաուղղվել է ԿԲ պորտֆելի համալրմանը, որը զուգորդվել է նաև ապրիլ-մայիսին բանկերում առաջացած իրացվելիության կարգավորման կարճաժամկետ խնդիրների լուծման հետ (ապրիլին գնվել է 1.1 մլրդ, մայիսին՝ 2.6 մլրդ դրամ):

Բանկերի զուտ պարտավորությունների ցուցանիշի աճը, ինչպես և նախատեսվում էր, պայմանավորվել է «Վերականգնման վարկերի բանկի» (KfW) վարկային ծրագրի շրջանակներում 2.7 մլրդ դրամ գումարի ստացմամբ և բանկերին տրամադրմամբ, ինչպես նաև նախորդ եռամսյակում կնքված ներքաշող գործառնությունների մարմամբ (5.3 մլրդ դրամ ընդհանուր ծավալով): Իրացվելիության նման ներարկման և արդեն իսկ առկա մեծ ավելցուկի պարագայում դրա չեզոքացման խնդրի լուծման նպատակով ԿԲ-ն բանկերի հետ կնքել է 3.2 մլրդ դրամի հակադարձ ռեպո համաձայնագրեր: Իրացվելիության ավելցուկի ներքաշման խնդրի լուծմանը մասամբ նպաստել է նաև Կառավարության իրականացրած զսպողական հարկաբյուջետային քաղաքականությունը:

Ամփոփելով նշենք, որ ԿԲ կողմից իրականացված դրամավարկային քաղաքականության արդյունքում առաջին կիսամյակի գնաճը ժամանակահատվածի վերջի դրությամբ կազմել է 4.5%՝ ծրագրված 5.2%-ի փոխարեն: Էական շեղումներ չեն սպասվում նաև երկրորդ կիսամյակի ծրագրված ուղղություններում, և ԿԲ-ն իրատեսական է համարում տարեկան մինչև 3% գնաճի ցուցանիշի ապահովումը:


2004 թվականի երկրորդ եռամսյակում ընդհանուր առմամբ շարունակվել է նախորդ տարիների ընթացքում ֆինանսական շուկայում դրսևորված՝ տոկոսադրույքների անկման միտումը: Արտարժույթով ներգրավված միջոցների տոկոսադրույքները նախորդ եռամսյակի վերջի համեմատ մնացել են անփոփոխ, իսկ ՀՀ դրամով ներգրավված ավանդների տոկոսադրույքները ապրիլից սկսած նվազել են: Այսպիսով, եռամսյակի ընթացքում թե՛ դրամային և թե՛ արտարժութային ավանդների տոկոսադրույքները տատանվել են 5.5%-ի շրջակայքում: ՀՀ դրամով ներգրավված ավանդների տոկոսադրույքների նվազումը պարզորոշ վկայում է, որ մեծանում է ֆինանսական շուկայի մասնակիցների՝ ՀՀ դրամի հանդեպ ձևավորված վստահության աստիճանը:

Առևտրային բանկերի՝ դրամով և արտարժույթով ավանդների տոկոսադրույքները



Ի տարբերություն նախորդ եռամսյակի, հաշվետու ժամանակահատվածում դրամով ավանդների տոկոսադրույքները եռամսյակի վերջին 0.5 տոկոսային կետով ցածր էին, քան արտարժույթով ավանդներինը: Հատկանշական է, որ այս տեղաշարժը, բացարձակ արժեքով, բարձր ցուցանիշ է, քանի որ առաջին եռամսյակի վերջին ՀՀ դրամով ավանդների տոկոսադրույքները 0.8 տոկոսային կետով գերազանցում էին արտարժույթով ներգրավված ավանդների տոկոսադրույքները:


Բանկային համակարգի կողմից դրամով և արտարժույթով տրամադրված վարկերի տոկոսադրույքներ




Փոքր-ինչ տատանվել, սակայն կայուն նվազման միտում են ցուցաբերել նաև դրամով վարկերի տոկոսադրույքները, որը նույնպես որոշակիորեն պայմանավորվել է դրամի նկատմամբ ներդրողների ու բանկերի վստահության բարձրացմամբ: Ավելի քան 1 տոկոսային կետով նվազել են ՀՀ առևտրային բանկերի կողմից արտարժույթով և ՀՀ դրամով տրամադրված վարկերի տոկոսադրույքները՝ կազմելով 20%:

2004 թ. երկրորդ եռամսյակի ընթացքում տոկոսադրույքների միջին մակարդակը նվազել է նաև պետական պարտատոմսերի շուկայում:

Երկրորդ եռամսյակի ընթացքում ՊՊ առաջնային շուկան բնութագրվել է պարտատոմսերի նկատմամբ ընդհանուր պահանջարկի բավականին բարձր մակարդակով (թողարկման ծավալի 268.71%-ը): Բանկային համակարգում առկա բավականին բարձր ավելցուկային իրացվելիության պայմաններում պարտատոմսերի նկատմամբ պահանջարկի աճը հանգեցրել է ՊՊ եկամտաբերության անկման: ՊԿՊ միջին տոկոսադրույքը նախորդ եռամսյակի 6.36%-ի համեմատությամբ նվազել է մոտ 0.77 տոկոսային կետով՝ կազմելով 5.59%, իսկ ՄՄԺՊ-երինը՝ 0.72 տոկոսային կետով՝ կազմելով 9.01%, ընդ որում՝ ապրիլ և մայիս ամիսներին ՊԿՊ միջին տարեկան եկամտաբերությունները կազմել են 5.81%, հունիսին՝ 5.26%, իսկ ՄՄԺՊ-երինը՝ ապրիլին՝ 9.66%, մայիսին՝ 9.36% և հունիսին՝ 8.39%:




2004 թ. երկրորդ եռամսյակի ընթացքում տեղի է ունեցել պետական կարճաժամկետ պարտատոմսերի 5 թողարկում՝ 2.5 մլրդ դրամ ընդհանուր ծավալով՝ 274-364 օր շրջանառության ժամկետով և պետական միջին ժամկետայնության մասնակի մարումներով արժեկտրոնային պարտատոմսերի 4 թողարկում՝ 9 մլրդ դրամ ընդհանուր ծավալով: Նշված ժամանակահատվածում ՀՀ ՖԷՆ-ի կողմից իրականացվել է պետական կարճաժամկետ պարտատոմսերի հետգնում՝ 404.686 մլն դրամ ծավալով՝ 3.5% միջին եկամտաբերությամբ:




Արդյունքում, հուլիսի 2-ի դրությամբ շրջանառության մեջ գտնվող պետական պարտատոմսերի ընդհանուր ծավալը, նախորդ ժամանակահատվածի (31/03/2004թ.) համեմատ, ավելացել է 2045 մլն դրամով՝ կազմելով 47265 մլն դրամ (անվանական արժեքով):

Այս եռամսյակում ռեզիդենտ ոչ բանկ ներդրողների կողմից պետական արժեթղթերում ներդրումների մակարդակի էական փոփոխություններ չեն եղել: Վերջիններիս պատկանող պարտատոմսերի տեսակարար կշիռը նվազել է 0.98 տոկոսային կետով՝ եռամսյակի վերջին կազմելով 22.45% կամ 10612 մլն դրամ: 1.1 տոկոսային կետով նվազել է ոչ ռեզիդենտներին պատկանող ՊՊ տեսակարար կշիռը:

Արդյունքում, ռեզիդենտներին պատկանող պարտատոմսերի ընդհանուր ծավալը հունիսի վերջին կազմել է շրջանառության մեջ գտնվող պետական պարտատոմսերի ամբողջ ծավալի մոտ 96.57%-ը՝ 45645 մլն դրամ, իսկ ոչ ռեզիդենտներինը՝ 3.43%-ը կամ 1621 մլն դրամ:




Երկրորդային շուկայի գործառնությունների միջին տարեկան եկամտաբերությունը, նախորդ եռամսյակի համեմատությամբ, նվազել է 0.59 տոկոսային կետով՝ կազմելով 7.02%: Միևնույն ժամանակ, ՊՊ երկրորդային շուկայում իրականացված գործառնությունների ծավալները նախորդ եռամսյակի համեմատությամբ ավելացել են 928 մլն դրամով՝ կազմելով 9572 մլն դրամ: Եռամսյակի ընթացքում ԿԲ-ն երկրորդային շուկայում իրականացրել է 3511 մլն դրամ ՊՊ-երի առք՝ 8% տարեկան եկամտաբերությամբ, ընդ որում՝ ապրիլին գնել է 1 մլրդ 3 մլն դրամի, իսկ մայիսին՝ 2 մլրդ 508 մլն դրամի: Երկրորդային շուկայի միջին շաբաթական շրջանառությունը կազմել է մոտ 1 մլրդ 18 մլն դրամ:



Երկրորդ եռամսյակի ընթացքում միջբանկային ռեպո շուկայում իրականացված գործարքների կրկնակի աճ է արձանագրվել: Նախորդ եռամսյակի համեմատ միջբանկային ռեպո գործառնությունների ծավալներն ավելացել են 17.1 մլրդ դրամով՝ կազմելով 33.8 մլրդ դրամ: Գործարքների միջին ժամկետայնությունը կազմել է 7 օր: Միջբանկային ռեպո շուկայի միջին շաբաթական շրջանառությունը կազմել է մոտ 2567 մլն դրամ: Գործառնությունների միջին տարեկան եկամտաբերությունը, նախորդ եռամսյակի համեմատ, նվազել է 0.58 տոկոսային կետով և կազմել 4.51 %:

Եկամտաբերության կորի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ եկամտաբերությունները նվազել են կորի ամբողջ երկայնքով:

Գերակշիռ մասը (89.12%) պայմանավորված է կորի մակարդակի համընթաց (զուգահեռ) տեղաշարժով, որը կազմել է -0.92 տոկոսային կետ: 28%-ով փոփոխվել է կորի գոգվածությունը (0.46-ից՝ 0.36), այսինքն՝ երկարաժամկետ և կարճաժամկետ պարտատոմսերի տոկոսադրույքների միջև տարբերությունը նվազել է՝ կապված երկարաժամկետ պարտատոմսերի նկատմամբ ձևավորված բարձր պահանջարկի հետ: Մնացորդային գործոնները կորի փոփոխության մեջ կազմել են –17.13%:




Համեմատելով հաշվետու ժամանակաշրջանի սկզբի Մակ-Քոուլի դյուրացիայի գործակիցը եռամսյակի վերջի օրվա դրությամբ՝ կարելի է ասել, որ տոկոսադրույքների ճկունությունը, կախված ժամկետայնությունից, նվազել է. 0.71-ից՝ 0.48, որը նշանակում է՝ պարտատոմսի ժամկետայնությունը 56 օրով մեծանալու դեպքում եկամտաբերությունը (միջինը) աճում է 0.48 տոկոսային կետով:

Զուգահեռ տեղաշարժ		
Բացարձակ մեծություն	Շեղում	Փոփոխություն
-0.92	10.88%	89.12%
Թեքվածության գործակից		
30.06.04	01.04.04	Փոփոխություն
0.36	0.46	28%
Մնացորդային գործոններ		
		Փոփոխություն
		-17.13%
Մակ-Քոուլի դյուրացիա		
30.06.04	01.04.04	
0.48	0.71	

ՀՀ կենտրոնական բանկը դրամավարկային քաղաքականության գործիքների տոկոսադրույքները սահմանել է ֆինանսական շուկայի իրավիճակին համահունչ: 2004 թ. երկրորդ եռամսյակում դրամավարկային գործիքների տոկոսադրույքները ԿԲ խորհուրդը փոփոխել է ապրիլին՝ արժեթղթերի միակողմանի գործառնությունների տոկոսադրույքները 12%-ից իջեցնելով 8%-ի, իսկ ավանդներինը՝ 3%-ից 1%-ի: Լոմբարդային վարկերի և ռեպո համաձայնագրերի տոկոսադրույքներն ամբողջ ժամանակահատվածում մնացել են անփոփոխ՝ համապատասխանաբար 20% և 6%:


2004 թ. երկրորդ եռամսյակում ֆինանսական շուկայում տոկոսադրույքների անկումը հիմնականում պայմանավորվել է բանկերի բարձր իրացվելիությամբ, որի մասին վկայում է նաև Կենտրոնական բանկի ավանդների նկատմամբ ձևավորված պահանջարկը: Երկրորդ եռամսյակում ՀՀ կենտրոնական բանկ է ներկայացվել 11450 մլն դրամի ավանդի պահանջարկ, ընդ որում՝ ապրիլին ներդրվել է 8450 մլն դրամի ավանդ՝ սահմանված միջին կշռված 2.1% եկամտաբերությամբ, իսկ մայիս և հունիս ամիսներին՝ սահմանված 1% եկամտաբերությամբ ՀՀ ԿԲ-ն ներդրել է 1500 մլն դրամի ավանդ՝ յուրաքանչյուր ամսվա ընթացքում:

Երկրորդ եռամսյակում, արդեն վերոնշյալ հանգամանքներով պայմանավորված, լոմբարդային վարկերի նկատմամբ պահանջարկ չի գրանցվել:



Նպատակ ունենալով կարգավորել բանկային համակարգում ավելցուկային իրացվելիությունը՝ 2004 թ. երկրորդ եռամսյակում ՀՀ կենտրոնական բանկը իրականացրել է 3 մլրդ 228 մլն դրամ ընդհանուր գումարով 28-օրյա հակադարձ ռեպո գործառնություններ՝ սահմանված տարեկան 6% տոկոսադրույքով և 6 մլրդ 298.4 մլն դրամի (11.25 մլն ԱՄՆ դոլար) արտարժույթի ներգրավման սվոփ գործառնություն՝ 30-34 օր ժամկետայնությամբ, 4.9% տոկոսադրույքով:


ՀՀ արժութային շուկայում երկրորդ եռամսյակի ընթացքում արձանագրվել է ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի արժեքավորման միտում ՝ հիմնականում պայմանավորված արտերկրից Հայաստանի Հանրապետություն կապիտալի մեծածավալ ներհոսքով և առևտրային հաշվեկշռի պակասուրդի կրճատմամբ:



Եռամսյակի վերջին, նախորդ եռամսյակի վերջի համեմատ, գրանցվել է 5.06% արժեքավորում՝ 561.55 դրամից 534.49 դրամ (վարիացիա՝ 45.89, միջին շեղում՝ 6.77 դրամ, նվազագույնը՝ 534.49 դրամ, առավելագույնը՝ 561.29 դրամ):

Ներքին արժութային շուկայում եռամսյակի ընթացքում ԱՄՆ դոլարի առք ու վաճառքի համախառն ծավալը կազմել է մոտ 673.18 մլն ԱՄՆ դոլար՝ 353.83 մլն առք և 319.35 մլն վաճառք, ընդ որում՝ համախառն ծավալի 16.7%-ը միջբանկային գործարքներ են: Առքի ծավալները ըստ ամիսների կազմել են՝ 85.94 մլն, 96.08 մլն և 171.8 մլն ԱՄՆ դոլար, վաճառքինը՝ 81.53 մլն, 84.20 մլն և 153.62 մլն ԱՄՆ դոլար: Միջին ամսական կշռված փոխարժեքները համապատասխանաբար կազմել են՝ 555.27 դրամ, 553.22 դրամ և 542.83 դրամ:

Նույն ժամանակահատվածում եվրոյի առք ու վաճառքի համախառն ծավալը կազմել է 41.81 մլն եվրո՝ 22.36 մլն եվրո առք և 19.45 մլն եվրո վաճառք:



ՀՀ բանկերի և վարկային կազմակերպությունների գործունեությունը

ՀՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԲԱՆԿԵՐԸ

2004 թ. հունիսի 30-ի դրությամբ ՀՀ տարածքում գործել են 20 առևտրային բանկեր՝ 221 մասնաճյուղերով: Երկրորդ եռամսյակի ընթացքում բանկային համակարգի մասնաճյուղերի քանակը նվազել է երեքով:

30.06.04 թ. դրությամբ 20 բանկերից մեկը գործել է հատուկ վերահսկողության դաշտում:

Բանկային համակարգի երկրորդ եռամսյակի գործունեությունը ներկայացվել է 30.06.2004 թ. դրությամբ ընդհանուր վերահսկողության դաշտում գործող 19 առևտրային բանկերի տվյալների հիման վրա:

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՊԻՏԱԼ

2004 թ. երկրորդ եռամսյակի ընթացքում բանկային համակարգի ընդհանուր կապիտալն ավելացել է 5.7.%-ով (3.0 մլրդ դրամով) և 30.06.04 թ. դրությամբ կազմել 55.7 մլրդ դրամ:

Ընդհանուր կապիտալի աճը հիմնականում պայմանավորվել է եռամսյակի ընթացքում բանկային համակարգի կողմից 2.3 մլրդ դրամ զուտ շահույթի ապահովմամբ: Ընդհանուր կապիտալի աճին նպաստել են նաև երեք բանկերի կանոնադրական հիմնադրամի ընդհանուր 875 մլն դրամի չափով համալրումը:

Բանկային համակարգի ռիսկով կշռված ակտիվների առաջանցիկ՝ 9.2% աճը, նորմատիվային ընդհանուր և հիմնական կապիտալների համապատասխանաբար 5.4% և 5.1% աճի պարագայում, հանգեցրել է նախորդ եռամսյակի համեմատ կապիտալի համարժեքության ցուցանիշների փոքր-ինչ նվազման: Ե՛վ ընդհանուր կապիտալի համարժեքության ցուցանիշը, և՛ հիմնական կապիտալի համարժեքության ցուցանիշը նվազել են 1.2 տոկոսային կետով և համապատասխանաբար կազմել 34.3% և 32.3%:

Բանկային համակարգի ընդհանուր կապիտալի և ընդհանուր ակտիվների հարաբերակցության ցուցանիշը (լևերեջ գործակիցը) եռամսյակի ընթացքում ավելացել է 1.0 տոկոսային կետով և երկրորդ եռամսյակի վերջին կազմել է 17.9%՝ պայմանավորված ակտիվների աճի համեմատ կապիտալի առաջանցիկ աճի տեմպերով:

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Եռամսյակի ընթացքում բանկային համակարգի ընդհանուր պարտավորությունների մեծությունը նվազել է 1.4%-ով (3.7 մլրդ դրամով) և 30.06.2004 թ. դրությամբ կազմել 255.2 մլրդ դրամ: Ընդհանուր պարտավորությունների աճ է արձանագրվել 12 բանկերում և նվազում՝ 7 բանկերում:


Բանկային համակարգի պարտավորությունների նվազումը պայմանավորվել է բանկերի նկատմամբ այլ պարտավորությունների 29.6%-ով (10.1 մլրդ դրամով) նվազմամբ:

Դիտարկվող ժամանակաշրջանում բանկերի լորո թղթակցային հաշիվներն ավելացել են 36.7%-ով, այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորությունները՝ 8.0%-ով: Ֆիզիկական և իրավաբանական անձանց ընդհանուր պարտավորություններն ավելացել են 1.5%-ով, ընդ որում՝ ցպահանջ ավանդները, պահպանելով վերջին տարիներին դրսևորվող միտումները, ժամկետային ավանդների համեմատ ցուցաբերել են առաջանցիկ աճի տեմպ: Բանկային համակարգի ցպահանջ պարտավորություններն ավելացել են 2.4%-ով (2.7 մլրդ դրամով), իսկ ժամկետային ավանդները՝ ընդամենը 0.3%-ով (215 մլն դրամով): Երկրորդ եռամսյակի վերջին ցպահանջ պարտավորությունները կազմել են 114.2 մլրդ դրամ, իսկ ժամկետային ավանդները՝ 77.8 մլրդ դրամ: Ֆիզիկական և իրավաբանական անձանցից ներգրավված ցպահանջ և ժամկետային միջոցների ընդհանուր ծավալում դրամային և արտարժութային միջոցների տեսակարար կշռի փոփոխություն չի արձանագրվել. ՀՀ դրամով ներգրավված միջոցների տեսակարար կշիռը դարձյալ կազմել է 22.0%: Ընդ որում՝ ֆիզիկական անձինք, ի տարբերություն իրավաբանական անձանց, ավելի հակված են խնայողություններ կատարել արտարժութային միջոցների տեսքով: Ֆիզիկական անձանց ցպահանջ և ժամկետային պարտավորություններում ՀՀ դրամով տեղաբաշխված

միջոցների կշիռը կազմել է ընդամենը 9.0%, որը զիջում է իրավաբանական անձանց ցպահանջ և ժամկետային պարտավորություններում դրամային պարտավորությունների 37.0% տեսակարար կշռին:

Երկրորդ եռամսյակի ընթացքում ՀՀ դրամով պարտավորություններն աճել են 8.3%-ով, իսկ արտարժույթով պարտավորությունները նվազել են 4.7%-ով: Նախորդ եռամսյակի համեմատ, ընդհանուր պարտավորությունների կազմում ՀՀ դրամով պարտավորությունների տեսակարար կշիռն ավելացել է 2.5 տոկոսային կետով և 30.06.2004 թ. դրությամբ կազմել 27.4%:

Բանկային համակարգի ներգրավված միջոցների կառուցվածքը



1. Ֆիզիկական անձանց ցպահանջ ավանդներ, 2. Իրավաբանական անձանց ցպահանջ ավանդներ, 3. Ֆիզիկական անձանց ժամկետային ավանդներ, 4. Իրավաբանական անձանց ժամկետային ավանդներ, 5. Պարտավորություններ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ 6. Բանկերի թղթակցային հաշիվներ և այլ պարտավորություններ, 7. Վճարվելիք տոկոսներ, 8. Պարտավորություններ կառավարության նկատմամբ, 9. Այլ պարտավորություններ

Արդյունքում՝ զգալի փոփոխության է ենթարկվել միայն բանկերի նկատմամբ այլ պարտավորությունների մեծության տեսակարար կշիռը, որը, նվազելով 3.1 տոկոսային կետով, կազմել է ընդհանուր պարտավորությունների 11.5%-ը: Միևնույն ժամանակ, պարտավորությունների կազմում շարունակվում է մեծանալ ֆիզիկական անձանց ցպահանջ ավանդների տեսակարար կշիռը, որը ավելանալով 1.4 տոկոսային կետով, կազմել է ընդհանուր պարտավորությունների 20.5%-ը:

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՏԻՎՆԵՐ

Երկրորդ եռամսյակի ընթացքում բանկային համակարգի ակտիվները նվազել են 0.2%-ով (709 մլն դրամով) և 30.06.04 թ. դրությամբ կազմել 311.0 մլրդ դրամ: Հաշվետու ժամանակաշրջանում ակտիվներն ավելացել են 16 և նվազել 3 բանկերում:

Զգալի նվազել են ներդրումների ծավալները օտարերկրյա արժեթղթերում՝ 81.4%-ով (14.8 մլրդ դրամով) և բանկերի նկատմամբ պահանջների (բացառությամբ թղթակցային հաշիվների) ծավալները՝ 18.0%-ով (4.7 մլրդ դրամ): Նկատելի աճել են նոստրո թղթակցային հաշիվների՝ 6.8%-ով (4.0 մլրդ դրամ) և տնտեսությանը տրամադրված վարկերի[1]՝ 11.6% -ով (12.0 մլրդ դրամ) ծավալները:


Տնտեսությանը տրված վարկերի աճը պայմանավորվել է և՛ ֆիզիկական, և՛ իրավաբանական անձանց տրամադրված վարկերի ծավալների ավելացմամբ:

Ֆիզիկական անձանց վարկերն ավելացել են 15.4%-ով (5.5 մլրդ դրամով), իրավաբանական անձանց վարկերը՝ 10.2%-ով (6.5 մլն դրամով), իսկ բանկի հետ կապված անձանց և աշխատակիցներին տրամադրված վարկերը նվազել են 1.7%-ով (57 մլն դրամով):

Վարկերը և դեբիտորական պարտքերը (ներառյալ միջբանկային ավանդներն ու վարկերը, ռեպո համաձայնագրերը, լիզինգը, ֆակտորինգը) ավելացել են 5.1%-ով և 30.06.2004 թ. դրությամբ կազմել 147.1 մլրդ դրամ: Դրամով վարկային ներդրումներն աճել են 15.5%-ով, իսկ արտարժույթով վարկային ներդրումները՝ 1.5%-ով. արդյունքում ընդհանուր վարկային ներդրումներում դրամով վարկային ներդրումների տեսակարար կշիռն ավելացել է 2.5 տոկոսային կետով և կազմել 27.9%:

[1] *Ներառված են ինչպես ռեզիդենտներին, այնպես էլ ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերը:*

Բանկային համակարգի ակտիվների կառուցվածքը




1. Կանխիկ դրամական միջոցներ
2. Թղթակցային հաշիվներ բանկերում
3. Պետական արժեթղթեր
4. Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմակ. նկատմամբ
5. Թղթ. հաշ. ԿԲ-ում և այլ պահանջներ ԿԲ նկ.
6. Վարկեր իրավաբանական անձանց
7. Վարկեր ֆիզիկական անձանց
8. Վարկեր բանկերի հետ կապված անձանց
9. Հաշվարկված ստացվելիք տոկոսներ
10. Հիմնական միջոցներ
11. Այլ արժեթղթեր
12. Լիզինգ, ֆակտորինգ (առանց միջբանկայինի)
13. Պահուստաֆոնդ
14. Այլ ակտիվներ

Ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերը և դեբիտորական պարտքերը նվազել են 15.0%-ով (4.6 մլրդ դրամով), իսկ ռեզիդենտներին տրամադրված վարկերը և դեբիտորական պարտքերն աճել են 10.6%-ով (11.7 մլրդ դրամով):

Հաշվետու ժամանակաշրջանում նվազել են միայն շինարարության ճյուղին տրամադրված վարկերի ծավալները (4.7%-ով կամ 254 մլն դրամով): Վարկավորման ծավալներում զգալի ավելացել են սպառողական (5.0 մլրդ դրամով) և արդյունաբերության վարկերը (3.3 մլրդ դրամով)՝ համապատասխանաբար կազմելով 18.0% և 11.3%:

Արդյունաբերության ճյուղի վարկավորման աճը հիմնականում պայմանավորվել է էներգետիկայի և սննդի արդյունաբերություններում վարկային ներդրումների ավելացմամբ. էներգետիկային տրամադրված վարկերն աճել են 21.5%-ով (2.1 մլրդ դրամով), իսկ սննդի արդյունաբերության վարկերը՝ 10.0%-ով (1.0 մլրդ դրամով):

Բանկային համակարգի վարկային ներդրումները՝ ըստ տնտեսության ճյուղերի (30.06.04թ. դրությամբ)



1. Արդյունաբերություն, 2.Գյուղատնտեսություն, 3. Շինարարություն, 4. Տրանսպորտ և կապ,
5. Առևտուր, 6. Հանրային սնունդ և սպասարկման այլ ոլորտներ, 7. Ֆինանսական հատված,
8. Սպառողական վարկեր, 8. Այլ ճյուղեր

Սպառողական վարկերը շարունակել են դրսևորել վերջին տարիներին բնորոշ՝ առաջանցիկ աճի միտումները: Արդյունքում՝ 30.06.04 թ. դրությամբ ռեզիդենտներին տրամադրված ընդհանուր վարկային ներդրումներում դրանց տեսակարար կշիռն ամենամեծն է եղել:

Եռամսյակի ընթացքում արձանագրվել է բանկային համակարգի դասակարգված ակտիվների տեսակարար կշռի 0.7 տոկոսային կետով նվազում՝ կիսամյակի վերջի դրությամբ կազմելով ընդհանուր վարկերի և դեբիտորական պարտքերի 2.3%-ը: 30.06.2004 թ. դրությամբ վարկային պորտֆելն ունեցել է հետևյալ կառուցվածքը. «ստանդարտ» վարկերը և դեբիտորական պարտքերը կազմել են 97.7%, «հսկվող» վարկերը և դեբիտորական պարտքերը՝ 1.4%, «ոչ ստանդարտ» վարկերը և դեբիտորական պարտքերը՝ 0.7%, «կասկածելի» վարկերը և դեբիտորական պարտքերը՝ 0.2%:

Կիսամյակի վերջին բանկային համակարգի ակտիվների կազմում դրամային ակտիվների տեսակարար կշիռը կազմել է 40.5% (նախորդ եռամսյակում՝ 36.4%):

Բանկային համակարգի $Ն2^1$ ընդհանուր իրացվելիության գործակիցը նվազել է 1.9 տոկոսային կետով, իսկ $Ն2^2$ ընթացիկ իրացվելիության գործակիցը՝ 4.2 տոկոսային կետով և 30.06.2004 թ. դրությամբ կազմել են համապատասխանաբար 44.6% և 96.1%: Դրանք պահանջվող $Ն2^1$ նորմատիվի 20% և $Ն2^2$ նորմատիվի 80% սահմանաչափերից շարունակում են զգալի բարձր մնալ:

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԵՎ ԾԱԽՍԵՐ

2004 թ. վեց ամիսների ընթացքում բանկային համակարգը ստացել է 25.6 մլրդ դրամի համախառն եկամուտ՝ իրականացնելով 20.2 մլրդ դրամի չափով ծախսեր: 30.06.2004 թ. բանկերի զուտ շահույթը (հարկումից հետո) կազմել է 4.3 մլրդ դրամ: Կիսամյակի ընթացքում շահույթով են աշխատել 16 բանկեր, որոնց շահույթը կազմել է 5.0 մլրդ դրամ, իսկ վնասով աշխատել են 3 բանկեր, որոնց վնասը կազմել է 699 մլն դրամ:

Համախառն եկամուտների կազմում տոկոսային եկամուտների տեսակարար կշիռը, նախորդ եռամսյակի համեմատ, ավելացել է 0.6 տոկոսային կետով և կազմել 49.7%, ոչ տոկոսային եկամուտների տեսակարար կշիռը կազմել է 23.6%, ակտիվների հնարավոր կորուստների պահուստներից վերադարձի տեսակարար կշիռը՝ 26.7%: Տնտեսության վարկերից ստացված եկամուտներին բաժին է ընկել տոկոսային եկամուտների 73.7%-ը, իսկ համախառն եկամուտների՝ 36.6%-ը:

Համախառն ծախսերում մեծ տեսակարար կշիռը դարձյալ բաժին է ընկել ոչ տոկոսային ծախսերին, որոնք նախորդ եռամսյակի համեմատ ավելանալով 2.1 տոկոսային կետով՝ կազմել են 43.6%, իսկ տոկոսային ծախսերին և ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին բաժին են ընկել համապատասխանաբար 19.5% և 36.9% տեսակարար կշիռներ: Ոչ տոկոսային ծախսերում զգալի տեսակարար կշիռը բաժին է ընկել բանկային աշխատակիցների աշխատավարձին և դրան հավասարեցված այլ վճարներին, որի տեսակարար կշիռը կազմել է տոկոսային ծախսերի 32.7%-ը, իսկ համախառն ծախսերի՝ 16.2%-ը:

ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Եռամսյակի ընթացքում ունիվերսալ վարկային կազմակերպության լիցենզիա է ստացել «Առաջին հիփոթեքային կազմակերպություն» ՍՊԸ-ն: 30.06.04 թ. դրությամբ ՀՀ տարածքում գործել են 7 վարկային կազմակերպություններ՝ մեկ մասնաճյուղով:

Եռամսյակի ընթացքում վարկային կազմակերպությունների ընդհանուր ակտիվներն ավելացել են 5.6%-ով և կազմել 3.6 մլրդ դրամ (բանկային համակարգի ակտիվների ծավալի ընդամենը 1.1%-ը):

Վարկային կազմակերպությունների տրամադրած վարկերի ընդհանուր ծավալն ավելացել է 27.9%-ով (363 մլն դրամով)՝ հիմնականում ֆիզիկական անձանց տրված վարկերի 251 մլն դրամ աճի հաշվին և 30.06.04 թ. դրությամբ կազմել 1.7 մլրդ դրամ, իսկ լիզինգի և ֆակտորինգի ընդհանուր ծավալը նվազել է 32.3%-ով և կազմել 510 մլն դրամ:

Վարկային կազմակերպությունների տեղաբաշխած վարկերի, լիզինգի և ֆակտորինգի ընդհանուր ծավալն աճել է 14.2%-ով (272 մլն դրամով)՝ հիմնականում սպառողական վարկերի 265 մլն դրամ (44.4%-ով) աճի հաշվին և կազմել 2.2 մլրդ դրամ: Վարկային կազմակերպությունների, ինչպես և առևտրային բանկերի վարկային ներդրումներում, դարձյալ նկատվում է միջոցները սպառողական վարկերում ներդնելու հակվածություն: Ինչպես բանկային համակարգի, այնպես էլ վարկային կազմակերպությունների վարկային ներդրումներում 30.06.04 թ. դրությամբ ամենամեծ տեսակարար կշիռը բաժին է ընկել սպառողական վարկերին՝ 39.5%: Արդյունաբերության ճյուղի վարկերի տեսակարար կշիռն ընդհանուր վարկային ներդրումներում կազմել է 22.8%-ը, գյուղատնտեսության կշիռը՝ 14.3%-ը, առևտրի ոլորտինը՝ 5.1%-ը, իսկ մնացյալ 18.3%-ը՝ այլ ճյուղերինը:

Վարկային ներդրումների ռիսկայնության դասերի առումով՝ եռամսյակի ընթացքում ընդհանուր վարկերի և դեբիտորական պարտքերի կազմում ստանդարտ վարկերի և դեբիտորական պարտքերի տեսակարար կշիռն ավելացել է 0.5 տոկոսային կետով և 30.06.04 թ. դրությամբ կազմել 89.8%:

Վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալն ավելացել է 13.1%-ով և կիսամյակի վերջին կազմել 2.2 մլրդ դրամ: Ընդհանուր պարտավորությունները նվազել են 5.1%-ով (73 մլն դրամով)՝ իրավաբանական անձանց ժամկետային պարտավորությունների նվազման հաշվին և կազմել 1.3 մլրդ դրամ:

2004 թ. վեց ամիսների ընթացքում վարկային կազմակերպությունների ընդհանուր չբաշխված շահույթը կազմել է 142 մլն դրամ: Այդ ժամանակահատվածում չորս վարկային կազմակերպություններ աշխատել են շահույթով (ընդհանուր շահույթը կազմել է 171 մլն դրամ), իսկ երեքը՝ վնասով (ընդհանուր վնասը կազմել է 29 մլն դրամ):

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԴԱՇՏԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2004 թ. երկրորդ եռամսյակում հաստատվել են «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» (30 հունիսի 1996 թ., ՀՕ-69), «Բանկերի և բանկային գործունեության մասին» (30 հունիսի 1996 թ., ՀՕ-68), «Բանկային գաղտնիքի մասին» (7 հոկտեմբերի 1996 թ., ՀՕ-80), «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» (06 նոյեմբերի 2001 թ., ՀՕ-262) և «Վարկային կազմակերպությունների մասին» (29 մայիսի 2002 թ., ՀՕ-359-Ն) ՀՀ օրենքներում դեռևս առաջին եռամսյակի ընթացքում կատարված մի շարք փոփոխությունները և լրացումները[2]:

ԿԲ խորհուրդը հաստատել է Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի կողմից անկախ աուդիտորական կազմակերպությունների ընտրության կարգը, որով սահմանվում են բանկերի կողմից անկախ աուդիտորական կազմակերպություններին ներկայացվող պահանջները և չափանիշները, անկախ աուդիտորների կողմից ներկայացված մրցութային առաջարկությունների գնահատման մեթոդը, ինչպես նաև մրցույթների կազմակերպման, անցկացման և արդյունքների ամփոփման կարգն ու ժամանակացույցը:

ԿԲ-ն մշակել է «ՀՀ տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման» կարգով սահմանված՝ ակտիվների դասակարգման սուբյեկտիվ՝ փոխառուի ֆինանսական վիճակի վատթարացման չափանիշների կիրառման վերաբերյալ ուղեցույցը, որով այսուհետև պետք է առաջնորդվեն ՀՀ ԿԲ վերահսկողության աշխատակիցները՝ բանկի ակտիվները սուբյեկտիվ հիմքերով դասակարգելու ժամանակ: Այսպիսի չափանիշների սահմանման նպատակը բանկերի և վերահսկողների միջև ակտիվների դասակարգման վերաբերյալ տարաձայնությունների նվազեցումն է:

[2] Օրենքներում կատարված փոփոխությունները և լրացումները մանրամասն ներկայացված են նախորդ եռամսյակային հաշվետվությունում:

2004 թ. երկրորդ եռամսյակի ընթացքում ՀՀ կենտրոնական բանկը շարունակել է ՀՀ վճարահաշվարկային համակարգի զարգացման աշխատանքները: Մասնավորապես՝ իրականացվել են ՀՀ վճարահաշվարկային բնագավառը, ինչպես նաև վճարային ծառայություններ մատուցող կազմակերպությունների գործունեությունը կարգավորող օրենսդրական դաշտի կանոնակարգման, Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգի զարգացման աշխատանքներ:


2004 թ. երկրորդ եռամսյակի ընթացքում ՀՀ տարածքում կատարված անկանխիկ վճարումների ծավալը կազմել է 861548 մլն ՀՀ դրամ (քանակը՝ 379941): ՀՀ կենտրոնական բանկի միջոցով իրականացված անկանխիկ վճարումների ծավալը կազմել է 482974 մլն ՀՀ դրամ, իսկ քանակը՝ 157290:

2004 թ. առաջին եռամսյակի համեմատ անկանխիկ վճարումների ծավալը և քանակը աճել են 1.1 անգամ, իսկ 2003 թ. երկրորդ եռամսյակի համեմատ վերջինիս ծավալն աճել է 1.3 անգամ (205109 մլն ՀՀ դրամով), իսկ քանակը նվազել է 0.8 անգամ (75754-ով): Անկանխիկ վճարումների քանակի նվազումը պայմանավորվել է առևտրային բանկերի կողմից շահագործվող վճարային համակարգերում հավաքական հաղորդագրությունների օգտագործմամբ:

Դրամական փոխանցումների միջին օրական ծավալը կազմել է մոտ 7.5 մլրդ ՀՀ դրամ, իսկ քանակը՝ 2458: Դրամական փոխանցումների միջին օրական ծավալը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, աճել է 1.1 մլրդ ՀՀ դրամով (քանակը նվազել է 1813-ով): Դրամական փոխանցումների ծավալը, 2004 թ. առաջին եռամսյակի համեմատ, աճել է մոտ 1 մլրդ ՀՀ դրամով, իսկ քանակը՝ 296-ով: Վճարումների ծավալային աճը խթանել է հարկային և մաքսային եկամուտների (վճարների) հավաքագրման աճը:

ՀՀ կենտրոնական բանկի միջոցով իրականացված վճարումներում շարունակել են մեծ տեսակարար կշիռ կազմել Գանձապետարանի նախաձեռնած, ինչպես նաև վերջինիս ուղղված փոխանցումները, որոնք կազմել են ընդհանուր վճարումների ծավալի 37.22%-ը և քանակի 45%-ը: Նախորդ եռամսյակի համեմատ ՀՀ կենտրոնական բանկի միջոցով Գանձապետարան ուղղված, ինչպես նաև վերջինիս նախաձեռնած փոխանցումների ընդհանուր ծավալն աճել է 23.5%-ով, իսկ քանակը նվազել է 4.9%-ով:

ՀՀ ԿԲ միջոցով իրականացված վճարումների քանակի և ծավալի դինամիկան



Եռամսյակի ընթացքում ՀՀ տարածքում պլաստիկ քարտերով իրականացվել է 21888 մլն ՀՀ դրամի 411585 գործառնություն: Այդ թվում՝ քարտերով անկանխիկ վճարումների ծավալը կազմել է մոտ 838 մլն ՀՀ դրամ՝ որում կոմունալ ծառայությունների դիմաց անկանխիկ վճարումների ծավալը մոտ 49 մլն ՀՀ դրամ է: Քարտային գործառնությունների ծավալը 2004 թ. 1-ին եռամսյակի համեմատ աճել է 1.19 անգամ, որը կազմում է 3482 մլն ՀՀ դրամ, իսկ գործառնությունների քանակն ավելացել է 1.25 անգամ, որը կազմում է 82408 գործառնություն: Շրջանառության մեջ գտնվող ընդհանուր քարտերի քանակը 2004 թ. երկրորդ եռամսյակի վերջի դրությամբ ավելացել է 1.1 անգամ (8828 քարտով) և կազմել 84791 քարտ:

Էլեկտրոնային վճարումների համակարգ

2004 թ. երկրորդ եռամսյակի վերջի դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի էլեկտրոնային վճարումների համակարգի մասնակիցների ընդհանուր քանակը կազմել է 154, այդ թվում՝ ՀՀ կենտրոնական բանկը և նրա 3 տարածքային դրամարկղային կենտրոնները, ՀՀ գանձապետարանը՝ 44 բաժանմունքներով, 20 առևտրային բանկեր՝ 83 մասնաճյուղերով, «Արմենիան Քարդ» պրոցեսինգային կենտրոնը և Միջպետական բանկը (ք.Մոսկվա):


ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով կատարված վճարումների գերակշիռ մասը իրականացվել է էլեկտրոնային վճարումների համակարգի միջոցով (միջին հաշվով կազմել են ընդհանուր վճարումների ծավալի 83.70%-ը, քանակի 97.18%-ը): Նախորդ եռամսյակի համեմատ տեսակարար կշիռն աճել է համապատասխանաբար՝ 7.35% և 0.06%-ով: Առևտրային բանկերի կատարած էլեկտրոնային վճարումները, վերջիններիս ընդհանուր վճարումների կառուցվածքում, 2004 թ. առաջին եռամսյակի համեմատ ավելացել են. վճարումների ծավալը՝ 6.12%-ով՝ կազմելով մոտ 89.6%, իսկ քանակը պահպանվել է նույն մակարդակի վրա՝ 99.1%:

Էլեկտրոնային վճարումների համակարգում իրականացված դրամական փոխանցումների միջին օրական քանակը, նախորդ եռամսյակի համեմատ, ավելացել է 289-ով՝կազմելով մոտ 2388, իսկ ծավալը՝ 1337 մլն ՀՀ դրամով՝ կազմելով 6316 մլն ՀՀ դրամ: Էլեկտրոնային վճարումների համակարգում մեկ էլեկտրոնային փոխանցման միջին ծավալը, նախորդ եռամսյակի համեմատ, աճել է մոտ 273 հազ. ՀՀ դրամով և կազմել 2645 հազ. ՀՀ դրամ:

Համակարգում գրանցված մերժումները կազմել են նախաձեռնած վճարումների քանակի 0.03%-ը և ծավալի 0.3%-ը (52 փոխանցում՝ 1300 մլն ՀՀ դրամ ծավալով), ընդ որում, իրացվելիության չբավարարման պատճառով մերժված վճարումները կազմել են իրականացված վճարումների քանակի 0.005%-ը, ծավալի 0.277%-ը (8 փոխանցում՝ 1122 մլն ՀՀ դրամ ծավալով):

Էլեկտրոնային վճարումների համակարգով իրականացված վճարումներն ըստ հաղորդագրության տեսակների

Հաղորդագրության տեսակը	2001	2002	2003	2004 I եռ.	2004 II եռ.
ՀՏ 100 (Վճարման հանձնարարական)					
Գումար (մլն ՀՀ դրամ)	478783	590026	864149	193252	248739
Քանակ	216563	251794	386469	72665	90525
ՀՏ 120 (Բյուջեի մուտքի հանձնարարական)					
Գումար (մլն ՀՀ դրամ)	118767	156358	229550	32713	36508
Քանակ	364041	424288	545427	44355	41547
ՀՏ 122 (Բյուջե բազմակի փոխանցման հանձնարարական)					
Գումար (մլն ՀՀ դրամ)	14	1	0	0	0
Քանակ	27	4	0	0	0
ՀՏ 123 (Բյուջետային վճարման հավաքական հանձնարարական)					
Գումար (մլն ՀՀ դրամ)	4047	5128	5197	0.01	0.01
Քանակ	112721	127122	106593	1	1
ՀՏ 131 (Բազմակի փոխանցման հանձնարարական)					
Գումար (մլն ՀՀ դրամ)	412	534	360	94	304
Քանակ	526	324	361	317	488
ՀՏ 132 (Հավաքական վճարումների հանձնարարական)					
Գումար (մլն ՀՀ դրամ)	13194	610	27	2	0
Քանակ	749	327	344	2	1
ՀՏ 202 (Միջբանկային վճարման հանձնարարական)					
Գումար (մլն ՀՀ դրամ)	150299	196161	278981	92587	118688
Քանակ	19430	24506	37262	17000	20296
Ընդամենը					
Գումար (մլն ՀՀ դրամ)	765515	948818	1378264	318649	404239
Քանակ	714057	828365	1076456	134340	152858



Համախառն թղթային վճարումներ

2004 թ. երկրորդ եռամսյակի ընթացքում ՀՀ կենտրոնական բանկի միջոցով թղթային վճարումներ են նախաձեռնել ՀՀ կենտրոնական բանկը, ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերը, ՀՀ գանձապետարանը: Առևտրային բանկերի կողմից թղթային եղանակով կատարված վճարումները կազմել են վերջիններիս վճարումների ծավալի 7%-ը (նախորդ եռամսյակի համեմատ նվազել են 7 տոկոսով) և քանակի 0.9%-ը (նախորդ եռամսյակի համեմատ ավելացել են 0.1 տոկոսով):

Թղթային եղանակով իրականացված վճարումների միջին օրական քանակը կազմել է 62 փոխանցում (2004 թ. առաջին եռամսյակի համեմատ ավելացել է 6-ով), իսկ ծավալը նվազել է 395 մլն ՀՀ դրամով՝ կազմելով 902 մլն ՀՀ դրամ: Մեկ թղթային փոխանցման միջին ծավալը, 2004 թ. առաջին եռամսյակի համեմատ, նվազել է մոտ 8.5 մլն ՀՀ դրամով և կազմել է 14.2 մլն ՀՀ դրամ: Թղթային եղանակով փոխանցումների նվազումը հիմնականում պայմանավորվել է ավանդային և վարկային գործառնություններով: Առևտրային բանկերի միջև թղթային եղանակով իրականացվել է 3561 մլն ՀՀ դրամ ծավալով 27 փոխանցում:

ՀՀ կենտրոնական բանկի, ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի և Գանձապետարանի կողմից իրականացված վճարումները ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով

Ժամանակա-հատված	Համախառն				Պետ. արժեթղթ. հաշվառմ. և հաշվարկ. իրակ. համակարգ		Ընդամենը ԿԲ միջոցով	
	էլեկտրոնային		թղթային					
	Գումար (մլն դրամ)	Քանակ	Գումար (մլն դրամ)	Քանակ	Գումար (մլն դրամ)	Քանակ	Գումար (մլն դրամ)	Քանակ
Ընդամենը 2003	1378264	1076456	287671	14835	80349	1873	1746284	1093164
տեսակարար կշիռը վճարումներում (%)	78.93	98.47	16.47	1.36	4.60	0.17	100	100
2003 – I եռ.	221893	196544	54895	3206	15393	391	292181	200141
տեսակարար կշիռը վճարումներում (%)	75.94	98.20	18.79	1.60	5.27	0.20	100	100
2003 – II եռ.	334488	269217	53059	3643	21920	491	409467	273351
տեսակարար կշիռը վճարումներում (%)	81.69	98.49	12.96	1.33	5.35	0.18	100	100
2003 – III եռ.	377494	364873	77067	3797	25579	561	480140	369231
տեսակարար կշիռը վճարումներում (%)	78.62	98.82	16.05	1.03	5.33	0.15	100	100
2003 – IV եռ.	444389	245822	102650	4189	17457	430	564496	250441
տեսակարար կշիռը վճարումներում (%)	78.72	98.16	18.18	1.67	3.09	0.17	100	100
2004 – I եռ.	318649	134340	82982	3639	15731	350	417362	138329
տեսակարար կշիռը վճարումներում (%)	76.35	97.12	19.88	2.63	3.77	0.25	100	100
2004 – II եռ.	404239	152858	57732	4054	21003	378	482974	157290
տեսակարար կշիռը վճարումներում (%)	83.70	97.18	11.95	2.58	4.35	0.24	100	100

Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգ

2004 թ. երկրորդ եռամսյակի ընթացքում սկսվել է առևտրային բանկերի կողմից Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգով արժեթղթերի երկրորդային շուկայում գործառնությունների իրականացումը «առաքում՝ վճարման դիմաց» (DVP) սկզբունքով:

Եռամսյակի վերջի դրությամբ Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգին անդամակցել են ՀՀ տարածքում գործող 5 գործակալ և 12 դիլեր բանկեր, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը (թողարկողի կարգավիճակով), Գանձապետական պահառուն, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկը (կենտրոնական պահառուի կարգավիճակով):

Պետական արժեթղթերի առաջնային տեղաբաշխման և մարման նպատակով համակարգի կողմից ձևավորվել է 371 հանձնարարական՝ 20468 մլն ՀՀ դրամ ծավալով, ինչը նախորդ եռամսյակի համեմատ ավելացել է 4737 մլն ՀՀ դրամով: Այդ թվում՝ առաջնային տեղաբաշխման ժամանակ ձեռք բերված պարտատոմսերի դիմաց բանկերը կատարել են11520 մլն ՀՀ դրամի փոխանցում, իսկ արժեթղթերի մարման դիմաց Գանձապետարանը կատարել է 8948 մլն ՀՀ դրամի փոխանցում:

Գանձապետական պահառու համակարգը արժեթղթերի դիմաց կատարել է 260 մլն ՀՀ դրամի վճարում, այդ թվում՝ 48 մլն ՀՀ դրամ արժեթղթերի տեղաբաշխման և 212 մլն ՀՀ դրամ՝ արժեթղթերի մարման դիմաց:

Եռամսյակի ընթացքում պետական արժեթղթերի երկրորդային շուկայում կատարված գործառնությունների արդյունքում դեպո հաշիվների վրա գրանցված արժեթղթերի ծավալը, 2004 թ. 1-ին եռամսյակի համեմատ, աճել է 1.5-անգամ (4436- մլն ՀՀ դրամով) և կազմել է 13080 մլն ՀՀ դրամ՝ անվանական արժեքով, չնայած գործառնությունների քանակը նվազել է 28-ով և կազմել է 187:

Արժեթղթերի երկրորդային շուկայում Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգով (DVP- «առաքում՝ վճարման դիմաց» սկզբունքով) իրականացվել է 7 գործառնություն՝ 535 մլն ՀՀ դրամ ծավալով:

Պլաստիկ քարտերի տրամադրում և սպասարկում

2004 թ. երկրորդ եռամսյակի վերջի դրությամբ ՀՀ բանկային համակարգում սպասարկվող հաճախորդներին պլաստիկ քարտերի տրամադրումը կամ դրանց սպասարկումը իրականացվել է ՀՀ տարածքում գործող 15 առևտրային բանկերի կողմից: Ընդ որում՝ 13 առևտրային բանկեր անդամակցում են «ԱրՔա» քարտերով վճարումների միասնական համակարգին:

Քարտերի սպասարկման նպատակով տեղադրվել են 10 նոր ավտոմատ գանձման մեքենաներ և 2004 թ. 2-րդ եռամսյակի վերջի դրությամբ դրանց ընդհանուր քանակը կազմել է 54: Այդ թվում՝ «ԱրՔա» պլաստիկ քարտերով վճարումների միասնական համակարգի քարտեր կարող են սպասարկել 35 ավտոմատ գանձման սարքավորումներ: Առևտրային բանկերի կողմից տեղադրվել են նաև 57 POS- տերմինալներ և 6 իմպրինտերներ, որոնց ընդհանուր քանակը համապատասխանաբար կազմել է 505 POS- տերմինալ և 41 իմպրինտեր:

2004 թ. երկրորդ եռամսյակի վերջի դրությամբ գործող «ԱրՔա» քարտերի քանակը, նախորդ եռամսյակի համեմատ, ավելացել է 1.2 անգամ (5611 քարտով) և կազմել 37979: Միջազգային քարտային համակարգերի քարտերի քանակն ավեացել է 1.07 անգամ (3217 քարտով), այդ թվում՝ VISA միջազգային քարտային համակարգի քարտերն ավելացել են 1.05 անգամ (1468 քարտով) և կազմել 32691, իսկ MasterCard միջազգային քարտային համակարգի քարտերի քանակը՝ 1.2 անգամ (461 քարտով) և կազմել 2197:


Շրջանառության մեջ գտնվող «ԱրՔա» քարտերով իրականացվել է 188836 գործառնություն՝ 4187 մլն ՀՀ դրամ ծավալով: «ԱրՔա» քարտերով կատարված գործառնությունների ծավալը 2004 թ. առաջին եռամսյակի համեմատ աճել է մոտ 1.09 անգամ (358 մլն ՀՀ դրամով), իսկ քանակը՝ 1.27 անգամ:

VISA միջազգային քարտային համակարգի քարտերով իրականացված գործառնությունների ծավալը կազմել է 5713 մլն ՀՀ դրամ (82331 գործառնություն), իսկ MasterCard միջազգային քարտային համակարգի քարտերով իրականացվել է 2067 մլն ՀՀ դրամ ծավալով 15049 գործառնություն: Նախորդ եռամսյակի համեմատ VISA համակարգի քարտերով իրականացված գործառնությունների ծավալը ավելացել է 1.09 անգամ (511 մլն ՀՀ դրամ ծավալով), իսկ MasterCard համակարգի քարտերով կատարված գործառնություններինը՝ 1.45 անգամ (643 մլն ՀՀ դրամով):

Միջազգային այլ քարտերով կատարվել է 125369 գործառնություն՝ 9921 մլն ՀՀ դրամ ծավալով (2004 թ. 1-ին եռամսյակի համեմատ ավելացել է 1970 մլն ՀՀ դրամով):

Շրջանառության մեջ գտնվող մեկ «ԱրՔա» քարտով շարունակվել է ամսական իրականացվել միջինը մոտ 2 գործառնություն: Մեկ գործառնության միջին ծավալը 2004 թ. առաջին եռամսյակի համեմատ նվազել է 3 հազար ՀՀ դրամով և կազմել 22 հազ. ՀՀ դրամ:

Եռամսյակի վերջի դրությամբ մեկ ավտոմատ գանձման մեքենայի կողմից սպասարկման ենթակա «ԱրՔա» քարտերի քանակը միջինը 1087քարտ է:



Քարտեր սպասարկող սարքավորումների միջոցով «ԱրՔա» քարտերով կատարված գործարքներ (2004 թ. երկրորդ եռամսյակ)

	Գումար (մլն դրամ)	*Քանակ*
Ավտոմատ գանձման սարքերի միջոցով	2455.0	127302
POS – տերմինալների միջոցով	1730.0	61531
Իմպրինտերների միջոցով	0.9	3
Ընդամենը	4186.8	147985

Միջազգային փոխանցումների համակարգեր

ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերը դրամական փոխանցումները արագ իրականացնելու նպատակով անդամակցում են՝ WESTERN UNION, MONEYGRAM, ANELIK, UNISTREAM, EXPRESS և այլ համակարգերի: 2004 թ. երկրորդ եռամսյակի ընթացքում այս համակարգերի միջոցով Հայաստանի Հանրապետություն փոխանցումների ծավալը կազմել է 48728 մլն ՀՀ դրամ (քանակը՝ 175045), որը 3.7 անգամ գերազանցել է արտասահման կատարված փոխանցումների ծավալը: 2004 թ. առաջին եռամսյակի համեմատ, Հայաստանի Հանրապետություն կատարված փոխանցումների ծավալն ավելացել է 1.7 անգամ: Մեկ փոխանցման միջին ծավալը 278 հազ. ՀՀ դրամ է:

SWIFT համակարգի միջոցով Հայաստանի Հանրապետություն կատարված փոխանցումները կազմել են՝ ծավալը՝ 753958 մլն ՀՀ դրամ, քանակը՝ 72351 փոխանցում. մեկ փոխանցման միջին ծավալը 10.4 մլն ՀՀ դրամ է: Նախորդ եռամսյակի համեմատ SWIFT -ի միջոցով իրականացված փոխանցումների նշված ծավալն ավելացել է 1.1 անգամ:

Վճարահաշվարկային բնագավառի կարգավորում և զարգացում

2004 թ. երկրորդ եռամսյակի ընթացքում ՀՀ վճարահաշվարկային բնագավառը կարգավորող «Վճարահաշվարկային համակարգի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի նախագիծը, տարբեր գերատեսչությունների հետ քննարկումներից և լրամշակման աշխատանքներից հետո, ներկայացվել է ՀՀ կառավարության քննարկմանը:

2004 թ. II-րդ եռամսյակի ընթացքում իրավապահ մարմինների և առևտրային բանկերի մասնակցությամբ, ՀՀ կենտրոնական բանկի և Visa International միջազգային վճարային կազմակերպության մասնագետների համագործակցությամբ քննարկվել են պլաստիկ քարտերով կատարվող զեղծարարությունների կանխարգելման ուղիները:

Կատարվել են նաև ՀՀ կենտրոնական բանկի տեղեկատվական և այլ համակարգերի անվտանգության բարձրացման և զարգացման աշխատանքներ՝ մասնավորապես «Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման» համակարգում:

Մակրոտնտեսական ցուցանիշները 2004 թ. հունվար-հունիսին

(ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների հիման վրա)

I. Իրական հատված

Անվանում	*Հունվար - ապրիլ*	*Հունվար - մայիս*	*Հունվար-հունիս*	*2004թ.հունվար-հունիսի իրական աճի հնդեքսը՝ 2003թ. հունվար-հունիսի նկատմամբ (%)*
Համախառն ներքին արդյունք *(մլն դրամ)*	311777.4	430835.9	600715.3	109.2
ՀՆԱ դեֆլյատոր *(%. աճողական)*	-	-	-	106.2
Մեկ զբաղվածին բաժին ընկնող ՀՆԱ *(հազար դրամ)* [1,2]	282.9	389.4	540.1	109.1
Արդյունաբերական արտադրանքի ծավալը *(մլն դրամ)*	155820.9	195223.3	242768.4	104.5
Էլեկտրաէներգիայի արտադրությունը *(մլն կվտ/ժամ)*	2217.5	2717.0	3215.4	117.3
Գյուղատնտեսության համախառն արտադրանք *(մլն դրամ)*	52192.6	72969.7	91927.5	108.5
Մանրածախ ապրանքաշրջանառության ծավալը *(մլն դրամ)*	207251.7	269648.0	332506.2	110.1
Կապիտալ շինարարության ծավալը *(մլն դրամ)*	26868.2	45650.4	70726.1	112.1
Բնակչության դրամական եկամուտները *(մլն դրամ)*	332667.0	430463.3	535434.8	110.9[1]
Բնակչության դրամական ծախսերը *(մլն դրամ)*	346006.0	443671.0	545250.9	110.0[1]
Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձը *(ՀՀ դրամ)*	37753	39434.0	40014	123.5[1]
Տնտեսապես ակտիվ բնակչություն *(հազար մարդ)*	1220.3	1224.4	1229.9	-
Պաշտոնապես գրանցված գործազուրկներ *(հազար մարդ)*	118.3	118.0	117.6	-
Գործազրկության մակարդակը (%)	9.7	9.6	9.6	-

II. Արտաքին հատված

Անվանում	*Հունվար-ապրիլ (մլն ԱՄՆ դոլար)*	*Հունվար-մայիս (մլն ԱՄՆ դոլար)*	*Հունվար-հունիս (մլն ԱՄՆ դոլար)*	*2004թ. հունվար-հունիսը 2003թ. հունվար-հունիսի նկատմամբ,(%)*
Արտահանում *(FOB)*	215.9	274.4	340.0	107.2
Ներմուծում *(CIF)*	394.7	511.5	625.1	103.8
Առևտրային հաշվեկշռի պակասուրդ	178.8	237.0	285.1	99.9

III. Գների ինդեքսներ

Ժամանակաշրջան	*Սպառողական գների ինդեքս*	*Արդյունաբերական արտադրանքի գների ինդեքս*	*Գների ինդեքս կապիտալ շինարարությունում*	*Գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքս*
Նախորդ ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	102.5	99.5	100.3	98.5
Փետրվար	99.4	108.6	97.9	101.0
Մարտ	100.3	101.9	102.4	97.2
Ապրիլ	101.2	96.1	99.8	99.8
Մայիս	101.1	102.1	99.9	99.6
Հունիս	99.9	103.8	100.0	88.5
2004 թ. հունվար-հունիսը 2003 թ. հունվար-հունիսի նկատմամբ	107.6	122.4	102.5	102.5

Ժամանակաշրջան	*2002*	*2003*	*2004*	*2004*
	Նախորդ ամսվա նկատմամբ (%)			*Նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ (%)*
Հունվար	2.2	4.1	2.5	2.5
Փետրվար	-0.7	-1.5	-0.6	1.9
Մարտ	-0.6	-0.5	0.3	2.2
Ապրիլ	2.5	2.0	1.2	3.5
Մայիս	1.7	1.2	1.1	4.7
Հունիս	-0.5	1.4	-0.1	4.5
Հուլիս	-5.0	-5.5		
Օգոստոս	-3.0	-2.3		
Սեպտեմբեր	-0.6	2.5		
Հոկտեմբեր	0.5	-0.1		
Նոյեմբեր	2.2	2.2		
Դեկտեմբեր	3.6	5.2		
Տարեկան *(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ)*	2.0	8.6		
Տարեկան *(նախորդ տարվա նկատմամբ)*	1.1	4.7		

V. Բնականոն գնաճի[1,3] փոփոխությունները

Ցուցանիշ	**1995**	**1996**	**1997**	**1998**	**1999**	**2000**	**2001**	**2002**	**2003**	**2004**
					Նախորդ ամսվա նկատմամբ, %					
Հունվար	3.03	2.07	0.99	2.80	0.34	0.25	0.46	0.35	0.69	0.65
Փետրվար	0.59	1.19	0.57	1.06	-0.12	-0.15	-0.12	-0.29	-0.46	0.05
Մարտ	1.58	-0.19	0.16	-0.23	-0.39	-0.33	-0.07	-0.17	0.00	0.03
Ապրիլ	5.08	-0.77	0.39	-0.96	-0.47	-0.26	0.02	0.39	0.23	0.05
Մայիս	3.51	-0.90	0.24	-0.89	-0.54	-0.27	0.18	-0.12	0.06	0.04
Հունիս	0.58	-0.61	2.22	-0.76	-0.11	-0.37	-0.02	-0.14	0.61	-0.13
Հուլիս	-1.69	-0.66	4.73	-0.32	0.00	-0.39	-0.31	-0.33	-0.55	
Օգոստոս	-1.22	0.23	0.55	-0.43	-0.28	-1.01	-0.12	-0.91	-0.18	
Սեպտեմբեր	0.12	-0.01	1.44	0.16	-0.32	-0.22	-0.37	-0.19	1.20	
Հոկտեմբեր	2.63	0.15	0.52	-0.01	-0.21	0.04	0.04	0.14	0.04	
Նոյեմբեր	2.21	0.93	0.59	0.31	-0.07	0.17	0.17	0.38	0.94	
Դեկտեմբեր	5.09	0.55	0.19	0.06	0.04	0.24	0.26	0.66	2.07	
					Նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ, %					
Հունվար	321.07	33.70	9.10	18.57	-1.18	-2.75	0.04	0.71	1.16	4.45
Փետրվար	268.83	40.09	1.44	18.86	-2.64	-3.08	-0.02	0.34	0.86	5.60
Մարտ	179.63	39.43	1.22	18.08	-2.75	-3.13	0.22	-0.06	1.04	6.37
Ապրիլ	116.85	29.06	2.86	14.25	-2.93	-2.88	0.49	0.77	0.37	6.39
Մայիս	70.63	25.39	4.94	12.96	-1.95	-2.48	0.99	0.38	0.49	6.23
Հունիս	60.29	14.46	7.26	10.89	-1.35	-2.75	0.71	0.74	2.44	5.41
Հուլիս	66.33	13.66	14.25	7.04	-0.98	-2.92	1.00	0.03	2.26	
Օգոստոս	61.60	12.46	14.35	5.56	-0.72	-3.77	1.84	-0.69	2.61	
Սեպտեմբեր	56.41	11.21	16.62	2.61	-1.28	-3.13	1.90	-0.99	5.33	
Հոկտեմբեր	53.23	6.95	16.56	1.87	-1.34	-3.24	1.78	-0.38	4.65	
Նոյեմբեր	48.06	6.01	16.34	0.43	-1.82	-2.98	1.73	0.08	4.23	
Դեկտեմբեր	22.86	3.12	16.60	-0.36	-1.57	-2.39	1.51	0.71	4.67	

VI. Բնականոն գնաճին առավելապես նպաստող 10 ապրանքատեսակները

Անվանում	***Նպաստումը բնականոն գնաճին, տոկոսային կետ***
	Նախորդ ամսվա նկատմամբ, %
Բնականոն գնաճ, *այդ թվում՝*	**-0.13**
այլուր 1-ին տեսակի	-0.07
էլեկտրաէներգիա	-0.07
թռչնի միս	0.03
շաքարավազ	-0.03
միջքաղաքային երթուղային տաքսի	0.02
հաց 1-ին տեսակի	-0.02
հեռախոսի վարձ	0.01
բուսական յուղ (արևածաղկի)	-0.01
խոզի միս	0.01
հաց բարձր տեսակի	0.01

[1] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների:
[2] Տվյալները ճշգրտվել են ՀՀ ԱՎԾ կողմից:
[3] Սույն թվականի հունիսից ՀՀ ԿԲ-ն, որպես բնականոն գնաճի պաշտոնական ցուցանիշ, հրապարակում է 15 տոկոս հատած միջինի մեթոդով հաշվարկված ցուցանիշը: Հաշվարկման մեթոդաբանությունը մանրամասն ներկայացված է «ՀՀ ԿԲ բանբեր» (2004 թ. 1-ին եռամսյակ) պարբերականում:

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԳԱՆՁԱՊԵՏԱՐԱՆԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ[1]

(Սկիզբը 43 դրամ)

Ժամանակաշրջան	Պահանջներ կառավարության նկատմամբ				Կառավարության ավանդներ					Զուտ պահանջներ կառավարության նկատմամբ[2]	Կառավարության պահանջների աճ[3]
	պետական պարտատոմսերի տեղաբաշխման կանոնավոր աճուրդներում	պետական պարտատոմսերի երկրորդային շուկայում	պետական գանձապահական պարտատոմսերի ոսկեկառուցվածքային	ընդամենը	Հիմնադրամի կենսաթոշակային համակարգերի կենտրոնացված հաշիվներ	Հիմնադրամի վերին մակարդակի կենտրոնացված հաշիվ	ԾԻԳ-երի միջոցներ դրամով	ԾԻԳ-երի միջոցներ արտարժույթով	ընդամենը		
2003											
Դեկտեմբեր	0	1047	0	1047	32357	156	41	0	32554	**-31507**	***-31800***
2004											
Հունվար	0	1047	0	1047	41597	156	3	0	41757	**-40710**	***-40804***
Փետրվար	0	1047	0	1047	42325	156	0	0	42481	**-41434**	***-41624***
Մարտ	0	0	0	0	35028	155	0	0	35184	**-35184**	***-35507***
Ապրիլ	0	1055	0	1055	37412	151	0	0	37563	**-36508**	***-36537***
Մայիս	0	3710	0	3710	32052	152	9	0	32212	**-28502**	***-28502***
Հունիս	0	3710	0	3710	35843	148	8	0	35999	**-32289**	***-32285***

[1] Ներկայացված ցուցանիշները հաշվարկված են կանխիկ սկզբունքի մեթոդով՝ հակառակ դեպքում առանձին նշում է կատարված:

[2] Կառավարության նկատմամբ պահանջների և կառավարության ավանդների տարբերությունը:

[3] Հաշվարկված են կուտակման սկզբունքի մեթոդով:

ՓՈՂԻ ԲԱԶԱՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Դ - 03[4]	Հ - 04	Փ - 04	Մ - 04	Ա - 04	Մ - 04	Հ - 04
(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)							
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ [1,2]	***153802***	***151496***	***148209***	***145491***	***141524***	***134241***	***139660***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-35216***	***-48377***	***-48226***	***-42062***	***-37434***	***-30394***	***-33408***
Կառավարություն	-31507	-40710	-41434	-35184	-36508	-28502	-32289
Բանկեր	8600	4375	3487	4344	6205	4599	9096
այդ թվում՝ ռեպո համաձայն.	0	0	0	0	0	0	0
ավանդներ (-)	-100	-3300	-2150	-3710	0	0	0
Հակադարձ ռեպո (-)	0	-1025	-1031	0	0	-924	-2304
Արտարժույթի տրամադրման սվոպ (-)	0	0	-2032	-646	-2795	-3478	0
Զուտ այլ ակտիվներ	-12309	-12042	-10279	-11222	-7131	-6491	-10215
ՓՈՂԻ ԲԱԶԱ (միջինացված) [3]	***116654***	***105172***	***101742***	***103573***	***102790***	***103077***	***106847***
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***118586***	***103119***	***99983***	***103429***	***104090***	***103847***	***106252***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	96838	83686	84225	84317	83499	83631	87022
Պարտադիր պահուստ. (ՀՀ դրամով)	21047	18856	15243	18155	20088	19402	18732
Այլ հաշիվներ	700	577	515	957	503	814	498
Այլ հաշիվներ (ՀՀ դրամով)	657	517	493	528	481	810	457
Ծառայություններ	-14	-11	-7	-8	-41	-13	-14	-22	-20	-68
Արտահանում	34	41	53	56	184	39	53	58	58	207
Ներմուծում	-48	-52	-60	-65	-225	-52	-67	-79	-77	-276
Եկամուտներ	6	29	20	32	88	13	24	26	30	93
Եկամուտ աշխատուժից	13	24	31	38	105	22	36	37	40	134
Եկամուտ ներդրումներից	-7	5	-11	-5	-17	-9	-12	-11	-9	-40
Ընթացիկ տրանսֆերտներ	28	36	50	59	173	29	55	67	68	218
Պետական	8	11	14	22	55	2	15	23	20	60
Մասնավոր	20	25	36	37	119	27	39	44	48	158
Կապիտալի և ֆինանսական հաշիվ *(առանց ԿԲ ՋԱԱ փոփոխության)*	**26**	**26**	**64**	**105**	**222**	**38**	**79**	**68**	**51**	**237**
Կապիտալի հաշիվ	3	12	25	28	68	9	28	31	22	90
Ֆինանսական հաշիվ	23	15	39	77	154	29	51	38	29	146
Ուղղակի ներդրումներ	11	22	26	53	111	18	5	87	11	121
Պորտֆելային ներդրումներ	-5	5	0	2	2	-1	1	0	0	0
Այլ ներդրումներ	17	-12	14	23	42	12	45	-49	18	26
Ակտիվներ	-28	-19	-15	-28	-89	-4	-27	-13	-20	-64
Կառավարություն	0	0	3	-10	-7	1	2	0	-1	2
Բանկեր	-12	-12	-14	0	-38	1	-30	-8	-16	-53
Այլ հատվածներ	-15	-7	-4	-18	-44	-6	1	-5	-3	-13
Պարտավորություններ	45	7	28	50	130	16	71	-36	38	89
Կառավարություն	20	5	5	27	56	4	29	-52	16	-3
Բանկեր	19	-9	-2	-5	3	-6	8	3	6	11
Այլ հատվածներ	6	11	25	29	71	19	35	12	16	82
ԿԲ ՋԱԱ փոփոխություն	**6**	**-4**	**-19**	**-53**	**-70**	**25**	**-22**	**-24**	**-23**	**-45**
Սխալներ և բացթողումներ	**8**	**-3**	**-4**	**-5**	**-4**	**-6**	**6**	**-12**	**11**	**-2**

[2] Ռուսաստանի պարտքի վերաձևակերպման արդյունքում «Գույք՝ պարտքի դիմաց» ծրագրով ամրագրված գործարքը (62.8 մլն դոլար) ևս ներառված է հիմնական գումարի մարման ցուցանիշում: Ըստ վճարային հաշվեկշռի կազմման մեթոդաբանության՝ նշված գործարքը գրանցվել է մի կողմից՝ որպես ՀՀ կառավարության վարկերի դիմաց հիմնական գումարի մարում, իսկ մյուս կողմից՝ որպես ՀՀ-ում կատարված ուղղակի ներդրում:

Ապրանքների արտահանում

Ապրանքների արտահանումը (կրեդիտ) 2003 թվականին կազմել է 696.1 մլն դոլար՝ նախորդ տարվա համեմատ աճելով 35.5%-ով (FOB գներով արտահանումը կազմել է 685.6 մլն դոլար՝ նախորդ տարվա համեմատ աճելով 35.7%-ով): Ընդ որում, առանց «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» հոդվածի, արտահանումն աճել է 35.7 %-ով՝ նախորդ տարվա 12.7 % աճի փոխարեն:





2003 թվականին աճել է նաև արտահանվող ապրանքների ապրանքային բևեռացման[3] ցուցանիշը՝ կազմելով 54.9%: Թեև «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբի տեսակարար կշիռը պահպանել է նախորդ տարվա մակարդակը,

[3] *Հաշվարկվում է հետևյալ բանաձևի օգնությամբ.*

$$K = \frac{\sqrt{\sum_{i=1}^{n} x_i^2}}{X} * 100,$$ *որտեղ՝*

K-ն բևեռացման գործակիցն է, x_i-ը՝ i ապրանքի արտահանման (ներմուծման) ծավալը, X–ը՝ Հայաստանի ամբողջ արտահանման (ներմուծման) ծավալը: Մեկ ապրանքի արտահանման (ներմուծման) դեպքում ցուցանիշը հավասար կլինի 100%-ի. որքան ապրանքախմբերի թվաքանակը մեծ է, այնքան բևեռացման ցուցանիշը փոքր է:


սակայն «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբի տեսակարար կշռի աճը (8.9%-ից 13.2%) նպաստել է բևեռացման ցուցանիշի աճին: Բևեռացման նման բարձր ցուցանիշի մասին է վկայում նաև այն փաստը, որ 2003 թվականին շուրջ չորս ապրանքախմբեր կազմել են ամբողջ արտահանման 82.2%-ը:

Աղյուսակ 2

Արտահանման ապրանքային և աշխարհագրական բևեռացում (%)

	1998	1999	2000	2001	2002	2003
Ապրանքային բևեռացում	39.6	49.0	47.2	43.8	54.4	54.9
Աշխարհագրական բևեռացում	35.7	43.2	35.3	32.5	33.1	34.2

2003 թվականին ԱՊՀ անդամ երկրներից ավելացել են Ռուսաստան (արտահանվում են հիմնականում ոգելից խմիչքներ, ալյումին և դրանից պատրաստված իրեր) արտահանվող ապրանքների ծավալները՝ 29.8 մլն դոլարով: Ընդ որում, Հայաստանից պատրաստի սննդամթերք հիմնականում արտահանվում է Ռուսաստան (մեծ տեսակարար կշիռ է կազմում կոնյակի արտահանումը): Աճել են նաև արտահանման ծավալները դեպի Եվրոմիության անդամ երկրներ: Ընդ որում, հատկապես ավելացել են Բելգիա (արտահանվում է հիմնականում թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, մետաղներ)՝ 31.6 մլն ԱՄՆ դոլարով, Գերմանիա (արտահանվում է հիմնականում ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր)՝ 16.3 մլն դոլարով, արտահանվող ապրանքների ծավալները: Այլ արտերկրներից՝ ավելացել են Իսրայել (արտահանվում է հիմնականում թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, մետաղներ)՝ 54.6 մլն դոլարով, Շվեյցարիա (արտահանվում է հիմնականում թանկարժեք քարեր, մետաղներ, պղնձի հանքաքար)՝ 24.9 մլն դոլարով, Նիդեռլանդներ (արտահանվում է հիմնականում պղնձի և ցինկի հանքաքար)՝ 10.7 մլն դոլարով, ԱՄՆ (արտահանվում է հիմնականում թանկարժեք քարեր, մետաղներ և մանածագործական իրեր)՝ 9.9 մլն դոլարով, արտահանվող ապրանքների ծավալները:



2003 թվականին արձանագրվել է նաև արտահանման աշխարհագրական բևեռացման ցուցանիշի[4] աճ՝ 34.2 %՝ նախորդ տարվա 33.1%-ի փոխարեն:

[4] *Հաշվարկվում է հետևյալ բանաձևի օգնությամբ.*

$$K=\frac{\sqrt{\sum_{i=1}^{n} x_i^2}}{X} * 100,$$ *որտեղ՝*

K-ն բևեռացման գործակիցն է,
X_i-ը՝ արտահանման (ներմուծման) ծավալն է i երկիր,
X –ը՝ Հայաստանի ամբողջ արտահանման (ներմուծման) ծավալը:

Աղյուսակ 3

Ըստ ապրանքների արտահանման բևեռացման ցուցանիշը (%)[5]

Երկիր	2002	2003
Ադրբեջան	89.0	86.2
Էստոնիա	35.1	35.1
Լիտվա	33.3	33.3
Հայաստան	54.4	54.9
Ղրղզստան	39.6	40.0
Մոլդովա	48.6	46.0
Ռուսաստան	57.5	59.9
Ուկրաինա	45.8	44.1
Միջին	***50.4***	***49.9***

Աղյուսակ 4

Արտահանման աշխարհագրական բևեռացման ցուցանիշը (%)

Երկիր	2002	2003
Ադրբեջան	51.9	53.7
Էստոնիա	33.3	34.0
Լիտվա	27.4	26.3
Հայաստան	33.1	34.2
Ղրղզստան	31.9	37.8
Մոլդովա	45.1	46.3
Ռուսաստան	18.8	18.3
Ուկրաինա	36.8	37.1
Միջին	***34.8***	***36.0***

Հայաստանի ապրանքային բևեռացման ցուցանիշը, ի տարբերություն աշխարհագրական բևեռացման ցուցանիշի, բարձր է նախկին ԽՍՀՄ երկրների համարժեք ցուցանիշի միջին արժեքից: Ընդ որում՝ նշված երկրներում ինչպես ըստ ապրանքախմբերի, այնպես էլ ըստ երկրների ամենամեծ բևեռացման ցուցանիշը 2003 թվականին գրանցվել է Ադրբեջանում: Նշված հանգամանքը պայմանավորված է նրանով, որ Ադրբեջանում արտահանման ծավալների մոտ 86%-ը նավթ, նավթամթերքներն են, իսկ արտահանվող ապրանքների շուրջ 60%-ը արտահանվում է Իտալիա և Ֆրանսիա (համապատասխանաբար՝ 51.9% և 8.1%): Ռուսաստանում ևս բարձր է ըստ ապրանքախմբերի արտահանման բևեռացման ցուցանիշը, ինչն էլ հետևանք է այն բանի, որ արտահանվող էներգակիրները կազմում են ամբողջ արտահանման 57%-ը:

Մոլդովայում զգալի է ինչպես ըստ ապրանքախմբերի, այնպես էլ ըստ երկրների արտահանման բևեռացման ցուցանիշը: Մոլդովայում արտահանման ծավալների մոտ 68%-ը կազմում են 3 ապրանքախմբեր՝ պատրաստի սննդամթերք, այդ թվում՝ խմիչքներ, մանածագործական արտադրանք և բուսական ծագման արտադրանք: Արտահանվող ապրանքների շուրջ 60.8%-ը արտահանվում է 3 երկրներ՝ Ռուսաստան (39%), Ռումինիա (11.4%) և Իտալիա (10.4%):

Ապրանքների ներմուծում

2003 թվականին ներմուծումը (դեբետ) կազմել է 1130.2 մլն դոլար՝ նախորդ տարվա համեմատ աճելով 28.1%-ով (CIF գներով ներմուծումը՝ 1279.5 մլն դոլար, նախորդ տարվա համեմատ աճել է 29.6%-ով): Տարվա ընթացքում ավելացել են բոլոր ապրանքախմբերի ներմուծման ծավալները: Հատկապես «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր», «Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտային միջոցներ», «Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ», «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր», «Քիմիա և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք» և «Պատրաստի սննդի արտադրանք» ապրանքախմբերի ներմուծման

[5] Նշված երկրների վերաբերյալ տեղեկատվությունը վերցված է ԱՄՀ-ի IFS ամսական պարբերականից և կենտրոնական բանկերի՝ INTERNET-ում տեղադրված տնային էջերից:

ծավալները, համապատասխանաբար՝ 119.6 մլն դոլար, 38.6 մլն դոլար, 30.4 մլն դոլար, 21 մլն դոլար, 15.6 մլն դոլար և 14 մլն դոլար:


Ի տարբերություն արտահանման, ներմուծվող ապրանքախմբերի ցրվածությունը ավելի բարձր է: Այդ է վկայում նաև արտահանման համեմատ ներմուծման համեմատաբար ցածր բևեռացման ցուցանիշը, ինչը, սակայն, նախորդ տավա համեմատ աճել է՝ կազմելով 35%:

Աղյուսակ 5

Ներմուծման ապրանքային և աշխարհագրական բևեռացում (%)

	1998	1999	2000	2001	2002	2003
Ապրանքային բևեռացում	33.0	32.3	33.1	32.0	33.6	35.0
Աշխարհագրական բևեռացում	31.8	31.4	29.0	30.5	27.9	26.9

Ներմուծման կառուցվածքն ըստ ապրանքախմբերի



Տարիների ընթացքում ավելանում է նաև Հայաստան ապրանքներ ներմուծող գործընկեր երկրների թիվը, ինչը հանգեցնում է ըստ երկրների Հայաստանի ներմուծման ցրվածության աճի: Վերջինս կարելի է դրական համարել, քանի որ նպաստում է բևեռացման ցուցանիշի նվազմանը, այսինքն՝ ներմուծման կախվածությունը այս կամ այն երկրի տնտեսական միջավայրի հնարավոր ազդեցություններից արտահանման համեմատ փոքր է: 2003 թվականին, նախորդ տարվա համեմատ, ներմուծման աշխարհագրական բևեռացման ցուցանիշը նվազել է և կազմել 26.9%: ԱՊՀ անդամ երկրներից ներմուծումն ավելացրել է Ռուսաստանը (հիմնականում ներմուծում է գազ, ալյումինի ժապավեն, տրանսպորտային միջոցներ)՝ 6.9 մլն դոլարով, Եվրոմիության անդամ երկրներից՝ Մեծ Բրիտանիան (հիմնականում ներմուծում է նավթ, շաքարավազ)՝ 55 մլն դոլար, Բելգիան (հիմնականում ներմուծում է թանկարժեք քարեր, մետաղներ)՝ 38. մլն դոլար, Լյուքսեմբուրգը (հիմնականում ներմուծում է ոսկու փոշի)՝ 17 մլն դոլար, այլ երկրներից ներմուծումն ավելացրել է ԱՄՆ-ն (հիմնականում ներմուծում է թանկարժեք մետաղներ, նավթ, մեքենաներ, սարքավորումներ)՝ 58.2 մլն դոլար, Շվեյցարիան (հիմնականում ներմուծում է ցորեն, ոսկի, նավթ)՝ 43.1 մլն դոլար, Իսրայելը (հիմնականում ներմուծում է թանկարժեք մետաղներ)՝ 41 մլն դոլար, Հունաստանը (հիմնականում ներմուծում է մեքենաներ, սարքավորումներ)՝ 18.2 մլն դոլար:


2002-2003 թվականներին ըստ օգտագործման ուղղությունների արտահանվող և ներմուծվող ապրանքախմբերի դասակարգման արդյունքների դինամիկան էականորեն չի տարբերվել նախորդ տարվա ցուցանիշներից, թեև կան որոշ քանակական բարելավումներ:

Աղյուսակ 6

Արտահանման ու ներմուծման կառուցվածքն ըստ ապրանքախմբերի օգտագործման ուղղությունների

Ապրանքախումբ	Ծավալ, մլն դոլար				Տեսակարար կշիռը, %			
	Արտահանում		Ներմուծում		Արտահանում		Ներմուծում	
	2002	2003	2002	2003	2002	2003	2002	2003
Սպառողական ապրանքներ[6]	101.9	139.4	281.1	348.4	20.2	20.3	28.5	27.2
Արդյունաբերական պաշարներ	351.1	493.5	397.9	546.1	69.5	72.0	40.3	42.7
Վառելիք և վառելանյութ	13.4	11.0	158.0	169.4	2.7	1.6	16.0	13.2
Կապիտալ ապրանքներ	23.0	22.5	97.3	124.0	4.6	3.3	9.9	9.7
Տրանսպորտային սարքավորումներ, սարքեր և դրանց մասեր	15.6	14.7	46.5	85.0	3.1	2.1	4.7	6.6
Այլ ապրանքներ	0.2	4.5	6.3	6.6	0.0	0.7	0.6	0.5
Ընդամենը	**505.2**	**685.6**	**987.2**	**1279.5**	**100.0**	**100.0**	**100.0**	**100.0**

Տվյալները ցույց են տալիս, որ սպառողական ապրանքների արտահանման ծավալների աճի տեմպերը գերազանցում են ներմուծման աճի տեմպերը, ինչը բավականին դրական երևույթ է: «Արդյունաբերական պաշարներ» ապրանքախմբի ինչպես արտահանման, այնպես էլ ներմուծման ծավալների աճը պայմանավորված է հիմնականում «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբի ծավալների աճով:



Ներմուծման միջին հակվածություն

Ներմուծման միջին հակվածության ցուցանիշը՝ ներմուծում/ՀՆԱ հարաբերակցությունը, 2003 թվականին աճել է համախառն ներքին արդյունքի աճի համեմատ ապրանքների ու ծառայությունների ներմուծման առաջանցիկ աճի հետևանքով: Ինչպես ցույց են տալիս տվյալները, նախկին ԽՍՀՄ հանրապետություններում ևս զգալիորեն պահպանվել է ներմուծման նկատմամբ բարձր հակվածությունը, ընդ որում՝ այն ունի աճի միտում: Օրինակ՝ Ադրբեջանում նշված ցուցանիշի զգալի աճը հիմնականում պայմանավորվել է նավթի արդյունահանման ճյուղում խոշոր ներդրումների արդյունքում ներկրվող սարքավորումների ու միջազգային պայմանագրերով ոչ ռեզիդենտների կողմից այդ հատվածում մատուցվող ծառայությունների աճով:

[6] *Ընդգրկված է նաև ֆիզիկական անձանց կողմից առևտրային նպատակներով կատարվող արտահանումն ու ներմուծումը:*

Աղյուսակ 7

Ներմուծման միջին հակվածության ցուցանիշը (%)

Երկիր	1998	1999	2000	2001	2002	2003
Ադրբեջան	54.5	41.9	38.4	37.3	50.0	66.8
Էստոնիա	90.1	81.8	97.4	93.2	81.3	83.1
Լատվիա	64.8	54.2	54.3	55.6	51.2	55.1
Լիտվա	57.2	49.2	51.2	55.4	58.4	58.1
Հայաստան	53.8	49.8	50.8	46.3	46.6	49.9
Ղազախստան	37.1	38.5	48.4	48.9	48.6	43.5
Ղրղզստան	56.8	56.5	47.9	37.1	43.2	50.0
Մոլդովա	72.4	67.4	75.4	73.2	77.3	87.8
Ռուսաստան	24.1	27.2	23.5	24.3	24.5	23.6
Վրաստան	45.5	38.8	39.0	40.0	42.4	46.5
Ուկրաինա	45.0	49.5	57.4	53.8	51.8	56.0
Միջին	***54.7***	***50.4***	***53.1***	***51.4***	***52.3***	***56.4***

Աղյուսակ 8

Ըստ ապրանքների ներմուծման բևեռացման ցուցանիշը (%)

Երկիր	2002	2003
Ադրբեջան	37.5	38.4
Էստոնիա	36.4	36.2
Լիտվա	33.5	33.9
Հայաստան	33.6	35.0
Ղրղզստան	41.0	40.5
Մոլդովա	34.1	33.1
Ռուսաստան	46.7	47.1
Ուկրաինա	41.4	44.9
Միջին	***38.0***	***38.6***

Աղյուսակ 9

Ներմուծման աշխարհագրական բևեռացման ցուցանիշը (%)

Երկիր	2002	2003
Ադրբեջան	28.6	26.7
Էստոնիա	26.6	25.8
Լիտվա	34.0	33.4
Հայաստան	27.9	26.9
Ղրղզստան	33.8	37.5
Մոլդովա	29.7	30.4
Ռուսաստան	17.0	17.1
Ուկրաինա	29.5	30.0
Միջին	***28.4***	***28.5***

Աղյուսակներում ներկայացված ցուցանիշները ցույց են տալիս, որ, ի տարբերություն արտահանման, ներմուծման բևեռացումը ներկայացված երկրներում բավականին ցածր է (բացառությամբ՝ ըստ ապրանքախմբերի ներմուծումը Ռուսաստանում, Ուկրաինայում և Ղրղզստանում)։ Ռուսաստանում դա պայմանավոր-

ված է այն հանգամանքով, որ ներմուծման ծավալների մոտ 75%-ը կազմում են մեքենա- սարքավորումները, գյուղատնտեսական ապրանքները և քիմիական ու հարակից ճյուղերի արտադրանքը, իսկ Ղողզստանում 40%-ը կազմում է հանքահումքային մթերքների ու մեքենա-սարքավորումների ներմուծումը:

Ապրանքների հաշվեկշիռ

Արտաքին ապրանքաշրջանառությունը 2003 թվականին կազմել է մոտ 1826.3 մլն դոլար՝ նախորդ տարվա համեմատ աճելով 30.8%-ով: Ապրանքների հաշվեկշռի պակասուրդը կազմել է 434.1 մլն դոլար՝ նախորդ տարվա համեմատ աճելով 17.7%-ով: Առանց «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» հոդվածի ցուցանիշի, ապրանքների հաշվեկշռի պակասուրդը կազմել է 451.7 մլն դոլար՝ նախորդ տարվա համեմատ աճելով 9.2%-ով, իսկ ապրանքաշրջանառությունը կազմել է 1142.5 մլն դոլար՝ նախորդ տարվա համեմատ աճելով 23.6 %-ով:

Աղյուսակ 10

Արտաքին առևտրի փոփոխությունը նախորդ տարվա համեմատ (%) [7]

Ցուցանիշ	Աճ (+), Նվազում (-)	Այդ թվում՝ փոփոխություններ կապված՝	
		ֆիզիկական ծավալների հետ	գների հետ (դոլարային)
Ապրանքների արտահանում (FOB գներով)	+ 35.7	+29.4	+6.3
Ապրանքների ներմուծում (CIF գներով)	+29.6	+24.8	+4.8

Աղյուսակ 11

Արտահանման գնի և ծավալի փոփոխություն (%)

Ապրանքախումբ	2002			2003		
	Աճ (+), Նվազում (-)	Այդ թվում՝ փոփոխություններ կապված՝		Աճ (+), Նվազում (-)	Այդ թվում՝ փոփոխություններ կապված՝	
		ֆիզիկական ծավալների հետ	գների հետ		ֆիզիկական ծավալների հետ	գների հետ
Ընդամենը	**47.8**	**45.7**	**2.1**	**35.7**	**29.4**	**6.3**
Մանածագործական իրեր, կաշի և կոշկեղեն[8]	11.0	15.3	-4.3	8.8	0.3	8.5
Թանկարժեք քարեր և մետաղներ	110.3	106.5	3.8	35.8	35.1	0.7
Հանքահումքային մթերքներ և քիմիական արտադրության ապրանքներ[9]	-2.8	2.8	-5.6	11.9	-4.3	16.2
Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատ. իրեր	3.1	-4.7	7.8	101.9	81.8	20.0
Գյուղատնտեսական մթերքներ[10]	16.3	25.9	-9.6	37.1	27.8	9.4
Մեքենաներ, սարքեր և տրանսպորտային միջոցներ[11]	40.6	30.1	10.5	18.7	7.4	11.3
Այլ ապրանքներ[12]	21.2	21.6	-0.4	25.7	22.3	3.5

[7] Արտահանման և ներմուծման գների հաշվարկման մեթոդաբանությունը տրված է ՀՀ ԿԲ դրամավարկային քաղաքականության վարչության կողմից պատրաստված «Արտահանման և ներմուծման գները ՀՀ-ում» վերլուծական նյութում:

[8] Ներառում է «Մանածագործական իրեր», «Կոշկեղեն, հովանոցներ, գլխարկներ», «Կաշվե հումք, մորթի, կաշի և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբերը:

[9] Ներառում է «Հանքահումքային մթերքներ», «Քիմիական արտադրության ապրանքներ», «Պլաստմասսա, կաուչուկ, ռետին և դրանցից պատրաստված իրեր», «Իրեր քարից, գիպսից, ցեմենտից» ապրանքախմբերը:

[10] Ներառում է «Կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք», «Բուսական ծագման արտադրանք», «Կենդանական և բուսական ծագման յուղեր և ճարպեր», «Պատրաստի սննդի արտադրանք» ապրանքախմբերը:

[11] Ներառում է «Մեքենաներ և սարքավորումներ», «Տրանսպորտային միջոցներ», «Սարքեր և ապարատներ» ապրանքախմբերը:

[12] Ներառում է «Փայտ և փայտյա իրեր», «Թուղթ և թղթյա իրեր», «Կահույք և խաղալիքներ», «Արվեստի ստեղծագործություններ» ապրանքախմբերը:

Աղյուսակ 12

Ներմուծման գնի և ծավալի փոփոխություն (%)


Ապրանքախումբ	2002			2003		
	Աճ (+), Նվազում (-)	Այդ թվում՝ փոփոխություններ կապված՝		Աճ (+), Նվազում (-)	Այդ թվում՝ փոփոխություններ կապված՝	
		Ֆիզիկական ծավալների հետ	գների հետ		Ֆիզիկական ծավալների հետ	գների հետ
Ընդամենը	**12.5**	**14.2**	**-1.7**	**29.6**	**24.8**	**4.8**
Մանածագործական իրեր, կաշի և կոշկեղեն[8]	-12.4	-9.2	-3.2	9.1	10.8	-1.7
Թանկարժեք քարեր և մետաղներ…	100.0	92.1	7.9	56.0	41.1	15.0
Հանքահումքային մթերքներ և քիմիական արտադրության ապրանքներ[9]	-4.2	2.7	-6.9	12.0	10.3	1.7
Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատ. իրեր	54.5	56.7	-2.2	37.8	35.2	2.5
Գյուղատնտեսական մթերքներ[10]	47.5	52.3	-4.8	12.0	12.8	-0.7
Մեքենաներ, սարքեր և տրանսպորտային միջոցներ[11]	16.4	18.1	-1.7	50.5	46.0	4.5
Այլ ապրանքներ[12]	-12.5	-5.8	-6.7	21.8	15.9	5.9

Արտահանման գներն աճել են 6.3%-ով, ինչը պայմանավորվել է այն հանգամանքով, որ բոլոր ապրանքախմբերի գները բարձրացել են: Ընդ որում, որոշ հոդվածներում ներառված ապրանքների գների աճը զգալի է, մասնավորապես՝ «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբի գինը աճել է 20%-ով, «Հանքահումքային մթերքներ և քիմիական արտադրության ապրանքներ» ապրանքախմբինը՝ 16.2%-ով, «Մեքենաներ, սարքեր և տրանսպորտային միջոցներ» ապրանքախմբինը՝ 11.3%-ով: Ընդ որում, դրական երևույթ կարելի է համարել այն, որ գների աճին զուգընթաց, բացառությամբ «Հանքահումքային մթերքներ և քիմիական արտադրության ապրանքներ» ապրանքախմբի, բոլոր մյուս ապրանքախմբերի արտահանման ծավալներն ավելացել են, ինչը կարող է վկայել, որ այդ ապրանքախմբերը կամ փոփոխություններ են կրել որակապես, կամ աճել է դրանց արտաքին պահանջարկը:

Ներմուծվող ապրանքատեսակների գներն աճել են 4.8%-ով: Բացառությամբ «Մանածագործական իրեր, կաշի և կոշկեղեն» և «Գյուղատնտեսական մթերքներ» ապրանքախմբերի ներմուծման գների, մյուս ապրանքախմբերի ներմուծման գներն աճել են, ընդ որում՝ զգալի աճել են միայն «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբի ներմուծման գները, ինչն էլ, հավանաբար, պայմանավորված է տարվա երկրորդ կեսին Ռուսաստանում ադամանդի գների ազատականացման հետ:

Արտահանման և ներմուծման գների նման դինամիկայով պայմանավորված՝ շարունակել են բարելավվել ՀՀ արտաքին առևտրի պայմանները[13], ինչը ցույց է տալիս, որ բարելավվել է երկրի դիրքը արտաքին տնտեսական հարաբերություններում:

ՀՀ արտաքին առևտրի պայմանները 1999-2003 թվականներին (փոփոխությունը նախորդ տարվա նկատմամբ)



[13] *Արտահանման գների ինդեքս / ներմուծման գների ինդեքս:*

2003 թվականին զգալիորեն աճել է տնտեսության բացվածության ցուցանիշը[14] և կազմել 81.9%: Նշված ցուցանիշի դինամիկան նախկին ԽՍՀՄ երկրներում հիմնականում ունի աճի միտում, թեև մի քանի երկրներում (Ղազախստան, Ռուսաստան) գրանցվել է ցուցանիշի նվազում:


Աղյուսակ 13

Բացվածության ցուցանիշ (%)

Երկիր	1998	1999	2000	2001	2002	2003
Ադրբեջան	77.2	69.9	78.5	78.8	92.8	109.6
Էստոնիա	169.8	157.7	190.8	182.7	155.6	158.2
Լատվիա	116.0	98.0	99.9	100.0	92.7	97.5
Լիտվա	102.9	88.3	96.1	105.4	111.4	110.3
Հայաստան	72.8	70.6	74.2	71.8	76.0	81.9
Ղազախստան	69.2	78.0	105.3	96.9	98.2	92.7
Ղրղզստան	93.2	98.7	89.7	73.8	82.7	93.6
Մոլդովա	119.2	119.5	125.2	123.2	129.9	141.7
Ռուսաստան	52.3	70.6	67.6	61.3	59.5	58.7
Վրաստան	68.0	58.3	60.8	65.3	71.7	78.4
Ուկրաինա	87.0	104.9	119.9	109.2	108.1	114.6
Միջին	***93.4***	***92.2***	***100.7***	***97.1***	***98.1***	***103.4***

Ուսումնասիրելով բացվածության ցուցանիշի առանձին բաղադրատարրերի՝ արտահանում/ՀՆԱ և ներմուծում/ՀՆԱ ցուցանիշները՝ կարելի է նկատել, որ նախ՝ դիտարկվող գրեթե բոլոր երկրներում ներմուծում/ՀՆԱ հարաբերակցությունը գերազանցում է արտահանում/ՀՆԱ հարաբերակցությունը, բացառությամբ հիմնականում հումք արտահանող երկրների՝ Ռուսաստանի, Ղազախստանի և Ուկրաինայի: Երկրորդ՝ արտահանման և ներմուծման փոխկապվածությունը ցույց է տալիս, որ տնտեսապես առավել բաց երկրներում արտահանման աճը հանգեցնելով եկամտի աճի՝ հետագայում նպաստում է ներմուծման նկատմամբ հակվածության աճին, հետևաբար նաև՝ ներմուծման ծավալների հետագա ավելացմանը: Ըստ 1998-2003 թվականներին նախկին ԽՍՀՄ երկրներում արտահանում/ՀՆԱ և ներմուծում/ՀՆԱ միջին ցուցանիշների հիման վրա հաշվարկված տվյալների՝ արտահանում/ՀՆԱ հարաբերակցության մեկ միավոր աճը ներկայացված երկրներում ուղեկցվել է ներմուծում/ՀՆԱ հարաբերակցության մոտ 0.9 միավոր աճով:


Ապրանքների և ծառայությունների արտահանում/ՀՆԱ և ներմուծում/ՀՆԱ ցուցանիշները (միջին 1998-2003թթ. համար) նախկին ԽՍՀՄ երկրներում (%)




*[14] Բացվածության ցուցանիշ = (ապրանքների և ծառայությունների արտահանման և ներմուծման գումար ((արտաքին առևտրի շրջանառություն)*100/ՀՆԱ):*

Ծառայությունների հաշվեկշիռ

Տարվա ընթացքում «Ծառայություններ» հոդվածի պակասուրդը խորացել է 27.7 մլն ԱՄՆ դոլարով (68 %-ով)՝ կազմելով 68.3 մլն դոլար՝ նախորդ տարվա 40.7 մլն դոլարի փոխարեն: Նշված վատացումը հիմնականում պայմանավորվել է «Տրանսպորտային ծառայություններ» և «Ճանապարհորդություններ» հոդվածների վարքագծով: Տրանսպորտային ծառայությունների գծով պակասուրդը կազմել է 78.3 մլն դոլար՝ նախորդ տարվա համեմատ աճելով 12.7 մլն դոլարով, ինչը համահունչ է ապրանքների արտահանման ու ներմուծման դինամիկային: Ճանապարհորդությունների գծով հաշվեկշռի ավելցուկը կազմել է 5.7 մլն դոլար՝ նախորդ տարվա 9.4 մլն դոլարի փոխարեն: Նշված նվազումը հիմնականում պայմանավորվել է ՀՀ քաղաքացիների՝ արտերկրներում կատարած անձնական ճանապարհորդությունների աճով, ինչի արդյունքում ճանապարհորդությունների զուտ ցուցանիշը նվազել է: Մյուս հոդվածների էական փոփոխություններ չեն գրանցվել:






ՀՀ վճարային հաշվեկշռի «Եկամուտներ» և «Ընթացիկ տրանսֆերտներ» հոդվածները 2003 թվականին ունեցել են դրական մնացորդ՝ հանդիսանալով «Ապրանքներ» և «Ծառայություններ» հոդվածների բացասական ճեղքվածքի ֆինանսավորման հիմնական աղբյուրներ: Ընդ որում՝ նշված հոդվածների միջոցով ֆինանսավորվել է ապրանքների ու ծառայությունների հաշվեկշռի բացասական մնացորդի մոտ 62%-ը:

Եկամուտների հաշվեկշիռ

«Եկամուտներ» (զուտ) հոդվածի ցուցանիշը կազմել է 93.4 մլն դոլար՝ նախորդ տարվա համեմատ ավելանալով 5.2 մլն դոլարով: Թեև եկամուտներում 28.3 մլն դոլարով ավելացել են ժամանակավոր կամ սեզոնային աշխատանքի դիմաց ստացված վաստակների (զուտ) ծավալները և կազմել 133.7 մլն դոլար, սակայն ներդրումներից եկամուտները՝ ոչ ռեզիդենտների կողմից նախկինում կատարված ներդրումների դիմաց ստացված եկամուտները, աճել են 23.1 մլն դոլարով և կազմել 40.4 մլն դոլար, ինչն էլ հանգեցրել է «Եկամուտներ» հոդվածի ցուցանիշի աճի տեմպերի կրճատման:




Ընթացիկ տրանսֆերտներ

Ընթացիկ տրանսֆերտները (զուտ) կազմել են 218.5 մլն դոլար՝ նախորդ տարվա համեմատ աճելով 45.1 մլն դոլարով: Ընդ որում, ընթացիկ տրանսֆերտների նման ավելացումը գրանցվել է պետական տրանսֆերտների ընդամենը 5.5 մլն դոլար աճի պայմաններում: Վերջինս տարվա ընթացքում կազմել է 60.2 մլն դոլար, որից 28.8 մլն դոլարը մարդասիրական օգնությունն է, 16.2 մլն դոլարը՝ տեխնիկական օգնությունը, իսկ 17.1 մլն դոլարը՝ ֆինանսական օգնությունը: Մասնավոր տրանսֆերտները կազմել են 158.3 մլն դոլար՝ նախորդ տարվա համեմատ աճելով 33.4%-ով:

Վճարային հաշվեկշռի ընթացիկ տրանսֆերտները ֆինանսավորել են ապրանքների և ծառայությունների հաշվեկշռի բացասական մնացորդի շուրջ 43.5%-ը՝ նախորդ տարվա 42.3%-ի փոխարեն:

Հարկ է նշել, որ շուրջ 292 մլն դոլար մասնավոր տրանսֆերտների և աշխատուժից գործոնային եկամուտների մոտ 272.9 մլն դոլարը կամ ընդհանուրի 93%-ը ստացվել է ՀՀ առևտրային բանկերի միջոցով[15]: Ընդ որում, նշված ցուցանիշը նախորդ տարվա համեմատ աճել է մոտ 33.5%-ով: ՀՀ բանկային համակարգի միջոցով նշված փոխանցումների զգալի մասը կատարվել է Ռուսաստանից ու ԱՄՆ-ից:



Ընթացիկ հաշվի բաղադրատարրերի՝ վերը նշված դինամիկաների արդյունքում 2003 թվականին 28.8%-ով ավելացել է ընթացիկ հաշվի պակասուրդը և կազմել 190.6 մլն դոլար, որի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում կազմել է 6.8 %՝ նախորդ տարվա 6.2%-ի փոխարեն:

---

[15] ՀՀ կենտրոնական բանկը ՀՀ առևտրային բանկերից եռամսյակային պարբերականությամբ հավաքագրում է տեղեկատվություն ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրներից կատարված փոխանցումների և ՀՀ ֆիզիկական անձանց կողմից արտերկիր կատարված փոխանցումների վերաբերյալ: Նշված փոխանցումներում չեն տարանջատվում ընթացիկ տրանսֆերտների ու աշխատուժից գործոնային եկամուտների ցուցանիշները, ընդ որում՝ այստեղ դժվարություններ են առաջացնում նաև փոխանցումները ըստ նպատակի տարանջատելը: Այդ իսկ պատճառով, ՀՀ կենտրոնական բանկը որպես նման փոխանցումներ է դիտարկում բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց անունով և նրանց կողմից կատարված ամբողջ փոխանցումներում միայն դրամական համակարգերի միջոցով (Money Gram, Western Union և այլն) կատարված փոխանցումները (որոնք հիմնականում նպատակահարմար չեն առևտրային նպատակներով օգտագործման համար), իսկ տարանջատումը ընթացիկ մասնավոր տրանսֆերտների ու աշխատուժից գործոնային եկամուտների, կատարում է ՀՀ ԱՎԾ-ն՝ կիրառելով որոշակի համամասնություններ:

Աղյուսակ 14

Ընթացիկ հաշվի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում (%)


Երկիր	1998	1999	2000	2001	2002	2003
Ադրբեջան	-30.7	-13.1	-3.2	-0.9	-12.3	-28.3
Էստոնիա	-9.1	-5.7	-5.7	-6.1	-10.1	-13.2
Լատվիա	-10.7	-9.8	-6.9	-9.5	-7.0	-8.6
Լիտվա	-11.7	-11.0	-5.9	-4.7	-5.1	-7.0
Հայաստան	-21.3	-16.6	-14.6	-9.5	-6.2	-6.8
Ղազախստան	-5.8	-1.0	3.7	-5.2	-3.0	-0.6
Ղրղզստան	-25.1	-20.2	-9.2	-3.4	-5.3	-1.6
Մոլդովա	-19.7	-6.7	-9.7	-5.3	-3.4	-7.3
Ռուսաստան	0.1	12.6	18.0	11.0	8.4	8.3
Վրաստան	-9.4	-7.1	-8.8	-6.6	-6.8	-9.9
Ուկրաինա	-3.1	5.4	4.7	3.7	7.7	5.9
Միջին	***-13.3***	***-6.7***	***-3.4***	***-3.3***	***-3.9***	***-6.3***

Ուսումնասիրելով նախկին ԽՍՀՄ հանրապետություններում ՀՆԱ-ում ընթացիկ հաշվի պակասուրդի տեսակարար կշռի դինամիկաները, կարելի է նկատել, որ թեև երկրների հիմնական մասում նկատելի է այս ցուցանիշի նվազման միտում, սակայն մի քանի երկրներում գրանցվել է ցուցանիշի կտրուկ վատացում: Ադրբեջանում, օրինակ, դա պայմանավորված էր հիմնականում ապրանքների և ծառայությունների ներմուծման մոտ կրկնակի աճով՝ նավթի արդյունաբերության ճյուղում առավելապես սարքավորումների ու մեխանիզմների ներմուծման ծավալների աճի հետևանքով, ինչն ավելի քան չեզոքացվել է ուղղակի ներդրումների կտրուկ աճով: Էստոնիայում ընթացիկ հաշվի պակասուրդի աճը պայմանավորված էր ինչպես առևտրային հաշվեկշռի վատացմամբ, այնպես էլ նախկինում կատարված ներդրումների դիմաց ոչ ռեզիդենտների ստացած եկամուտների զգալի աճի հետևանքով «Եկամուտներ» հոդվածի բացասական ճեղքվածքի աճով:

ԿԱՊԻՏԱԼԻ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇԻՎ

Վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի պակասուրդի աճն ուղեկցվել է կապիտալ ու ֆինանսական հաշվի աճով: Ընդ որում, նշված աճը գերազանցել է ընթացիկ հաշվի պակասուրդը, ինչը նպաստել է ՀՀ

ՀՀ վճարային հաշվեկշռի կապիտալ ու ֆինանսական հաշվի բաղադրատարրերի դինամիկան 1998-2003 թվականներին



կենտրոնական բանկի համախառն արտաքին պահուստների համալրմանը: Կապիտալ ու ֆինանսական հաշիվը (առանց ԿԲ զուտ արտաքին ակտիվների փոփոխության) 2003 թվականին կազմել է 236.9 մլն դոլար՝ նախորդ տարվա 221.7 մլն դոլարի փոխարեն: Ընդ որում, նշված հաշիվն առաջին անգամ աճել է ի հաշիվ կապիտալ հաշվում կատարված գործառնությունների, քանի որ ֆինանսական հաշիվը նախորդ տարվա համեմատ նվազել է: Ֆինանսական հաշվում հիմնականում նվազել են ՀՀ պետական հատվածին արտաքին աշխարհից տրամադրված վարկերը:


Կապիտալի հաշիվ

Կապիտալի հաշվի հիմնական բաղադրատարր հանդիսացող կապիտալ տրանսֆերտները տարվա ընթացքում կազմել են 89.9 մլն դոլար: Նշված ցուցանիշի աճը նախորդ տարվա համեմատ կազմել է 21.9 մլն դոլար: Կապիտալ տրանսֆերտների մոտ 70.8 մլն դոլարը Լինսի հիմնադրամի կողմից Հայաստանին տրված անհատույց ֆինանսական միջոցներն են, որոնց նպատակը ճանապարհների շինարարության ու բարեկարգման աշխատանքների իրականացումն է ինչպես Երևանում, այնպես էլ աղետի գոտում ու այլ շրջաններում:

ՖԻՆԱՆՍԱԿՆ ՀԱՇԻՎ

Ուղղակի ներդրումներ

2003 թվականին ուղղակի ներդրումները նախորդ տարվա համեմատ ավելացել են 9.8 մլն դոլարով և կազմել 120.5 մլն դոլար: Ուղղակի ներդրումներից մոտ 62.8 մլն ԱՄՆ դոլարը Ռուսաստանի հետ «Գույք՝ պարտքի դիմաց» ծրագրի շրջանակներում գրանցված ներդրումներն են, մոտ 27.2 մլն դոլարը՝ նախկինում կատարված ուղղակի ներդրումների արդյունքում ձեռնարկություններում վերաներդրված շահույթն է, որը 2002 թվականի համեմատ զգալիորեն աճել է (2002 թվականին՝ 7.5 մլն դոլար)՝ հիմնականում տնտեսությունում շահութաբերության մակարդակի բարձրացման հաշվին: 2003 թվականին բաժնետիրական կապիտալում կատարված ներդրումներից եթե բացառենք Ռուսաստանի վերը նշված գործարքը, ապա բաժնետիրական կապիտալում կատարված ուղղակի ներդրումները կկազմեն մոտ 12.4 մլն դոլար՝ նախորդ տարվա 98.4 մլն դոլարի փոխարեն: Բանկային համակարգում ևս ուղղակի ներդրումները զգալիորեն կրճատվել են: Տարվա ընթացքում ՀՀ առևտրային բանկերի բաժնետիրական կապիտալում կատարված ներդրումները կազմել են ընդամենը 0.8 մլն դոլար՝ նախորդ տարվա 8.6 մլն դոլարի փոխարեն:




Տարվա ընթացքում իրական հատվածում ուղղակի ներդրումների շուրջ 65.5%-ը կատարել են Ռուսաստանի, Կանադայի, ԱՄՆ-ի և Ֆրանսիայի ներդրողները, ուղղակի ներդրումներ են կատարվել հիմնականում տարբեր սարքերի ու ժամացույցների արտադրության, սննդամթերքի՝ ներառյալ խմիչքների արտադրության, մետաղե հանքաքարի արդյունահանման բնագավառներում:

Ուղղակի ներդրումներ (զուտ) / ՀՆԱ (%)


Երկիր	1997	1998	1999	2000	2001	2002	2003
Ադրբեջան	28.1	23.0	11.1	2.4	4.0	17.1	32.9
Էստոնիա	2.8	11.0	4.3	6.3	6.1	2.2	8.2
Լատվիա	9.2	5.0	5.0	5.6	2.0	4.1	3.0
Լիտվա	3.3	8.3	4.4	3.3	3.6	4.9	0.8
Հայաստան	3.2	11.7	6.6	5.5	3.3	4.7	4.3
Ղազախստան	6.2	5.4	9.0	7.0	13.4	9.2	7.2
Ղրղզստան	4.7	5.3	3.1	-0.5	-0.1	0.3	2.4
Մոլդովա	4.1	4.5	3.2	10.6	6.6	7.0	3.0
Ռուսաստան	0.4	0.5	0.6	-0.2	0.1	0.0	-0.7
Ուկրաինա	1.2	1.8	1.6	1.9	2.0	1.7	2.9
Միջին	***6.3***	***7.6***	***4.9***	***4.2***	***4.1***	***5.1***	***6.4***

Հայաստանում և նախկին ԽՍՀՄ հանրապետություններում ուղղակի ներդրումներ/համախառն ներքին արդյունք հարաբերակցության ցուցանիշը բավականին անկանոն վարքագիծ է դրսևորում: Ընդ որում, երկրների հիմնական մասում նկատելի է նշված հարաբերակցության անկում, ինչը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ մի քանի երկրներում սկսել են աճել արտերկրներում կատարվող ուղղակի ներդրումները, ինչի արդյունքում զուտ ներդրումները նվազել են: Ուշագրավ է 2003 թվականին Ադրբեջանում իրականացված ուղղակի ներդրումների ծավալների զգալի աճը: Նշված ներդրումները հիմնականում իրականացվել են նավթի արդյունահանման և այս ոլորտում մատուցվող ծառայությունների բնագավառում: Էստոնիայում ուղղակի ներդրումների աճը հիմնականում պայմանավորված է նախորդ տարիների ներդրումների արդյունքում վերաներդրված շահույթի մոտ կրկնակի աճով, ինչը նորից ուղղվել է ձեռնարկությունների ընդլայնմանը:



Պորտֆելային ներդրումներ

2003 թվականին ևս, ինչպես և նախորդ տարիներին, պորտֆելային ներդրումների ծավալները մեծ չեն եղել և կազմել են ընդամենը 0.3 մլն դոլար (զուտ): Պորտֆելային ներդրումներում մեծ տեսակարար կշիռ են ունեցել ՀՀ կառավարության թողարկած և ոչ ռեզիդենտների կողմից ձեռք բերված պարտատոմսերը, որոնք տարվա ընթացքում կազմել են մոտ 0.4 մլն դոլար: 2003 թվականի վերջի դրությամբ ոչ ռեզիդենտների մասնաբաժինը շրջանառության մեջ գտնվող՝ ՀՀ կառավարության կողմից թողարկված պետական պարտատոմսերի ընդհանուր ծավալում կազմել է 4.8 %՝ նախորդ տարվա վերջի 5%-ի փոխարեն, այսինքն՝ միտումները էապես չեն փոխվել:



Այլ ներդրումներ

Վճարային հաշվեկշռի մեթոդաբանության համաձայն՝ «Այլ ներդրումներին» են դասվում այն ֆինանսական հոսքերը, որոնք ֆինանսական հաշվի ուղղակի և պորտֆելային ներդրումներում ներառված չեն: Դրանք դասակարգվում են ըստ հետևյալ հիմնական ֆինանսական գործիքների՝ առևտրային վարկեր, բանկային վարկեր և փոխառություններ, կանխիկ արտարժույթ և ավանդներ, այլ ակտիվներ ու պարտավորություններ:

«Այլ ներդրումներ» հոդվածի ցուցանիշը տարվա ընթացքում նվազել է 25.7 մլն դոլարով և կազմել 27.8 մլն դոլար: Նվազումը պայմանավորվել է նշված հոդվածում ընդգրկված բոլոր բաղադրատարրերի ծավալների նվազմամբ:

Պետական հատված

2003 թվականին ՀՀ պետական հատվածի արտաքին պարտավորություններն[16] ավելացել են 24.7 մլն դոլարով՝ նախորդ տարվա 45.1 մլն դոլարի փոխարեն:

Ընդ որում, պետական հատվածի վարկերի ներհոսքը տարվա ընթացքում կազմել է 92.3 մլն դոլար՝ նախորդ տարվա 84.4 մլն դոլարի փոխարեն: Ներհոսքի 92.8%-ը կազմել են Համաշխարհային բանկի, 6.9%-ը՝ Գերմանիայի կառավարության, 0.3%-ը՝ Եվրոպական բանկի կողմից տրամադրված վարկերը՝ նախորդ տարվա համապատասխանաբար՝ 83.6%, 12.6% և 2.3%-ի փոխարեն:

Տարվա ընթացքում պետական հատվածի վարկերի արտահոսքը (վարկերի մարումը) կազմել է 67.6 մլն դոլար՝ նախորդ տարվա 39.3 մլն դոլարի փոխարեն: Արտահոսքի նման մեծ ծավալները (նախորդ տարվա համեմատ աճ՝ 72.3 %) հիմնականում պայմանավորվել են Ռուսաստանի հետ կնքած «Գույք՝ պարտքի դիմաց» պայմանագրի շրջանակներում 62.8 մլն դոլար նախկինում կուտակված պարտքի փոխարեն Ռուսաստանին Հայաստանի մի քանի պետական ձեռնարկությունների բաժնետոմսերի տրամադրմամբ, ինչի արդյունքում, համաձայն վճարային հաշվեկշռի կազմման մեթոդաբանության, այն գրանցվել է մի կողմից՝ որպես նշված գումարի չափով պարտքի մարում (հիմնական գումարի մարում), իսկ մյուս կողմից՝ ՀՀ-ում կատարված ներդրումներ: Արդյունքում՝ պետական հատվածի գործառնությունների գծով ֆինանսական հաշվում տարվա ընթացքում գրանցվել է զգալի նվազում:

Առևտրային բանկեր

Առևտրային բանկերի զուտ արտաքին ակտիվներն[17] ավելացել են մոտ 41.9 մլն դոլարով: Ընդ որում, արտաքին ակտիվներն աճել են 50.2 մլն դոլարով, իսկ պարտավորությունները՝ 10.3 մլն դոլարով: Ակտիվների նման աճը պայմանավորված էր արտերկրներում ՀՀ առևտրային բանկերի կարճաժամկետ ավանդների (ներառյալ թղթակցային հաշիվները) զգալի աճով: Նշված ավանդների աճի պատճառը առավելապես ՀՀ առևտրային բանկերում ռեզիդենտների՝ արտարժույթով ավանդների շուրջ 27.2 մլն դոլարով աճն էր: Ընդ որում, հիմնականում աճել են ռեզիդենտների՝ արտարժույթով ցպահանջ ավանդների ծավալները: ՀՀ առևտրային բանկերի արտաքին ակտիվների աճը՝ պայմանավորված արտերկրներում

---

[16] ՀՀ 2003 թվականի արտաքին պետական պարտքի մանրամասն վերլուծությունը ներկայացված է ՀՀ կենտրոնական բանկի 2004 թվականի 1-ին եռամսյակի Բանբերի՝ «ՀՀ արտաքին պարտքը 2003 թվականին» հոդվածում:

[17] Ի տարբերություն դրամավարկային վիճակագրության, վճարային հաշվեկշռի կազմման մեթոդաբանության համաձայն, առևտրային բանկերի արտաքին ակտիվներ և պարտավորություններ ձևավորող գործառնությունների փոփոխությունը հաշվարկվում է առանց վերագնահատման և ներառում է ոչ փոխարկելի արտարժույթով գործառնությունները:

ավանդների աճով, տնտեսությունում ֆինանսական միջոցների նկատմամբ պահանջարկի պայմաններում, վկայում է, որ իրական հատվածի ֆինանսավորման ռիսկը դեռևս մնում է բարձր, և բանկերը գերադասում են ֆինանսական միջոցները ներդնել ավելի ցածր տոկոսադրույքով, սակայն արտասահմանյան բանկերի բարձր իրացվելի ակտիվներում:

Պարտավորությունների աճը առավելապես պայմանավորված էր ՀՀ առևտրային բանկերի կողմից ոչ ռեզիդենտներից ներգրավվող կարճաժամկետ ավանդների ծավալների աճով:

Ուսումնասիրելով ՀՀ առևտրային բանկերի զուտ արտաքին ակտիվների դինամիկան՝ կարելի է նկատել, որ վերջին 5 տարիներին գրանցվել է զուտ արտաքին ակտիվների աստիճանական աճ, իսկ սկսած 2002 թվականից՝ արտաքին ակտիվները գերազանցել են արտաքին պարտավորությունները:

Նախկին ԽՍՀՄ երկրներում առևտրային բանկերի զուտ արտաքին ակտիվների դինամիկան ցույց է տալիս, որ երկրներում, կախված տարբեր հանգամանքներից, զուտ արտաքին ակտիվների միտումները տարբեր են: Զուտ արտաքին ակտիվների աճ է նկատվում Ադրբեջանում, Հայաստանում, Ռուսաստանում, իսկ մնացած երկրներում հակառակը՝ գրանցվել է զուտ արտաքին ակտիվների նվազում: Վերջին խումբ երկրներից Ղազախստանում, Մերձբալթյան երկրներում բանկերը զգալի միջոցներ են ներգրավում արտերկրներից, մասնավորապես՝ Ղազախստանում խոշորագույն բանկերը թողարկում են եվրոպարտատոմսեր, Մերձբալթյան երկրներում, օրինակ՝ արտաքին ակտիվների նվազումը հիմնականում պայմանավորված է պարտավորությունների՝ ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդների աճով:

Աղյուսակ 16

Առևտրային բանկերի զուտ արտաքին ակտիվները (մլն դոլար)[18]

Երկիր	1998	1999	2000	2001	2002	2003
Ադրբեջան	55.0	93.3	289.3	98.1	100.8	115.6
Էստոնիա	-401.3	-315.5	-360.8	-115.0	-477.7	-1432.8
Լատվիա	152.7	-8.0	-5.9	-378.3	-716.7	-1383.7
Լիտվա	-136.0	-99.4	190.2	152.0	-103.5	-889.7
Հայաստան	-64.2	-42.6	-25.8	-15.0	28.7	70.6
Ղազախստան	-46.0	338.5	3.8	-426.2	-470.4	-1902.7
Ռուսաստան	-851.2	5967.0	7617.6	8732.2	4959.7	1291.9

Այլ մասնավոր հատված

Տարվա ընթացքում մասնավոր հատվածի այլ ներդրումները կազմել են 68.9 մլն ԱՄՆ դոլար, ընդ որում՝ ակտիվներն ավելացել են 13 մլն դոլարով, իսկ պարտավորությունները՝ 81.8 մլն դոլարով: Ակտիվներում 23.4 մլն դոլար կազմել են առևտրային վարկերը և 10.4 մլն դոլար՝ կանխիկ արտարժույթը. նշված հոդվածներից առևտրային վարկերը նախորդ տարվա նկատմամբ նվազել են 11.7 մլն դոլարով, իսկ կանխիկ արտարժույթը՝ 18.4 մլն դոլարով: Առևտրային վարկերի ձևով իրականացվող արտահանումը կազմել է ապրանքների արտահանման 3.4 %-ը՝ նախորդ տարվա 6.8%-ի փոխարեն:

Պարտավորություններում, նախորդ տարվա համեմատ, զգալիորեն աճել են առևտրային վարկերը (26.2 մլն դոլարով) և մասնավոր հատվածի կողմից ներգրավված վարկերը (21.9 մլն դոլարով)՝ կազմելով համապատասխանաբար 46.2 մլն դոլար և 32.1 մլն դոլար: Առևտրային վարկերի ձևով կատարված ներմուծումը կազմել է ապրանքների ներմուծման 4.1 %-ը՝ նախորդ տարվա 2.3 %-ի փոխարեն:

Համախառն արտաքին պահուստներ

Վճարային հաշվեկշռի վերոնշյալ գործառնությունների արդյունքում գրանցված դրական մնացորդի շնորհիվ 46.4 մլն դոլարով ավելացել են ՀՀ կենտրոնական բանկի համախառն արտաքին պահուստները և կազմել մոտ 502 մլն դոլար[19]:


Ներմուծման ծածկույթի ցուցանիշը տարվա ընթացքում կազմել է 4.3՝ նախորդ տարվա 4.7-ի փոխարեն: Ցուցանիշի նման դինամիկան պայմանավորվել է համախառն արտաքին ակտիվների աճի տեմպերի համեմատ ապրանքների ու ծառայությունների ներմուծման առաջանցիկ աճի տեմպերով: Չնայած ներմուծման ծածկույթի ցուցանիշի նվազմանը՝ այն դեռևս մնում է բարձր՝ միջազգային պրակտիկայում զարգացող երկրների համար որպես նշված ցուցանիշի ընդունելի սահման համարվող 3 ամսվա նշանագծից:

---

[18] Առևտրային բանկերի զուտ արտաքին ակտիվների ցուցանիշների աղբյուրը դրամավարկային վիճակագրությունն է, որտեղ ներառված են հաշիվների վերագնահատումը, սակայն ներառված չեն ոչ փոխարկելի արտարժույթով գործառնությունները:


[19] Առանց սեփականաշնորհման հաշվի մնացորդի՝ փաստացի փոխարժեքով:

Համախառն արտաքին պահուստները և ներմուծման ծածկույթը



Նախկին ԽՍՀՄ անդամ երկրներում 2003 թվականին ամենազգալի ներմուծման ծածկույթի ցուցանիշը գրանցվել է Ռուսաստանում: Ընդ որում, այն աճել է նաև նախորդ տարվա համանման ցուցանիշի համեմատ, ինչը հիմնականում պայմանավորվել է նավթի միջազգային գների բարձրացման արդյունքում Ռուսաստան ներհոսող արտարժութային ակտիվների զգալի ծավալներով:

Ներմուծման ծածկույթի ցուցանիշը 2003 թվականին



Համախառն արտաքին պահուստների բավարարության գնահատման մյուս կարևորագույն ցուցանիշը դրամային զանգված/համախառն արտաքին պահուստներ ցուցանիշն է, որը ցույց է տալիս, թե ինչպիսին է ամբողջ դրամային զանգվածը արտարժույթով փոխարկելու հնարավորությունը: Նշված ցուցանիշը 2003 թվականին կազմել է 46.9%՝ նախորդ տարվա 49.1%-ի փոխարեն:

Աղյուսակ 17

Դրամային զանգված / համախառն արտաքին պահուստներ (%)

Ցուցանիշ	1998	1999	2000	2001	2002	2003
Դրամային զանգված/համախառն արտաքին պահուստներ	37.7	35.3	44.2	45.1	49.1	46.9

Ֆինանսական հաշվի՝ վերը նշված հոդվածների դինամիկան ցույց է տալիս, որ, ի տարբերություն նախորդ տարվա, ֆինանսական հաշվի հիմնական հոդվածների համեմատական «պասիվության արդյունքում» ՀՀ կենտրոնական բանկի համախառն պահուստների աճը կիսով չափ նվազել է, իսկ մնացած հոդվածների նշանակալի շարժեր չեն գրանցվել:

Աղյուսակ 18

Ֆինանսական հաշվի կառուցվածքը (ծավալը՝ մլն ԱՄՆ դոլար, տեսակարար կշիռը՝ %)

Ցուցանիշ	2000		2001		2002		2003	
	ծավալ	տես. կշիռ	ծավալ	տես. կշիռ	ծավալ	տես. կշիռ	ծավալ	տես. կշիռ
Ուղղակի ներդրումներ (զուտ)	104.2	44.7	69.9	44.0	110.7	131.8	120.5	118.0
Պորտֆելային ներդրումներ (զուտ)	-18.9	-8.1	-5.7	-3.6	1.5	1.8	0.3	0.3
Այլ ներդրումներ (զուտ)	166.9	71.6	114.4	72.0	53.4	63.6	27.7	27.2
Պահուստային ակտիվների փոփոխություն[20]	-19.2	-8.2	-19.7	-12.4	-81.7	-97.2	-46.4	-45.4
Ընդամենը	233.0	100.0	158.9	100.0	84.0	100.0	102.2	100.0

Վճարային հաշվեկշռի «Սխալներ և բացթողումներ» հոդվածում 2003 թվականին գրանցվել է բացասական ցուցանիշ՝ 1.5 մլն դոլար (նախորդ տարի ևս բացասական էր՝ 4.1 մլն դոլար): Նշված ցուցանիշը բավականին փոքր ցուցանիշ է, եթե համեմատելու լինենք այլ երկրների նույն ցուցանիշի հետ:

Միջազգային ներդրումային դիրք

2003 թվականի վերջի դրությամբ Հայաստանի զուտ ներդրումային դիրքը, ինչպես նախորդ տարիներին, այս տարի ևս բացասական էր և կազմել է 1579.2 մլն դոլար՝ նախորդ տարվա համեմատ աճելով 63.2 մլն դոլարով: Ընդ որում, ակտիվներն աճել են 100.7 մլն դոլարով, իսկ պարտավորությունները՝ 163.8 մլն դոլարով:

Ըստ ներդրումային դիրքի՝ կառավարության կողմից ներգրավված վարկերի գծով պարտքը 2003 թվականի վերջի դրությամբ կազմել է 860.2 մլն դոլար, իսկ ԿԲ վարկերի գծով պարտավորությունները՝ 230 մլն դոլար: Արդյունքում, ընդհանուր պարտավորությունների շուրջ 1094.2 մլն դոլարը (46.3%) կազմել են պետության պարտավորությունները, իսկ մնացած 1269.7 մլն ԱՄՆ դոլարը (53.7%)՝ մասնավոր հատվածինը, որի մեջ զգալի են ուղղակի ներդրումներն (33.6%) ու առևտրային վարկերը (9.7%):

Աղյուսակ 19

Հայաստանի ներդրումային դիրքը 2002-2003 թվականներին (մլն դոլար)

Ցուցանիշ	*Ներդրումային դիրքը 2002թ. վերջին*	*Ներդրումային դիրքը 2003թ. վերջին*
Զուտ ներդրումային դիրքը	**-1516.0**	**-1579.2**
Ակտիվներ	**684.1**	**784.8**
Ուղղակի ներդրումներ արտերկրում	0.4	0.4
Պորտֆելային ներդրումներ	4.5	4.4
Այլ ներդրումներ	248.0	278.0
Առևտրային վարկ	68.1	66.0
Վարկեր	33.5	29.2
Կանխիկ դրամական միջոցներ և ավանդներ	144.7	180.8
Այլ ակտիվներ	1.8	1.9
Պահուստային ակտիվներ	431.3	502.0
Պարտավորություններ	**2200.1**	**2363.9**
Ուղղակի ներդրումներ ՀՀ-ում	684.5	793.4
Պորտֆելային ներդրումներ	5.8	6.4
Այլ ներդրումներ	1509.8	1564.2
Առևտրային վարկ	235.0	229.7
Վարկեր	1114.4	1194.3
Դրամավարկային կարգավորման մարմիններ	210.3	229.9
Պետական կառավարման մարմիններ	825.4	860.2
Բանկեր	19.4	14.6
Այլ հատվածներ	59.5	89.6
Կանխիկ դրամական միջոցներ և ավանդներ	74.1	79
Այլ պարտավորություններ	86.3	61.3

[20] *Հաշվարկված է 2003 թվականի ծրագրային փոխարժեքով՝ եզրափակիչ շրջանառությամբ:*

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2003 թվականի վճարային հաշվեկշռի ու միջազգային ներդրումային դիրքի հիմնական ցուցանիշները ու դրանց վարքագիծը, ինչպես նաև նախորդ տարիներին նշված ցուցանիշների դինամիկաները ցույց են տալիս, որ գրանցված հիմնական ցուցանիշները զգալիորեն չեն շեղվում նախկին ԽՍՀՄ հանրապետություններում գրանցված համանման ցուցանիշներից: Ավելին, որոշ ցուցանիշների, մասնավորապես՝ արտահանման աճի տեմպերի, ընթացիկ հաշիվ/ՀՆԱ հարաբերակցության, ներմուծման ծածկույթի ցուցանիշների բարելավումը նկատելի է: Ընդ որում, դրական երևույթ է նաև այն, որ արտահանման զգալի աճ է արձանագրվել (35.7%) նաև առանց «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» հոդվածի ցուցանիշի: Այստեղ առկա խնդիրներից մեկը, թերևս, մնում է արտահանվող ապրանքախմբերի բևեռացման բարձր մակարդակը, ինչն արտահանումը խոցելի է դարձնում արտաքին աշխարհի հնարավոր ցնցումների նկատմամբ: Որպես դրական երևույթ կարելի է դիտարկել նաև վերջին տարիներին գործընկեր երկրների կազմի փոփոխությունը (հակվածությունը դեպի եվրոպական երկրներ): Ընդ որում, նշված փոփոխությունը նկատելի է ինչպես արտահանման, այնպես էլ ներմուծման կառուցվածքում: Հարկ է նշել նաև մասնավոր տրանսֆերտների ու սեզոնային աշխատողների աշխատանքի դիմաց ստացվող միջոցների մեծ ծավալների մասին (որոնք, ըստ ՀՀ ԿԲ գնահատումների, դեռևս թերհաշվառված են): Նշված միջոցների ներհոսքի մեծ ծավալները թեև զգալիորեն նպաստում են ապրանքների ու ծառայությունների բացասական ճեղքվածքի ֆինանսավորմանը, սակայն, միևնույն ժամանակ, մեծացնում են երկրի խոցելիությունն արտաքին աշխարհի անբարենպաստ միտումների նկատմամբ: Օրինակ, ՀՀ բանկային համակարգով ստացվող նշված միջոցների միջինը մոտ 44 %-ը ստացվում է Ռուսաստանից:

Կապիտալ ու ֆինանսական հաշվում առկա խնդիրների շարքում կարելի է առանձնացնել այն, որ դեռևս ցածր է ներդրումների մակարդակը, թեև Հայաստանը բնակչության 1 շնչին բաժին ընկնող կուտակային ուղղակի ներդրումների ծավալով երկրների շարքում այնքան էլ վատ դիրքում չի գտնվում: Խնդիրն այն է, որ այդ ներդրումները ձեռնարկությունների բաժնետիրական կապիտալում, օրինակ՝ 2003 թվականին, զգալիորեն նվազել են: Արտաքին պետական վարկերի նվազման ազդեցությունը կարելի է համարել երկակի՝ մի կողմից այն մասնավոր հատվածն ավելի աշխուժացնելու հնարավորություն կտա, տնտեսավարող սուբյեկտները կփորձեն գտնել ֆինանսավորման նոր աղբյուրներ, մյուս կողմից՝ ներգրավվող նոր միջոցները չեն ունենա այն արտոնյալ պայմանները, որ ներկայումս սահմանվում են:

ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ*

Ռիսկերի կառավարման վարչություն

Դրամավարկային կարճաժամկետ ծրագրավորման և ներքին ռիսկերի կառավարման բաժին

Ինչպես հայտնի է, ՀՀ կենտրոնական բանկի կողմից իրականացվող դրամավարկային քաղաքականությունն ուղղված է փողի ծավալային կարգավորման միջոցով գների կայուն մակարդակի ապահովմանը: Սակայն որպես իրականացվող քաղաքականության բնութագրիչ են դիտարկվում նաև տոկոսադրույքները, և մեծ ուշադրություն է հատկացվում դրանց վերահսկելիության աստիճանի բարձրացման խնդրին: Այդ պատճառով, սկսած 2001 թ-ից, ՀՀ ԿԲ-ն կառուցում և օրական կտրվածքով հրապարակում է երկրորդային շուկայում ՊՊ-ով իրականացված գործառնությունների եկամտաբերության կորը: Նպատակը՝ եկամտաբերության (տոկոսադրույքների) և ժամկետայնության միջև կապի բացահայտումն է, որն էլ, իր հերթին, պատկերացում է տալիս տոկոսադրույքների ժամանակային կախվածության ու կառուցվածքի մասին:

Ըստ մի շարք ֆինանսական վերլուծաբանների՝ եկամտաբերության կորը կարելի է դիտարկել ոչ միայն որպես ֆինանսական շուկայի ներկա իրավիճակի գնահատման գործիք, այլև որպես ապագա տոկոսադրույքները կանխատեսելու լավագույն միջոց: Փաստերն, այնուամենայնիվ, վկայում են, որ եկամտաբերության կորն ապագա տոկոսադրույքների կանխատեսման այնքան էլ վստահելի միջոց չէ, քանի որ չի ներառում շոկային իրավիճակների կանխատեսման համար անհրաժեշտ ողջ տեղեկատվությունը: Հետևապես եկամտաբերության կորի վերլուծությունների վրա հիմնվելով՝ շուկայի ոչ մի մասնակից չի կարող հաստատապես կանխատեսել տրված ժամկետայնությամբ ֆինանսական գործիքի ապագա եկամտաբերությունը: Որոշակի պնդումներից ելնելով՝ կարելի է միայն ենթադրություններ անել՝ ֆինանսական գործիքի եկամտաբերությունը որոշակի մակարդակից կլինի բարձր, թե՝ ցածր:


Ընդհանուր գործոնների բացահայտում

Մինչ այժմ կատարված վիճակագրական վերլուծությունների արդյունքների մեծ մասը վկայում է, որ եկամտաբերության կորը, մի շարք գործոնների ազդեցությամբ, փոփոխում է իր տեսքը կամ դիրքը: Էմպիրիկ դիտարկումները ցույց են տվել, որ այդ փոփոխությունների վրա ազդող գործոնների 95-97%-ը կարելի է բաժանել երեք տարբեր խմբերի, որոնք համապատասխանաբար անվանվում են.

1. կորի մակարդակի համընթաց (զուգահեռ) փոփոխություն (տես՝ գրաֆիկ 1),
2. թեքվածության (slope) փոփոխություն (տես՝ գրաֆիկ 2)
3. գոգվածության (curvature) փոփոխություն (տես՝ գրաֆիկ 3):

Գրաֆիկ 1-ը ցույց է տալիս, որ որոշակի տնտեսական ցուցանիշների փոփոխության արդյունքում կորի ամբողջ երկայնքով եկամտաբերություններն աճել են 0.3 տոկոսային կետով՝ անկախ ֆինանսական գործիքի ժամկետայնությունից: Հատկանշական է, որ վերոնշյալ փոփոխությունը չի անդրադառնում ո՛չ կորի թեքվածության, ո՛չ էլ գոգվածության վրա:


Գրաֆիկ 1



* *Հեղինակների տեսակետները կարող են չհամընկնել ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական դիրքորոշմանը:*


Գրաֆիկ 2-ում պատկերված է կորի՝ միայն կարճ ժամանակահատվածում ձևավորված եկամտաբերությունների աճը՝ ֆինանսական գործիքի երկարաժամկետ հատվածի եկամտաբերությունները թողնելով անփոփոխ: Այս պարագայում փոփոխվել է կորի թեքվածությունը (slope), որի արդյունքում երկարաժամկետ տոկոսադրույքները գրեթե հավասարվել են կարճաժամկետ տոկոսադրույքների արժեքներին:

Գրաֆիկ 2



Գրաֆիկ 3-ում պատկերված է ֆինանսական գործիքի եկամտաբերությունների աճը, որը անդրադառնում է միջին ժամկետայնության *եկամտաբերության կորի գոգվածության (curvature) վրա:*

Գրաֆիկ 3




Եկամտաբերության կորի «թեքվածության» տեսակները


Եկամտաբերության դասական կորը հիմնականում ունի դրական թեքվածություն (երկարաժամկետ հատվածում պարտատոմսերի եկամտաբերություններն ավելի բարձր են, քան կարճաժամկետ հատվածում): Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ եկամտաբերության կորը առավելագույն զառիվերություն ունի հիմնականում կարճ հատվածում և համեմատաբար առավել հարթ է երկար հատվածում (տես՝ գրաֆիկ 4): Եթե եկամտաբերությունների տարբերությունը, ժամկետայնությունից կախված, փոքր է, ապա այդպիսի կորն անվանում են «հարթ» եկամտաբերության կոր (տես՝ գրաֆիկ 5): Եթե երկարաժամկետ հատվածում եկամտաբերություններն ավելի ցածր են, քան կարճաժամկետ հատվածում, ապա այդպիսի կորն անվանում են «շրջված».

Բոլոր այն դեպքերում, երբ երկարաժամկետ հատվածում եկամտաբերությունները զգալիորեն բարձր են, քան կարճաժամկետ հատվածում, կորն անվանում են «զառիվեր» (տես՝ գրաֆիկ 7):


Գրաֆիկ 4




Գրաֆիկ 5



Գրաֆիկ 6




Գրաֆիկ 7



Եկամտաբերության կորի մակարդակի փոփոխության (զուգահեռ տեղաշարժի) գնահատման մեթոդիկա

Այսպիսով, որպես եկամտաբերության կորի մակարդակի փոփոխության գնահատման մեթոդ է ընտրվել ներկա և անցած ժամանակահատվածների եկամտաբերության կորերի հիման վրա հարթեցված (միջինացված) հիպոթետիկ կորի կառուցման և առկա շեղման հաշվարկի մեթոդը: Դիցուք՝ ունենք հետևյալ գրաֆիկը (տես՝ գրաֆիկ 8), որը ցույց է տալիս նշված կորերի հաշվարկման արդյունքում ստացված պատկերը:

Գրաֆիկ 8



Գրաֆիկում ներկայացված «զուգահեռ տեղաշարժ» անվանումով կորը համապատասխանում է նախորդ ժամանակահատվածում կառուցված կորի մակարդակի համամասնական փոփոխությանը և ստացվել է հետևյալ կերպ: Անցած ժամանակահատվածի (կառուցված 02.05.2003 թ.) և ներկա ժամանակահատվածի (կառուցված 19.03.2004 թ.) կորերի համար վերցվել են 168, 280 և 448 օր ժամկետայնությամբ պարտատոմսերի տոկոսադրույքները (տես՝ աղյուսակ 1) ու առանձին-առանձին հաշվարկվել դրանց տարբերությունները: Այնուհետև հաշվարկվել է այդ տարբերությունների հանրագումարը ու դրա արդյունքում ձևավորված միջինը: Այս ցուցանիշը համապատասխանաբար տեղադրվել է նախորդ ժամանակահատվածի հիման վրա կառուցված փաստացի կորի համապատասխան ժամկետների արժեքների փոխարեն, որի հիման վրա էլ կառուցվել է հարթեցված միջինացված կորը՝ որպես տեղի ունեցած տեղաշարժի վիճակագրական առավել ճշգրիտ արտացոլում[1]:

Աղյուսակ 1

Օր	19/03/2004	02/05/2003	Տարբերություն	
56	5.00	8.51		
112	5.97	12.87		
168	6.92	14.66	-7.74	
224	7.19	13.95		
280	7.20	14.94	-7.74	
336	7.29	14.26		
448	9.31	15.05	-5.74	
560	9.87	15.00		
672	10.38	14.94		-7.07


Միջինացված հիպոթետիկ կորը ընդունելով որպես նախորդ ժամանակահատվածի (կառուցված 02/05/2003 թ.) կորի զուգահեռ տեղաշարժ, հաշվարկվել է նաև ներկա ժամանակահատվածի կորի (կառուցված 19/03/2004 թ.) և դրանց միջև տարբերությունների տոկոսային շեղումների միջինը՝ դրանց բացարձակ արժեքներով: Այսպիսով, մեր օրինակում միջին շեղումը կազմել է 17.43%: Սա նշանակում է, որ կորի տեղաշարժը միջինը կազմել է 7.07 տոկոսային կետ՝ ի օգուտ եկամտաբերությունների նվազման: Այսպիսով, կարելի է ասել, որ կորի տեղաշարժի 82.57%-ը բացատրվում է կորի մակարդակի համընթաց (զուգահեռ) տեղաշարժով:

[1] *Ցուցանիշների ճշգրտության համար ծայրամասային արժեքները դուրս են մղված մեր հաշվարկներից:*

Աղյուսակ 2

Օր	Զուգահեռ տեղաշարժ	Շեղման տոկոսային հարաբերությունը	Շեղման բացարձակ արժեքները	
56	1.44 (8.51+(-7.07))	-71 (5-1.44/5*100)	71	
112	5.80	-3	3	
168	7.59	10	10	
224	6.88	-4	4	
280	7.87	9	9	
336	7.19	-1	1	
448	7.98	-14	14	
560	7.93	-20	20	Բացարձակ միջին
672	7.87	-24	24	17.43

Գրաֆիկ 9



Պարզելով կորի փոփոխության մեջ տեղաշարժի ազդեցության տեսակարար կշիռը՝ անհրաժեշտություն է առաջանում բացահայտել, թե կորի փոփոխության որ մասն է պայմանավորված թեքվածության գործոնի ազդեցությամբ: Այդ նպատակով հաշվարկվում է նաև թեքվածության գործակցի փոփոխության ազդեցությունը:

Եկամտաբերության կորի «թեքվածության» (slope) գործակցի հաշվարկման մեթոդները

Չնայած դեռևս գոյություն չունի եկամտաբերության կորի թեքվածության գնահատման համընդհանուր բանաձև կամ մոտեցում, այնուամենայնիվ արդյունավետ մեթոդներից է համարվում ամենաերկար ու ամենակարճ ժամկետայնությամբ պարտատոմսերի եկամտաբերությունների տարբերության (spread) հաշվարկը՝ անտեսելով կորի մնացած երկայնքով ձևավորված միտումը: Նշված բանաձևն ունի հետևյալ տեսքը.

$$b = Y_{672} - Y_{56} \qquad (1)$$

որտեղ՝

b-ն եկամտաբերությունների տարբերությունն է (spread),

Y672-ը՝ մինչև մարումը 672 օր մնացած ժամկետայնությամբ հատվածի պարտատոմսի եկամտաբերությունը,

Y56-ը՝ մինչև մարումը 56 օր մնացած ժամկետայնությամբ հատվածի պարտատոմսի եկամտաբերությունը:

Եկամտաբերության կորի թեքվածության գործակիցը կարելի է հաշվարկել նաև ստորև բերված բանաձևով.

$$b = \frac{n\sum xy - \left(\sum x\right)\left(\sum y\right)}{n\sum x^2 - \left(\sum x\right)^2} \qquad (2)$$

որտեղ՝
b-ն թեքվածության գործակիցն է (slope),
x-ը՝ անկախ փոփոխականը (մինչև մարում մնացած օրերի քանակը),
y-ը՝ կախյալ փոփոխականը (սփոթ եկամտաբերություններ),
n-ը՝ տվյալների քանակ:

Ներկայացված բանաձևում b-ն y=a+bx գծային հավասարման թեքվածության գործակիցն է: Տվյալ դեպքում վերոնշյալ ֆունկցիան հանդիսանում է հենց եկամտաբերության կորի ռեգրեսիոն հավասարումը:

Գոյություն ունի թեքվածության գործակցի հաշվարկման մեկ այլ բանաձև.

$$b = \triangle y/\triangle x = (Y_n - Y_1) / (X_n - X_1) \qquad (3)$$

որտեղ՝
***b**-ն թեքվածության գործակիցն է,*
***Y_n**-ը՝ ռեգրեսիոն հավասարման ամենաերկար ժամկետայնությունը,*
***Y_1**-ը՝ ռեգրեսիոն հավասարման ամենակարճ ժամկետայնությունը,*
***X_n**-ը՝ ռեգրեսիոն հավասարման ամենաերկար ժամկետայնության եկամտաբերությունը,*
***X_1**-ը՝ ռեգրեսիոն հավասարման ամենակարճ ժամկետայնության եկամտաբերությունը:*

Վերոնշյալ բանաձևը կարելի է նաև վերափոխել հետևյալ կերպ.

$$b = \frac{\left(Y_n - Y_1\right)}{\left(X_n / 56 - X_1 / 56\right)} \qquad (4)$$

որտեղ՝
***b**-ն՝ թեքվածության գործակիցն է,*
***Y_n**-ը՝ ռեգրեսիոն հավասարման ամենաերկար ժամկետայնությունը,*
***Y_1**-ը՝ ռեգրեսիոն հավասարման ամենակարճ ժամկետայնությունը,*
***X_n**-ը՝ ամենաերկար ժամկետայնությունը,*
***X_1**-ը՝ ամենակարճ ժամկետայնությունը:*

Օրինակ՝

19.03.2004 թվականի եկամտաբերության կորի տվյալների հիման վրա՝ $\frac{10.68 - 5.4}{672/56 - 56/56} = 0.47$

02.05.2003 թվականի եկամտաբերության կորի տվյալների հիման վրա՝ $\frac{16.12 - 12.09}{672/56 - 56/56} = 0.37$

Քանի որ ՀՀ եկամտաբերության կորը կառուցվում է ժամկետայնությունը տրոհելով 56 օրերի, ապա նպատակահարմար է թեքվածության գործակցի հաշվարկն իրականացնել հենց այս բանաձևի օգնությամբ:

Այժմ կարելի է ամփոփ ներկայացնել կատարված հաշվարկների արդյունքները (աղյուսակ 3):

Աղյուսակ 3

Զուգահեռ տեղաշարժ		
Բացարձակ մեծություն	Շեղում	Փոփոխություն
-7.07	17.43%	82.57%
Թեքվածության գործակից		
19/03/2004	02/05/2003	Փոփոխություն
0.47	0.37	23%
Մնացորդային գործոններ		
		-5.57%

Փաստորեն, կատարված հաշվարկներից պարզ է դառնում, որ եկամտաբերության կորի երկայնքով տեղի ունեցած տեղաշարժի 82.57%-ը պայմանավորված է կորի մակարդակի փոփոխությամբ (կամ այլ կերպ ասած՝ տեղաշարժի զուգահեռության գործակիցը կազմում է 82.57%): 23%-ը պայմանավորված է կորի թեքվածության գործոնի առկայությամբ, իսկ գոգվածության և մնացորդային գործոնները կազմում են –5.57%, որը տվյալ հաշվարկներում մեր տեսադաշտից դուրս է թողնված վերջիններիս նվազ նշանակալիության պատճառով:

Մակ-Քոուլի դյուրացիայի (ճկունության գործակցի) հաշվարկի մեթոդիկա

Վերլուծության ևս մեկ արդյունավետ գործիք է համարվում եկամտաբերության ճկունությունը՝ կախված գործիքի ժամկետայնության փոփոխությունից: Վերոնշյալ ցուցանիշը հաշվարկվում է թեքվածության գործակցի ցուցանիշի հիման վրա և ցույց է տալիս ճկունության գործակիցը՝ յուրաքանչյուր ժամկետայնությանը համապատասխան:

$$E = b \times \frac{Y}{X/56} \qquad (5)$$

որտեղ՝
E-ն Մաք-Քոուլի դյուրացիան է,
b-ն՝ թեքվածության գործակիցը,
Y-ը՝ եկամտաբերությունը,
X-ը՝ համապատասխան ժամկետայնությունը:

Աղյուսակ 4

Օր	19.03.04	02.05.03
56	2.37	3.12
112	1.42	2.36
168	1.09	1.79
224	0.85	1.28
280	0.68	1.09
336	0.58	0.87
448	0.55	0.69
560	0.47	0.55
672	0.41	0.46
	Միջին	Միջին
	0.94	1.36

Կորի յուրաքանչյուր ժամկետայնության համար Մակ-Քոուլի դյուրացիան հաշվարկելուց հետո, հաշվարկում ենք դրանց միջին արժեքը, որն էլ ցույց է տալիս, թե պարտատոմսի ժամկետայնության՝ միջինը 56 օր աճելու դեպքում քանի տոկոսային կետով է փոփոխվում եկամտաբերությունը:

Եզրակացություն

Հաշվի առնելով վերոնշյալ բոլոր մեթոդները, ինչպես նաև ՀՀ պետական պարտատոմսերի շուկայի ներկա վիճակը՝ եկամտաբերության կորի վերլուծությունը նպատակահարմար է իրականացնել հետևյալ գործիքների միջոցով.

1. Մակարդակի փոփոխության գնահատման՝ ներկա և նախորդ ժամանակահատվածների կորերի հիման վրա հարթեցված (միջինացված) հիպոթետիկ և փաստացի կորի կառուցման և դրանց միջև առկա շեղման գործակցի միջոցով:
2. Կորի տեղաշարժի ծավալային ցուցանիշի ու դրա վրա ազդող հիմնական գործոնների տեսակարար կշռի գնահատման միջոցով: Հաշվարկների հեշտության համար տվյալ մեթոդից դուրս ենք թողել գոգվածության և մնացորդային գործոնների ազդեցության դիտարկումը՝ դրանց ցածր մակարդակի պատճառով:
3. Նախորդ և ներկա ժամանակահատվածների եկամտաբերության կորերի թեքվածության գործակիցների փոփոխության տոկոսային հարաբերությունների գնահատման և Մակ-Քոուլի դյուրացիայի միջին արժեքների միջոցով:

Օգտագործված գրականություն

1. FRBSF Economic Letter 2003-15; June 6, 2003
   What Makes the Yield Curve Move? www.frbsf.org
2. Charles F. Kramer, World Economy in Transition Explaining the dividend yield in the United States, 1996
3. Danmarks Nationalbank, Financial Management at Danmarks Nationalbank
4. The federal reserv bank of St. Louis, Monetaty Trends, August 2000
   What is the slope of the yield curv telling us? www.stls.frb.org

ՀԵՔՇԵՐ-ՕԼԻՆԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ*

Վահագն Գրիգորյան

Դրամավարկային քաղաքականության վարչություն

Ներկա ժամանակաշրջանում ամբողջ աշխարհը ընդգրկված է գլոբալացման համընդհանուր գործընթացում: Առանձին երկրներ ինտեգրվում են համաշխարհային տնտեսությանը, ներառվում միջազգային տնտեսական հարաբերությունների ոլորտը: Առանց այդ գործընթացների՝ անհնար է պատկերացնել երկրների կայուն զարգացումը արդի միջավայրում. զարգացման բոլոր հնարավորությունները և վտանգները երկրների համար բխում են միջազգային տնտեսությունից:

Միջազգային տնտեսական հարաբերությունների հիմքում միջազգային առևտուրն է, որը պատմականորեն եղել է զարգացման առաջնային ձևը: Այս հիմքի վրա այնուհետև առաջացել են միջազգային ֆինանսները, որոնք զարգանալով՝ այժմ գրեթե կտրվել են միջազգային առևտրի հիմքից և դարձել ինքնաբավ ճյուղ: Այնուամենայնիվ, միջազգային հարաբերություններում որպես հիմնական և առաջնային դիտարկվում է միջազգային առևտուրը, և այս նյութում ուսումնասիրվում է հենց այդ ոլորտը:

Հայաստանի տնտեսության համար միջազգային առևտրի ուսումնասիրությունն ունի առաջնային դեր և նշանակություն: Հայաստանը, լինելով փոքր տնտեսությամբ երկիր, որպես զարգացման ճանապարհ պետք է ընտրի մասնագիտացումը միջազգային առևտրում: Բոլոր երկրների մասնագիտացման հիմքում նրանց համեմատական առավելությունն է այս կամ այն ապրանքի արտադրության մեջ: Վերջինս, իր հերթին, ուղղակիորեն կախված է արտադրական ռեսուրսներով երկրի օժտվածությունից, ինչպիսիք են՝ աշխատուժը և կապիտալը (երկգործոնային տնտեսության մեջ): ***Այս նյութի նպատակն է բացահայտել Հայաստանի օժտվածությունը և համեմատական հարստությունը արտադրության ռեսուրսներով, դիտարկել դրա ազդեցությունը արտաքին առևտրի և ներքին գների վրա:***

Վերլուծության արդյունքում կփորձենք բացահայտել արտադրական ռեսուրսներով Հայաստանի համեմատական հարստությունը (այլ երկրների նկատմամբ) և դիտարկել կապը համեմատական այդ առավելության և փաստացի արտաքին առևտրի կառուցվածքի միջև: Այս դրույթների էմպիրիկ ապացույցները թույլ կտան տեղայնացնել միջազգային առևտրի տեսության հիմնարար եզրակացությունները Հայաստանի համար (երկրների մասնագիտացման ուղղությունները, եկամուտների վերաբաշխումը երկրների ներսում և երկրների միջև, զարգացման հեռանկարները, ապրանքների գների վրա ռեսուրսների գների ազդեցությունը):

Այս նպատակով կիրառվել է միջազգային առևտրի դասական տեսություններից մեկը, որը հայտնի է որպես Հեքշեր-Օլինի կամ արտադրության գործոնների հարաբերության տեսություն:

Առաջին բաժնում նկարագրվում են Հեքշեր-Օլինի տեսության հիմնական հասկացությունները և նախնական ենթադրությունները, որոնք անհրաժեշտ են տեսությունը հասկանալու համար:

Երկրորդ բաժնում քննարկվում են բուն մոդելը և հիմնական եզրակացությունները, որոնք տրվում են տնտեսագետների կողմից այդ տեսության ապացուցման արդյունքում:

Երրորդ բաժնում ներկայացվում են այն հիմնական վարկածները, որոնք պետք է ստուգվեն Հայաստանի և համաշխարհային տնտեսության տվյալների վերլուծության միջոցով:

Չորրորդ բաժնում դիտարկվում է Հայաստանի օժտվածությունը արտադրական ռեսուրսներով, ինչպես նաև արվում են որոշակի դատողություններ այդ ռեսուրսների գների վերաբերյալ:

Հինգերորդ բաժինը հիմնականն է այս աշխատության մեջ: Փորձ է արվում ստուգել Հայաստանի արտաքին առևտրի ռեսուրսատարության համապատասխանությունը ռեսուրսներով օժտվածությանը:

Վեցերորդ բաժնում ամփոփվում են Հեքշեր-Օլինի տեսությունից բխող եզրահանգումները Հայաստանի համար, ընդ որում՝ հնարավորինս հաշվի են առնվել նաև արտաքին առևտրի վերաբերյալ մյուս տեսությունները, և փորձ է արվել որոշակիորեն մեղմել տեսության սահմանափակումները՝ նկատի ունենալով Հայաստանի առանձնահատկությունները:

---

* *Հեղինակների տեսակետները կարող են չհամընկնել ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական դիրքորոշմանը:*

1. Հեքշեր-Օլինի տեսության նախնական ենթադրությունները և օգտագործվող հիմնական հասկացությունները

Հեքշեր-Օլինի տեսությունը, որը նաև անվանում են արտադրության գործոնների հարաբերության տեսություն, միջազգային առևտրի դասական տեսություններից է և մշակվել է շվեդ տնտեսագետներ էլի Հեքշերի (1879-1952) և նրա աշակերտ Բերտիլ Օլինի (1899-1979, Նոբելյան մրցանակ - 1977) կողմից: Այն Լրացնում է Դավիդ Ռիկարդոյի միջազգային առևտրի հարաբերական առավելությունների տեսությունը՝ բացահայտելով երկրների հարաբերական առավելությունների առաջացման պատճառները:

Վերոնշյալ նպատակի համար մոդելում արվում են նախնական ենթադրություններ, որոնք ամփոփված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Ռիկարդոյի և Հեքշեր-Օլինի արտաքին առևտրի տեսությունների նախնական ենթադրությունները

	Հարաբերական առավելությունների տեսություն (Ռիկարդո)	Արտադրության գործոնների հարաբերության տեսություն (Հեքշեր-Օլին)
Ենթադրություններ արտադրության գործոնների վերաբերյալ		
Արտադրության միակ գործոն (աշխատանք)	X	
Արտադրության երկու գործոններ (աշխատանք և կապիտալ)		X
Արտադրության գործոնները օգտագործվում են ամբողջությամբ	X	X
Երկրների տարբեր օժտվածություն արտադրության գործոններով		X
Առանձին երկրներում արտադրության գործոնների սահմանափակություն	X	X
Երկրի ներսում արտադրության գործոնների լիակատար շարժունություն	X	X
Երկրների միջև արտադրության գործոնների շարժունության լիակատար բացակայություն	X	X
Ենթադրություններ շուկայի բնույթի վերաբերյալ		
Երկու երկիր	X	X
Երկու ապրանք	X	X
Կատարյալ մրցակցություն	X	X
Առևտրի ազատություն	X	X
Առևտրի հավասարակշռվածություն	X	X
Տրանսպորտային ծախսերի բացակայություն		X
Ենթադրություններ արտադրության բնույթի վերաբերյալ		
Երկրների ամբողջական մասնագիտացում մեկ ապրանքի արտադրության մեջ	X	
Միանման տեխնոլոգիա երկու երկրներում		X
Կայուն հատույց մասշտաբից	X	X
Ենթադրություններ ապրանքների բնույթի վերաբերյալ		
Մի ապրանքը աշխատատար է, մյուսը՝ կապիտալատար		X
Արժեքի աշխատանքային տեսություն	X	
Պահանջարկի կատարյալ առաձգականություն գնից	X	X
Ենթադրություններ սպառման բնույթի վերաբերյալ		
Սպառողների ճաշակներն ու նախապատվությունները միանման են	X	X

Քանի որ Հեքշեր-Օլինի տեսությունը հիմնվում է «ռեսուրսատարություն» և «ռեսուրսի առատություն» հասկացությունների վրա, ապա սկզբունքորեն շատ կարևոր է դրանց էության հստակ բնութագրումը:

Ասում ենք, որ Y ապրանքը կապիտալատար է, եթե դրա միավորի արտադրության համար օգտագործվող կապիտալի և աշխատուժի հարաբերակցությունը (K/L) ավելի մեծ է, քան X ապրանքի միավորի արտադրության համար օգտագործվողը:


Այսինքն՝

$$\frac{K_Y}{L_Y} > \frac{K_X}{L_X}$$

Պետք է նկատել, որ կարևորը ոչ թե կապիտալի բացարձակ օգտագործվող քանակությունն է, այլ միավոր աշխատուժին բաժին ընկնող կապիտալի քանակությունը:

Գրաֆիկորեն ապրանքի կապիտալատարությունը կարելի է պատկերել հետևյալ կերպ (արտադրության կորերի գծային տեսքը բխում է մասշտաբի կայուն հատույցի ենթադրությունից)՝

Գծ. 1. X և Y ապրանքների ռեսուրսատարությունը 1 և 2 երկրներում



Չնայած Y ապրանքը կապիտալատար է երկու երկրներում, սակայն K/L հարաբերությունը Y ապրանքի արտադրության մեջ ավելի բարձր է 2 երկրում (K/L=4), քան 1 երկրում (K/L=1): Դրա պատճառները հասկանալու համար պետք է ուսումնասիրել «ռեսուրսի առատություն» հասկացությունը և դրա ազդեցությունը արտադրության գործոնների գների վրա:

«Ռեսուրսի առատությունը» սահմանվում է 2 եղանակով: Մեկը հիմնված է կապիտալի և աշխատուժի ֆիզիկական միավորների հարաբերության վրա, մյուսը՝ դրանց հարաբերական գների հաշվարկի վրա:

Ըստ առաջին եղանակի՝ *2 երկիրը համարվում է կապիտալ ռեսուրսով հարուստ, եթե կապիտալի և աշխատուժի պաշարների հարաբերությունն ավելի մեծ է, քան 1 երկրում:* Նկատենք, որ սա նույնպես կապիտալի բացարձակ արժեքի համեմատությունը չէ, այլ մեկ աշխատողին բաժին ընկնող կապիտալի քանակության հարաբերության համեմատությունը:

$$\frac{TK^1}{TL^1} < \frac{TK^2}{TL^2}$$

Ըստ երկրորդ բնորոշման, *2 երկիրը համարվում է կապիտալով հարուստ, եթե կապիտալի և աշխատուժի հաշվարկային գների հարաբերությունը տվյալ երկրում ավելի փոքր է, քան 1 երկրում:*

$$\frac{PK^1}{PL^1} > \frac{PK^2}{PL^2}$$


Քանի որ որպես կապիտալի գին հանդես է գալիս տոկոսադրույքը (r), իսկ որպես աշխատուժի գին՝ աշխատավարձը (w), ապա 2 երկիրը կհամարվի կապիտալով հարուստ, եթե.

$$\frac{r^1}{w^1} > \frac{r^2}{w^2}$$

Ըստ էության, այս երկու բնորոշումները սերտորեն փոխկապված են, սակայն, եթե առաջին սահմանումը ներառում է միայն ռեսուրսների առաջարկը, ապա երկրորդը՝ ինչպես դրանց առաջարկը, այնպես էլ պահանջարկը: Ինչպես գիտենք, ռեսուրսների պահանջարկը ածանցյալ պահանջարկ է, որը բխում է այդ ռեսուրսի օգտագործման արդյունքում ստեղծված վերջնական արդյունքի նկատմամբ պահանջարկից: Քանի որ մենք ենթադրել ենք, որ երկու երկրներում սպառողների ճաշակներն ու նախապատվությունները նույնն են, ապա ռեսուրսի առատության երկու բնորոշումն էլ տալիս են նույն արդյունքը: Ամեն դեպքում, երկրորդ բնորոշումն ավելի ճիշտ է արտահայտում երկրի հարստությունը արտադրական ռեսուրսով և ավելի գերադասելի է այն օգտագործել Հայաստանի համար հաշվարկելիս[1]:

Ելնելով նրանից, որ 2 երկիրը առատ է կապիտալով, իսկ Y ապրանքը կապիտալատար ապրանք է, ապա 2 երկիրը կարող է արտադրել հարաբերականորեն ավելի շատ Y ապրանքից, քան X ապրանքից, հետևաբար նրա արտադրական հնարավորությունների կորը թեքված կլինի դեպի Y ապրանքը ցույց տվող առանցքը: Նույն տրամաբանությամբ՝ 1 երկրի արտադրական հնարավորությունների կորը թեքված կլինի դեպի X ապրանքի առանցքը (գծ. 2):

Գծ. 2. 1 երկրի և 2 երկրի արտադրական հնարավորությունների կորերը



Գծապատկերում հստակ երևում են երկրների՝ ռեսուրսներով օժտվածության, ինչպես նաև տարբեր ապրանքների ռեսուրսատարությունների տարբերությունները: Այսպիսով, պարզելով «ռեսուրսի առատություն» և «ռեսուրսատարություն» հասկացությունները, կարող ենք անցնել Հեքշեր-Օլինի մոդելի ներկայացմանը:

2. Հեքշեր-Օլինի մոդելի տեսական ներկայացումը

Հեքշեր-Օլինի տեսությունը սեղմ կարելի է ներկայացնել երկու փոխկապակցված թեորեմների միջոցով՝ *Հեքշեր-Օլինի թեորեմի*, որը վերլուծում և կանխատեսում է արտաքին առևտրի կառուցվածքը, և *արտադրության գործոնների գների հավասարեցման թեորեմի (Հեքշեր-Օլին-Սամուելսոնի թեորեմ)*, որը բնութագրում է արտաքին առևտրի ազդեցությունը ներքին ռեսուրսների գների վրա:

[1] *Հնարավոր է՝ լինեն դեպքեր, երբ որևէ պատճառով կապիտալի և աշխատուժի պաշարները օգտագործելի չլինեն, օրինակ՝ հնացած լինելու կամ որակավորման անհամապատասխանության: Այս դեպքում ռեսուրսների ֆիզիկական քանակների հարաբերությունը կարող է տարբերվել գների հարաբերությունից, որի դեպքում գերադասելի է օգտագործել վերջին տարբերակը:*

Ելնելով նախնական ենթադրություններից՝ Հեքշեր-Օլինի թեորեմը սահմանվում է հետևյալ ձևով՝ *երկիրը կարտահանի այն ապրանքը, որի արտադրությունը պահանջում է տվյալ երկրի հարաբերականորեն առատ և էժան ռեսուրսի ավելի ինտենսիվ օգտագործում և կներմուծի այն ապրանքը, որի արտադրության համար պահանջվում է երկրի սակավ և թանկ ռեսուրսի ինտենսիվ օգտագործում:* Այլ կերպ ասած՝ «աշխատուժ» ռեսուրսով հարաբերականորեն հարուստ երկիրը կարտահանի աշխատատար ապրանքներ, իսկ «կապիտալ» ռեսուրսով հարուստ երկիրը՝ կապիտալատար ապրանքներ:


Ելնելով վերոնշյալից՝ կարելի է պնդել, որ 1 երկիրը կարտահանի X ապրանքը, քանի որ այն ավելի աշխատատար է, իսկ աշխատուժը հարաբերականորեն առատ և էժան ռեսուրս է 1 երկրում: Մյուս կողմից, 2 երկիրը կարտահանի Y ապրանքը, քանի որ այն կապիտալատար է, իսկ կապիտալը հարաբերականորեն ավելի էժան արտադրության գործոն է 2 երկրում (այսինքն՝ r/w հարաբերությունը 2 երկրում ավելի փոքր է, քան 1 երկրում):

Մասնագիտացման արդյունքում, ավելի առատ ռեսուրսի սեփականատերերը ավելի շատ եկամոտ են ստանում, քան սակավ ռեսուրսի սեփականատերերը: Դա ցույց կտանք գրաֆիկորեն (գծապատկեր 3):

Այսպիսով, Հեքշեր-Օլինի թեորեմը մեկ քայլ առաջ է գնում հարաբերական առավելությունների դասական տեսություններից՝ այն ոչ միայն ընդունում է, որ առևտուրը իրականացվում է հարաբերական առավելությունների հիման վրա, այլև բացահայտում է հարաբերական առավելությունների առաջացման պատճառը. երկրների տարբեր օժտվածությունը արտադրության գործոններով: Տարբեր երկրներում ապրանքների հարաբերական գների տարբերությունը, հետևաբար նաև նրանց միջև առևտուրը բացատրվում է արտադրության գործոններով տարբեր օժտվածությամբ:

Որպեսզի ապացուցենք և պատկերավոր ներկայացնենք թեորեմը, դիտարկենք գծապատկեր 3-ը:

Գծ. 3. Հեքշեր-Օլինի թեորեմի գրաֆիկական պատկերումը



Գծապատկեր 3–ի ձախ կողմում երկու երկրների արտադրական հնարավորությունների կորերն են (1 երկրինը թեքված է դեպի X ապրանքի առանցքը, 2 երկրինը՝ դեպի Y ապրանքի առանցքը): Քանի որ երկու երկրներում սպառողների ճաշակներն ու նախապատվությունները նույնն են, ապա նրանք կունեան անտարբերության կորերի միևնույն պատկերը[2]: I անտարբերության կորը (որը նույնն է երկու երկրների համար) շոշափում է 1 երկրի արտադրական հնարավորությունների կորը A կետում, իսկ 2 երկրի արտադրական հնարավորությունների կորը՝ A' կետում: I անտարբերության կորն այն ամենաբարձր անտարբերության կորն է, որին կարող են հասնել 2 երկրները առևտրի բացակայության պայմաններում, իսկ A և A' կետերը ներկայացնում են այդ պայմաններում նրանց արտադրության և սպառման հավասարակշռության կետերը:

A և A' կետերում արտադրական հնարավորությունների կորերի շոշափումը որոշում է Y ապրանքի հարաբերական գինը՝ արտահայտած X ապրանքի միջոցով, 1 և 2 երկրներում փակ տնտեսության պայմաններում՝ P_A և $P_{A'}$: Քանի որ Y ապրանքն ավելի էժան է 2 երկրում, իսկ X ապրանքը՝ 1 երկրում (P_A կորի թեքվածությունն ավելի վերընթաց է, քան $P_{A'}$ կորինը), ապա 2 երկիրն ունի Y ապրանքի համեմատական առավելություն, իսկ 1 երկիրը՝ X ապրանքի:

---

[2] Նկատենք, որ Հեքշեր-Օլինի տեսությունը չի պահանջում, որ անտարբերության կորերը ամբողջությամբ համընկնեն: Այն ընդամենը պայման է դնում, որ սպառողների ճաշակներն ու նախապատվությունները չլինեն այնքան տարբեր, որ երկու երկրները միմյանց հետ առևտուր անելու ոչ մի շարժառիթ չունենան և չմնան փակ տնտեսության մեջ:

Գծապատկեր 3-ի աջ մասը ցույց է տալիս, որ առևտրային հարաբերությունների մեջ մտնելուց հետո 1 երկիրը մասնագիտանում է X ապրանքի արտադրության մեջ[3], իսկ 2 երկիրը՝ Y ապրանքի արտադրության (ցույց է տրված սլաքներով): Մասնագիտացումը արտադրության մեջ կշարունակվի այնքան ժամանակ, քանի դեռ 1 երկիրը չի հասել B կետին, իսկ 2 երկիրը՝ B' կետին, որտեղ երկու երկրների արտադրական հնարավորությունների կորերը կդառնեն P_B ընդհանուր գնի ուղղի շոշափողները: Այնուհետև 1 երկիրը կարտահանի X ապրանքը՝ Y ապրանքի ներմուծման դիմաց և կսպառի E կետում, որը գտնում է II անտարբերության կորի վրա (գծապատկերում BCE առևտրի եռանկյունն է): Մյուս կողմից, 2 երկիրը կարտահանի Y ապրանքը՝ փոխանակելով X ապրանքի հետ և կսպառի E' կետում, որը համընկնում է E կետի հետ (եռանկյուն B'C'E'):

Կարելի է նկատել, որ X ապրանքի արտահանումը 1 երկրի կողմից հավասար է X ապրանքի ներմուծմանը 2 երկրի կողմից (BC=C'E'): Նմանապես, Y ապրանքի արտահանումը 2 երկրի կողմից հավասար է 1 երկրի կողմից այդ ապրանքի ներմուծմանը (B'C'=CE): Իսկ հավասարակշիռ գինը՝ P_B, գտնվում է ինքնաբավ վիճակում (ավտարկիա) գրանցված հարաբերական գների միջև՝

$$\frac{P_X}{P_Y} < P_B < \frac{P_X'}{P_Y'}$$

Հեքշեր-Օլինի տեսության մյուս բաղկացուցիչ մասը Հեքշեր-Օլին-Սամուելսոնի կամ արտադրության գործոնների գների հավասարեցման թեորեմն է, որը Հեքշեր-Օլինի թեորեմի հետևանքը կամ եզրակացությունն է և գործում է միայն այն դեպքում, երբ գործում է Հեքշեր-Օլինի թեորեմը:

Ըստ արտադրության գործոնների գների հավասարեցման թեորեմի՝ միջազգային առևտուրը գործնականորեն հավասարեցնում է երկրներում միատեսակ արտադրական գործոնների օգտագործումից ստացվող հարաբերական և բացարձակ եկամուտները: Արտաքին առևտուրը, որպես այդպիսին, հանդիսանում է արտադրության գործոնների միջազգային տեղափոխման փոխարինող:

Սա նշանակում է, որ միջազգային առևտուրը կհանգեցնի նրան, որ միատիպ աշխատուժի աշխատավարձը (այսինքն՝ կրթության նույն մակարդակով, որակավորմամբ, հմտություններով և արտադրողականությամբ) համահավասար կլինի առևտրին մասնակցող բոլոր երկրներում (եթե տեսության նախապայմանները տեղի ունեն): Միջազգային առևտուրը հավասարեցնում է նաև միատեսակ կապիտալից եկամուտները (այսինքն՝ միևնույն հատույցով և ռիսկով կապիտալից): Դա կարելի է ցույց տալ գրաֆիկորեն (գծ. 4):

P_X/P_Y և w/r փոփոխականների միջև կապը երկու երկրներում միատիպ է, քանի որ երկու երկրներն օգտագործում են միատեսակ տեխնոլոգիա, և առկա է ազատ մրցակցություն:

Մինչև առևտրային հարաբերությունների մեջ մտնելը 1 երկիրը գտնվում է A կետում, որի դեպքում $P_X / P_Y = P_A$, այն դեպքում, երբ 2 երկիրը գտնվում է A' կետում և $P_X / P_Y = P_{A'}$: 1 երկրում w/r հարաբերության ավելի ցածր լինելու և 2 երկրում առևտրի բացակայության պայմաններում P_A-ն ավելի ցածր է, քան $P_{A'}$-ը, այդ իսկ պատճառով 1 երկիրն ունի համեմատական առավելություն X ապրանքի արտադրության մեջ:


Քանի որ 1 երկիրը (աշխատուժով հարաբերականորեն հարուստ) մասնագիտանում է X ապրանքի (աշխատատար ապրանքի) արտադրության մեջ և միաժամանակ կրճատում է Y ապրանքի արտադրությունը, ապա աշխատուժի նկատմամբ պահանջարկն աճում է կապիտալի նկատմամբ պահանջարկի համեմատ և w/r հարաբերությունը աճում է: Դա 1 երկրում P_X/P_Y գնի աճի պատճառ է հանդիսանում: Մյուս կողմից, կապված այն հանգամանքի հետ, որ 2 երկիրը (կապիտալով հարաբերականորեն հարուստ) մասնագիտանում է Y ապրանքի (կապիտալատար ապրանքի) արտադրության մեջ, նրա հարաբերական պահանջարկը կապիտալի նկատմամբ աճում է, և w/r հարաբերակցությունը նվազում: Դա հանգեցնում է P_X/P_Y հարաբերական գների աճի 2 երկրում: Այս գործընթացը կշարունակվի այնքան ժամանակ, քանի դեռ չի հաստատվել հավասարակշռությունը B = B' կետում, որի ժամանակ $P_B = P_{B'}$ և w/r = (w/r)* երկու երկրներում: Նկատենք, որ $P_B = P_{B'}$ հավասարությունը հնարավոր է միայն այն դեպքում, երբ w/r-ը նույնանման է երկու երկրներում, քանի որ, ըստ մեր նախապայմանների, երկրները գործում են ազատ մրցակցային դաշտում և օգտագործում են միանման տեխնոլոգիա: Նշենք նաև, որ $P_B = P_{B'}$-ը գծապատկերում գտնվում է P_A և $P_{A'}$ գների միջև, իսկ (w/r)* հարաբերակցությունը՝ $(w/r)_1$ և $(w/r)_2$ կետերի միջև: Այսպիսով, առևտրային հարաբերությունների հաստատումից հետո P_X/P_Y հարաբերությունը կհավասարվի միայն այն դեպքում, երբ կհավասարվեն 2 երկրների արտադրական գործոնների w/r հարաբերական գները[4]:

---

[3] Մասնագիտացման արդյունքում, քանի որ X ապրանքը աշխատատար է, «աշխատուժ» ապրանքի նկատմամբ ներկայացվում է լրացուցիչ պահանջարկ, որի արդյունքում աճում է «աշխատուժ» ապրանքի գինը «կապիտալի» համեմատ, և շահում են աշխատուժի սեփականատերերը (այսինքն՝ այն ռեսուրսի, որը երկրում հարաբերականորեն առատ է և էժան): Նույն տրամաբանությամբ՝ 2 երկրում մասնագիտացման արդյունքում շահում են «կապիտալ» ռեսուրսի սեփականատերերը:

[4] Արտադրության գործոնների բացարձակ գների հավասարեցման ապացույցն ավելի բարդ է և չի ներկայացվում այս հետազոտությունում:

Գծ. 4. Արտադրության գործոնների հարաբերական գների հավասարեցումը



Կարող ենք նկատել, որ առևտուրը հանդես է գալիս որպես արտադրության գործոնների միջազգային շարժերը փոխարինող երևույթ: Արտադրության գործոնների միջազգային շարժի հնարավորության դեպքում դրանց գները հավասարվում են այդ շարժի միջոցով: Այլ հավասար պայմաններում, աշխատուժը տեղաշարժվում է ցածր աշխատավարձով երկրներից դեպի բարձր աշխատավարձով երկրները այնքան ժամանակ, քանի դեռ աշխատավարձերի մակարդակները չեն հավասարվել երկու երկրներում: Նմանապես, կապիտալի արտահոսք կնկատվի ցածր տոկոսադրույքներով երկրում և ներհոսք՝ բարձր տոկոսադրույքներով երկրում: Այն դեպքում, երբ առևտուրը հավասարեցնում է գները, արտադրության գործոնների պահանջարկից ելնելով, միջազգային շարժը գործում է՝ ելնելով դրանց առաջարկից: Գործոնների որոշ (բայց ոչ լիարժեք) շարժունության դեպքում կպահանջվի ավելի փոքր ծավալների առևտուր՝ դրանց գները հավասարեցնելու համար:

Միջազգային առևտուրը ազդում է ոչ միայն երկրների միջև արտադրության գործոնների գների հարաբերության վրա, այլև երկրների ներսում գործոնների գների և եկամուտների վրա: Ինչպես հետևեց գծապատկեր 4-ից, առևտուրն ավելացնում է այն գործոնի գինը, որով երկիրը հարաբերականորեն հարուստ է և նվազեցնում է այն գործոնի գինը, որով երկիրը հարաբերականորեն աղքատ է: Քանի որ և՛ մինչև առևտրային հարաբերությունների մեջ մտնելը, և՛ դրանից հետո աշխատուժը և կապիտալը ամբողջությամբ ընդգրկված են արտադրության մեջ, ապա դրանց սեփականատերերի եկամուտները նույնպես կունենան նույն միտումը, ինչ որ՝ այդ ապրանքների գները: Այսպիսով, առևտուրը 1 երկրում (էժան աշխատուժով և թանկ կապիտալով) աշխատողների իրական եկամուտների աճի և կապիտալի սեփականատերերի իրական եկամուտների նվազման հիմնական գործոնն է: Մյուս կողմից՝ միջազգային առևտուրը նվազեցնում է աշխատողների իրական եկամուտները և ավելացնում կապիտալի սեփականատերերի իրական եկամուտները 2 երկրում (էժան կապիտալով և թանկ աշխատուժով):

Սակայն այս արդյունքները ստացվում են այն դեպքում, եթե արտադրության գործոններն անարգել շարժվում են մի ճյուղից մյուսը: Չնայած երկարաժամկետ հատվածում այս միտումները գործում են, սակայն կարճաժամկետ հատվածում շարժունության գաղափարը կասկածի տակ է դրվում, քանի որ և՛ աշխատուժը, և՛ կապիտալը կարճ ժամանակահատվածում ունեն ցածր շարժունություն:

Պետք է նշել նաև, որ ավելցուկային ռեսուրսների սեփականատերերի շահույթը երկրի ներսում եկամուտների վերաբաշխումից միշտ ավելի շատ է, քան սակավ ռեսուրսների սեփականատերերի կորուստը[5]: Հետևաբար, պետությունը իր հարկային և ծախսային քաղաքականության միջոցով հնարավորություն ունի այդ գերշահույթը վերաբաշխել այնպես, որ երկու ռեսուրսների սեփականատերերը սկզբնական վիճակի համեմատ ստանան լրացուցիչ եկամուտ:

---

[5] Այս պնդումն ավելի ընդհանրացված է Ստոլպեր-Սամուելսոնի թեորեմով (տե՛ս Stolper W., Samuelson P., "Protection and Real Wages", Review of Economic Studies 9, 1941, pp. 58-73), ըստ որի՝ եթե, օրինակ, բարձրանա աշխատատար ապրանքի գինը, ապա աշխատուժի գինը կբարձրանա ավելի մեծ համամասնությամբ, քան գների աճն է: Մինչդեռ մյուս գործոնի գինը կնվազի, որը, սակայն, պարտադիր չէ, որ լինի ավելի մեծ համամասնությամբ, քան աշխատատար ապրանքի գների աճն է: Այս թեորեմը 2x2x2 (2 գործոն – 2 ճյուղ – 2 երկիր) հավասարակշռության մոդելի հետևանք է, որի մասնավոր դեպքը հենց Հեքշեր-Օլինի տեսությունն է (տե՛ս Silberberg E., Suen W., "The Structure of Economics: a Mathematical Analysis", New York, McGraw Hill, 2000):

Նույնիսկ ոչ խորը վերլուծության արդյունքում ակնհայտ է, որ իրականում գործոնների գների հավասարեցում տեղի չի ունենում: Սակայն դրա պատճառը ոչ թե Հեքշեր-Օլին-Սամուելսոնի թեորեմի սխալ լինելն է, այլ այդ թեորեմի նախապայմանների տեղի չունենալու փաստը: Մասնավորապես՝ երկրների մեծամասնությունը չի օգտագործում նույնանման տեխնոլոգիա, կամ տրանսպորտային ծախսերը և առևտրային սահմանափակումները թույլ չեն տալիս, որ գները տարբեր երկրներում հավասարվեն: Առավել ևս, շատ ճյուղեր աշխատում են ոչ կատարյալ մրցակցության և մասշտաբի անկայուն հատույցի պայմաններում: Այդ իսկ պատճառով երկրների աշխատավարձերը և տոկոսադրույքները իրական կյանքում տարբերվում են:

Այս պայմաններում ավելի ճիշտ է ասել, որ միջազգային առևտուրը ընդամենը նվազեցնում է, այլ ոչ թե չեզոքացնում արտադրության միատիպ գործոններից ստացվող եկամուտների տարբերությունները: Դրա պատճառը նաև այն հանգամանքն է, որ բացի եկամուտները հավասարեցնող գործոններից, գոյություն ունեն նաև այլ ուժեր, որոնք ազդում են հակառակ ուղղությամբ, օրինակ՝ տեխնիկական առաջընթացի տեմպերի տարբերությունը զարգացած և զարգացող երկրներում: Սակայն մեկ անգամ ևս նշենք, որ սա չի ժխտում արտադրության գործոնների գների հավասարեցման թեորեմը, քանի որ առևտրի բացակայության դեպքում այդ տարբերությունը կլիներ ավելի զգալի:

Միջազգային տնտեսագիտական շրջանակներում այս մոդելի կիրառումը տվել է վիճելի արդյունքներ: Ամերիկացի տնտեսագետ, Նոբելյան մրցանակակիր Վասիլի Լեոնտևը փորձել է այս մոդելը կիրառել ԱՄՆ տնտեսության համար և ստացել է հակառակ արդյունքներ, որը հայտնի է «Լեոնտևի պարադոքս» անվանումով:[6] Ըստ նրա արդյունքների՝ ԱՄՆ-ը, լինելով կապիտալով հարուստ երկիր, 30%-ով ավելի շատ արտահանում էր աշխատատար ապրանքներ: Լեոնտևը և մի շարք այլ տնտեսագետներ փորձել են բացատրել այդ պարադոքսի պատճառները և հիմնականում հանգել են հետևյալ դատողությունների[7].

1. ընտրված 1947 տարեթիվը ներկայացուցչական չէր,
2. օգտագործվել է երկգործոնային մոդել (աշխատուժ և կապիտալ),
3. ամերիկյան մաքսատուրքերն ավելի շատ պաշտպանում են ներքին արտադրողների շահերը,
4. հաշվարկներում ներառված չէր մարդկային կապիտալը[8]:

Տնտեսագիտական միտքը ապացուցել է նաև, որ Հեքշեր-Օլինի նախապայմաններից երկուսը գրեթե միշտ տեղի ունեն: Դրանք են՝

- սպառողների ճաշակները և նախապատվությունները տարբեր երկրներում էապես չեն տարբերվում (Հոութակեր),
- հակադարձ գործոնատարությունը (մի ապրանքը մեկ երկրում աշխատատար է, մյուսում՝ կապիտալատար) իրական աշխարհում շատ հազվադեպ է հանդիպում (Լեոնտև, Բոլլ):

Այնուամենայնիվ Հեքշեր-Օլինի տեսությունը դեռևս ամբողջությամբ չի հաստատվել էմպիրիկ ճնով, սակայն այն չի մերժվում և ընդունվում է որպես միջազգային առևտրի դասական տեսություններից մեկը:[9]

3. Հեքշեր-Օլինի մոդելը Հայաստանում. վարկածներ

Ելնելով վերոնշյալ մոդելի տեսական դրույթներից՝ փորձ է արվել այդ մոդելը կիրառել Հայաստանում: Կիրառության հիմքում դրվել են մոդելի արդյունքների վերաբերյալ մեր վարկածները:

Այդ վարկածներից առաջինն այն է, որ ***Հայաստանը, մյուս երկրների համեմատ, աշխատուժով օժտված երկիր է***: Խորհրդային Միության փլուզումից հետո Հայաստանի առջև ծառացավ կապիտալի մաշվածության հիմնախնդիրը: Այսինքն՝ եթե Խորհրդային Միության երկրների մեջ Հայաստանը թեկուզ և համարվեր կապիտալով համեմատաբար հարուստ երկիր, այնուամենայնիվ մյուս զարգացած երկրների համեմատ նա աշխատուժով օժտված երկիր է:

Մյուս վարկածը, որը բխում է առաջինից, ներմուծման համեմատ ***Հայաստանի արտահանման ցածր կապիտալազինվածությունն է:***

---

[6] Տե՛ս Leontief W., "Domestic Production and Foreign Trade: the American Capital Position Re-examined", Proceedings of the American Philosophical Society 97, 1953, էջ 331-349:

[7] Տե՛ս Keesing D., "Labor Skills and Comparative Advantage", American Economic Review, Papers and Proceedings 56, 1996, May, N2, էջ 249-258, Hartigan J., "The US Tariff and Comparative Advantage: a Survey of Method", Weltwirtschaftliches Archiv 117, 1981, N1, էջ 61-109, Boldwin R., "Determinants of the Commodity Structure of US Trade", American Economic Review 61, 1971, March, N1, էջ 126-146:

[8] Մարդկային կապիտալ ասելով ի նկատի ունենք բարձր որակավորում ունեցող աշխատուժը, որի համար կատարվել են մեծ ծավալների ներդրումներ:

[9] Տե՛ս Bowen H., Leamer E., Sveikauskas L., "Multicountry, Multifactor Tests of the Factor Abundance Theory", American Economic Review 77, 1987, Dec., N5

Առաջին երկու վարկածների ապացուցումը թույլ կտա Հեքշեր-Օլինի տեսությունից բխող եզրակացությունները կիրառել Հայաստանի դեպքում, ինչպես նաև որոշակի դատողություններ անել երկրի զարգացման վերաբերյալ:

Մասնավորապես՝ աշխատատար ապրանքների արտահանման դեպքում կարելի է եզրակացություն անել, որ Հայաստանը զարգացման սկզբնական փուլում է, իսկ կայուն զարգացման համար (կենսամակարդակի աճ, որը ենթադրում է միայն աշխատավարձերի աճ) անհրաժեշտ է մասնագիտանալ կապիտալատար (գիտատար) ապրանքների արտադրության մեջ, հետևյալ երկու պատճառով՝

1. Աշխատատար ճյուղերում արտադրողականության (աշխատավարձի) աճը սահմանափակ է՝ արտադրության բնույթից ելնելով:
2. Աշխատատար ճյուղերի արտադրանքը մրցակցում է համաշխարհային շուկայում իր ցածր ծախսերով՝ ցածր աշխատավարձի հաշվին (այլ կերպ ասած՝ աշխատատար ճյուղերում մասնագիտացած պետության սահմանած աշխատավարձերը սահմանափակված են նույն ոլորտում գործող մյուս երկրների աշխատավարձերի մակարդակով. օր. Չինաստան, Հնդկաստան և այլն):

Երկրների զարգացումը կապված է կապիտալի կուտակման հետ, որի պայմաններում երկրները հնարավորություն են ստանում զարգանալ, աշխատատար ապրանքների արտադրությունից անցնել կապիտալատար ապրանքների արտադրության, որը բարձրացնում է 1 աշխատողին բաժին ընկնող արդյունքի մեծությունը, հետևաբար նաև՝ աշխատողների կենսամակարդակը[10]: Ուստի Հայաստանում կենսամակարդակի աճ կարող է նկատվել միայն այն դեպքում, երբ տեղի ունենա կապիտալի կուտակում, որն ուղղված է արտահանվող կապիտալատար ապրանքներ արտադրող ճյուղերում ներդրումներ կատարելուն:

Սակայն ***Հայաստանում կապիտալի կուտակման տեմպերը ցածր են*** երկարաժամկետ և կայուն տնտեսական աճ ապահովելու համար, և այս դատողությունը հաջորդ վարկածն է, որը անհրաժեշտ է ստուգել՝ Հայաստանի ցուցանիշները համեմատելով զարգացող երկրների ցուցանիշների հետ:

Այս վարկածների ստուգումը թույլ կտա հասնել նյութի հիմնական նպատակին, այսինքն՝ ***բացահայտել Հայաստանի օժտվածությունը արտադրության ռեսուրսներով և համեմատական հարստությունը, դիտարկել դրա ազդեցությունը արտաքին առևտրի և ներքին գների վրա, ինչպես նաև որոշակի դատողություններ անել երկրի զարգացման ուղղությունների վերաբերյալ***:

4. Աշխատավարձերի և տոկոսադրույքների վերլուծությունը՝ ըստ երկրների: Աշխատավարձերի ճեղքվածքը Հայաստանում

Հայաստանի և գործընկեր երկրների համար նախ հաշվարկվել է աշխատուժի և կապիտալի գների հարաբերակցությունը՝ երկրի՝ աշխատուժով օժտվածության վարկածը ստուգելու համար: Արդյունքները ներկայացված են աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Տոկոսադրույքները և աշխատավարձերը Հայաստանում և գործընկեր երկրներում

1998	Տոկոսադրույք/ աշխատավարձ	Միջին ամսական աշխատավարձ, ԱՄՆ դոլար	Տարեկան տոկոսադրույք (վարկային տոկոսադրույք – սպառողական գների փոփոխություն)
ԱՄՆ	0.003	2626	6.8
Բելգիա	0.002	3045	6.3
Ֆրանսիա	0.003	2159	5.9
Գերմանիա	0.002	3522	8.1
Իտալիա	0.003	2059	5.9
Նիդեռլանդներ	0.002	2895	4.5
Շվեյցարիա	0.001	3602	4.1
Միացյալ Թագավորություն	0.001	2548	3.8
Վրաստան	1.066	40	42.4
Ռուսաստան	0.130	108	14.1

[10] Այս պնդումը ընդհանրացված է Ռիբչինսկու թեորեմով (տե՛ս Rybczynski T., "Factor Endowments and Relative Commodity Prices", Economica 22, 1955, Nov., N84, pp. 336-341), ըստ որի՝ եթե ավելանում է որևէ ռեսուրսի պաշարը, ապա ավելանում է այն ճյուղի արտադրանքը, որն այդ ռեսուրսը օգտագործում է ավելի ինտենսիվորեն, և նվազում է մյուս ճյուղի արտադրանքը: Այս թեորեմը նույնպես 2x2x2 (2 գործոն – 2 ճյուղ – 2 երկիր) հավասարակշռության մոդելի հետևանք է, որի մասնավոր դեպքը հենց Հեքշեր-Օլինի տեսությունն է (տե՛ս Silberberg E., Suen W., "The Structure of Economics: a Mathematical Analysis", New York, McGraw Hill, 2000):

Թուրքիա	-	-	-
Ուկրաինա	0.700	63	43.9
Իրան	-	-	-
Իսրայել	0.006	1770	10.8
Միջին	**0.160**	**2036**	**13.0**
Հայաստան (1998)	1.115	35.7	39.8
Հայաստան (1999)	1.015	37.7	38.3
Հայաստան (2000)	0.769	42.1	32.4
Հայաստան (2001)	0.535	44.1	23.6
Հայաստան (2002)	0.420	47.7	20.0
Հայաստան (2003)	0.285	56.6	16.1

Աղյուսակ 2-ից կարող ենք եզրակացնել, որ Հայաստանում, գործընկեր երկրների համեմատ, տոկոսադրույք/աշխատավարձ հարաբերությունը 1998 թվականին բավականին բարձր է եղել: Սակայն այդ գործակցի նվազման դինամիկան բավականին արագ է ընթանում, որը, այնուամենայնիվ, շատ բարձր է զարգացած երկրների համեմատ: 1999 թվականի տվյալներն ավելի մանրամասն ներկայացված են Հավելված 1-ում պատկերված գծանկարում:

Ըստ Հեքշեր-Օլինի տեսության՝ երկրները պետք է մասնագիտանան կա՛մ կապիտալատար, կա՛մ աշխատատար ապրանքների արտադրության մեջ, որը ենթադրում է պարզեցված տարբերակում երկու տիպի երկրների գոյություն՝

- կապիտալով հարուստ երկրներ՝ ցածր տոկոսադրույք և բարձր աշխատավարձ,
- աշխատուժով հարուստ երկրներ՝ բարձր տոկոսադրույք և ցածր աշխատավարձ:

Դինամիկայում դիտարկելով Հեքշեր-Օլինի տեսությունը՝ երկրների զարգացման մասին կարելի է առաջադրել հետևյալ վարկածը (եթե ներառենք նաև մարդկային կապիտալը՝ որպես գործոն). սկզբում՝ աշխատատար ապրանքների արտադրություն – կապիտալի կուտակում - անցում կապիտալատար ապրանքների արտադրությանը – մարդկային կապիտալի կուտակում - անցում գիտատար ապրանքների արտադրությանը (ցայտուն օրինակ է Ճապոնիայի հետպատերազմյան զարգացումը): Այս շղթան բավականին տեսանելիորեն պատկերված է Հավելված 1-ում (առանց միայն զարգացած երկրների համար ներառվող՝ մարդկային կապիտալի գործոնի): Գծապատկերի վրա Հայաստանի զարգացման դինամիկայի դիտարկումը հաստատում է զարգացման նման ընթացքի մասին մեր ենթադրությունը: Այս վարկածից ելնելով՝ կարելի է ասել, որ աշխատավարձը և տոկոսադրույքը հակադարձ համեմատական են՝ աշխատավարձը կախման մեջ է տոկոսադրույքից: Սակայն այս կապը գործում է միայն այլ հավասար պայմաններում, այսինքն, կարծում ենք, ցածր տոկոսադրույքներն անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման են բարձր աշխատավարձերի համար: ***Հավելված 1-ի գծապատկերում պատկերված միտումի բանաձևից կարելի է ասել, որ այլ հավասար պայմաններում, տոկոսադրույքների 1 տոկոս նվազումը հանգեցնում է պոտենցիալ[11] աշխատավարձի 1.6 տոկոս աճի:*** Աղյուսակ 3-ում ներկայացված են Հայաստանի տվյալները 1998 - 2004 թվականներին, հաշվարկվել են պոտենցիալ և իրական աշխատավարձերը, և դիտարկվել է աշխատավարձերի ճեղքվածքը:

Աղյուսակ 3. Աշխատավարձերի ճեղքվածքը Հայաստանում 1998 - 2004 թթ.

	Տոկոսադրույք	**Պոտենցիալ աշխատավարձ**	**Իրական աշխատավարձ**	**Աշխատավարձի ճեղքվածք**
Հայաստան՝ 98	48.5	53.1	35.7	0.672
Հայաստան՝ 99	39	75.2	37.7	0.502
Հայաստան՝ 00	31.5	105.6	42.1	0.398
Հայաստան՝ 01	26.5	139.2	44.1	0.317
Հայաստան՝ 02	21.5	194.2	47.7	0.246
Հայաստան՝ 03	21	201.7	56.6	0.281
Հայաստան՝ 04	18.5	246.8	67.8	0.275

[11] Պոտենցիալ աշխատավարձը (հաշվարկված է միջերկրային վերլուծության մեջ բերված միտման բանաձևով), այլ հավասար պայմաններում, միայն տոկոսադրույքի մակարդակով պայմանավորված աշխատավարձն է, որը պետք է ունենա տվյալ երկիրը: Սակայն այլ գործոնների ի հայտ գալը շեղում է փաստացի աշխատավարձերն իրենց պոտենցիալ մակարդակից:

Աղյուսակից կարելի է եզրակացնել, որ Հայաստանում էական շեղում կա տոկոսադրույքների և աշխատավարձերի միջև, որը կարելի է բացատրել մի քանի հնարավոր տարբերակներով.

1. Կառուցվածքային բարեփոխումների քաղաքականությունը բավականին անարդյունավետ է, քանի որ իրական աշխատավարձերը, մեծ ճեղքվածք ունենալուց բացի, նաև ավելի են շեղվում պոտենցիալ վիճակից (բացառություն է կազմում 2003 թվականը):
2. Հնարավոր է նաև, որ երկրում տոկոսադրույքները արհեստականորեն ցածր մակարդակի վրա են և չեն արտահայտում վարկային ռիսկերը (որը պայմանավորված է առևտրային կապիտալի ներհոսքի բացակայության պայմաններում ոչ առևտրային կապիտալի գերակշռությամբ՝ պետական վարկեր, մասնավոր տրանսֆերտներ):
3. Իրական աշխատավարձերը շատ ավելի բարձր են, քան պաշտոնական վիճակագրական տվյալներն են (ի հաշիվ տրանսֆերտների[12] և գների մակարդակների տարբերության):
4. Ցածր տոկոսադրույքները երկրում միայն 2003 թվականից հետո հանգեցրին կապիտալի իրական կուտակման (ամբողջ երկրի և ոչ թե տնտեսության առանձին ճյուղերի կտրվածքով), իսկ մինչ այդ դիտվել է կապիտալազինվածության (ձեռնարկությունների վարկավորման) ոչ բավարար աճ:

Ամեն դեպքում, գործընկեր երկրների համեմատ, Հայաստանը աշխատուժով համեմատաբար հարուստ և կապիտալով համեմատաբար աղքատ երկիր է:

5. Կապիտալազինվածության և արտաքին առևտրի ճյուղային կառուցվածքը: Հեքշեր-Օլինի թեորեմի ստուգումը Հայաստանի համար

Աշխատանքի այս փուլում փորձ է արվել ճյուղային վերլուծության ենթարկել կապիտալազինվածությունը և արտաքին առևտուրը՝ ստուգելու համար վերջինիս համապատասխանությունը Հեքշեր-Օլինի թեորեմին, ըստ որի՝ Հայաստանը լինելով աշխատուժով հարուստ երկիր, արտահանում է աշխատատար ճյուղերի ապրանքներ և ներմուծում է կապիտալատար ճյուղերի ապրանքներ:

Նախևառաջ տնտեսության ճյուղային գործող դասակարգիչով (Տնտեսական գործունեության տեսակների ընդհանուր դասակարգիչ (NACE)) դասակարգված ճյուղերը վերադասակարգվել են 9 ճյուղերի, որպեսզի ապահովվի արտաքին առևտրի դասակարգչի հետ համադրելիությունը (HS – Harmonized system of calssification and coding - Դասակարգման և կոդավորման համաձայնեցված համակարգ): Վերջինս նույնպես խմբավորվել է ըստ 9 ճյուղերի, որոնք են.

1. գյուղատնտեսություն,
2. սննդի վերամշակում,
3. քիմիական արդյունաբերություն,
4. թեթև արդյունաբերություն,
5. մեքենաներ, սարքեր, տրանսպորտ,
6. լեռնահանքային արդյունաբերություն,
7. ոչ թանկարժեք մետաղներ,
8. այլ արդյունաբերություն,
9. թանկարժեք քարեր և մետաղներ:

Այս ճյուղերի համար հաշվարկվել են կապիտալազինվածության, արտահանման և ներմուծման տվյալները 2001 և 2002 թթ.[13,14], որոնք ներկայացված են գծապատկեր 5-ում:


---

[12] Ցանկացած երկրում ոչ աշխատանքային եկամուտների առկայությունը (տրանսֆերտներ, բնական ռեսուրսներ, նպաստավոր աշխարհագրական դիրք) նվազեցնում է բարձր արտադրողականություն ապահովելու խթանները և մյուս կողից, հանդիսանալով կապիտալի ներհոսք, նվազեցնում է երկրում գործող տոկոսադրույքները՝ խոչընդոտելով ֆինանսական միջնորդության աճը:

[13] 2001 թվականից առաջ Ազգային վիճակագրական ծառայության կողմից օգտագործվել է տնտեսության այլ ճյուղային դասակարգիչ (ÎÊÎÍÕ – Îáùåýêîíîìè÷åñêè êëàññèôèêàòîð îòðàñëåé íàðîäíîãî õîçÿéñòâà), որը անհամադրելի է դարձնում համեմատությունը:

[14] Աշխատուժով հարուստ լինելու տեստի 1998 թվականի արդյունքներով և 2001-02 թվականների արտաքին առևտրի տվյալներով՝ Հեքշեր-Օլինի թեորեմի ստուգումը անտրամաբանական չէ, քանի որ, աշխատուժով հարուստ երկիրը նախ՝ կարճ ժամանակահատվածում չի կարող վերափոխվել կապիտալով հարուստ երկրի, երկրորդ՝ արտաքին առևտրի ճյուղային կառուցվածքի համար հիմք պետք է հանդիսանա արտադրության ռեսուրսներով օժտվածության իրավիճակը որոշակի ժամանակաշրջան առաջ, քանի որ արտադրության կառուցվածքը նույնպես կարճաժամկետ հատվածում չի կարող փոխվել:

Գծ. 5. Հայաստանի տնտեսության ճյուղերի կապիտալազինվածությունը 2001 - 2002 թթ. (մլն դրամ/աշխատող)



Ինչպես երևում է գծապատկերից, Հայաստանում հիմնականում պահպանված է ըստ կապիտալազինվածության ճյուղային աստիճանակարգը, որը համապատասխանում է համաշխարհային տնտեսությունում գործող աստիճանակարգին: Այսպես, արդյունաբերության մեջ ամենացածր կապիատալազինվածությունն ունեն թեթև արդյունաբերության և թանկարժեք քարերի և մետաղների և դրանցից իրերի արտադրության արդյունաբերության ճյուղերը: Մեքենաշինության և քիմիական արդյունաբերության ճյուղերը համաշխարհային տնտեսությունում համարվում են ամենակապիտալատար ճյուղերը, սակայն Հայաստանում դրանց կապիտալազինվածությունը ցածր է, քանի որ այդ ճյուղերի տեխնոլոգիաները հնացած են և չեն իրականացվել խոշոր ներդրումներ վերջին տասնամյակում: Միակ բացառությունը մեր տնտեսության կառուցվածքում գյուղատնտեսությունն է: Զարգացած երկրներում գյուղատնտեսությունը բավականին կապիտալատար ճյուղ է, մինչդեռ Հայաստանում այն ամենաաշխատատարն է: Այդ իսկ պատճառով որոշվեց գյուղատնտեսության ճյուղի առևտուրը չներառել Հեքշեր-Օլինի թեորեմի ստուգման հաշվարկների մեջ, քանի որ այս ճյուղի համար բավարարված չէ Հեքշեր-Օլինի տեսության հիմնական նախապայմաններից մեկը՝ տեղի ունի հակառակ ռեսուրսատարություն, այսինքն՝ երկրները չեն օգտագործում միանման տեխնոլոգիա:

Աղյուսակ 4 և 5-ում ամփոփված են 2001 և 2002 թթ. կապիտալազինվածության, արտահանման և ներմուծման տվյալները՝ ըստ տնտեսության ճյուղերի:

Աղյուսակ 4. Կապիտալազինվածության, արտահանման և ներմուծման տվյալները՝ ըստ տնտեսության ճյուղերի (2001 թ.)[12]

Ճյուղի անվանումը	Կապիտալա-զինվածություն (մլն դրամ/աշխ.)	Արտահանում (մլն ԱՄՆ դոլար)	Ներմուծում (մլն ԱՄՆ դոլար)	Արտահանում/ ներմուծում	Արտահանման կապիտալազինվ. (մլն դրամ/աշխ.)	Ներմուծման կապիտալազինվ. (մլն դրամ/աշխ.)
Գյուղատնտեսություն	0.223	2.9	135.5	2.2%		0.22
Սննդի վերամշակում	5.609	48.0	76.9	62.4%	5.61	
Քիմիական արդյունաբերութ.	3.147	15.9	87.6	18.2%		3.15
Թեթև արդյունաբերություն	1.529	26.7	47.8	55.9%	1.53	
Մեքենաշինություն	3.205	39.7	141.2	28.1%		3.21
Լեռնահանք. արդ.	4.950	37.4	188.2	19.9%		4.95
Մետալուրգիա	4.089	43.4	36.1	120.5%	4.09	
Այլ արդ.	2.096	4.5	57.4	7.9%		2.10
Թանկ. քարեր և մետ.	1.897	122.9	106.8	115.1%	1.90	
Միջին	***0.518***	***37.9***	***97.5***	***38.9%***	***2.99***	***3.75***
Կապիտալազինվածություն					**3.23**	**3.55**

[12] *Այստեղ և հետագայում գյուղատնտեսության ճյուղը ներառված չէ միջին կապիտալազինվածության ցուցանիշի հաշվարկի մեջ:*

Աղյուսակ 5. Կապիտալազինվածության, արտահանման և ներմուծման տվյալները՝ըստ տնտեսության ճյուղերի (2002 թ.)[12]

Ճյուղի անվանումը	Կապիտալա-զինվածություն (մլն դրամ/աշխ.)	Արտահանում	Ներմուծում	Արտահանում/ ներմուծում	Արտահանման կոմպարատիվ. ընձեռուն. (մլն դրամ/տոննա)	Ներմուծման կոմպարատիվ. ընձեռուն. (մլն դրամ/տոննա)
Գյուղատնտ.	0.247	4.4	113.8	3.9%		0.25
Սննդի վեր.	7.217	54.8	78.7	69.6%	7.22	
Քիմիական արդ.	4.095	8.3	79.6	10.4%		4.10
Թեթև արդ.	1.408	29.6	33.9	87.5%	1.53	
Մեքենաշինություն	3.422	55.8	146.9	38.0%		3.42
Լեռնահանք. արդ.	5.405	42.1	169.8	24.8%		5.41
Մետալուրգիա	5.768	44.8	55.1	81.2%	5.77	
Այլ արդ.	2.556	6.2	52.2	11.9%		2.56
Թանկ. քարեր և մետ.	2.449	258.3	213.5	121.0%	2.45	
Միջին	*1.193*	*56.0*	*104.8*	*53.5%*	*3.43*	*4.19*
Կապիտալազինվածություն					**3.59**	**4.02**

Արտահանման և ներմուծման կապիտալազինվածությունը հաշվարկվել է 2 եղանակով՝

1. Ճյուղային կապիտալազինվածության ցուցանիշները միջինացվել են՝ կշռվելով մի դեպքում՝ արտահանման ծավալներով, մյուս դեպքում՝ ներմուծման:
2. Ճյուղերը բաժանվել են 2 խմբի՝ արտահանման և ներմուծման, որից հետո հաշվարկվել են այդ 2 խումբ ճյուղերի միջին կապիտալազինվածությունները՝ նույնպես կշռվելով արտահանման և ներմուծման ծավալներով: Որպես ճյուղերի բաժանման ցուցանիշ է ընտրվել արտահանում/ներմուծում միջին ճյուղային ցուցանիշից ճյուղի ցուցանիշի մեծ կամ փոքր լինելու փաստը:

Վերոնշյալ 2 մեթոդով հաշվարկված արտահանման և ներմուծման կապիտալազինվածության ցուցանիշները բերված են աղյուսակ 4 և 5-ում և ամփոփված են աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 6. Արտահանման և ներմուծման կապիտալազինվածության գործակիցները 2001-2002թթ.

Կապիտալազինվածություն	I մեթոդ		II մեթոդ	
	2001	2002	2001	2002
Արտահանում	3.2	3.6	3.0	3.4
Ներմուծում	3.6	4.0	3.8	4.2

Ինչպես տեսնում ենք, 2 մեթոդներով հաշվարկված կապիտալազինվածության ցուցանիշները ապացուցում են Հեքշեր-Օլինի թեորեմի հիմնավորվածությունը Հայաստանի համար՝ բոլոր դեպքերում ներմուծման կապիտալազինվածությունն ավելի բարձր է, քան արտահանմանը:

Սակայն կապիտալազինվածության թվերի՝ միմյանց մոտ լինելը չի կարող համարվել բավականին գոհացուցիչ: Այդ իրավիճակն ավելի խորը վերլուծելու նպատակով մեր կողմից առաջադրվեց վարկած, որ Հայաստանի առևտուրը, ըստ էության, երկու տարբեր ուղղություններ ունի՝ կախված 2 հիմնական գործընկեր երկրների խմբերից՝ ԱՊՀ և ՏՀԶԿ (Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն - OECD):

Այս վարկածը ստուգելու համար արտաքին առևտուրը բաժանվեց ըստ երկրների խմբերի[13].

- ցածր եկամուտներով երկրների հետ (L – low), որտեղ 1 շնչին բաժին ընկնող տարեկան եկամուտը ցածր է 745 ԱՄՆ դոլարից,
- միջինից ցածր եկամուտներով երկրների հետ (LM – lower middle), որտեղ 1 շնչին բաժին ընկնող տարեկան եկամուտը 745-2975 ԱՄՆ դոլար միջակայքում է,

[13] Երկրների բաժանման համար հիմք է ծառայել Համաշխարհային բանկի կողմից ընդունված՝ երկրների դասակարգումը և «Համաշխարհային զարգացման ինդիկատորներ» 2003 թվականի հրատարակությունում ներկայացված երկրների եկամուտների չափերը (որոշ երկրների եկամուտների մասին տվյալների բացակայության դեպքում տրվել են փորձագիտական գնահատականներ):

- միջինից բարձր եկամուտներով երկրների հետ (UM – upper middle), որտեղ 1 շնչին բաժին ընկնող տարեկան եկամուտը 2975-9205 ԱՄՆ դոլար միջակայքում է,
- բարձր եկամուտներով երկրների հետ (H – high), որտեղ 1 շնչին բաժին ընկնող տարեկան եկամուտը բարձր է 9205 ԱՄՆ դոլարից:

Երկրների մանրամասն ցանկը՝ իրենց եկամուտներով և դասակարգմամբ ներկայացված է Հավելված 2-ում:

Աղյուսակ 7-ում բերված են 2002 թվականի արտահանման և ներմուծման, ինչպես նաև միջին կապիտալազինվածության տվյալները՝ ըստ երկրների խմբերի:

Աղյուսակ 7. 2002 թվականի արտահանումը, ներմուծումը և միջին կապիտալազինվածությունը՝ ըստ երկրների խմբերի

	L	LM	UM	H	Ընդհանուր	Կապիտա-լազինված.
Արտահանում 2002 (մլն ԱՄՆ դոլար)						
Գյուղատնտեսություն	1.2	1.3	0.1	1.8	4.4	0.2
Սննդի վերամշակում	4.8	44.1	0.7	5.2	54.8	7.2
Քիմիական արդյունաբերություն	1.5	5.4	0.1	1.2	8.3	4.1
Թեթև արդյունաբերություն	0.8	3.0	0.1	25.7	29.6	1.4
Մեքենաներ, սարքեր, տրանսպորտ	11.8	21.6	0.8	21.5	55.8	3.4
Լեռնահանքային արդյունաբերություն	6.6	16.2	0.0	19.3	42.1	5.4
Ոչ թանկարժեք մետաղներ	0.1	12.8	0.3	31.7	44.8	5.8
Այլ արդյունաբերություն	0.8	2.9	0.2	2.4	6.2	2.6
Թանկարժեք քարեր և մետաղներ	0.2	1.5	0.2	256.5	258.3	2.4
Ընդամենը	**26.5**	**107.5**	**2.5**	**363.5**	**500.0**	**4.1**
Ներմուծում 2002 (մլն ԱՄՆ դոլար)						
Գյուղատնտեսություն	26.0	58.4	3.0	26.5	113.8	0.2
Սննդի վերամշակում	10.4	21.5	19.2	27.5	78.7	7.2
Քիմիական արդյունաբերություն	8.2	31.3	3.0	37.2	79.6	4.1
Թեթև արդյունաբերություն	2.0	11.3	0.5	20.1	33.9	1.4
Մեքենաներ, սարքեր, տրանսպորտ	4.1	35.6	8.4	98.8	146.9	3.4
Լեռնահանքային արդյունաբերություն	12.8	147.0	1.7	8.4	169.8	5.4
Ոչ թանկարժեք մետաղներ	10.8	33.6	0.5	10.3	55.1	5.8
Այլ արդյունաբերություն	5.2	21.5	2.7	22.8	52.2	2.6
Թանկարժեք քարեր և մետաղներ	0.0	15.6	1.2	196.7	213.5	2.4
Ընդամենը	**53.5**	**317.3**	**37.1**	**421.8**	**829.7**	**4.1**
Զուտ Արտահանում 2002 (մլն ԱՄՆ դոլար)						
Գյուղատնտեսություն	5%	2%	2%	7%	4%	0.2
Սննդի վերամշակում	46%	***205%***	4%	19%	***70%***	7.2
Քիմիական արդյունաբերություն	18%	17%	5%	3%	10%	4.1
Թեթև արդյունաբերություն	40%	27%	***31%***	***128%***	***88%***	1.4
Մեքենաներ, սարքեր, տրանսպորտ	***287%***	***61%***	***10%***	22%	38%	3.4
Լեռնահանքային արդյունաբերություն	***51%***	11%	0%	***231%***	25%	5.4
Ոչ թանկարժեք մետաղներ	1%	***38%***	***58%***	***307%***	***81%***	5.8
Այլ արդյունաբերություն	15%	14%	6%	10%	12%	2.6
Թանկարժեք քարեր և մետաղներ	***556%***	9%	***18%***	***130%***	***121%***	2.4
Միջինը	**49%**	**34%**	**7%**	**86%**	**60%**	**4.1**
Արտահանման տեսակարար կշիռը	**5.3%**	**21.5%**	**0.5%**	**72.7%**	**100.0%**	
Ներմուծման տեսակարար կշիռը	**6.5%**	**38.2%**	**4.5%**	**50.8%**	**100.0%**	
Առևտրաշրջանառության տեսակարար կշիռը	**6.0%**	**31.9%**	**3.0%**	**59.1%**	**100.0%**	
Արտահանման կապիտալազինվածություն	**4.11**	**5.94**	**3.54**	**2.86**	**3.43**	**3.59**
Ներմուծման կապիտալազինվածություն	**4.86**	**4.55**	**6.28**	**4.01**	**4.19**	**4.02**

Ըստ երկրների խմբերի հետ արտաքին առևտրի կապիտալազինվածության վերլուծությունը ապացուցեց մեր ենթադրությունը Հայաստանի արտաքին առևտրի երկկողմանիության մասին: Այսպես, եթե բացառենք ցածր և միջինից բարձր եկամտով երկրների հետ առևտուրը, որը կազմում է ընդհանուր առևտրաշրջանառության ընդամենը 9.0 տոկոսը, ապա կարելի է անել հետևյալ եզրակացությունները.

- Միջինից ցածր եկամուտ ունեցող երկրների համեմատ (հիմնականում՝ ԱՊՀ երկրներն են) Հայաստանը ավելի հարուստ է կապիտալով, ինչը արտացոլված է նրա արտահանման ավելի բարձր կապիտալազինվածության մեջ՝ 5.9՝ ներմուծման 4.6-ի փոխարեն:
- Բարձր եկամտով երկրների համեմատ (հիմնականում ՏՀՋԿ երկրներն են) Հայաստանը ավելի հարուստ է աշխատուժով, ինչը արտացոլվում է նրա արտահանման ավելի ցածր կապիտալազինվածության մեջ՝ 2.9՝ ներմուծման 4.0-ի դիմաց:

Ըստ էության, ընդհանուր արտահանման և ներմուծման կապիտալազինվածությունների փոքր տարբերությունների պատճառը երկու տարբեր խումբ երկրների առկայությունն է (աղյուսակ 6):

Սակայն մինչև Հեքշեր-Օլինի տեսության եզրակացությունների քննարկմանը անցնելը, անհրաժեշտ է նաև ուսումնասիրել արտաքին առևտուրը՝ պարզելու համար վերջինիս մեջ ներճյուղային առևտրի տեսակարար կշիռը, որը չի ենթարկվում Հեքշեր-Օլինի մոդելի տրամաբանությանը: Ներճյուղային առևտուր (Intra-industry trade) ասելով հասկանում ենք արտաքին առևտրի այն մասը, որն իրականացվում է տարբերակված (դիֆերենցված) ապրանքներով, ի տարբերություն միջճյուղային առևտրի (Inter-industry trade), որտեղ առևտուրը տեղի է ունենում ավելի միատարր (հոմոգեն) ապրանքներով: Այսինքն՝ ներճյուղային առևտուրը հիմնված է ոչ թե էժան ռեսուրսի առկայությամբ պայմանավորված համեմատական առավելության վրա, այլ սպառողների տարբերակված նախասիրությունների վրա, որոնք, օրինակ, Եվրոպայում կարող են նախընտրել ճապոնական ավտոմեքենաներ, իսկ Ճապոնիայում՝ եվրոպական:

Տարբերակված ապրանքների առևտուրը ցույց տվող ներճյուղային առևտրի գործակցի բանաձևը հետևյալն է.

$$IIT = 1 - \frac{|Exp - Imp|}{Exp + Imp},$$

որտեղ՝
IIT – ներճյուղային առևտրի գործակիցն է,
Exp-ն՝ արտահանման արժեքը,
Imp-ն՝ ներմուծման արժեքը:

Արտահանման կամ ներմուծման բացակայության (ամբողջությամբ միջճյուղային կամ Հեքշեր-Օլինի առևտուր) դեպքում գործակիցը հավասար է 0-ի, իսկ միմյանց հավասար լինելու դեպքում (ամբողջությամբ ներճյուղային առևտուր) գործակիցը հավասար է 1-ի:

Աղյուսակ 8. Հայաստանի ներճյուղային առևտրի գործակիցները՝ ըստ երկրների խմբերի 2002 թվականի արտաքին առևտրի տվյալներով

Ներճյուղային առևտրի գործակիցներ 2002 թ. (%)	L	LM	UM	H	Ընդհանուր
Գյուղատնտեսություն	***8.9%***	***4.5%***	***4.8%***	***12.9%***	***7.5%***
Սննդի վերամշակում	62.7%	65.6%	***7.2%***	***32.0%***	82.1%
Քիմիական արդյունաբերություն	***31.2%***	***29.5%***	***8.9%***	***6.3%***	***18.8%***
Թեթև արդյունաբերություն	56.7%	***42.2%***	***47.7%***	87.8%	93.3%
Մեքենաներ, սարքեր, տրանսպորտ	51.7%	75.6%	***18.3%***	***35.8%***	55.1%
Լեռնահանքային արդյունաբերություն	67.9%	***19.9%***	***0.0%***	60.5%	***39.7%***
Ոչ թանկարժեք մետաղներ	***1.1%***	55.1%	73.2%	***49.2%***	89.6%
Այլ արդյունաբերություն	***25.8%***	***24.0%***	***11.0%***	***18.8%***	***21.3%***
Թանկարժեք քարեր և մետաղներ	***30.5%***	***17.3%***	***29.9%***	***86.8%***	90.5%
Ներճյուղային առևտրի գործակից, առ. գյուղ.	***34.8%***	***35.1%***	***11.7%***	65.3%	55.9%
առանց թանկարժեք քարերի և մետաղների	***46.6%***	***40.9%***	***11.9%***	***41.6%***	***40.5%***
ներառ. թանկարժեք քարերի և մետաղների կշիռը	***34.7%***	***34.5%***	***10.7%***	***17.0%***	***26.1%***

Այսպիսով, ըստ աղյուսակ 8-ի, ներճյուղային առևտուրը Հայաստանի առևտրում (առանց գյուղատնտեսական ապրանքների առևտրի) կազմում է 55.9 տոկոս: Սակայն, քանի որ «Թանկարժեք քարեր և մետաղներ» ճյուղի առևտրի մասին ունենք այն տեղեկատվությունը, որ այս ճյուղում տեղի է ունենում ոչ թե ներճյուղային առևտուր, այլ հումքի ներմուծում, վերամշակում և արտահանում, մենք հաշվարկել ենք նաև ճյուղի ներճյուղային առևտրի գործակիցը՝ առանց վերոնշյալ ճյուղի: Առանց այդ ճյուղի՝ գործակիցը կազմել է 40.5 տոկոս, իսկ եթե ներառենք նաև այդ ճյուղը՝ իր կշռով՝ էլ ավելի ցածր՝ 26.1 տոկոս: Փաստորեն, կարելի է պայմանականորեն արձանագրել, որ Հայաստանի արտաքին առևտրի ընդամենը 25-40 տոկոսն է ներճյուղային առևտուր[14], իսկ 60-75 տոկոսը՝ միջճյուղային առևտուր է: Սա թույլ է տալիս բավարար ճշտությամբ պնդել, որ Հեքշեր-Օլինի տեսության հիմնական եզրահանգումները պետք է կիրառելի լինեն Հայաստանում, ինչը կփորձենք ապացուցել հաջորդ գլխում:

6. Հեքշեր-Օլինի տեսությունից բխող եզրահանգումները Հայաստանի համար

1. Հայաստանի՝ աշխատուժով հարուստ երկիր լինելու և արտահանման աշխատատար լինելու հանգամանքը հաշվի առնելով՝ կարելի է հանգել հետևյալ եզրակացության՝ աշխատավարձ/տոկոսադրույք հարաբերությունը կավելանա միայն արտահանման աճի արդյունքում: Այդ գծապատկերը բերված է Հավելված 3-ում, ըստ որի՝ արտահանման 1 մլն դոլարի ավելացումը հանգեցնում է աշխատավարձ/տոկոսադրույք գործակցի 0.0056-ով ավելացման կամ նույն տոկոսադրույքների պայմաններում՝ աշխատավարձերի ավելացման 0.09 ԱՄՆ դոլարով: Հաշվարկելով այս գործակիցը ըստ առաձգականության, այսինքն՝ տոկոսային փոփոխությունների[15], կստանանք, որ արտահանման 1 տոկոս աճի դեպքում աշխատավարձ/տոկոսադրույք հարաբերությունը աճում է մոտ 1.1 տոկոսով, այսինքն՝ այս երկու ցուցանիշների միջև գոյություն ունի ավելի քան միավոր առաձգականություն:

2. Ընդհանուր առմամբ, տնտեսագիտության տեսությունից[16] հայտնի է, որ գների մակարդակները տարբեր երկրներում պայմանավորված են ոչ արտահանելի ապրանքների գներով, որոնք, իրենց հերթին, կախված են աշխատավարձերի մակարդակից: Այս հիմնական գաղափարը կիրառելով մեր մոդելում՝ կարող ենք պնդել, որ գների մակարդակները երկրի աշխատավարձ/տոկոսադրույք հարաբերակցությունից կախված են ուղղակիորեն, քանի որ նախ՝ ոչ արտահանելի ապրանքների հիմնական մասը աշխատատար ապրանքներ են, երկրորդ՝ աշխատավարձ ստացողներն ունեն ավելի բարձր սպառման սահմանային հակում (երկրի գների մակարդակի վրա ազդելու տեսանկյունից), քան տոկոսավճար ստացողները:

Այս եզրակացությունը ստուգելու համար նույնպես ներկայացված է երկրների համեմատական գծապատկեր (հավելված 4): Այս գծապատկերից բխում է, որ գների մակարդակները երկրներում կախված են աշխատավարձ/տոկոսադրույք հարաբերակցությունից՝ վերջինիս 1 տոկոսով աճը[17] հանգեցնում է ԱՄՆ գների նկատմամբ 0.13 տոկոսային կետով աճի:

3. Վերջապես, անհրաժեշտություն կա պարզելու, թե ինչ գործոններով է պայմանավորված աշխատավարձերի և գների հարաբերակցությունը երկրներում: Առաջին գործոնը արտահանման ծավալներն են, ինչպես նշվեց կետ 1-ում: Սակայն այս դեպքում, մենք փորձ ենք արել նաև որոշակիորեն նվազեցնել Հեքշեր-Օլինի տեսության նախապայմանների սահմանափակումները և դիտարկել ենք արտադրության ռեսուրսների փոփոխության դեպքը, որը կարող է տեղի ունենալ ինչպես ժամանակի ընթացքում բնական գործընթացների (բնակչության աճ, կապիտալի մաշվածք), այնպես էլ երկրների միջև արտադրական ռեսուրսների վերաբաշխման հետևանքներով (միգրացիա, ուղղակի օտարերկրյա ներդրումներ): Բնակչու-

---

[14] Պետք է հաշվի առնել նաև ապրանքների՝ գոյություն ունեցող սեզոնայնությունը, այսինքն՝ կան ապրանքներ, որոնք իրենց սեզոնային բնույթի պատճառով արտահանվում են տարվա որոշակի ժամանակաշրջանում և ներմուծվում՝ մյուս հատվածում, օրինակ՝ գյուղատնտեսական մթերքները: Նման ապրանքների գոյությունը նույնպես ավելացնում է ընդհանուր ներճյուղային առևտրի գործակիցը:

[15] Առաձգականությունը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝ $\frac{\Delta Y}{\Delta X} \times \frac{X}{Y} = 0.0056 \times \frac{688.61}{3.509} = 1.1$ *:*

[16] Մասնավորապես այս պնդումը ներառված է արտադրողականության, աշխատավարձերի և գների մոդելում, որը տնտեսագիտական գրականության մեջ հայտնի է, որպես TNT (tradable-non-tradable) մոդել (տես Meade J. "The Price Adjustment and the Australian Balance of Payments", Economic Record, 1956, Nov.), իսկ արտահանելի հատվածում արտադրողականության աճը, որը հանգեցնում է տնտեսությունում աշխատավարձերի աճի և ոչ արտահանելի հատվածում՝ գների աճի, հայտնի է որպես Սամուելսոն-Բալասայի էֆեկտ և կիրառվում է բոլոր երկրներում (տես Samuelson P. "Theoretical Notes on Trade Problems", The Review of Economics and Statistics 46, 1964, May, N2, էջ 145-154, Balassa B., "The Purchasing-Power Parity Doctrine: a Reappraisal", Journal of Political Economy, 1964, Dec.):

[17] Գծապատկերում աշխատավարձ/տոկոսադրույք հարաբերությունը ներկայացված է լոգարիթմական տեսքով:

թյան միգրացիայի մասին հավաստի տվյալների բացակայության պատճառով և, ենթադրելով, որ բնակչության բնական աճը տարբեր երկրներում մոտավորապես նույն տեմպով է տեղի ունենում (կամ գոնե տարբերությունները բավականին փոքր են), հիմնական ազդող փոփոխականները կհանդիսանան կապիտալի միջազգային շարժը և կապիտալի կուտակման կայուն տեմպերը երկրի ներսում: Այս փոփոխականները բնութագրելու համար ընտրվել է կապիտալի համախառն կուտակում/ՀՆԱ ցուցանիշը, որը ներառում է և՛ արտաքին, և՛ ներքին կապիտալի կուտակման, ինչպես նաև ամորտիզացիայի տեմպերը:

Հավելված 5-ում ներկայացված է երկրների գծապատկերը ըստ աշխատավարձ/տոկոսադրույք (լոգարիթմական տեսքով) և ներդրումներ/ՀՆԱ ցուցանիշների:

Պետք է նշել բավականին հետաքրքիր փաստ: Գծապատկերում կարելի է պարզ տեսնել, որ գոյություն ունեն 2 խումբ երկրներ՝ զարգացող երկրներ (I խումբ), որոնց աշխատավարձ/տոկոսադրույք հարաբերությունը ուղղակիորեն կախված է ներդրումներ/ՀՆԱ ցուցանիշից և զարգացած երկրներ (II խումբ), որտեղ այդ կապը բացակայում է: Սա բացատրվում է այն փաստով, որ զարգացած երկրներում առևտուրը իրականացվում է հիմնականում դիֆերենցված ապրանքներով, այսինքն՝ տեղի է ունենում ներճյուղային առևտուր, մինչդեռ զարգացող երկրները կուտակում են կապիտալ, և նրանց արտահանման, հետևաբար նաև աշխատավարձերի մակարդակները ուղղակիորեն կախված են կուտակված կապիտալի մեծությունից:

Բացառելով զարգացած երկրները՝ կարելի է պնդել, որ երկարաժամկետ հատվածում ներդրումներ/ՀՆԱ ցուցանիշի 1 տոկոսային կետով ավելացումը հանգեցնում է աշխատավարձ/տոկոսադրույք գործակցի 18.2 տոկոսով աճի:

4. Նախորդ կետում երկրների տարանջատման պատճառով վերահաշվարկվեց գների մակարդակի վրա աշխատավարձ/տոկոսադրույք ցուցանիշի ազդեցությունը՝ բացառելով II խումբ երկրների տվյալները, և գործակիցը դարձավ 0.10: Այսպիսով, գների վրա հիմնականում ազդում է ներդրումներ/ՀՆԱ ցուցանիշը, որը կազմում է 18.195 x 0.0951 = 1.73: Դա նշանակում է՝ ներդրումներ/ՀՆԱ ցուցանիշի 1 տոկոսային կետով աճը հանգեցնում է ԱՄՆ գների նկատմամբ 1.73 տոկոսային կետով աճի[18]: Եթե ընդունենք ԱՄՆ գները անփոփոխ, ապա կարող ենք ասել, որ ներդրումներ/ՀՆԱ ցուցանիշի կայուն ավելացումը, այլ հավասար պայմաններում, հանգեցնում է ԱՄՆ գների նկատմամբ երկրի հարաբերական դոլարային գների ճեղքվածքի կրճատման (բնականաբար՝ որոշակի լագով), ինչը նշանակում է իրական փոխարժեքի աճ (բացառելով գործընկեր երկրների ազդեցությունը): Այս գծապատկերը ներկայացված է Հավելված 6-ում, որտեղ պատկերված է վերոնշյալ կապը:

5. Սակայն նույնիսկ ներդրումներ/ՀՆԱ 20 տոկոս հարաբերակցությունը (որին մոտ է Հայաստանի 2004 թվականի ցուցանիշը) դեռևս բավականին ցածր ցուցանիշ է՝ համեմատած արագ զարգացող երկրների հետ, որոնց համապատասխան ցուցանիշը կազմում է 22.6 տոկոսից (Լիտվա) մինչև 33.7 տոկոս (Սինգապուր):

Այսպիսով, կարող ենք ասել, որ Հեքշեր-Օլինի տեսությունը և դրանից բխող եզրակացությունները կիրառելի են Հայաստանում, այսինքն՝ Հայաստանը աշխատուժով հարուստ երկիր է, իսկ արտաքին առևտուրը հատվածավորված է ըստ երկրների խմբերի, այսինքն՝ միջինից ցածր եկամուտներով երկրներ Հայաստանը արտահանում է կապիտալատար ապրանքներ (քանի որ նրանց նկատմամբ համեմատաբար հարուստ է կապիտալով), իսկ զարգացած երկրներ արտահանում է աշխատատար ապրանքներ (քանի որ նրանց նկատմամբ համեմատաբար հարուստ է աշխատուժով): Սակայն ներճյուղային առևտրի տոկոսային հարաբերությունը բավականին ցածր է, հետևաբար արտաքին առևտուրն ունի Հեքշեր-Օլինի տեսությամբ բացատրվող կառուցվածք:

Ամեն դեպքում, տարբեր երկրների աշխատավարձերի և տոկոսադրույքների մակարդակների համեմատությունը ցույց է տալիս, որ Հայաստանում գոյություն ունի իրական և պոտենցիալ աշխատավարձերի մեծ ճեղքվածք (աշխատավարձերի մակարդակը ավելի ցածր է, քան պետք է լիներ նման տոկոսադրույքների պայմաններում, կամ տոկոսադրույքների մակարդակն ավելի ցածր է նման աշխատավարձի պայմաններում), որի պատճառը, մեր կարծիքով, մասնավոր տրանսֆերտների ներհոսքն է:

Ընդլայնելով Հեքշեր-Օլինի տեսությունը՝ կարելի է ասել, որ Հայաստանի աշխատավարձերի մակարդակը կախված է երկրում կապիտալի ներդրումներից, որը պայմանավորում է նաև երկրի դոլարային գների մակարդակը կամ, այլ կերպ ասած, իրական փոխարժեքը: Սակայն ներդրումների ցուցանիշը Հայաստանում դեռևս բավականին ցածր է՝ կայուն, երկարաժամկետ և, ամենակարևորը, արագ տնտեսական աճ ապահովելու համար:

---

[18] Այս գործակիցը վերաբերում է միայն զարգացող երկրներին: Հավելված 5-ում պատկերված գծապատկերի միջոցով ցույց տվեցինք, որ II խումբ երկրներում աշխատավարձ/տոկոսադրույք հարաբերությունը պայմանավորված չէ ներդրումներ/ՀՆԱ հարաբերակցությամբ:

Երկրի կոդը	Երկրի անվանումը	Տարեկան եկամուտը	Երկրի խումբը
0	Անհայտ երկիր*		L
8	Ալբանիա	1340	LM
32	Արգենտինա	6940	UM
36	Ավստրալիա	19900	H
40	Ավստրիա	23940	H
44	Բահամյան կղզիներ*		H
48	Բահրեյն	11130	H
50	Բանգլադեշ	360	L
56	Բելգիա	23850	H
76	Բրազիլիա	3070	UM
92	Վիրջինյան կղզիներ*		H
100	Բուլղարիա	1650	LM
112	Բելառուս	1290	LM
124	Կանադա	21930	H
144	Շրի-Լանկա	880	LM
150	Կամբոջա	270	L
156	Չինաստան	890	LM
158	Թայվան*		H
188	Կոստա-Ռիկա	4060	UM
191	Խորվաթիա	4550	UM
192	Կուբա*		LM
196	Կիպրոս	12320	H
203	Չեխիա	5310	UM
208	Դանիա	30600	H
212	Դոմինիկա	3200	UM
214	Դոմինիկյան հանրապետություն	2230	LM
218	Էկվադոր	1080	LM
233	Էստոնիա	3870	UM
246	Ֆինլանդիա	23780	H
250	Ֆրանսիա	22730	H
268	Վրաստան	590	L
280	Գերմանիա	23560	H
292	Ջիբրալթար*		H
300	Հունաստան	11430	H
336	Վատիկան*		H
344	Հոնկոնգ	25330	H
348	Հունգարիա	4830	UM
352	Իսլանդիա	28910	H
356	Հնդկաստան	460	L
360	Ինդոնեզիա	690	L
364	Իրան	1680	LM
368	Իրաք*		LM
372	Իռլանդիա	22850	H
376	Իսրայել	16750	H
380	Իտալիա	19390	H


384	Կոտ-դ'Իվուար	630	L
392	Ճապոնիա	35610	H
398	Ղազախստան	1350	LM
400	Հորդանան	1750	LM
408	ԿԺԴՀ*		L
410	Կորեայի Հանրապետ.	9460	H
414	Քուվեյթ	18270	H
417	Ղրղզստան	280	L
422	Լիբանան	4010	UM
428	Լատվիա	3230	UM
430	Լիբերիա	140	L
438	Լիխտենշտեյն*		H
440	Լիտվա	3350	UM
442	Լյուքսեմբուրգ	39840	H
458	Մալայզիա	3330	UM
484	Մեքսիկա	5530	UM
492	Մոնակո*		H
496	Մոնղոլիա	400	L
498	Մոլդովա	400	L
512	Օման*		UM
524	Նեպալ	250	L
528	Նիդերլանդներ	24330	H
554	Նոր Զելանդիա	13250	H
558	Նիկարագուա*		L
566	Նիգերիա	290	L
578	Նորվեգիա	35630	H
586	Պակիստան	420	L
591	Պանամա	3260	UM
608	Ֆիլիպիններ	1030	LM
616	Լեհաստան	4230	UM
620	Պորտուգալիա	10900	H
642	Ռումինիա	1720	LM
643	Ռուսաստան	1750	LM
660	Անգլիա	25120	H
682	Սաուդյան Արաբիա	8460	UM
690	Սեյշելյան կղզիներ	6530	UM
700	Անգլիա	25120	H
702	Սինգապուր	21500	H
703	Սլովակիա	3760	UM
704	Վիետնամ	410	L
705	Սլովենիա	9760	H
710	Հարավ Աֆրիկյան հանր.	2820	LM
724	Իսպանիա	14300	H
752	Շվեդիա	25400	H
756	Շվեյցարիա	38330	H
760	Սիրիա	1040	LM
762	Տաջիկստան	180	L
764	Թաիլանդ	1940	LM

784	Միաց.Արաբ. Էմիրաթներ*		H
792	Թուրքիա	2530	LM
795	Թուրքմենստան	950	LM
800	Թունիս	2070	LM
804	Ուկրաինա	720	L
807	Մակեդոնիա	1690	LM
818	Եգիպտոս	1530	LM
826	Մեծ Բրիտանիա	25120	H
833	Մեն կղզի*		UM
834	Տանզանիա	270	L
840	ԱՄՆ	34280	H
850	Վիրջինյան կղզիներ*		H
858	Ուրուգվայ	5710	UM
860	Ուզբեկստան	550	L
862	Վենեսուելա	4760	UM
891	Հարավսլավիա	930	LM
894	Զամբիա	320	L
999	Արցախ*		L


** Տեղեկատվության բացակայության պատճառով այս երկրները դասակարգվել են ըստ փորձագիտական գնահատականների:*

Օգտագործված գրականություն


1. Êðóãìàí Ï., Îáñòôåëüä Ì. Ìåæäóíàðîäíàÿ ýêîíîìèêà: Òåîðèÿ è ïîëèòèêà, Ñàíêò-Ïåòåðáóðã, Ïèòåð, 2003
2. Êèðååâ À. Ìåæäóíàðîäíàÿ ýêîíîìèêà, Ìîñêâà, Ìåæäóíàðîäíûå îòíîøåíèÿ, 2001
3. Ïóãåëü Ò., Ëèíäåðò Ï. Ìåæäóíàðîäíàÿ ýêîíîìèêà, Ìîñêâà, Äåëî è Ñåðâèñ, 2003
4. Ñàêñ Äæ., Ëàððåí Ô. Ìàêðîýêîíîìèêà. Ãëîáàëüíûé ïîäõîä, Ìîñêâà, Äåëî, 1996
5. Salvatore D. International Economics, New York, McMillan, 1995
6. Silberberg E., Suen W. The Structure of Economics: a Mathematical Analysis, New York, McGraw Hill, 2000


Երկրների աշխատավարձերը և տոկոսադրույքները 1999 թվականին
Աշխատավարձ
Վարկի տոկոսադրույք
y = 25877x-1.5945
R2 = 0.6908
Դանիա
Նորվեգիա
Շվեյցարիա
Գերմանիա
Ճապոնիա
Ֆինլանդիա
Բելգիա
Նիդերլանդներ
Ավստրիա
Շվեդիա
ԱՄՆ
Մեծ Բրիտանիա
Կանադա
Ավստրալիա
Իռլանդիա
Ֆրանսիա
Իտալիա
Իսրայել
Իսպանիա
Նոր Զելանդիա
Սինգապուր
Սլովենիա
Կորեա
Պորտուգալիա
Աղրբեջան
Լեհաստան
Էստոնիա
Չեխիա
Սլովակիա
Մեքսիկա
Մոլդովա
Վրաստան
Լիտվա
Լատվիա
Սլովենիա
Ռուսաստան
Բելառուս
Ուկրաինա
Ղրղզստան
Ռումինիա
Բրազիլիա
Շրի Լանկա
Ղազախստան
Հայաստան'00
Հայաստան'99
Հայաստան'98
Հայաստան'02-03
Հայաստան'01


Արտահանման և աշխատավարձ/տոկոսադրույք ցուցանիշի հարաբերակցությունը Հայաստանում 1998-2003 թվականներին




Երկրների աշխատավարձ/տոկոսադրույք հարաբերության և գների մակարդակի գծապատկերը



Երկրների աշխատավարձ/տոկոսադրույք հարաբերության և ներդրումներ/ՀՆԱ ցուցանիշի գծապատկերը 1999 թվականին



Մասնավոր ներդրումներ/ՀՆԱ և դոլարային գների գծապատկերը Հայաստանում 1996-2004 թվականներին



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍԸ*

Մարգարիտա Մամիկոնյան
Դրամավարկային քաղաքականության վարչություն

Տնտեսական ազատությունը արտադրելու, առքուվաճառք իրականացնելու, խնայողություններ և ներդրումներ անելու, իր եկամուտներից օգտվելու, իր երկրում և երկրից դուրս տնտեսավարող սուբյեկտների հետ տնտեսական կապեր հաստատելու, գներ սահմանելու և պայմանագրի կողմերի փոխադարձ համաձայնությամբ ցանկացած դրամական միավոր օգտագործելու ազատությունն է՝ հիմնված մասնավոր սեփականության անձեռնմխելիության իրավունքի վրա: Շուկայի մասնակիցների տնտեսական ազատությունը սահմանափակվում է պետության, ինչպես նաև պետության հետ մրցակցող ոչ պետական մարմինների կողմից: Պետությունը տնտեսական ազատությունը սահմանափակում է այնպիսի միջոցներով, ինչպիսիք են՝ մասնավոր սեփականության բռնագրավումը, պայմանագրերի չկատարումը, տնտեսական գործունեության համար անհավասար և անկանխատեսելի փոփոխվող պայմանների ստեղծումը, ուղղակի պետական հարկավորումը, պետական կարգավորումը, արտաքին տնտեսական գործունեության հովանավորչությունը և այլն:

Տնտեսական ազատության տարբեր բաղադրիչների ուսումնասիրությանը պարբերաբար անդրադառնում են մի շարք միջազգային ֆինանսական հաստատություններ, գիտահետազոտական կառույցներ (think-tanks) և ոչ կառավարական կազմակերպություններ, ինչպիսիք են՝ Եվրոբանկը, Freedom House-ը, Transparency International-ը, Fraser Institute-ը և Heritage Foundation-ը: Դրանք գնահատում և հրապարակում են տարբեր երկրների տնտեսական, քաղաքական ու սոցիալական զարգացումները նկարագրող ինդեքսներ:

Եվրոբանկը, վերլուծելով Արևելյան Եվրոպայի և նախկին ԽՍՀՄ 27 երկրների անցումային տնտեսություններում շուկայական բարեփոխումների դինամիկ գործընթացը, սկսած 1994 թվականից՝ գնահատում է այդ երկրների կառուցվածքային և ինստիտուցիոնալ բարեփոխումների ինդեքսը[1]: Այդ նպատակով դիտարկվում են շուկայական տնտեսության չորս հիմնական տարրեր՝ շուկաները ու առևտուրը, ձեռնարկությունները, ենթակառույցները և ֆինանսական հաստատությունները: Ամփոփվում են 9 ցուցանիշներ, որոնց չափման սանդղակի միջակայքը սահմանված է 1-ից մինչև 4+, որտեղ 1-ը ցույց է տալիս, որ պլանային տնտեսության համեմատ այդ երկրում գրեթե ոչինչ չի փոխվել, իսկ 4+-ը ներկայացնում է ինդուստրացված շուկայական տնտեսության ստանդարտը: Հայաստանում և նախկին ԽՍՀՄ մյուս երկրներում վերոնշյալ ցուցանիշների համեմատական գնահատականները տրված են աղյուսակներ 1 - 2-ում: Հայաստանում իրականացված կառուցվածքային և ինստիտուցիոնալ բարեփոխումներն ակնհայտ են. 1995 թ. համեմատ 2003 թ. բոլոր 9 ցուցանիշների ինդեքսները զգալիորեն բարելավվել են (աղ. 1), իսկ գների, արժութային և առևտրի ազատականացման մակարդակով Հայաստանը համապատասխանում է ինդուստրացված շուկայական տնտեսության չափանիշներին (աղ. 2):

Freedom House-ը ԱՄՆ իշխանությունների աջակցությամբ գործող հետազոտական ինստիտուտ է, որը հիմնականում հետևում է աշխարհի քաղաքական գործընթացներին: Freedom House-ը 1978 թ-ից սկսած հրապարակում է «Ազատությունը աշխարհում» (***Freedom in the World***) տարեկան հաշվետվությունը[2], որում ներկայացվում է աշխարհի 192 երկրներում քաղաքական իրավունքների և քաղաքացիական ազատությունների համեմատական գնահատականը: «Քաղաքական իրավունքների» և «Քաղաքացիական ազատությունների» ինդեքսները գնահատվում են առանձին-առանձին, այնուհետև հաշվարկվում է մեկ միասնական ինդեքս (1-ից մինչև 7 գնահատման համակարգով): Ընդ որում, 1 - 2.5 գնահատված երկրները համարվում են ազատ, 3 - 5՝ մասնակի ազատ և 5.5 - 7՝ ոչ ազատ: 2004 թվականին Հայաստանի ինչպես միասնական, այնպես էլ «Քաղաքական իրավունքների» և «Քաղաքացիական ազատությունների» ինդեքսները կազմել են 4, այսինքն՝ Հայաստանը այս առումով դիտարկվում է որպես «մասնակի ազատ» երկիր (աղ. 3):

** Հեղինակների տեսակետները կարող են չհամընկնել ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական դիրքորոշմանը:*
[1] Տե՛ս Transition report 2003 // Integration and regional cooperation. EBRD 2003. էջ107-218:
[2] Տե՛ս Freedom in the World 2003. The annual survey of political rights and civil liberties // Freedom House, 2004 (http://www.freedomhouse.org/research/index.htm):

Freedom House-ը հրապարակում է նաև «*Nations in Transit*» տարեկան հաշվետվությունը[3], որն ընդգրկուն, համեմատական և բազմաչափ հետազոտություն է, որտեղ ներկայացվում է դեմոկրատիայի առաջընթացի ինդեքսը նախկինում կոմունիստական ռեժիմ ունեցող 27 երկրներում: Դա համախառն ինդեքս է և ընդգրկում է հետևյալ 6 ենթագործոնների վարկանիշների միջինը. ընտրությունների գործընթաց, քաղաքացիական հասարակություն, լրատվամիջոցների անկախություն, կառավարում (governance), կոռուպցիա և սահմանադրական-օրենսդրական-դատական կառույցներ: Գնահատումը կատարվում է 1 - 7 միավորանոց սանդղակով: 1-ը դեմոկրատական զարգացումների ամենաբարձր, իսկ 7-ը՝ ամենացածր մակարդակն է:

Հարկ է նշել, որ նախորդ տարիներին, դիտարկվող երկրներում բարեփոխումների վերլուծության ժամանակ Freedom House-ը օգտագործում էր երկու ագրեգացված գնահատականներ՝ «Դեմոկրատացում» (ընտրությունների գործընթացի, քաղաքացիական հասարակության, լրատվամիջոցների անկախության և կառավարման (governance) ենթագնահատականների միջինը) և «Իրավունքի նորմեր» (կոռուպցիայի և սահմանադրական-օրենսդրական-դատական կառույցների ենթագնահատականների միջինը): Սակայն «Nations in Transit»-ի 2004 թ. հրապարակման մեջ Freedom House-ը ներկայացնում է «դեմոկրատիայի» նոր, համախառն գնահատական, որը բոլոր վեց ենթագնահատականների միջինն է[4]: Հիմնվելով այդ նոր գնահատականի վրա և օգտագործելով 1-ից մինչև 7 միավոր ունեցող գնահատման համակարգը՝ Freedom House-ը սահմանում է երկրների ռեժիմների հետևյալ տեսակները. 1-2 գնահատական ունեցող երկրներում ռեժիմը բնութագրում է որպես «կոնսոլիդացված դեմոկրատիա», 3-ի դեպքում՝ «մասնակի կամ կիսակոնսոլիդացված դեմոկրատիա», 4-ի դեպքում՝ «անցումային կառավարություն կամ հիբրիդ ռեժիմ», 5-ի դեպքում՝ «կիսակոնսոլիդացված ավտորիտար ռեժիմ», իսկ 6 - 7-ի դեպքում՝ «կոնսոլիդացված ավտորիտար ռեժիմ»:

2004 թվականին Հայաստանում դեմոկրատիայի առաջընթացի համախառն ինդեքսը կազմել է 5 միավոր, այսինքն, ըստ վերոնշյալ դասակարգման, Հայաստանը դասվում է «կիսակոնսոլիդացված ավտորիտար ռեժիմ» ունեցող երկրների շարքը: Ընդ որում, ընտրությունների գործընթացը Հայաստանում գնահատվել է 5.75, քաղաքացիական հասարակության զարգացումները՝ 3.50, լրատվամիջոցների անկախությունը՝ 5.25, կառավարման (governance) մակարդակը՝ 4.75, կոռուպցիայի մակարդակը՝ 5 և սահմանադրական-օրենսդրական-դատական կառույցների գործունեությունը՝ 5.75 միավոր (աղ. 4):

Transparency International-ը կոռուպցիայի դեմ պայքարող միջազգային ոչ կառավարական կազմակերպություն է, որը, սկսած 1993 թ-ից, գնահատում և հրապարակում է 133 երկրներում «կոռուպցիայի ընկալման ինդեքսը» (Corruption Perception Index (CPI))[5]: Վերջինս հավաքական ինդեքս է, որի գնահատման հիմքում միջազգային ճանաչում ունեցող անկախ հաստատությունների կողմից իրականացված հարցումներն են: Այսպես օրինակ, 2003 թ. ինդեքսի գնահատման ժամանակ Transparency International-ը օգտվել է 13 հաստատությունների կողմից (Համաշխարհային բանկ, Եվրոբանկ, World Economic Forum, Economist Intelligence Unit, Freedom House, PricewaterhouseCoopers, Columbia University, Institute for Management Development (IMD, Switzerland), Information International և այլն) աշխարհի 102 երկրներում կաշառակերության և կոռուպցիայի վերաբերյալ իրականացված 17 ընդգրկուն հարցումների արդյունքներից: Հարցմանը մասնակցել են այդ երկրների գործարար առաջնորդներ, վերին և միջին օղակի մենեջերներ, գործող տեղական և միջազգային ընկերություններ, ակադեմիական փորձագետ-վերլուծողներ, լրագրողներ: Ինդեքսի միջակայքը սահմանված է 10-ից մինչև 0, ընդ որում՝ 10-ը համապատասխանում է կոռուպցիայից լիովին զերծ երկրներին, իսկ 0-ն՝ լիովին կոռումպացված երկրներին: Transparency International-ը հրապարակում է ոչ միայն «Կոռուպցիայի ընկալման» ինդեքսը, այլ նաև երկրի ինդեքսը գնահատելիս իրականացված հարցումների թիվը, հարցմանը մասնակցած խմբերի գնահատումների տարբերության ստանդարտ շեղումը. որքան մեծ է ստանդարտ շեղումը, այնքան մեծ է երկրում կոռուպցիայի ընկալման տարբերությունը: Հայաստանում կոռուպցիայի ընկալման ինդեքսը 2003 թ. համար գնահատվել է 3.0: Համեմատելով նախորդ տարվա 2.5 միավորի հետ, կարող ենք արձանագրել, որ, ըստ Transparency International կազմակերպության փորձագետների, 2003 թ. կոռուպցիայի մակարդակը Հայաստանում նվազել է (աղ. 5), սակայն Հայաստանը այդ ինդեքսով առայժմ զիջում է Մերձբալթյան երկրներին և Բելառուսին:

---

[3] *Տե՛ս Nations in Transit 2004 // Freedom House, 2004 (http://www.freedomhouse.org/research/nattransit.htm):*
[4] *Տե՛ս Nations in Transit 2004 // Freedom House, 2004 (http://www.freedomhouse.org/research/nitransit/2004/guide2004.pdf):*
[5] *Տե՛ս CPI index 2003//Transparency international, 2003 (http://www.transparency.org/cpi/index.html):*

Fraser Institute-ը կանադական անկախ հետազոտական հաստատություն է, որը 1988 թ-ից ուսումնասիրում է տնտեսական և սոցիալական առաջընթացի վրա մրցակցային շուկաների ազդեցությունը[6]: Այս ինստիտուտը գնահատում ու առանձին հաշվետվությամբ հրապարակում է 123 երկրների[7] տնտեսական ազատության ինդեքսները, որոնց դինամիկան ցույց է տալիս՝ նախորդ 25 տարիների ընթացքում տնտեսական ազատությունն աշխարհում նվազել է, թե՝ աճել, արդյոք աղքատները շահում են երկրի տնտեսական ազատականացումից, ինչպե՞ս է տնտեսական ազատությունն ազդում բարեկեցության, ներդրումների, արտադրողականության և եկամտի բաշխվածության վրա: Հարկ է նշել, որ Fraser Institute-ը Հայաստանի տնտեսական ազատության ինդեքսը չի հաշվարկում:

Heritage Foundation-ը աջ կողմնորոշման ամերիկյան հետազոտական ինստիտուտ է, որը, սկսած 1995 թ., Wall Street Journal-ի հետ համատեղ յուրաքանչյուր տարի հաշվարկում և առանձին պարբերականով հրապարակում է 161 երկրների **տնտեսական ազատության ինդեքսները[8]:** Ինդեքսի գնահատման համար հիմք են ընդունվում տարբեր պաշտոնական աղբյուրները:

Heritage Foundation-ը Հայաստանի տնտեսական ազատության ինդեքսը գնահատում է՝ սկսած 1996 թ.: Համամիտ չլինելով Հայաստանում իրականացվող բարեփոխումների ընթացքի և արդյունքների մասին Heritage Foundation-ի որոշ բնութագրումներին ու գնահատականներին, 1999 թվականից ՀՀ կենտրոնական բանկը ակտիվ գրագրություն է վարում Heritage Foundation-ի հետ՝ ներկայացնելով ՀՀ կենտրոնական բանկի կարծիքը ինչպես տնտեսական ազատության ինդեքսի հաշվարկման մեթոդաբանության, այնպես էլ յուրաքանչյուր գործոնի գնահատման համար հիմք ընդունվող աղբյուրի հավաստիության մասին: 2003 թ. սկսած՝ Heritage Foundation-ի հետ ՀՀ կենտրոնական բանկի համագործակցությանը միացել են նաև ՀՀ պաշտոնական այլ կառույցները՝ Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը, Առևտրի և տնտեսական զարգացման նախարարությունը, Արդարադատության նախարարությունը և Ազգային վիճակագրական ծառայությունը, որոնք Արտաքին գործերի նախարարության կոորդինացմամբ ներկայացնում են համապարփակ տեղեկատվություն Հայաստանի տնտեսության զարգացումների մասին:

Heritage Foundation-ի կողմից գնահատվող տնտեսական ազատության ինդեքսը ներառում է տնտեսության բոլոր հատվածները, ուստի առավել համապարփակ ինդեքս է: Մանրամասն ներկայացնենք այդ ինդեքսի և դրա առանձին մասեր կազմող գործոնների հաշվարկման մեթոդաբանությունը, այդ գործոնների գծով Հայաստանին տրված գնահատականը, դրա հիմնավորումը Heritage Foundation-ի փորձագետների կողմից, նշված գործոնների հաշվարկման մեթոդաբանության համարժեքության վերաբերյալ ՀՀ կենտրոնական բանկի առաջարկությունները և Հայաստանում ընթացող տնտեսական երևույթների մասին Heritage Foundation-ի փորձագետների եզրահանգումները:

Heritage Foundation-ը երկրների տնտեսական ազատության ինդեքսը գնահատելիս կիրառում է 1-ից մինչև 5 գնահատման համակարգ, ընդ որում՝ 1-ը ամենաազատն է, իսկ 5-ը՝ ամենասահմանափակը: Գնահատման ժամանակ օգտագործվում են 10 հիմնական գործոններ, որոնք ներառում են 50 անկախ տնտեսական ենթագործոններ: Այդ գործոններն են՝ առևտրի քաղաքականությունը, կառավարության հարկաբյուջետային բեռը, կառավարության միջամտությունը տնտեսությանը, դրամավարկային քաղաքականությունը, կապիտալ հոսքերը և օտարերկրյա ներդրումները, բանկային և ֆինանսական համակարգը, աշխատավարձի և գների քաղաքականությունները, սեփականության իրավունքը, կարգավորումը և ոչ ֆորմալ շուկան: Տնտեսական ազատության համախառն գնահատականը ստանալու համար վերցվում է այդ 10 հիմնական գործոնների գնահատականների միջինը: Յուրաքանչյուր երկրի գնահատականի կողքին դրվում է (-), (+) կամ «կայուն» նշանները, որոնք վկայում են նախորդ տարվա համեմատ այդ երկրի վիճակի վատթարացման, բարելավման կամ անփոփոխ լինելու մասին: Կան 4 խոշոր կատեգորիաներ, որոնց դասվում են երկրները՝ ըստ իրենց ինդեքսների. 1.99 և պակաս ինդեքս ունեցող երկրները համարվում են «ազատ», 2.0-ից մինչև 2.99՝ «հիմնականում ազատ», 3.0-ից մինչև 3.99՝ «հիմնականում ոչ ազատ», 4.0 և բարձր՝ «ճնշված» երկրներ:

2004 թ. ինդեքսի գնահատման համար Heritage Foundation-ի փորձագետները հիմք են ընդունել 2002 թ. հուլիսի 1-ից մինչև 2003 թ. հունիսի 30-ն ընկած ժամանակաշրջանի տնտեսական ցուցանիշները:

Heritage Foundation-ը Հայաստանի տնտեսական ազատության ինդեքսը 2004 թ. գնահատել է 2.63, որին համապատասխան՝ Հայաստանը դասվում է «հիմնականում ազատ» երկրների կատեգորիային (աղ. 6): Այս կատեգորիային են դասվում նաև նախկին ԽՍՀՄ երկրներից Էստոնիան, Լիտվան, Լատվիան (աղ.

[6] *Տե՛ս Economic Freedom of the World: 2004 Annual Report/ Fraser Institute, 2004 (http://www.fraserinstitute.ca/economicfreedom/index.asp?snav=ef):*
[7] *1988 թ-ին Fraser Institute-ի կողմից հետազոտվող երկրների թիվը կազմում էր 102, իսկ 2003 թ-ին՝ 123:*
[8] *Տե՛ս 2004 Index of Economic Freedom //Heritage Foundation, 2004 (http://www.heritage.org/research/features/index/downloads.html):*

9): Ընդ որում, վերջին 8 տարիներին Հայաստանի ինդեքսը 3.69-ից (1996 թ.) աստիճանաբար հասել է 2.63-ի, այսինքն, ըստ Heritage Foundation-ի դասակարգման, Հայաստանը տնտեսապես «հիմնականում ոչ ազատ» երկրից դարձել է «հիմնականում ազատ» երկիր (աղ. 6):

Հայաստանի տնտեսական ազատության ինդեքսի՝ 2.63-ի հիմքում Heritage Foundation-ը դրել է 10 հիմնական տնտեսական գործոնների հետևյալ բնութագրումները և հաշվարկը:

1. Առևտրի քաղաքականություն

Առևտրի քաղաքականության ազատականացման աստիճանը բնութագրելու համար Heritage Foundation-ը դիտարկում է 3 ենթագործոններ՝ միջին կշռված մաքսադրույքը, ոչ սակագնային խոչընդոտները և մաքսային ծառայություններում չարաշահումների մակարդակը[9]: Այս ցուցանիշների հիման վրա հաշվարկում են հովանավորչության մակարդակը տվյալ երկրում: Այդ ցուցանիշը՝

- գնահատվում է «1», կամ հովանավորչության մակարդակը համարվում է «շատ ցածր», երբ միջին կշռված մաքսադրույքը փոքր է կամ հավասար 4%-ի,
- գնահատվում է «2», կամ հովանավորչության մակարդակը համարվում է «ցածր», երբ միջին կշռված մաքսադրույքը մեծ է 4%-ից և փոքր է կամ հավասար 9%-ի,
- գնահատվում է «3», կամ հովանավորչության մակարդակը համարվում է «չափավոր», երբ միջին կշռված մաքսադրույքը մեծ է 9%-ից և փոքր է կամ հավասար 14%-ի,
- գնահատվում է «4», կամ հովանավորչության մակարդակը համարվում է «բարձր», երբ միջին կշռված մաքսադրույքը մեծ է 14%-ից և փոքր է կամ հավասար 19%-ի,
- գնահատվում է «5», կամ հովանավորչության մակարդակը համարվում է «շատ բարձր», երբ միջին կշռված մաքսադրույքը մեծ է 19%-ից, և երկրում գործում են շատ բարձր ոչ սակագնային խոչընդոտներ, որոնք, ըստ էության, փակում են շուկան ներմուծման համար:

Այս գործոնը 2000-2003 թթ. Հայաստանում գնահատվել է «1», այսինքն՝ ՀՀ-ն դասվել է ամենաազատական առևտրի քաղաքականություն վարող երկրների (Հոնկոնգ, Սինգապուր և Էստոնիա) շարքը: Սակայն 2004 թվականին «Առևտրի քաղաքականություն» գործոնը Հայաստանում գնահատվել է «2»: Այս գործոնը գնահատելիս Heritage-ի փորձագետները հիմք են ընդունել ԱՄՆ արտաքին գործերի նախարարության հաշվետվությունը այն մասին, որ թեև Հայաստանում «ներմուծումը ազատ է արգելքներից, քվոտաներից կամ լիցենզավորումից, սակայն գործարարները դժգոհում են դժվարաշարժ գործընթացներից և մաքսային պաշտոնյաների կողմից պահանջվող կաշառքներից»:

Սակայն, եթե նկատի ունենանք, որ, համաձայն Transparency International-ի գնահատականի, 2002թ. համեմատությամբ կոռուպցիայի ընկալման ինդեքսը Հայաստանում բարելավվել է, անտրամաբանական է «Առևտրի քաղաքականություն» գործոնի գնահատականի վատթարացումը կոռուպցիայի աճով հիմնավորելը, այսինքն՝ այս գործոնի գնահատականը պետք է որ լինի «1»:

2. Կառավարության հարկաբյուջետային բեռը

Կառավարության հարկաբյուջետային բեռի ծանրության աստիճանը բնութագրելու համար դիտարկվում են 4 ենթագործոններ՝ եկամտահարկի ամենաբարձր դրույքաչափը, կորպորատիվ հարկի (շահութահարկի) ամենաբարձր դրույքաչափը և ՀՆԱ կառուցվածքում կառավարության ծախսերի տարեկան փոփոխությունը (կրճատումը կամ աճը) նախորդ տարվա համեմատ: Բարձր հարկավորումը մեծացնում է արտադրության ծախքերը, թանկացնում արտադրանքը, այն դարձնում է նվազ մրցունակ, վատթարացնում է տեղական ձեռնարկությունների դիրքերը գործող և նոր շուկաներում: Այլ հավասար պայմաններում արտադրանքն առավել բարձր հարկավորում ունեցող երկրում դառնում է ավելի թանկ, հետևաբար՝ նվազ մրցունակ: Երբ կառավարությունը մեծացնում է իր ծախքերը՝ սեփական կարիքների համար ռեսուրսներ ձեռք բերելու (կառավարության սպառում) կամ տրանսֆերտային վճարումներ իրականացնելու նպատակով, դա նվազեցնում է հասարակության տնտեսական ազատության աստիճանը:

Այս ցուցանիշների հիման վրա հաշվարկում են տվյալ երկրում կառավարության հարկաբյուջետային բեռի մակարդակը: Այդ ցուցանիշը.

- գնահատվում է «1», կամ հարկերի մակարդակը համարվում է «շատ ցածր», երբ եկամտահարկի դրույքաչափը փոքր է 10%-ից, շահութահարկի դրույքաչափը փոքր է 15%-ից, կառավարության ծախսերը ՀՆԱ-ում, նախորդ տարվա համեմատ, ***կրճատվել են*** ավելի քան 4%-ով,

---

[9] Չարաշահումների վերաբերյալ և այլ սուբյեկտիվ գնահատումներ կատարելիս Heritage Foundation-ը միշտ հղում է անում այլ աղբյուրների (օրինակ՝ ԱՄՆ առևտրի կամ արտաքին գործերի նախարարությունների գնահատականները) և տեղական մարմինների առարկություններին թերահավատորեն է վերաբերվում:

- գնահատվում է «1.5», կամ հարկերի մակարդակը համարվում է «ցածր», երբ եկամտահարկի դրույքաչափը հավասար կամ մեծ է 10%-ից և փոքր է 20%-ից, շահութահարկի դրույքաչափը հավասար կամ մեծ է 15%-ից և փոքր է 18%-ից, կառավարության ծախսերը ՀՆԱ-ում, նախորդ տարվա համեմատ, ***կրճատվել են*** ավելի, քան 3%-ով և ավելի քիչ, քան 4%-ով,
- գնահատվում է «2», կամ հարկերի մակարդակը համարվում է «ցածր», երբ եկամտահարկի դրույքաչափը հավասար կամ մեծ է 20%-ից և փոքր է 25%-ից, շահութահարկի դրույքաչափը հավասար կամ մեծ է 18%-ից և փոքր է 21%-ից, կառավարության ծախսերը ՀՆԱ-ում, նախորդ տարվա համեմատ, ***կրճատվել են*** ավելի, քան 2%-ով և ավելի քիչ, քան 3%-ով,
- գնահատվում է «2.5», կամ հարկերի մակարդակը համարվում է «չափավոր», երբ եկամտահարկի դրույքաչափը հավասար կամ մեծ է 25%-ից և փոքր է 30%-ից, շահութահարկի դրույքաչափը հավասար կամ մեծ է 21%-ից և փոքր է 24%-ից, կառավարության ծախսերը ՀՆԱ-ում, նախորդ տարվա համեմատ ***կրճատվել են*** ավելի, քան 1%-ով և ավելի քիչ, քան 2%-ով,
- գնահատվում է «3.0», կամ հարկերի մակարդակը համարվում է «չափավոր», երբ եկամտահարկի դրույքաչափը հավասար կամ մեծ է 30%-ից և փոքր է 35%-ից, շահութահարկի դրույքաչափը հավասար կամ մեծ է 24%-ից և փոքր է 27%-ից, կառավարության ծախսերի ***կրճատումը*** ՀՆԱ-ում, նախորդ տարվա համեմատ, հավասար կամ մեծ է 0%-ից և փոքր է 1%-ից,
- գնահատվում է «3.5», կամ հարկերի մակարդակը համարվում է «բարձր», երբ եկամտահարկի դրույքաչափը հավասար կամ մեծ է 35%-ից և փոքր է 40%-ից, շահութահարկի դրույքաչափը հավասար կամ մեծ է 27%-ից և փոքր է 30%-ից, կառավարության ծախսերը ՀՆԱ-ում, նախորդ տարվա համեմատ, ***աճել են*** ավելի, քան 0%-ով, բայց ավելի քիչ կամ հավասար, քան 1%-ով,
- գնահատվում է «4», կամ հարկերի մակարդակը համարվում է «բարձր», երբ եկամտահարկի դրույքաչափը հավասար կամ մեծ է 40%-ից և փոքր է 45%-ից, շահութահարկի դրույքաչափը հավասար կամ մեծ է 30%-ից և փոքր է 33%-ից, կառավարության ծախսերը ՀՆԱ-ում, նախորդ տարվա համեմատ, ***աճել են*** ավելի, քան 1%-ով, բայց ավելի քիչ կամ հավասար, քան 2%-ով,
- գնահատվում է «4.5», կամ հարկերի մակարդակը համարվում է «շատ բարձր», երբ եկամտահարկի դրույքաչափը հավասար կամ մեծ է 45%-ից և փոքր է 50%-ից, շահութահարկի դրույքաչափը հավասար կամ մեծ է 33%-ից և փոքր է 36%-ից, կառավարության ծախսերը ՀՆԱ-ում, նախորդ տարվա համեմատ, ***աճել են*** ավելի, քան 2%-ով, բայց ավելի քիչ կամ հավասար, քան 3%-ով,
- գնահատվում է «5», կամ հարկերի մակարդակը համարվում է «շատ բարձր», երբ եկամտահարկի դրույքաչափը հավասար կամ մեծ է 50%-ից, շահութահարկի դրույքաչափը հավասար կամ մեծ է 36%-ից, կառավարության ծախսերը ՀՆԱ-ում, նախորդ տարվա համեմատ, ***աճել են*** ավելի քան 3%-ով:

Ըստ Heritage Foundation-ի բնութագրման՝ Հայաստանում ինչպես եկամտահարկի, այնպես էլ շահութահարկի ամենաբարձր դրույքաչափը 2002-2003 թթ. կազմել է 20%, այսինքն՝ հարկավորման դրույքաչափը երկու դեպքում էլ համարվել է «ցածր»: Այդ իսկ պատճառով Հայաստանում **«Եկամտի հարկավորում» և «Շահույթի հարկավորում»** գործոնները 2004 թ. գնահատվել են «2.0»: **«Կառավարության ծախսեր»** գործոնը գնահատվել է «3.0», քանի որ 2002 թ. Կառավարության ծախսերը ՀՆԱ-ում, նախորդ տարվա համեմատ, կրճատվել են ընդամենը 0.6%-ով (մինչդեռ Կառավարության ծախսերը ՀՆԱ-ում 2001 թ. կրճատվել էին 3.4 %-ով): Արդյունքում, Հայաստանի «Կառավարության հարկաբյուջետային բեռը» գործոնի վերջնական գնահատականը 2004 թ. կազմել է «2.3», որը թեև 1996 թ. «2.9»-ի համեմատ զգալի բարելավվել է, սակայն 2003 թ. «1.9» գնահատականի համեմատ վատթարացել է 0.4 միավորով՝ «Կառավարության ծախսեր» գործոնի ոչ էական կրճատման պատճառով:

Պետք է նշել, որ Կառավարության ծախսերը 2003 թ-ին հիմնականում պայմանավորվել են գործարարությանը օգնող ենթակառույցներում (ճանապարհաշինության ոլորտում) խոշորածավալ պետական ներդրումներով, որոնք իրականացվել են ոչ թե հարկային մուտքերի ավելացման և հարկային բեռի ծանրացման, այլ Կառավարության ստացած դրամաշնորհների հաշվին: Հետևաբար կարելի է եզրակացնել, որ իրականում այս գործոնի վատթարացում չի եղել, և Կառավարության հարկաբյուջետային բեռը Հայաստանում 2003 թ. չի ծանրացել:

3. Կառավարության միջամտությունը տնտեսությանը

Այս գործոնը բնութագրում է կառավարության կողմից սակավ ռեսուրսների ուղղակի օգտագործումը սեփական կարիքների համար, ինչպես նաև այդ ռեսուրսների նկատմամբ կառավարության վերահսկողությունը՝ փայամասնակցության միջոցով:

Երկրի տնտեսությանը կառավարության միջամտության աստիճանը բնութագրելու համար դիտարկվում են 4 ենթագործոններ՝ կառավարության սպառումը ՀՆԱ-ում, գործարարության և արտադրության բնագավառներում կառավարության փայամասնակցությունը, պետական ձեռնարկություններից ու սեփականությունից կառավարության ստացած եկամուտների տեսակարար կշիռը ՀՆԱ-ում և կառավարության կողմից ստեղծված ՀՆԱ չափը: Այս ցուցանիշների հիման վրա հաշվարկում են տվյալ երկրի տնտեսությանը կառավարության միջամտության մակարդակը: Այդ ցուցանիշը.

- գնահատվում է «1», կամ կառավարության միջամտությունը համարվում է «շատ ցածր», երբ և՛ կառավարության սպառումը ՀՆԱ-ում, և՛ պետական ձեռնարկություններից ու սեփականությունից կառավարության ստացած եկամուտների տեսակարար կշիռը ՀՆԱ-ում հավասար կամ փոքր են 5%-ից,
- գնահատվում է «2», կամ կառավարության միջամտությունը համարվում է «ցածր», երբ և՛ կառավարության սպառումը ՀՆԱ-ում, և՛ պետական ձեռնարկություններից ու սեփականությունից կառավարության ստացած եկամուտների տեսակարար կշիռը ՀՆԱ-ում ավելի են, քան 5%-ը, բայց հավասար կամ փոքր են 10%-ից,
- գնահատվում է «3», կամ կառավարության միջամտությունը համարվում է «չափավոր», երբ և՛ կառավարության սպառումը ՀՆԱ-ում, և՛ պետական ձեռնարկություններից ու սեփականությունից կառավարության ստացած եկամուտների տեսակարար կշիռը ՀՆԱ-ում ավելի են, քան 10%-ը, բայց հավասար կամ փոքր են 20%-ից,
- գնահատվում է «4», կամ կառավարության միջամտությունը համարվում է «բարձր», երբ և՛ կառավարության սպառումը ՀՆԱ-ում, և՛ պետական ձեռնարկություններից ու սեփականությունից կառավարության ստացած եկամուտների տեսակարար կշիռը ՀՆԱ-ում ավելի են, քան 20%-ը, բայց հավասար կամ փոքր են 40%-ից,
- գնահատվում է «5», կամ կառավարության միջամտությունը համարվում է «չափավոր», երբ և՛ կառավարության սպառումը ՀՆԱ-ում, և՛ պետական ձեռնարկություններից ու սեփականությունից կառավարության ստացած եկամուտների տեսակարար կշիռը ՀՆԱ-ում ավելի են, քան 40%-ը:

«Կառավարության միջամտությունը տնտեսությանը» գործոնը 2004 թվականին Հայաստանում գնահատվել է «3», այսինքն՝ միջամտության մակարդակը գնահատվել է «չափավոր»՝ ինչպես և 2003 թ-ին: ՀՆԱ-ում կառավարության սպառման մասին տվյալները Heritage Foundation-ը վերցրել է Համաշխարհային բանկի հաշվետվություններից, համաձայն որոնց՝ 2001 թ-ին ՀՀ կառավարության սպառումը ՀՆԱ-ում կազմել է 10.7%: Չնայած, ըստ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության տվյալների, 2002 թ-ին պետական ձեռնարկություններից ու սեփականությունից ՀՀ կառավարության ստացած եկամուտների տեսակարար կշիռը ՀՆԱ-ում կազմել է 0.35%, այնուամենայնիվ արձանագրվել է, որ Կառավարությունը վերահսկում է որոշ առանցքային արդյունաբերություններ: Համաձայն Economist Intelligence Unit-ի տեղեկատվության՝ «խոշոր ձեռնարկությունների սեփականաշնորհումը դժվար է ընթանում մասամբ ազգային հաստատությունների վաճառքի դեմ ամբոխահաճ առարկությունների պատճառով: Հետևաբար միջին և խոշոր 932 ձեռնարկությունների վաճառքի՝ Կառավարության 2001-2003 թթ. ծրագիրը համարվում է ոչ իրական»:

Heritage Foundation-ի գնահատմամբ՝ այս գործոնը 1996 թ. կազմում էր «5», իսկ 1997-2002 թթ.՝ «4», այսինքն՝ 2003-2004 թթ. Կառավարության միջամտությունը տնտեսությանը կրճատվել է:

4. Դրամավարկային քաղաքականություն

Երկարաժամկետ հատվածում կայուն դրամավարկային քաղաքականությունը նպաստում է ներդրումների, խնայողությունների և այլ պլանների հեշտ իրականացմանը, ուստի տնտեսական ազատությունը համեմատաբար ավելի մեծանում է:

Երկրի դրամավարկային քաղաքականության գնահատման համար, ի տարբերություն մյուս գործոնների, օգտագործվում է անցած ժամանակաշրջանի տեղեկատվությունը, այն է՝ դիտարկվում է նախորդ 10 տարիների գնաճի միջին մակարդակի ցուցանիշը: Heritage Foundation-ի հաշվարկման մեթոդաբանությունը հետևյալն է. նախորդ 10 տարիներին տրվում են կշիռներ՝ աճողական կարգով: Կշիռները հաշվարկվում են՝ օգտագործելով էքսպոնենցիալ (ցուցչային բաշխումով) կշռման մեթոդը: Այսպես օրինակ, 2003 թ. ինդեքսը գնահատելու համար 1993 թ-ին տրվում է 0.00012, 1994 թ-ին՝ 0.00034, 1995 թ-ին՝ 0.00091, 1996 թ.-ին՝ 0.00248, 1997 թ-ին՝ 0.00674, 1998 թ-ին՝ 0.01832, 1999 թ-ին՝ 0.04979, 2000 թ-ին՝ 0.13534, 2001 թ-ին՝ 0.36788 և 2002 թ-ին՝ 1.0 կշիռներ, և դրանց հիման վրա հաշվարկվում է 10 տարիների գնաճի կշռված միջինը:

Այդ ցուցանիշը՝

- գնահատվում է «1», կամ գնաճի մակարդակը համարվում է «շատ ցածր», երբ գնաճի միջին տեմպը հավասար կամ փոքր է 3%-ից,

- գնահատվում է «2», կամ գնաճի մակարդակը համարվում է «ցածր», երբ գնաճի միջին տեմպը բարձր է 3%-ից և հավասար կամ ցածր 6%-ից,
- գնահատվում է «3», կամ գնաճի մակարդակը համարվում է «չափավոր», երբ գնաճի միջին տեմպը բարձր է 6%-ից և հավասար կամ ցածր 12%-ից,
- գնահատվում է «4», կամ գնաճի մակարդակը համարվում է «բարձր», երբ գնաճի միջին տեմպը բարձր է 12%-ից և հավասար կամ ցածր 20%-ից,
- գնահատվում է «5», կամ գնաճի մակարդակը համարվում է «շատ բարձր», երբ գնաճի միջին տեմպը բարձր է 20%-ից:

Հայաստանում **«Դրամավարկային քաղաքականություն»** գործոնը գնահատվել է **«2»,** այսինքն՝ միջին կշռված գնաճը 1993-2002 թթ. կազմել է 3.07%: Heritage Foundation-ը նշում է, որ Հայաստանում զգալի են ձեռքբերումները գնաճի մակարդակի իջեցման գործում: Այս գործոնը 1996-2001 թթ. գնահատվում էր «5» (շատ բարձր), իսկ 2002 թ-ին՝ «3» (չափավոր):

Ի դեպ, ՀՀ կենտրոնական բանկը բազմիցս վիճարկել է այս գործոնի գնահատման ժամանակ Heritage Foundation-ի կողմից կիրառվող մեթոդաբանությունը՝ պնդելով, որ նախորդ 10 տարիներին արձանագրված գնաճի մակարդակների միջին ցուցանիշով այս գործոնի գնահատումը չի արտահայտում անցումային, մասնավորապես՝ նախկին ԽՍՀՄ տնտեսությունների՝ գնաճի զսպման իրական հաջողությունները: Հայտնի է, որ ԽՍՀՄ փլուզումից հետո, 1991-1994 թթ. այդ տնտեսությունները, այդ թվում նաև Հայաստանը, գործում էին ԽՍՀՄ-ից ժառանգած հիպերինֆլյացիայի պայմաններում, սակայն սկսած 1995 թ-ից՝ գնաճի մակարդակը այդ երկրներում զգալիորեն կրճատվեց՝ արտահայտելով տնտեսություններում ազատ ձեռներեցությամբ զբաղվելու ծախքերի կտրուկ թեթևացումը: Մինչդեռ Heritage Foundation-ի մեթոդաբանությամբ հաշվարկելիս Հայաստանի «Դրամավարկային քաղաքականություն» գործոնի ինդեքսը, այսինքն՝ գնաճի մակարդակը 1992-2002 թթ. գնահատվում էր «շատ բարձր», քանի որ հաշվարկում ներառվում էին նաև անկախության առաջին տարիների (1991-1994 թթ.) հիպերինֆլյացիաները: ՀՀ կենտրոնական բանկը դեռևս 2000 թ.-ին Heritage Foundation-ին առաջարկել է վերանայել նախկին ԽՍՀՄ երկրների, հատկապես Հայաստանի «դրամավարկային քաղաքականության» գործոնի գնահատման մեթոդաբանությունը՝ միաժամանակ շեշտելով, որ վերջին տարիներին Հայաստանի տնտեսությունը եղել է ցածր գնաճային գոտում:

5. Կապիտալ հոսքեր և օտարերկրյա ներդրումներ

Օտարերկրյա ներդրումների ազատականացումը մեծացնում է երկրի տնտեսական ազատության աստիճանը, քանի որ օտարերկրյա ներդրումները նպաստում են տնտեսական առաջընթացին՝ երկրի արտադրական կարողությունների ընդլայնման միջոցով:

Կապիտալ հոսքերը և օտարերկրյա ներդրումները բնութագրելու համար դիտարկվում են 9 ենթագործոններ՝ օտարերկրյա ներդրումները կարգավորող իրավական ակտերի առկայությունը, գործարարության բնագավառում օտարերկրյա փայամասնակցության սահմանափակումները, օտարերկրյա ներդրումների համար բաց ձեռնարկությունների և ընկերությունների նկատմամբ սահմանափակումները, օտարերկրյա ընկերությունների գործունեության սահմանափակումները, օտարերկրացիների կողմից հողի տնօրինման հնարավորությունը, օտարերկրյա և տեղական ընկերությունների նկատմամբ ոչ խտրական օրենսդրության կիրառումը, հասույթը ներդրողի երկիր վերադարձնելու պահանջը, կապիտալի գործառնությունների սահմանափակումները, օտարերկրյա ընկերությունների կողմից տեղական ֆինանսավորում ստանալու հնարավորությունը:

Այս ցուցանիշների հիման վրա գնահատվում են տվյալ երկրի կապիտալ հոսքերն ու օտարերկրյա ներդրումները: Այդ ցուցանիշը.

- գնահատվում է «1», կամ օտարերկրյա ներդրումները խոչընդոտող գործոնները համարվում են «շատ ցածր», երբ օտարերկրյա ներդրումների նկատմամբ երկրի տնտեսությունը բաց է, գործում է մատչելի իրավական դաշտ, գրեթե չկան օտարերկրյա ներդրումների սահմանափակումներ, բացառությամբ ազգային անվտանգությանն առնչվող ոլորտների, չկան կապիտալ գործառնությունների սահմանափակումներ,
- գնահատվում է «2», կամ օտարերկրյա ներդրումները խոչընդոտող գործոնները համարվում են «ցածր», երբ առկա են սահմանափակումներ միայն ազգային անվտանգության տեսակետից ռազմավարական նշանակություն ունեցող ընկերություններում, բնական ռեսուրսների շահագործման և նմանատիպ բնագավառներում, առկա է օտարերկրյա ներդրումների հաստատման արդյունավետ գործընթաց, կապիտալ գործառնությունների սահմանափակումները նվազագույն են:
- գնահատվում է «3», կամ օտարերկրյա ներդրումները խոչընդոտող գործոնները համարվում են «չափավոր», երբ, թեև մի շարք ներդրումների նկատմամբ կան սահմանափակումներ, սակայն իշխանությունները օտարերկրյա ներդրումները խթանող իրավական ակտերի փաթեթ ստեղծելու

պատրաստակամություն են հայտնում, ներդրումների հաստատման գործընթացը բյուրոկրատացված է, լայնորեն կիրառվում է կապիտալի վերահսկողություն,

- գնահատվում է «4», կամ օտարերկրյա ներդրումները խոչընդոտող գործոնները համարվում են «բարձր», երբ այդպիսի ներդրումներ թույլատրվում են միայն բացառիկ դեպքերում, ներդրումների հաստատման գործընթացը բյուրոկրատացված է, և առկա են չարաշահումների դեպքեր, կապիտալ հոսքերն արգելված են,
- գնահատվում է «5», կամ օտարերկրյա ներդրումները խոչընդոտող գործոնները համարվում են «շատ բարձր», երբ կառավարությունը փորձում է ակտիվորեն կանխել օտարերկրյա ներդրումները, կապիտալ բոլոր հոսքերն արգելված են, մեծ չափերի են հասնում չարաշահումները:

Հայաստանում **«Կապիտալ հոսքեր և օտարերկրյա ներդրումներ»** գործոնը գնահատվել է «2», այսինքն՝ օտարերկրյա ներդրումների նկատմամբ խոչընդոտները Հայաստանում համարվում են «ցածր»: Ըստ Heritage Foundation-ի՝ գործարարությամբ զբաղվող Հայաստանի քաղաքացիներին ու օտարերկրյա ներդրողներին ՀՀ օրենսդրությամբ վերապահված են նույն իրավունքները: Կառավարությունը շարունակում է արգելել հողի տնօրինումը օտարերկրացիների կողմից, թեև նրանք կարող են վարձել հողը: Heritage Foundation-ը մեջբերում է ԱՄՆ-ում Հայաստանի դեսպանության տեղեկատվությունն այն մասին, որ Հայաստանը չի կիրառում արտարժութային վերահսկողություն՝ չկան օտարերկրյա ներդրողների հասույթների հայրենադարձման սահմանափակումներ: Heritage Foundation-ը հրապարակել է նաև Արժույթի միջազգային հիմնադրամի հաշվետվությունն այն մասին, որ Հայաստանում վճարային հաշվեկշռի ընթացիկ և կապիտալ հաշիվների գործառնությունների նկատմամբ սահմանափակումներ չեն կիրառվում[10]:

1996 - 1999 թթ. այս գործոնը գնահատվել է «4», 2000 թ.՝ «3», 2001 - 2004 թթ.՝ «2», այսինքն՝ ակնհայտ է, որ օտարերկրյա ներդրումների ազատականացման բնագավառը Հայաստանում 1996 - 2004 թթ. բարելավվել է:

6. Բանկային և ֆինանսական համակարգ

Բանկերն ու ոչ բանկ ֆինանսավարկային կազմակերպությունները մատուցում են տնտեսական աճին նպաստող կարևորագույն ֆինանսական ծառայություններ: Ուստի որքան քիչ են այդ կազմակերպությունները վերահսկվում կառավարության կողմից, այնքան դրանք ազատ են ֆինանսական ծառայություններ մատուցելու ժամանակ:

Բանկային և ֆինանսական համակարգը բնութագրելու համար դիտարկվում են 5 ենթագործոններ՝ ֆինանսական հաստատություններում կառավարության փայամասնակցության չափը, օտարերկրյա բանկերի կողմից մասնաճյուղեր բացելու նկատմամբ սահմանափակումները, վարկերի տեղաբաշխման գործում կառավարության ազդեցությունը, կառավարության կարգավորումները, ֆինանսական ծառայությունների, արժեթղթերի և ապահովագրական քաղաքականությունների բոլոր տեսակները մատուցելու ազատությունը: Այս ցուցանիշների հիման վրա հաշվարկում են բանկային և ֆինանսական համակարգի վիճակը: Այդ ցուցանիշը՝

- գնահատվում է «1», կամ բանկերի նկատմամբ սահմանափակումները համարվում են «շատ ցածր», երբ կառավարությունը ընդհանրապես չի մասնակցում կամ մասնակցում է աննշան թվով առևտրային բանկերի կապիտալում, օտարերկրյա բանկերի նկատմամբ գործում են շատ քիչ թվով սահմանափակումներ, բանկերը կարող են իրականացնել տարբեր տեսակի ֆինանսական ծառայություններ,
- գնահատվում է «2», կամ բանկերի նկատմամբ սահմանափակումները համարվում են «ցածր», երբ կառավարության ներգրավումը ֆինանսական հատվածում հասցված է նվազագույնի, օտարերկրյա բանկերի նկատմամբ սահմանափակումները շատ չեն, երկրի իշխանությունները սահմանափակում են որոշակի ֆինանսական ծառայությունների մատուցումը, տեղական բանկերի ձևավորման գործում կան որոշ խոչընդոտներ,
- գնահատվում է «3», կամ բանկերի նկատմամբ սահմանափակումները համարվում են «չափավոր», երբ կառավարությունը զգալիորեն ազդում է բանկերի վրա, կառավարությունը տնօրինում կամ վերահսկում է որոշ բանկերի, տեղական բանկերի ձևավորման գործում կան էական խոչընդոտներ,
- գնահատվում է «4», կամ բանկերի նկատմամբ սահմանափակումները համարվում են «բարձր», երբ բանկային համակարգը անցումային փուլում է, բանկերը խստորեն վերահսկվում են կառավարության կողմից, հնարավոր են չարաշահումներ, տեղական բանկերի ձևավորման խթաններ չկան,

---

[10] Բացառություն է կազմում հողը, որը Հայաստանում չի կարող գնվել օտարերկրացու կողմից, բայց կարող է վարձակալության տրվել նրան:

- գնահատվում է «5», կամ բանկերի նկատմամբ սահմանափակումները համարվում են «շատ բարձր», երբ ֆինանսական հաստատությունները քաոսային վիճակում են, բանկերը գործում են պրիմիտիվ բազայի վրա, վարկերի մեծ մասը տրամադրվում է պետական ձեռնարկություններին, մեծ չափերի են հասնում չարաշահումները:

2004 թվականին, 2003 թ. համեմատ, «Բանկային և ֆինանսական համակարգ» գործոնի ինդեքսը ՀՀ-ում բարելավվել է. ներկայումս այն գնահատվում է «1», այսինքն՝ բանկերի նկատմամբ սահմանափակումները համարվում են «ցածր»: Heritage Foundation-ը սա բացատրում է այս դաշտում կարգավորման և վերահսկողության արդյունավետության բարձրացմամբ, ինչպես նաև բանկային համակարգում պետական մասնակցության վերացմամբ (Հայխնայբանկի վաճառքով և Ագրոբանկում պետական մասնաբաժնի վաճառքով):

Հայաստանում **«Բանկային և ֆինանսական համակարգ»** գործոնը 1996-1999 թթ. գնահատվել է «3» («չափավոր»): ՀՀ բանկային և ֆինանսական համակարգի զարգացումների մասին Կենտրոնական բանկի ներկայացրած ամենամյա տեղեկատվությունը հաշվի առնելով՝ Heritage Foundation-ը վերանայել է և բանկերի նկատմամբ սահմանափակումները 2000-2003 թթ. գնահատել է «2» միավոր («ցածր»), իսկ 2004 թվականին՝ «1» («շատ ցածր»): Նկատենք, որ «Բանկային և ֆինանսական համակարգ» գործոնի նման բարձր ցուցանիշ ունեն Արևելյան Եվրոպայի երկրներից միայն Չեխիան և Սլովակիան, իսկ նախկին ԽՍՀՄ երկրներից՝ միայն Էստոնիան և Լիտվան:

7. Աշխատավարձ և գներ

Աշխատավարձի և գների համակարգը բնութագրելու համար դիտարկվում են 5 ենթագործոններ՝ «Նվազագույն աշխատավարձի մասին» օրենքի առկայությունը, գներն առանց կառավարության մասնակցության սահմանելու պրակտիկան, գների վերահսկողությունը կառավարության կողմից, կառավարության կողմից վերահսկվող գների տեսակարար կշիռը և կառավարության կողմից գործարարությանը տրամադրված լրահատկացումները, որոնք ազդում են գների մակարդակի վրա:

Այս ցուցանիշների հիման վրա գնահատվում է աշխատավարձի և գների համակարգի վիճակը: Այդ ցուցանիշը՝

- գնահատվում է «1», կամ աշխատավարձի ու գների վերահսկողությունը համարվում է «շատ ցածր», երբ աշխատավարձերն ու գները որոշվում են շուկայական մեխանիզմներով, երկրում չի սահմանված նվազագույն աշխատավարձ կամ նվազագույն աշխատավարձ սահմանված է աշխատուժի ոչ զգալի մասի համար,
- գնահատվում է «2», կամ աշխատավարձի ու գների նկատմամբ վերահսկողությունը համարվում է «ցածր», երբ կառավարությունը վերահսկում է որոշ ապրանքների ու ծառայությունների գները, սակայն վերահսկողությունը չի տարածվում ազգային համախառն արդյունքի զգալի մասի վրա: Կառավարության սահմանած նվազագույն աշխատավարձը տարածվում է աշխատուժի զգալի մասի վրա,
- գնահատվում է «3», կամ աշխատավարձի ու գների նկատմամբ վերահսկողությունը համարվում է «չափավոր», երբ կառավարությունը վերահսկում է ազգային համախառն արդյունքի զգալի մասը կազմող ապրանքների ու ծառայությունների գները և/կամ սահմանում է աշխատավարձերի մեծ մասը,
- գնահատվում է «4», կամ աշխատավարձի ու գների նկատմամբ վերահսկողությունը համարվում է «բարձր», երբ կառավարությունն է որոշում ապրանքների ու ծառայությունների գների, ինչպես նաև աշխատավարձերի մեծ մասը,
- գնահատվում է «5», կամ աշխատավարձերի ու գների նկատմամբ վերահսկողությունը համարվում է «շատ բարձր», երբ աշխատավարձերը և ապրանքների ու ծառայությունների գները ամբողջովին վերահսկվում են կառավարության կողմից:

Հայաստանում **«Աշխատավարձ և գներ»** գործոնը գնահատվել է **«3»,** այսինքն՝ աշխատավարձի ու գների նկատմամբ վերահսկողությունը համարվում է «չափավոր»: Գնահատումը հիմնավորելու նպատակով Heritage Foundation-ը մեջբերում է ԱՄՆ արտաքին գործերի նախարարության տեղեկատվությունն այն մասին, որ «Կառավարությունը շարունակում է սահմանել հանրային տրանսպորտի և կոմունալ-կենցաղային ծառայությունների գները: Ժամանակ առ ժամանակ Կառավարությունը առավել կարիքավոր խմբերին առաջին անհրաժեշտության սննդամթերք և սպառողական այլ ապրանքներ (շաքար, կաթի փոշի, լուցկի, օճառ) է տրամադրում՝ շուկայական գներից ցածր գներով»: Սակայն պետք է նշել, որ նման համակարգ Հայաստանում չի գործում: Կառավարությունը կարիքավոր խմբերին անվճար բաժանում է ՄԱԿ-ի պարենային համաշխարհային ծրագրի կողմից տրամադրված ապրանքատեսակները՝ միաժամա-

նակ պետական բյուջեի միջոցների հաշվին հոգալով փոխադրման, բեռնաթափման, պահեստավորման և պահպանման ծախսերը: Հետևաբար «Աշխատավարձ և գներ» ցուցանիշը գալիք ժամանակահատվածում կփոխվի՝ նշված տեղեկատվության ճշգրտման արդյունքում:

Աշխատավարձերի և գների նկատմամբ վերահսկողության գնահատականը 1996-2002 թվականներին բարելավվել է. 1996 թ. այն համարվում էր «բարձր», 1997-2000 թթ.՝ «չափավոր», 2001-2002 թթ.՝ «ցածր»: Սակայն 2003-2004 թթ. այս գործոնի գնահատականը Heritage Foundation-ը կրկին սահմանել է «չափավոր», որը հիմնավորել է հետևյալ կերպ. «Հայաստանի պետական պահառուն (Armenian State Repository) սահմանել է գունավոր, հազվագյուտ և թանկարժեք մետաղների նոր գներ, որոնք կիրառվում են բնական ռեսուրսների շահագործման հարկը հաշվարկելու նպատակով: Կառավարության որոշմամբ սահմանվել է նվազագույն աշխատավարձի չափ»:

8. Սեփականության իրավունք

Տվյալ երկրում մասնավոր սեփականության իրավունքի պաշտպանության աստիճանը բնութագրելու համար դիտարկվում են 7 ենթագործոններ՝ կառավարությունից դատական համակարգի անկախության աստիճանը, պայմանագրերի բնույթին համապատասխան առևտրային օրենսդրության առկայությունը, պայմանագրերի վիճարկման ժամանակ արտասահմանյան արբիտրաժի դիմելու հնարավորությունը, կառավարության՝ սեփականության իրավունքից զրկելու իրավասությունը, դատական մարմիններում կոռուպցիայի դեպքերը, դատական որոշումների ստացման ձգձգումները, օրինական մասնավոր սեփականության իրավական պաշտպանությունը: Այս ցուցանիշների հիման վրա հաշվարկում է տվյալ երկրում մասնավոր սեփականության իրավունքի պաշտպանության աստիճանը: Այդ ցուցանիշը՝

- գնահատվում է «1», կամ մասնավոր սեփականության իրավունքի պաշտպանությունը համարվում է «շատ բարձր», երբ մասնավոր սեփականության երաշխավորը կառավարությունն է, արդարադատության համակարգը ապահովում է պայմանադիր կողմերի իրավունքները և պատժում մասնավոր սեփականության դեմ անօրինական ոտնձգությունները, սեփականությունից զրկումը (բռնագրավումը) հնարավոր չէ,
- գնահատվում է «2», կամ մասնավոր սեփականության իրավունքի պաշտպանությունը համարվում է «բարձր», երբ մասնավոր սեփականության երաշխավորը կառավարությունն է, արդարադատության համակարգը անփույթ վերաբերմունք է ցուցաբերում կողմերի իրավունքներին, կոռուպցիան հավանական է, բայց՝ հազվադեպ, սեփականությունից զրկումը (բռնագրավումը) հնարավոր չէ,
- գնահատվում է «3», կամ մասնավոր սեփականության իրավունքի պաշտպանությունը համարվում է «չափավոր», երբ դատական համակարգն արդյունավետ չէ և անփույթ վերաբերմունք է ցուցաբերում կողմերի իրավունքներին, կոռուպցիան հավանական է, դատական մարմիններն անկախ չեն, սեփականությունից զրկումը (բռնագրավումը) հնարավոր է, բայց՝ հազվադեպ,
- գնահատվում է «4», կամ մասնավոր սեփականության իրավունքի պաշտպանությունը համարվում է «ցածր», երբ կառավարությունը բավարար չի պաշտպանում մասնավոր սեփականությունը, դատական համակարգն անարդյունավետ է, առկա է կոռուպցիա, դատական մարմիններն անկախ են, սեփականությունից զրկումը (բռնագրավումը) հնարավոր է,
- գնահատվում է «5», կամ մասնավոր սեփականության իրավունքի պաշտպանությունը համարվում է «շատ ցածր», երբ մասնավոր սեփականությունը հայտարարված է օրենքից դուրս կամ չի պաշտպանվում, սեփականությունը գրեթե ամբողջովին պատկանում է պետությանը, երկիրն այնպիսի քաոսային վիճակում է (շարունակական պատերազմի պատճառով), որ սեփականության պաշտպանություն գոյություն չունի, դատական համակարգն այնքան կոռումպացված է, որ սեփականությունը արդյունավետորեն չի պաշտպանվում, սեփականությունից զրկումը (բռնագրավումը) հաճախակի երևույթ է:

1996-2004 թթ. ընթացքում Հայաստանում «**Սեփականության իրավունք**» գործոնի բարելավում չի արձանագրվել: Այդ ողջ ժամանակահատվածում այն գնահատվել է **«3»**, այսինքն՝ մասնավոր սեփականության իրավունքի պաշտպանության մակարդակը Հայաստանում համարվել է «չափավոր»: Ըստ Heritage Foundation-ի բնութագրման՝ մասնավոր սեփականությունը երաշխավորված է օրենքով, սակայն ոչ իրավական պարտադրման, ոչ էլ դատական համակարգը չեն ապահովում համապատասխան պաշտպանությունը: Heritage Foundation-ը մեջբերում է ԱՄՆ արտաքին գործերի նախարարության հետևյալ տեղեկատվությունը. «Սահմանադրությունը նախատեսում է դատական իշխանությունների անկախություն, սակայն դատարանները զերծ չեն քաղաքական ճնշումներից և իրականում ենթարկվում են գործադիր մարմինների ճնշմանը, ուստի և օրենսդրական մարմիններն ու որոշ դատավորներ կոռումպացված են: Ձգձգվող հրապարակային դատական գործընթացները երբեմն լուրջ խնդիրներ են ստեղծում»: Նույն

աղբյուրը նշում է նաև Հայաստանի դրական զարգացումների մասին. «Հայաստանի դատարանները դառնում են ավելի ու ավելի անկախ. Արդարադատության նախարարությունը աստիճանաբար պակասեցնում է իր մասնակցությունը քաղաքացիական գործերին», այսինքն՝ այս գործոնի գնահատականը հետագայում կբարելավվի:

9. Կարգավորում

Տվյալ երկրում գործարարության պետական կարգավորման աստիճանը բնութագրելու համար դիտարկվում են 6 ենթագործոններ՝ գործարարություն իրականացնելու համար արտոնագրի պահանջը, արտոնագիր ստանալու գործընթացի պարզությունը, կոռուպցիայի դեպքերը, աշխատանքի կարգավորումները (աշխատանքային շաբաթի սահմանումը, արձակուրդի և հղիության հետ կապված անաշխատունակության վճարումը), շրջակա միջավայրի պաշտպանության, սպառողի անվտանգության և աշխատողի առողջության կարգավորումը, գործարարության համար անհրաժեշտ այլ կարգավորումների առկայությունը: Տվյալ երկրում գործարարության կարգավորման աստիճանը գնահատվում է՝

- «1», կամ գործարարության պետական կարգավորման աստիճանը համարվում է «շատ ցածր», երբ գործող կարգավորումը հետևողական է և կիրառվում է գործարարության բոլոր ոլորտներում, չի խոչընդոտում գործարարության զարգացումը, կոռուպցիա գրեթե չկա,
- «2», կամ գործարարության պետական կարգավորման աստիճանը համարվում է «ցածր», երբ արտոնագրման գործընթացը շատ պարզ է, գործող կարգավորումը հարաբերականորեն հետևողական է և գրեթե միասնական է բոլոր ոլորտների համար, սակայն որոշ դեպքերում խոչընդոտում է գործարարության զարգացումը, կոռուպցիայի դեպքերը թեև հնարավոր են, սակայն հազվադեպ են և հիմնախնդիր չեն առաջացնում,
- «3», կամ գործարարության պետական կարգավորման աստիճանը համարվում է «չափավոր», երբ արտոնագրման գործընթացը բարդ է, գործող կարգավորումը լուրջ խոչընդոտ է գործարարության զարգացման համար, կիրառվում է անկանոն, հանկարծակի, և որոշ դեպքերում կառավարությունը նույնիսկ կարգավորող ակտեր չի հրատարակում, առկա են կոռուպցիայի դեպքեր և թույլ լարվածություն են ստեղծում գործարարության զարգացման համար,
- «4», կամ գործարարության պետական կարգավորման աստիճանը համարվում է «բարձր», երբ կառավարությունը սահմանում է արտադրության սահմանաչափեր (քվոտաներ) և որոշ չափով իրականացնում է պետական պլանավորում, գործարարության ձեռնարկման լուրջ խոչընդոտներ կան, արտոնագրման գործընթացը բարդ է, շատ բարձր են վարձավճարները, կաշառք տալը երբեմն անհրաժեշտություն է, առկա են կոռուպցիայի դեպքեր և լուրջ բարդություններ են ստեղծում գործարարության զարգացման համար, գործող կարգավորումը լրջորեն արգելակում է ձեռնարկատիրական գործունեությունը,
- «5», կամ գործարարության պետական կարգավորման աստիճանը համարվում է «շատ բարձր», երբ կառավարությունը չի խրախուսում նոր գործունեության ձեռնարկումը, լայնորեն տարածված է կոռուպցիան, կարգավորումն իրականացվում է դեպքից դեպք:

Հայաստանում **«Կարգավորում»** գործոնը 1996-2004 թթ. ընթացքում նույնպես չի բարելավվել: Այդ ողջ ժամանակահատվածում այն գնահատվել է **«4»**, այսինքն՝ գործարարության պետական կարգավորման աստիճանը համարվել է «բարձր»: Ըստ Heritage Foundation-ի բնութագրման՝ «կոռումպացված պաշտոնյաների կողմից կարգավորումն իրականացվում է առանց կանոնների: Պայքարը քաղաքական իշխանության համար խոչընդոտում է ցանկացած ռեֆորմի ընթացքը»: Համաձայն ԱՄՆ արտաքին գործերի նախարարության տվյալների՝ «երկիմաստ օրենքներն ու պետական վերահսկողական գործունեությունը ստեղծել են այնպիսի իրավիճակ, որ որոշ հատվածներ, որոնք պաշտոնապես համարվում են բաց, իրականում գրեթե մոնոպոլ են, և դա դժվար է հաղթահարել (օրինակ՝ ավիացիոն հատվածում): Օրենսդրության փոփոխությունները հազվադեպ են հայտարարվում կամ հրապարակվում մինչև կիրարկումը»: Ի լրումն, «բյուրոկրատական գործընթացները կարող են լինել դժվարաշարժ և ժամանակատար, երբ ներդրողը պայմանագրի շուրջ բանակցում է Հայաստանի կառավարության հետ, քանի որ պայմանագրի հաստատման համար կարող է պահանջվել բազմաթիվ նախարարությունների հավանությունը»: Կոռուպցիան շարունակում է խոչընդոտել գործարարությունը: «Չնայած խիստ տույժերին,- գրում է ԱՄՆ արտաքին գործերի նախարարությունը,- կաշառքը լայն տարածում ունի և կոռուպցիայի ամենաընդունված ձևն է, հատկապես պետական գնումների, բոլոր տեսակի փոխանցումների և հավանությունների տրամադրման ոլորտներում և գործարարությանը առնչվող այնպիսի ծառայություններում, ինչպիսիք են՝ ընկերությունների գրանցումը, լիցենզավորումը և հողերի կամ տարածքի հատկացումը»:

Այստեղ ևս, Heritage Foundation-ի փորձագետները Հայաստանում գերկարգավորման օրինակներ չունեն և ուշադրություն են դարձնում ոչ թե իրական կարգավորումներին, այլ կենտրոնանում են կոռուպ-

ցիայի փաստի վրա: Հայտնի է, որ Հայաստանում գործարարության աջակցման, ներդրումների խթանման և վարչարարական խոչընդոտների վերացման նպատակով ՀՀ նախագահի 2000 թ. դեկտեմբերի 31-ի հրամանագրով ստեղծվել է ՀՀ գործարարության աջակցման խորհուրդ՝ ՀՀ վարչապետի նախագահությամբ: Գործունեության 3 տարիների ընթացքում Խորհրդի ձեռնարկած օրենսդրական, ինստիտուցիոնալ և կանոնակարգիչ փոփոխությունների շնորհիվ աստիճանաբար և նկատելի բարելավվել է ՀՀ գործարար միջավայրը: Ստեղծվել են անհրաժեշտ հիմքեր՝ հաջորդ տարիներին ավելի մեծ առաջընթաց ապահովելու համար:

Բացի այդ, եթե հաշվի առնենք նաև, որ Transparency International-ի գնահատմամբ Հայաստանում կոռուպցիայի ընկալման ինդեքսը 2003 թ. բարելավվել է, կարելի է եզրակացնել, որ հաջորդ տարվա՝ 2005թ. տնտեսական ազատության ինդեքսում այս գործոնի գնահատականը նույնպես կբարելավվի:

10. Ոչ ֆորմալ շուկա

Տվյալ երկրում ոչ ֆորմալ շուկայի ակտիվությունը բնութագրելու համար դիտարկվում են 7 ենթագործոններ՝ մաքսանենգության առկայությունը, ոչ ֆորմալ շուկայում մտավոր սեփականության հեղինակային իրավունքի խախտումը, գյուղատնտեսական մթերքների, թեթև արդյունաբերության արտադրանքի, տրամադրվող ծառայությունների, տրանսպորտային փոխադրումների և աշխատուժի ոչ ֆորմալ շուկայի առկայությունը: Այս ցուցանիշների հիման վրա հաշվարկում են տվյալ երկրում ոչ ֆորմալ շուկայի ակտիվության աստիճանը: Այդ ցուցանիշը՝

- գնահատվում է «1», կամ ոչ ֆորմալ շուկայի ակտիվությունը համարվում է «շատ ցածր», երբ տնտեսություններն ազատ շուկայական են, և առկա է միայն թմրադեղերի և զինամթերքների ոչ ֆորմալ շուկա,
- գնահատվում է «2», կամ ոչ ֆորմալ շուկայի ակտիվությունը համարվում է «ցածր», երբ տնտեսություններում առկա է աշխատուժի և մտավոր սեփականության հեղինակային իրավունքի խախտման ոչ ֆորմալ շուկա,
- գնահատվում է «3», կամ ոչ ֆորմալ շուկայի ակտիվությունը համարվում է «չափավոր», երբ երկիրն ունի աշխատուժի, գյուղատնտեսության և տրանսպորտային ծառայությունների ոչ ֆորմալ շուկա և մտավոր սեփականության հեղինակային իրավունքի խախտման չափավոր մակարդակ,
- գնահատվում է «4», կամ ոչ ֆորմալ շուկայի ակտիվությունը համարվում է «բարձր», երբ երկիրն ունի ոչ ֆորմալ շուկայի ակտիվության բարձր մակարդակ աշխատուժի և մտավոր սեփականության հեղինակային իրավունքի ոլորտներում, առկա է սպառողական ապրանքների և այնպիսի ծառայությունների մաքսանենգություն, ինչպիսիք են՝ տրանսպորտային, էլեկտրաէներգիայի և հեռահաղորդակցության ծառայությունները,
- գնահատվում է «5», կամ ոչ ֆորմալ շուկայի ակտիվությունը համարվում է «շատ բարձր», երբ երկրում ոչ ֆորմալ շուկան ավելի ծավալուն է, քան նրա ֆորմալ տնտեսությունը:

1997-2004 թթ. **«Ոչ ֆորմալ շուկա»** գործոնը Հայաստանում գնահատվել է **«4»**, այսինքն՝ ոչ ֆորմալ շուկայի ակտիվությունը այդ ողջ ժամանակահատվածում համարվել է «բարձր», և այս ոլորտում որևէ բարելավում չի արձանագրվել: Ըստ Heritage Foundation-ի բնութագրման՝ Հայաստանը չի կատարում մտավոր սեփականության հեղինակային իրավունքի պաշտպանության իր պարտավորությունները, և ընդունված օրենքը չի գործում համարժեք ձևով: Հիմք ընդունելով ԱՄՆ արտաքին գործերի նախարարության տեղեկատվությունը՝ Heritage Foundation-ը նշում է, որ «չնայած մտավոր սեփականության իրավունքի խախտումների համար նոր քրեական օրենսդրությամբ սահմանված են լրացուցիչ պատժամիջոցներ, այնուամենայնիվ նոր օրենքի դրույթների նկատմամբ վստահություն չկա, և իրավապահ մարմինների համար պարզ չէ, թե ինչպես պետք է բացահայտվեն հեղինակային իրավունքի խախտման դեպքերը»:

Հարկ է նկատել, որ Heritage Foundation-ը 2004 թ. այս ինդեքսի գնահատման հիմնավորման մեջ սխալմամբ նշում է, որ Transparency International-ը Հայաստանում կոռուպցիայի ընկալման ինդեքսը վերջին անգամ գնահատել է 2000 թ. համար: ՀՀ կենտրոնական բանկի գրության հիման վրա այս անճշտությունը 2005 թ. ինդեքսում կուղղվի, և այս գործոնի գնահատականը նույնպես կբարելավվի:

Ներկայացնում ենք Heritage Foundation-ի կողմից գնահատված՝ Հայաստանի տնտեսական ազատության 1996-2004 թթ. ինդեքսները, ինչպես նաև նախկին ԽՍՀՄ, Արևելյան Եվրոպայի և Անդրկովկասի երկրների տնտեսական ազատության ինդեքսների համեմատական գնահատականները՝ ըստ 10 հիմնական գործոնների (աղ. 6, 7, 8, 9): Համեմատական գնահատականները ցույց են տալիս, որ Հայաստանը տնտեսական ազատության տարբեր գործոնների գնահատականներով առաջավոր դիրքերում է ԱՊՀ երկրների համեմատ, իսկ տարածաշրջանում առաջինն է:

Աղյուսակ 1

Եվրոբանկի գնահատականները Հայաստանում կառուցվածքային և ինստիտուցիոնալ բարեփոխումների ընթացքի վերաբերյալ (1995-2003 թթ.) *

	1995	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003
Գների ազատականացման ինդեքս	3.7	4.3	4.3	4.3	4.3	4.3	4.3	4.3	4.3
Արժութային և առևտրի ազատականացման ինդեքս	3.0	4.0	4.0	4.0	4.0	4.0	4.0	4.0	4.3
Փոքր ձեռնարկությունների սեփականաշնորհման ինդեքս	2.7	3.0	3.0	3.3	3.3	3.3	3.7	3.7	3.7
Խոշոր ձեռնարկությունների սեփականաշնորհման ինդեքս	2.0	3.0	3.0	3.0	3.0	3.0	3.0	3.3	3.3
Ձեռնարկությունների ռեֆորմի ինդեքս	2.0	2.0	2.0	2.0	2.0	2.0	2.0	2.3	2.3
Մրցակցային քաղաքականության ինդեքս	1.0	1.0	1.0	1.0	1.0	1.0	2.0	2.0	2.0
Ենթակառույցներում ռեֆորմների միջինացված ինդեքս	1.7	1.7	2.0	2.0	2.3	2.3	2.3	2.3	2.3
Բանկային հատվածի ռեֆորմի ինդեքս	2.0	2.0	2.3	2.3	2.3	2.3	2.3	2.3	2.3
Ոչ բանկ ֆինանսական հաստատությունների ռեֆորմի ինդեքս	1.0	1.0	1.0	2.0	2.0	2.0	2.0	2.0	2.0

** Աղբյուրը՝ Transition Report 2003 // Integration and Regional Cooperation. EBRD 2003. էջ112-115:*

Աղյուսակ 2

Եվրոբանկի գնահատականները նախկին ԽՍՀՄ երկրների կառուցվածքային և ինստիտուցիոնալ բարեփոխումների ընթացքի վերաբերյալ (2003 թ.) *

	Հայաստան	Վրաստան	Ադրբեջան	Մոլդովա	Ղրղզստան	Տաջիկստան	Ռուսաստան	Ուկրաինա	Բելառուս	Ղազախստան	Ուզբեկստան	Թուրքմենստան	Վրաստան
Գների ազատականացման ինդեքս	***4.3***	4.0	4.3	4.3	4.3	4.0	4.0	4.0	2.7	3.7	4.0	4.3	3.7	2.7	2.7
Արժութային և առևտրի ազատականացման ինդեքս	***4.3***	3.7	4.3	4.3	4.3	4.3	3.3	3.0	2.3	4.3	3.3	4.3	3.3	1.0	1.7
Փոքր ձեռնարկությունների սեփականաշնորհման ինդեքս	***3.7***	3.7	4.0	4.3	4.3	4.3	4.0	4.0	2.3	3.3	4.0	4.0	3.7	2.0	3.0
Խոշոր ձեռնարկությունների սեփականաշնորհման ինդեքս	***3.3***	2.0	3.3	3.3	3.7	4.0	3.3	3.0	1.0	3.0	3.0	3.0	2.3	1.0	2.7
Ձեռնարկությունների ռեֆորմի ինդեքս	***2.3***	2.3	2.0	3.0	3.0	3.3	2.3	2.0	1.0	1.7	2.0	2.0	1.7	1.0	1.7
Մրցակցային քաղաքականության ինդեքս	***2.0***	2.0	2.0	2.7	3.0	2.7	2.3	2.3	2.0	2.0	2.0	2.0	1.7	1.0	1.7
Ենթակառույցներում ռեֆորմների միջինացված ինդեքս	***2.3***	1.7	2.3	2.7	2.7	3.3	2.3	2.0	1.3	2.0	2.3	1.3	1.3	1.0	1.7
Բանկային հատվածի ռեֆորմի ինդեքս	***2.3***	2.3	2.3	3.7	3.0	3.7	2.0	2.3	1.7	2.3	3.0	2.3	1.7	1.0	1.7
Ոչ բանկ ֆինանսական հաստատությունների ռեֆորմի ինդեքս	***2.0***	1.7	1.7	3.0	3.0	3.3	2.7	2.0	2.0	2.0	2.3	2.0	1.0	1.0	2.0

** Աղբյուրը՝ Transition report 2003 // Integration and regional cooperation. EBRD 2003. էջ107-218:*

Աղյուսակ 3

Freedom House-ի գնահատականները նախկին ԽՍՀՄ երկրների քաղաքական իրավունքների և քաղաքացիական ազատությունների բարեփոխումների ընթացքի վերաբերյալ (2004 թ.) *

Երկրներ	Քաղաքական իրավունքների ինդեքս	Քաղաքացիական ազատությունների ինդեքս	Միասնական ինդեքս	Ազատության վարկանիշը
Էստոնիա	1	2	1.5	Ազատ
Լիտվա	1	2	1.5	Ազատ
Լատվիա	1	2	1.5	Ազատ
Մոլդովա	3	4	3.5	Մասնակի ազատ
Հայաստան	***4***	***4***	***4***	***Մասնակի ազատ***
Վրաստան	4	4	4	Մասնակի ազատ
Ուկրաինա	4	4	4	Մասնակի ազատ
Ռուսաստան	5	5	5	Մասնակի ազատ
Ղազախստան	6	5	5.5	Ոչ ազատ
Ղրղզստան	6	5	5.5	Ոչ ազատ
Ադրբեջան	6	5	5.5	Ոչ ազատ
Տաջիկստան	6	5	5.5	Ոչ ազատ
Ուզբեկստան	7	6	6.5	Ոչ ազատ
Բելառուս	6	6	6	Ոչ ազատ
Թուրքմենստան	7	7	7	Ոչ ազատ

** Աղբյուրը՝ Freedom in the World 2003. The annual survey of political rights and civil liberties // Freedom House, 2004 (http://www.freedomhouse.org/research/index.htm):*

Աղյուսակ 4

Freedom House-ի գնահատականները նախկին ԽՍՀՄ երկրներում դեմոկրատիայի զարգացումների վերաբերյալ (2004 թ.) *

Երկրներ	Համախառն ինդեքս	Ընտրությունների գործընթաց	Քաղաքացիական հասարակություն	Լրատվամիջոցների անկախություն	Կառավարման մակարդակ	Սահմանադրական-օրենսդրական-դատական կառույցներ	Կոռուպցիայի մակարդակը
Էստոնիա	1.92	1.50	2.00	1.50	2.25	1.75	2.50
Լիտվա	2.13	1.75	1.50	1.75	2.50	1.75	3.50
Լատվիա	2.17	1.75	2.00	1.50	2.25	2.00	3.50
Վրաստան	4.83	5.25	3.50	4.00	5.75	4.50	6.0
Մոլդովա	4.88	4.00	4.00	5.00	5.50	4.50	6.25
Ուկրաինա	4.88	4.25	3.75	5.50	5.25	4.75	5.75
Հայաստան	***5.0***	***5.75***	***3.50***	***5.25***	***4.75***	***5.00***	***5.75***
Ռուսաստան	5.25	5.50	4.50	5.75	5.25	4.75	5.75
Ադրբեջան	5.63	6.0	4.50	5.75	5.75	5.50	6.25
Ղրղզստան	5.67	6.00	4.50	6.00	6.00	5.50	6.00
Տաջիկստան	5.71	5.75	5.00	5.75	5.75	5.75	6.25
Ղազախստան	6.25	6.50	5.50	6.50	6.25	6.25	6.50
Ուզբեկստան	6.46	6.75	6.50	6.75	6.25	6.50	6.00
Բելառուս	6.54	6.75	6.75	6.75	6.50	6.75	5.75
Թուրքմենստան	6.88	7.00	7.00	7.00	7.00	7.00	6.25

** Աղբյուրը՝ Nations in Transit 2004 // Freedom House, 2004 (http://www.freedomhouse.org/research/nattransit.htm):*

Աղյուսակ 5

Transparency International-ի գնահատականները նախկին ԽՍՀՄ երկրներում[1] կոռուպցիայի ընկալման վերաբերյալ (2003 թ.) [2]

Երկրներ	Կոռուպցիայի ընկալման ինդեքս	Հարցումների թիվը	Ստանդարտ շեղումը	Բարձր - ցածր արժեքները
Էստոնիա	5.5	12	0.6	4.7-6.6
Լիտվա	4.7	10	1.6	3.0-7.7
Բելառուս	4.2	5	1.8	2.0-5.8
Լատվիա	3.8	7	0.4	3.4-4.7
Հայաստան	***3.0***	***5***	***0.8***	***2.2-4.1***
Ռուսաստան	2.7	16	0.8	1.4-4.9
Մոլդովա	2.4	5	0.8	1.6-3.6
Ղազախստան	2.4	7	0.9	1.6-3.8
Ուզբեկստան	2.4	6	0.5	2.0-3.3
Ուկրաինա	2.3	10	0.6	1.6-3.8
Ղրղզստան	2.1	5	0.4	1.6-2.7
Վրաստան	1.8	6	0.7	0.9-2.8
Ադրբեջան	1.8	7	0.3	1.4-2.3
Տաջիկստան	1.8	3	0.3	1.5-2.0
Թուրքմենստան	-	-	-	-

[1] Նախկին ԽՍՀՄ երկրներից միայն Թուրքմենստանի ինդեքսը չի գնահատվում Transparency International-ի կողմից:
[2] Աղբյուրը՝ CPI index 2003 // Transparency International, 2003 (http://www.transparency.org/cpi/index.html):

Աղյուսակ 6

Heritage Foundation-ի կողմից Հայաստանի համար գնահատված տնտեսական ազատության ինդեքսների համեմատությունը ըստ գործոնների (1996-2004 թթ.) *

		2004	2003	2002	2001	2000	1999	1998	1997	1996
Երկրի կարգանիշը		**44**	**44**	**45**	**68**	**84**	**106**	**107**	**102**	**115**
	Գործոնները									
1.	Առևտրի քաղաքականություն	2.0	1.0	1.0	1.0	1.0	2.0	2.0	2.0	3.0
2.	Կառավարության հարկաբյուջետային բեռը	2.3	1.9	2.8	3.3	3.1	3.0	3.0	3.0	2.9
3.	Կառավարության միջամտություն	3.0	3.0	4.0	4.0	4.0	4.0	4.0	4.0	5.0
4.	Դրամավարկային քաղաքականություն	2.0	2.0	3.0	5.0	5.0	5.0	5.0	5.0	5.0
5.	Օտարերկրյա ներդրումներ	2.0	2.0	2.0	2.0	3.0	4.0	4.0	4.0	4.0
6.	Բանկային և ֆինանսական համակարգ	1.0	2.0	2.0	2.0	2.0	3.0	3.0	3.0	3.0
7.	Աշխատավարձ/ գներ	3.0	3.0	2.0	2.0	3.0	3.0	3.0	3.0	4.0
8.	Սեփականության իրավունք	3.0	3.0	3.0	3.0	3.0	3.0	3.0	3.0	3.0
9.	Կարգավորում	4.0	4.0	4.0	4.0	4.0	4.0	4.0	4.0	4.0
10	Ոչ ֆորմալ շուկա	4.0	4.0	4.0	4.0	4.0	4.0	4.0	4.0	3.0
Տնտեսական ազատության ինդեքսը		**2.63**	**2.59**	**2.78**	**3.03**	**3.21**	**3.50**	**3.50**	**3.50**	**3.69**

** Աղբյուրը՝ 2004 Index of Economic Freedom //Heritage Foundation, 2004 (http://cf.heritage.org/index2004test/country2.cfm?id=Armenia:*

Heritage Foundation-ի կողմից Անդրկովկասի երկրների համար գնահատված տնտեսական ազատության ինդեքսների համեմատությունը ըստ գործոնների (2001-2004 թթ.) *

Երկրներ	*Հայաստան*				Վրաստան				Ադրբեջան			
	2004	**2003**	**2002**	**2001**	2004	2003	2002	2001	2004	2003	2002	2001
Երկրի կարգանիշը	***44***	***44***	***45***	***68***	91	113	108	114	106	104	118	139
Գործոնները												
1. Առևտրի քաղաքականություն	***2.0***	***1.0***	***1.0***	***1.0***	4.0	4.0	2.0	3.0	3.0	3.0	3.0	4.0
2. Կառավարության հարկաբյուջետային բեռը	***2.3***	***1.9***	***2.8***	***3.3***	2.4	2.0	2.8	2.3	3.4	3.5	3.3	3.3
3. Կառավարության միջամտություն	***3.0***	***3.0***	***4.0***	***4.0***	1.5	2.0	3.0	3.5	3.0	4.0	3.0	3.0
4. Դրամավարկային քաղաքականություն	***2.0***	***2.0***	***3.0***	***5.0***	3.0	4.0	3.0	5.0	1.0	1.0	2.0	3.0
5. Օտարերկրյա ներդրումներ	***2.0***	***2.0***	***2.0***	***2.0***	3.0	3.0	3.0	3.0	4.0	4.0	4.0	4.0
6. Բանկային և ֆինանսական համակարգ	***1.0***	***2.0***	***2.0***	***2.0***	3.0	3.0	4.0	4.0	4.0	4.0	4.0	4.0
7. Աշխատավարձ/ գներ	***3.0***	***3.0***	***2.0***	***2.0***	3.0	3.0	4.0	4.0	3.0	3.0	4.0	5.0
8. Սեփականության իրավունք	***3.0***	***3.0***	***3.0***	***3.0***	4.0	4.0	4.0	3.0	4.0	4.0	4.0	4.0
9. Կարգավորում	***4.0***	***4.0***	***4.0***	***4.0***	4.0	4.0	4.0	4.0	4.0	4.0	4.0	4.0
10. Ոչ ֆորմալ շուկա	***4.0***	***4.0***	***4.0***	***4.0***	4.0	5.0	5.0	5.0	4.5	4.5	4.5	5.0
Տնտեսական ազատության ինդեքսը	***2.63***	***2.59***	***2.78***	***3.03***	**3.19**	**3.40**	**3.48**	**3.68**	**3.39**	**3.50**	**3.58**	**3.93**

** Աղբյուրը՝ 2004 Index of Economic Freedom // Heritage Foundation, 2004 (http://www.heritage.org/research/features/index/countries.html):*

Աղյուսակ 8

Heritage Foundation-ի կողմից Արևելյան Եվրոպայի երկրների համար գնահատված տնտեսական ազատության ինդեքսը ըստ գործոնների (2004 թ.) *

Կարգավիճակ	Երկրներ	2004	2003	2002	2001	2000	1999	1998	1997	1996	Առևտրի քաղաքականություն	Հարկաբյուջետային բեռ	Կառ. միջամտություն	Դրամ	Օտարերկրյա ներդրում	Բանկ. համակարգ	Աշխատավարձ/ գներ	Սեփ. իրավունք	Կարգավորում	Ոչ ֆորմալ շուկա
32	Չեխիա	2.39	2.35	2.29	2.10	2.20	2.14	2.43	2.29	2.33	3	3.9	2.5	1	2	1	2	2	3	3.5
35	Սլովակիա	2.44	2.71	2.76	2.85	3.18	3.38	3.31	3.18	3.18	3	2.9	2	2	2	1	2	3	3	3.5
42	Հունգարիա	2.6	2.55	2.23	2.38	2.43	2.89	2.94	3.04	2.98	3	3	2	3	2	2	3	2	3	3
52	Սլովենիա	2.75	2.86	3.25	3.01	3.20	3.05	3.15	3.45	3.74	3	3.5	2.5	3	3	3	2	3	2	2.5
56	Լեհաստան	2.81	2.83	2.60	2.64	2.84	2.83	2.91	3.09	3.24	3	3.6	2	2	3	2	3	3	3	3.5
73	Մակեդոնիա	3.04	3.23	3.35	-	-	-	-	-	-	4	2.4	3.5	2	3	2	2	4	4	3.5
78	Բուլղարիա	3.08	3.26	3.28	3.28	3.35	3.49	3.60	3.53	3.50	4	1.8	2.5	4	3	2	2	4	4	3.5
80	Ալբանիա	3.10	3.28	3.24	3.48	3.78	3.50	3.53	3.59	3.58	4	3	3	2	2	3	2	4	4	4
82	Խորվաթիա	3.11	3.06	3.29	3.39	3.49	3.55	3.63	3.56	3.53	4	3.1	2.5	2	3	2	3	4	4	3.5
99	Բոսնիա և Հերցոգովինա	3.30	3.49	3.89	4.04	4.40	4.61	4.61	-	-	3	2.5	2.5	1	4	2	3	5	5	5
129	Ռումինիա	3.66	3.71	3.78	3.59	3.20	3.20	3.21	3.30	3.40	4	3.1	2.5	5	4	3	3	4	4	4

** Աղբյուրը՝ 2004 Index of Economic Freedom // Heritage Foundation, 2004 (http://www.heritage.org/research/features/index/countries.html):*

Աղյուսակ 9

Heritage Foundation-ի կողմից նախկին ԽՍՀՄ երկրների համար գնահատված տնտեսական ազատության ինդեքսները ըստ գործոնների (2004թ.) *

Կարգանիշ	Երկրներ	2004	2003	2002	2001	2000	1999	1998	1997	1996	Առևտրի քաղ.	Հարկաբյուջետային բեռը	Կառ.-ի միջ.	Դրամ	Օտար. ներդրում-ներ	Բանկ. համակարգ	Աշխատուժի/կոմերցիոն գներ	Սեփ. իրավունք	Կարգավորում	Ոչ ֆորմալ շուկա
6	Էստոնիա	1.76	1.68	1.73	1.89	2.19	2.29	2.43	2.46	2.44	1	2.1	2	2	1	1	2	2	2	2.5
22	Լիտվա	2.19	2.21	2.35	2.53	2.84	2.90	2.98	3.05	3.50	2	2.4	2.5	1	2	1	2	3	3	3
29	Լատվիա	2.36	2.30	2.49	2.49	2.69	2.74	2.84	2.91	3.24	2	2.6	2.5	1	2	2	2	3	3	3.5
44	***Հայաստան***	***2.63***	***2.59***	***2.78***	***3.03***	***3.21***	***3.50***	***3.50***	***3.50***	***3.69***	***2***	***2.3***	***3***	***2***	***2***	***1***	***3***	***3***	***4***	***4***
79	Մոլդովա	3.09	3.13	3.30	3.75	3.35	3.49	3.48	3.65	3.50	2	2.4	2.5	3	4	3	3	3	4	4
91	Վրաստան	3.19	3.40	3.48	3.68	3.80	3.85	3.78	3.88	3.94	4	2.4.	1.5	3	3	3	3	4	4	4
104	Ղրղզստան	3.36	3.41	3.65	3.80	3.78	3.73	4.00	-	-	4	3.1	2.5	3	3	3	3	4	4	4
106	Ադրբեջան	3.39	3.50	3.58	3.93	4.33	4.29	4.35	4.58	4.78	3	3.4	3	1	4	4	3	4	4	4.5
114	Ռուսաստան	3.46	3.54	3.74	3.79	3.75	3.60	3.54	3.83	3.65	3	2.6	2	5	3	4	3	4	4	4
117	Ուկրաինա	3.49	3.59	3.84	3.88	3.75	3.75	3.83	3.83	3.75	3	3.9	3	3	4	3	3	4	4	4
131	Ղազախստան	3.70	3.55	3.70	3.85	3.90	4.14	4.23	-	-	4	3.5	2.5	3	5	4	3	4	4	4
145	Բելառուս	4.09	4.24	4.21	4.10	4.13	4.14	4.15	3.95	3.45	4	3.4	3.5	5	4	4	5	4	5	3
146	Տաջիկստան	4.15	4.10	4.09	4.11	4.21	4.15	4.30	-	-	3	3.5	4	5	4	5	4	4	4	5
149	Ուզբեկստան	4.29	4.29	4.39	4.61	4.56	4.64	4.68	-	-	5	2.9	4	5	4	5	4	4	5	4
150	Թուրքմենստան	4.31	4.21	4.39	4.39	4.40	4.39	4.50	-	-	5	3.1	5	4	4	5	4	4	4	5

** Աղբյուրը՝ 2004 Index of Economic Freedom // Heritage Foundation, 2004 (http://www.heritage.org/research/features/index/countries.html):*

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

•

ՀՀ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԲԱՆԿ

Երևան 10,
Վ. Սարգսյան փող. 6
http://www.CBA.am

•

Չափսը՝ 60 x 84 1/8:
15.81 պայմ. տպ. մամուլ:
Տպաքանակ՝ 120:

© Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ, 2004